



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգոսագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material




1834  
1835  
1836

Դ-յումա Ա.

ԵրԵփ իրացուակիրփ

Հան Ա-Պ-




Զ Մյուսուիա  
1871



Ա. ՏԻՒՄԱ.

# ԵՐԵՔ ՀՐԱՅԱՆԱԿԻՐՔ

ԹԱՐԳԱՄԱՆԵՑ



Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՀԱՏՈՐ Բ.

ՏԵՐ ԵՒ ՀՐԱՅԱՐԱԿԻՇ

ՏԻԳՐԱՆ ՑԱՐՈՒԹԻՒՆ ՏԵՏԵԱՆ

— 12058 —

ԶՄԻՒԹՆԻՑ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԵՏԵԱՆ

1872



1970-549

1970-549

1970-549

1970-549

1970-549

870-549

1970-549

1970-549

1970

ԵՐԵՎ

# ՀՐԱՑԱՆԱԿԻ ԻՐՔ

Ա.

Ա. ԵԿԱԴՐ ԿՈՄՄՈՒՀԵԿ

Պըքինկէմի գոքսը՝ ճամբռուն վրայ տ' Ըրդանեանի հարց ու  
փորձ ընելով իմացաւ, չէ թէ անցած դարձածը, այլ ինչ որ  
տ' Արդանեան զիտէր : Պատանիին բերնէն լսածներն իր յատուկ  
յիշատակներուն միացնելով՝ բաւ ական ճշղբիտ զաղափար մը ստա-  
ցաւ թագուհւոյն վիճակին ծանրութեան վրայ, թէև անոր զիրը՝  
համառօտ և անորոշ՝ արդէն նոյնը կ'յայտնէր : Բայց մանաւանդ  
իրեն զարմանք պատճառող բանը սա էր թէ կարտինալը՝ որ տ' Ըր-  
դանեանի Անկլիա ոտք կոխելն անշուշտ չէր ուզեր, բնչպէս ճամ-  
բռուն վրայ զանի ձերբակալ ընել չէր տուած : Ահա այն ատեն՝  
դքուին զարմանքը տեսնելով՝ տ' Ըրդանեան պատմեց թէ ինչ ըզ-  
դուշութիւններ առեր էր, թէ ինչպէս իր երեք բարեկամաց անձ-  
նու իրութեան շնորհիւր, որոնք ճամբռուն վրայ արիւնալի ցրուեր  
էին, յաջողեր էր մի միայն սրի հարուած մ' ընդունելով՝ որ թա-

զոհւոյն նամակն ալ ծակեր էր, հասնիլ, և բնչողէս Պ. Ապրագին աշուելի կերպով փոխարէ նը հատուցեր էր : Դուքսն այս պատմութեան մարիլ ընելով, զոր յետին պարզութեամբ կ'զրոցէր տ'Արդանեան, ատեն ատեն անոր երեսը զարմանօք կ'նայէր, որպէս թէ չէր կարող հասկնալ թէ բնչողէս այնքան խոհեմութիւն, արիտ թիւն և անձնուիրութիւն ունեցած լինի պատանի մ'որ հազիւ քսան տարեկան կ'երևէր :

Տեսը հովի պէս կ'վագէին և քանի մը վայրկենէն Լոնտօնի դռները հասան : Տ'Արդանեան կարծէր էր թէ քաղաքը հասնելուն՝ դոքսն իր երիվարին վազքը պիտի մեղմէ, բայց այսպիսի քան մը չըրաւ . արշաւասոյր քշեց իր ձին ճամրուն վրայ զմնողուները ասպալելու անհոդ : Եւ արդարե Միջնաքաղքէն անցնելու ատեն՝ քանի մը պատահարներ տեղի ունեցան, բայց Պըքինկչէմ և ոչ իսկ գլուխը դարձուց նայելու համար թէ թաւալդլոր ըրած մարդիկն ի՞նչ եղան : Տ'Արդանեան անոր հետեւցան, կ'լսէր աղազակներ որ անէ ծքի ձայներու շատ կ'նմանէին :

Պըքինկչէմ իր ապարանին բակը մանելով՝ ձիեն վար ցատկեց, և առանց փոյթ ընելու թէ ի՞նչ պիտի լինի, սանձը վզին վրայ նետեց և դէպ 'ի դրանդը սրացաւ : Նոյնն ըրաւ և տ'Արդանեան, թէ և քիչ մ'աւելի հոդ կ'տանէր նոյն աղջնիւ ձիերուն համար որոց արժէքը կըցեր էր ճանչել : Բայց խնդութեամբ դիտեց որ երեք չորս սպասաւորներ խոհանոցէն և ախոռէն դուրս վազելով՝ ձիերն առին որ խնամն :

Դոքսն այնքան արագ կ'քալէր որ տ'Արդանեան գժուարաւ անոր կ'հետեւէր : Հետզհետէ շատ մը սրահներէ անցաւ . այս սրահներն այնպէս վայելու զարդարուեր էին որոց վրայ Ֆրանսայի ամենէն երեւելի իշխանները զաղափարն անդամ շտոնէին, և վերջազէս ննջարան մը հասաւ որ ճաշակի և ճոխութեան կողմէ հրաշալիք մ'էր : Նոյն սենեկին նրհեկին մէջ զուռ մը կար՝ վիճակին միջեր . դուքսն այս զուռը բացաւ ուկի բանալիով մը, զոր նոյն մետաղէ օղակով մը վզէն կ'կախէր : Տ'Արդանեան առ խոհեմութեան՝ ետե մնացեր էր, բայց այն միջոցին՝ որ տ'Արդանեան

նոյն դրան սեմէն կ'անցնէր , զլուիը դարձոց և պատանիին վարանումը զիտելով :

— Եկուր — ըստ անոր — և եթէ նորին վեհափառոթեան թագուհոյն ներկայանալու պատիւն ունենաս , տեսածդ անոր պատմէ :

Այս հրաւերէն սիրոտ առնլով՝ տ'Արդանեան դքսին հետեւցաւ , որ դուռն իր ետեւն զոյեց :

Այն ատեն երկոքնին ալ փոքրիկ մատոան մը մէջ զտնուեցան , մատուռ մ'օր պարսիկ մետաքսէ և ոսկեհուռ զորդերով զարդարուեր և բազմաթիւ մոմերով լուսալիր լուսառուն եր էր : Տեսակ մը խորանի վերևն և կապոյտ ամոզչովանիի մը ներքեւ , որուն սարը սպիտակ ու կարմիր փետուրներ կային , բնական մեծութեամբ կենդանազիր մը կ'զանուէր որ Աւատրիոյ տան Աննայի պատկերն էր . այս պատկերն այնքան սասարիկ կ'նմանէր բնագրին որ տ'Արդանեան զարմացման ձիկ մը հանեց . այնպէս իմն կ'երեւէր որ թագուհին բերանը պիտի բանար խօսելու համար : Խորանին վրայ և պատկերնին տակ՝ կ'տեսնուէր ականակուռ առզիկները պարունակող արկղիկը :

Դուքսը խորանին մօտեցաւ , ծունը զրաւ , ինչպէս կ'ընէ քահանայ մը Քրիստոսի առջեւ , և ապա արկղիկը բացաւ :

— Ահաւասիկ — ըստ անոր արկղէն՝ կապոյտ ժապուէնէ ակնափայլ խոշոր հանդոյց մը հանելով — ահա ասոնք են ոյն մեծազին ասղիկներն որոց հետ թաղուելու երդում ըրեր էի : Թաղուհին առեւեր էր ինձ զանոնք , թագուհին ետ կ'առնու . իր կամքը , Աստուծոյն պէս՝ թող կատարուի ամէն բանի մէջ :

Յետոյ սկսաւ իրարմէ ետեւ համբուրել այն ասղիկներն որոյմէ պիտի բամնուէր : Յանկարծ սոսկալի աղաղակ մ'արձակեց :

— Ի՞նչ կայ — հարցոց տ'Արդանեան մտասանջ — և ինչ պատահեցաւ քեզ , լօրոսո :

— Սա կայ որ ամէն ինչ կորաւ — զուեց Պըքինկհէմի զուքսը մեռելի պէս զունաս զառնալով . — ասղիկներէն երկոքը պակաս են . տաս հատ միայն մնացեր են :

- Միթէ կորուսի՞ր , միլօր , թէ ոչ զողցան :
- Գողցան — վրայ բերաւ դոքսը — և կարտինալն է այս կողոպուտն ընողը : Տես անդամ մը , նոյն ասղիկները բռնող ժապաւէնները միրատով կտրուած են :
- Եթէ զողցող անձը միտքդ դայ . . . : Կարելի է նոյն անձը տակալին պահած է զանոնք :
- Կեցի՞ր , կեցի՞ր — զոչեց դոքսը : — Այս ասղիկներն առաջին անգամ՝ թաղտորին պարահանշիսին՝ ոթ օր առաջ երաթալու դրի , 'ի Վինազօր : Վինազը կոմուհին , որուն հետ առարտեր էի , նոյն հանդիսին մէջ ինձի մօտեցաւ : Այս հաշտութիւնը նախանձու կնկան մը վրէ ժիւնդրութիւնն էր : Այն օրէն վեր Վինալը կոմուհին չտեսայ : Այս կինը կարտինալին մէկ զործակալն է :
- Ուրեմն կարտինալն ամէն տեղ դործակալ ունի — զոչեց տ' Արդանեան :
- Ո՛չ , այո՛ , այո՛ — ըստ Պըքինկչէմ ակռաները բարկութենէն սեղմելով — այո՛ , ահարկու ըմբիշտ մ'է : Այլ ասկայն պարահանդէսն Երբ սեղի պիտի ունենայ :
- Գալ երկուշաբթի :
- Գալ երկուշաբթի : Հինգ օրէն , մեր ուղած ժամանակէն աւելի է : Բադրիս — զոչեց դոքսը մատուան դուռը բանալով — Բադրիս :
- Իր մտերիմ սենեկապանն երեցաւ :
- Իմ ակնաղործս և զրագիրս կանչէ :
- Սենեկապանն այնպիսի արագութեամբ և համրութեամբ զորս ելու որով կ'իմացուէր թէ 'ի բնէ սովոր էր կուբօրէն և անշշունչ հնազանդելու :
- Բայց որչափ որ առաջ ակնաղործն անուանեց դոքսը , նախ զրագիրն երեցաւ : Այս քնական էր , վասն զի ասպարանը կ'ընակէր : Պըքինկչէմի դոքսն իր ննջարանը՝ սեղանին առ ջեւ նստած դառաւ , որ իր ձեռօք քանի մը հրամաններ կ'զրէր :
- Պարո՞ն Ժապսօն — ըստ անոր — իսկոյն պէտք է որ դիւ

ւանապետին երթաս և ըսես որ այս հրամաններս կատարելու հոգ տանի : Կ' փափաքիմ որ անմիջապէս զանոնք հրատարակէ :

— Բայց , տէր իմ , եթէ դիւանապետը հարց ու փորձ ընէ ինձ թէ ի՞նչ առթիւ այս տարօրինակ հրամանները կ' տայ Զեր վսեմափայլութիւնը , ի՞նչ պատասխան տամ :

— Կ' պատասխանես որ այս է իմ կամքս , և թէ պարտաւոր չեմ որ և է մէկուն իմ ընթացքս բացատրել :

— Բայց , տէր իմ , միթէ դիւանապետն այս պատասխանը պիտի տայ Նորին վեհափոխեան — հարցուց զրադիրը ժպտեւլով — եթէ դիւդուածով թաղաւորը հետաքրքիր լինի իմանալու թէ ի՞նչ պատճառաւ Մեծն-Քրիտանիային նաև մը չպիտի կարենայ դուրս ելնել :

— Իրաւոնք ունիս , պարոն — պատասխանեց Պլքինկչէմ . այն ատեն թաղաւորին պիտի ըսէ որ պատերազմ որոշեցի , և թէ այս ընթացքս Փրանսայի գէմ թշնամութեան առաջին զործս է :

Գրագիրը խոնարհութիւն ըրաւ և դուրս ելաւ :

— Ահա այս կողմէն հանգստացանք — ըսաւ Պլքինկչէմ գէպ ՚ի ա՛Արգանեանի զաւնալով : — Եթէ ասզիկներն արդէն ճամբայ ելած չեն Ֆրանսա երթալու , քեզնէ վերջը պիտի հասնին :

— Ի՞նչպէս :

— Նորին վեհափոխեան նառահանդիստները զտնուած րուլո նաւերն արգիլել տալու հրաման զրկեցի հիմակ , և առանց մասնաւոր արտօնութեան , նաև մը չկրնար ճամբայ ելնել :

Տ՛Արգանեան ապշտ թեամբ նայեցաւ այս մարդուն երեսը , որ թագաւորի մը վասահութենէն ստացած անսահման իշխանութիւնը յօդուաս սիրոյն կ' զործածէր : Պլքինկչէմ պատանիին դէմքին երեսյթէն հասկցաւ թէ անոր մոքեն ի՞նչ կ' անցնէր և ժպտեցաւ :

— Այո՞ — ըստաւ — այո՞ վասն զի Աւսարիոյ տան Աննան իմ Ճշմարիտ թագուհիս է . անոր մէկ խօսքին միոյն՝ պատրաստ եմ հայրենիքս մատնելու , թագաւորս մատնելու , Աստուածս մատնելու : Նա խնդրեց իզն՝ որ լա Ռոշէլի բողբականաց խոստացած օկնութիւնս չղրկեմ , և ինդիրը կատարեցի : Իմ խոստումն

չսպահեցի, և սակայն ի՞նչ փոյթս է, անոր փափաքին կ'հնարդանդէի. և միթէ այս հնազանդութեանս փոխարէնը մեծապէս չստացայ, ըսէ, վասն զի այս հնազանդութեանս պարտառը եւրի կենդանագիրը :

Տ'Արդանեան զարմացաւ թէ ի՞նչ դիւրաբեկ և անյայտ թելերէ կախում ունին երբեմն ժողովրդեան մը բաղդն և մարդկան կեանըը :

Այս մասմտոքով համակուած էր երբ ակնաղործը ներս մտաւ: Կրանտացի մ'էր նա՝ իր արհեստին մէջ քաջավարժ, և ինքը բերնովը կ'խոստօվանէր թէ Պըքինկհէմի դքսէն տարին հազար սոկի կ'շահէր :

— Պարոն Օրէյի — ըստու անոր դուքսը, զանի մատուռը տաւնելով — նայէ անդամ՝ մը սա ականակուռ ասղիկներն և ըսէ ինձ թէ ամէն մէկն ի՞նչ կ'ամէ:

Ռակերիչն աչք մը նետեց անոր վայելուշ շէնքին վրայ, իրարու վրայ անդամանդներուն արժէքը հաշուց և առանց վարանման,

— Ամէն մէկը հազար հինգ հարիւր սոկի դահէկան կ'ամէ, միլօր — ըստու:

— Քանի՞ օր սէտք է այս տեսակ երկու հատ ասղիկ շինելու և նայիս որ երկու հատ պակաս են:

— Ռւթ օր սէտք է, միլօր:

— Ամէն մէկուն համար երեք հազար սոկի դահէկան (երսոն հազար ֆրանկ) կ'վճարեմ, բայց վաղը չէ միւս օրը կ'ուզեմ:

— Միլօր, կրնամ հասցնել:

— Անդին մարդ մ'ես, ու, Օրէյի. բայց այս բաւական չէ, այդ ասղիկներն ուրիշին չպիտի յանձնուին, սէտք է այս պալատին մէջ շինուին:

— Անկարելի բան է, միլօր, ես միայն կարող եմ զանոնք շինելու, որպէս զի նորերուն և հիներուն մէջ տարբերութիւնը չը տեսնուի:

— Ճիշտ այդ պատճառաւ, սիրելին իմ Օրէյի, իմ կալանաւորս ես, և եթէ սպալատէս ելնել կամնաս, չես կարող,

տառի յոյսդ կտրէ : Ըսէ ինձ թէ ո՞ր դործաւորներդ պէտք են քեզի , իմացուր ինձ թէ ի՞նչ տեսակ զործիներու պէտք ունիս որ բերեն :

Ակնագործը քաջ կ'ձանչէր դուքսը , զիտէր որ անօդուտ էր զիտողը թիւն մ'ընել , ուստի անմիջապէս հնազանդէցաւ :

— Գոնէ ներելի շլ՛ինձ կնկանս իմաց տալ — հարցոց նա:

— Ո՛չ , քեզ ներելի է իսկ զանի տեսնել , իմ սիրելի Պ .

Օրէյի . քու զերտ թիւնդ շատ անուշ պիտի լինի , անհոգ եղիբ . և որովհետեւ ամէն անհանդստու թիւնն համար փոխարինու թիւն մը պէտք է , աշաւասիկ ասդիկներան դինէն դուրս՝ հազար ոսկի զաշեկանի դրամատում մ'որպէս զի քեզի պատճառած ձանձրոցիս մտոնաս :

Տ'Արդանեան ևս քան զես կ'զարմանար անկլիացի պաշտօնէին ընթացքին վրայ , որ լիաձեռն կ'շարժէր թէ մարդիկը և թէ միւլիոնները :

Իսկ ակնագործն իր կնկան զիր մը կ'զրէր հազար տակի դաշեկանի թուղթը զրկելով , և կ'ապսպէրէր որ իր ամենէն վարպետ զործաւորն իրեն զրկէ փոխարէն , նոյնպէս զէզ մ'անդամանդներ՝ որոց ծանրութիւնն ու տեսակն անոր կ'յայսնէր , և իրեն պէտք եղած դործիներու ցուցակ մը :

Պըքինկէմ ակնագործն առաւ և անոր յատկացած սենեակը տարաւ , որ կէս ժամու մէջ զործարան մը դարձաւ : Յետոյ ամէն մէկ գրան առ ջն պահակ մը կեցոց՝ պատուիրելով որ ո՞ր և է մէկը ներս մանելու շթողուն՝ բաց ՚ի իր սենեկապան Բաղրիսէն : Եւելորդ է ըսել որ լիովին արզիկեալ էր Օրէյի ուկերալն և իր օգնականին ո՞ր և է պատրուակաւ դուրս ելնել :

Այս զործը կարդագրելէն ետեւ՝ դուքսը ա'Արդանեանի մօտ եկաւ :

— Այժմ , իմ նորատի բարեկամն — ըստ նա — Անկլիա մեր երկոքինն է , ի՞նչ կ'ուզես , ի՞նչ կ'փափաքիս :

— Անկողին մը — պատասխանեց ա'Արդանեան . — առ ժամն կ'իսոստովանիմ որ ամենէն աւելի անկից պէտք ունիմ :

Պըքինկէմ իրեն սենեկին կից սենեակ մը տուաւ ա'Արդան-

Եանի : Կ'ուզէր որ սպատանին իր ձեռքին ներքեւ պահէ , չէ թէ անորմէ կ'կասկածէր , այլ անոր համար որ կ'փափաքէր իր մօտ մէկն ունենալ որպէս զի միշտ թաղուհւոյն վրայ խօսի :

Ժամը մ'ետքը Առնտօնի մէջ հրատարակուեցաւ այն հրովարտակն որով Փրանսա Երթաւլիք նաւերն արդիլուեցան համբայ ել նելու , նոյն իսկ թղթատար նաւերն : Ամէն մարդ կարծէր թէ ասով երկու աւ բութեանց մէջ սպատերազմ հրատարակուեր է :

Արտշեալ օր երկու ականակուռ ասղիկները լմիցեր էին , բայց այնքան Ճշտիւ օրինակուած , այնքան յար և նման , որ Պլքինկհէմ նորերը հիներէն չկրցաւ զանալանել , և ամենէն վարժ աշքն այսպիսի բաներու մէջ իրենին պէս պիտի խարուէր :

Անդիշապէս տ'Արդանեանը կանչել տուաւ :

— Ահաւասիկ — ըստ անոր — այն անդամանդէ ասղիկները զոր առնելու համար եկար , և վկայ եղիքը որ ամէն ի՞նչ որ մարդկային կարողութիւնը կրնար ընել , ըրի :

— Անհոգ եղիք , միլօր . տեսածս պիտի ըսեմ . բայց ասղիկներն առանց տիփի տուիր ինձ :

— Տուփը կրնայ նեղութիւն սպատճառել քեզի : Ասկէ զատ՝ տուփը միայն մնալով ինձ՝ աւելի մեծ արժէք ստացաւ աչքիս : Պիտի ըսես որ զայն քովս պահեցի :

— Յանձնարարութիւնդ կէտ առ կէտ պիտի կատարեմ , միլօր :

— Հասկա հիմակ — վրայ բերաւ Պլքինկհէմ պատանիին երեսը նայելով ակնապիշ — ի՞նչպէս ծառայութեանդ փոխարէնը պիտի հաստցանեմ :

Տ'Արդանեանի երեսը կրակի պէս կարմրեցաւ : Պիտեց որ դուքսն իրեն բան մ'ընդունել տալու հար մը կ'փնտուէ , և այս զաղափարը՝ թէ իր և ընկերներուն արիւնն անկլիացիի ոսկիով պիտի վճարուին՝ իրեն շատ ծանր կ'երնէր :

— Խնդիրը պարզէնք , միլօր — պատասխանեց տ'Արդանեան և ամէն բան կանխաւ կշռենք որպէս զի մեր մէջ սխալմունք մը չպատահի : Ես Փրանսայի թաղառորին և թաղուհւոյն ծառայութեան մէջն եմ և ող . Տէղէսարի զնոյին զինորներէն մին . ող .

Տեղէսար նոյնպէս Պ. որ Դրէվիլ ազգականը յատկապէս թագաւորին և թաղուհոյն կապուած են : Աստի բոլոր բրածս՝ թագուհոյն համար էր և չէ թէ քեզի : Այս բառական չէ, թերես այս դորձն անդամ վրաս չէի առնուր եթէ հաճելի չլինէր անձի մ'որ իմ տիրուհիս է, ինչպէս որ թագուհին քովկդ է :

— Այս — ըստ դուքսը ժպտելով — և կարծեմ ձանչել այս ըստ անձդ, այս է . . . :

— Միջօր, ես անուն չտուի — ընդմիջեց պատանին աշխուժիւ : — Ճշմարիտ է — ըստ դուքսը — ուրեմն քու անձնուիրութեանդ համար պարտաւոր եմ այն անձին շնորհապարտ լինիլ : — Քաջ խօսեցար, միլօր . — վասն զի Ֆիշտ այս մի ջոցին որ պատերազմի խնդիր կայ, կ'խոսառվանիմ որ քեզ մի միայն իրքեանկլիացի կ'նկատեմ, և հետեւազէս իրը թշնամի որուն պատերազմի դաշտի վրայ հանգիսիլ աւելի լաւ ունիմ քան թէ Վինտզորի ծառաստանին կամ Լուվրի զաւիթներու մէջ . սակայն դարձեալ իմ պաշտօնս կէտ առ կէտ կատարելու, և 'ի հարկին, սպաննուելու պատրաստ եմ . բայց նորէն կ'ըսեմ Վանմափայլութեանդ, որ այս երկրորդ տեսութեամբս ըրածիս համար շնորհակալիք յայտնելու պէտք չունիս, ինչպէս որ առաջին անդամ քեզի համար ըրածիս առթիւ չունեցար :

— Մենք սովոր ենք ըսելու . « Սկովտիացիի մը պէս հպարտ » — մրմուաց Պըքինկէմ :

— Խոկ մենք կ'ըսենք . « Կատքօնի պէս հպարտ » — պատասխանեց տ'Արդանեան : — Կատքօնները Ֆրանսայի Սկովտներն Են :

Տ'Արդանեան դուքսը բարեեց և մէկնելու պատրաստուեցաւ :

— Լաւ, այդպէս կ'ձգես կ'երթան . ո՞ւսկից, Բնչպէս :

— Երան . է :

— Աստուած շնորհ տայ . դաղղիացիք ամէն բան դիւրին կ'երկակայեն :

— Առոցեր էի որ Անկլիա կղզի մ'է, և դու անոր թաղաւորն ես :

— Շիտակ նաւահանգիստը գնամ, Անդ անուն երկիցայ նաւը

Հարցուր , այս նամակը նաև ապետին տուր . նաւագետը քեզ նաւահանդիստ մը պիտի տանի ուր անտարակոյս մարդ մը չսպասեր քեզ , և ուր սովորաբար ձկնորսի նաւակներ կ'մօտենան :

— Ի՞նչ է այն նաւահանդիսին անունը :

— Աէն-Վալերի . բայց կեցիր . երբ անդ հասնիս , անանուն և աննշան պանդոկ մը կ'մանես , որ նաւաստիներու Շշմարիտ կայան մ'է . անշուշտ չես սխալիր , վասն զի մէկ հատ միայն կայ այն տեղ :

— Վերջը :

— Պանդոկապետը կ'կոչես և անոր կ'ըսես . Ֆօրվըրտ :

— Ի՞նչ ըսել է այդ :

— Ընդ առաջ , այս է կարդախոսը : Քեզի պատրաստ ձի մը պիտի տայ և բռնելիք շափողդ պիտի ցուցնէ . այսպէս ճամբռն վրայ չորս օթեան պիտի դանես : Եթէ ամէն մէկուն հասցէդ տաւլու կամնաս , չորս ձիերը քու ետեւէդ բարիզ կ'հասնին . արդէն երկուքը կ'հանչես , և իրրե դիտակ անսնց արժէքը կարծեմ թէ հասկցար . մեր հեծած ձիերն են . հաւաստի եղիր որ միւսներն ալ անոնցմէ վար չեն մնար : Այն չորս երիվարները պատերազմի համար ասպազինեալ են : Որչափ որ հպարտ լինիս , դարձեալ չպիտի մերժես մին ընդունելու և միւս երեքը քու ընկերակիցներուդ ընդունել տալու . նա մանաւանդ իրարու դէմ պատերազմելու համար պիտի լինի : « Կարտակը միջոցները կ'արդարացնէ , ինչպէս որ դուք զաղղիացիք կ'ըսէք , այնպէս չէ : »

— Այս , միլօր , կ'ընդունիմ — ըստ ա'Արդանեան — և եթէ Աստուած կամի , այդ պարզեներդ ինչպէս որ պէտք է պիտի գործածենք :

— Հիմակ ձեռքդ տուր , պատանի . Ձերեւս քիչ ատենէ պատերազմի դաշտի վրայ պիտի հանդիպինք , սակայն առ այժմ իրեւ բարեկամ իրարմէ կ'բաժնուինք , յուսամ :

— Այս , միլօր , բայց քիչ ատենէն թշնամի դատնալու յուսով :

— Հանդարար եղիր , ես ալ նոյնը կ'առաջադրեմ :

— Խօսքիդ վրայ մեծ յուս ունիմ , միլօր :

Տ'Արդանեան դքսին բարեւ տուաւ և զէպ 'ի նաւահանդիսոր դիմեց շտապտաւ : Առնոտոնի Աշտարակին դիմացն որոշեալ նաւը դտաւ , իր նամակը նաւագետին յանձնեց , զոր տեղոյն կտուավարչին կողմէ վաւերացնել տուաւ և անմիջապէս առագաստները պարզեց :

Յիսուն նաւ ճամբայ ելնելու պատրաստուեր էին , սակայն կ'սպասէին :

Ասմոցմէ միոյն քովվն անցնելու միջցին՝ ա՛Արդանեան կարծեց թէ Մէօնի կինը տեսաւ , Ճիշտ այն կինը զոր անձանօթ ազնուականը Միլէտի անուաներ էր , և զոր ա՛Արդանեան այնչափ զեղանի շաեր էր . բայց զետին հոսանքին և փլող նպաստաւոր հովին շնորհի՞ը՝ իր նաւն այնքան շուա կ'քալէր որ սրահակէ մը բոլորովին ծովեղուն հեռացան :

Ճետևեալ օրը ժամն իննին մօտ Սէն-Վալէրի հասան : Տ'Արդանեան անմիջապէս որոշեալ պանդոկը դիմեց , և անկից ելած աղաղակիներէն զայն ճանչեց . Ֆնկլեսոյ և Գրանսայի մէջ ծաղելիք պատերազմին վրայ կ'խօսէին , իրը մօտալուա և աներկրայ , և զուարթերես նաւաստիները կերուխում ետեէ էին :

Տ'Արդանեան ամբոխը ճեղքեց , դէպ 'ի պանդոկապետը դիմեց և Ֆրանսուա բառն արտասանեց : «Պանդոկապետն իսկոյն նշան ըրաւ անոր որ ետեէն երթայ , բակը տանող դոնէ մը զուրս ելաւ անոր հետ , զանի ախոռն առաջնորդեց , ուր կազմ երիվար մ'իրեն կ'սպասէր , և հարցուց անոր եթէ ուրիշ բանի պէտք ունի՞ :

— Կ'ուզեմ իմանալ թէ ո՛ր ճամբան պիտի բռնեմ — ըստ ա՛Արդանեան :

— Ասկից շիտակ Պլանժի զնաւ , Պլանժին Նէօշադէլ : Ի Նէօշադէլ Հերս ո՛Օր անունով պանդոկը մտիր , պանդոկապետին ըսէ կարդախոսն , և ինչպէս առա անդ ես պատրաստ երիվար մը պիտի դանես :

— Վճարելիք բան մը կայ — հարցուց ա՛Արդանեան :

— Ամէն բան վճարուած է — ըստ պանդոկապետը — և առատօրէն վճարուած : Ուստի ճամբայ ելիր և Աստուած հետդ լինի:

— Ամէն — պատասխանեց պատանին վաղ՝ ի վաղ ձին յառաջ քշելով :

Տորս ժամէն ետքը Կէօշաղէլ հասաւ տ' Արդանեան :

Ընդունած հրահանգին համեմատ կատարեց ամէն բան . ՚ի անշաղէլ, ինչպէս Սէն-Վալէրի, պատրաստ երիվար մը զտաւ որ իշխն կ' սալասէր . ձգած թամբին հրացանակներն առնլով միւս երիվարին թամբին վրայ դնել ուղեց, սակայն միւս թամբին խորշեցն ալ նոյն սեսակ հրացանակներ ունէին :

— Ի՞նչ է հասցէդ՝ ՚ի բարիզ :

— Պահակաց ապարանը, Տէղէսարի զօրագունդ :

— Շատ լաւ — պատասխանեց պանդոկապետը :

— Ի՞նչ ձամբայ բռնել պէտք է — հարցուց ըստ կարզի տ' Արդանեան :

— Որուանի ձամբան . բայց քաղաքն աջ կողմէն ձգէ : Երբ եղքուի փոքրիկ զիւղը հասնիս, կանկ կ' առնուս, մէկ պանդոկ մը միայն կայ անդ՝ այս է եւիւ ուշ Գրենու : Անոր երեսոյթէն մի խարուիր, իր ախոռներուն մէջ ձի մը պիտի ունենայ որ ասոր շափ կ' աժէ :

— Միթէ նոյն կարգախօսը պէտք է ըսել :

— Ճիշտ մի և նոյնը :

— Մնաս բարեւ, վարպետ :

— Բարի ձամբորդութիւն, աղասորդիզ . միթէ ուրիշ բանի կարօտ ես :

Տ' Արդանեան զլիսի նշանով չէ ըստ և խոյացաւ դնաց : Ցէքուի, նոյն բանն անցաւ . պաշտօնասէր պանդոկապետ մը զտաւ և անդ, և նոր ու կայտառ ձի մը . իր հասցէն անոր թողոց և Քօնդուազի շատիղը բռնեց շոյա ընդ փոյթ : Ի Քօնդուազ՝ վերջին անգամ երիվարը փոխեց, և ժամն իննին սիղաճեմ կ' մանէր Պ, ուր Դրէվիլի ապարանին բակը :

Տասն երկու ժամու մէջ զբեթէ վաթսուն մղոն ըրեր էր :

Պ. ուր Դրէվիլ ընդունեց զանի այնպէս որպէս թէ առառ իսկ զանի տեսեր էր, միայն՝ սովորականէն աւելի աշխատ ժիւ աւ-

նոր ձեռքը սեղմալով, անոր իմաց տուաւ որ Պ. Տէղէսարի դօրակունդը Լովը կ'զտնուի 'ի պահպանութիւն և թէ կրնար իր պաշտօնին երթալ:

## Բ

## ՄԵՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՊԵՐԵ

Հետեւեալ օրը՝ բոլոր Քարիզի մէջ ուրիշ խօսք չկար այլ քաղքին սստիկաններուն տալիք պարը թաղաւորին և թագուհուց, և այս պարահանդիսին մէջ արքայազները Մէրլէզօնի երևելի պարը պիտի խաղային, պար մ'որ թագաւորին շատ սիրականն էր։ Եւ արդարեւ ժամն ութէն վեր ամէն բան կ'պատրաստէին այն հանդիսաւոր երեկոյթին համար քաղաքատունը։ Քաղքին հիւմնը փայտակերտներ կանգներ էր որպէս զի հրաիրեալ կիները նըստին։ Քաղքին փերեզակը սրահներն երկու հարիւր սպիտակ մոմէջահերով զարդարեր էր, և այս այն ժամանակին համար անլուր շռայլութիւն մ'էր։ 'ի վերջէ քսան վինահար որոշեր էին, և անոնց տրուելիք զինը սովորականին կրկնապատիկն էր, վասն զի, ինչպէս որ կ'ըսէ տեղեկաղիրը, բոլոր զիշերը պիտի նուազէին։

Ժամը տասին Պ. լա Գօսդ, թագաւորին զրոշակիրը, իր հետը շատ մը պաշտօնակալ և աղեղնակիրներ առած՝ եկաւ քաղքին զիւանաղպրէն՝ Քլէման անուն, քաղաքատան բոլոր դռներուն, սենեակներուն և զրատուններուն բանալիներն ուզելու։ Այս բանալիներն անմիջապէս անոր տրուեցան. ամէն մէկը տոմն մ'ունէր վրան որմէ կ'իմացուէր թէ ո՛ր դրան բանալին է, և այն վայրենէն սկսեալ Պ. լա Գօսդ բոլոր դռներու և անցքերու պահպանութիւնն իր վրայ առաւ։

Ժամը տասն մէկին եկաւ նաև Տիւհալիէ , պահակաց հրամանատարը , իր հետը բերելով յիստն համ աղեղնառը՝ որ քաղաքատան մէջ՝ որոշեալ դռներուն պահպանութեան սահմանուեցան :

Ժամն երեքին երկու պահակաց զնդեր եւ եկան , մին զաղղիական , միւսը հէլլէտիական : Գաղղիական զնդին կէսը Պ . Տիւհալիէի , և միւս կէսը Պ . Տէղէսարի զինորներէ կ'բաղկանար :

Երեկոյեան ժամը վեցին՝ հանդիսականները սկսան ներս մըտնել , և քանի ներս մտնէին՝ նորակերտ փայտակերտներու վրայ կ'նսուի ին :

Ժամն իննին եկաւ առաջին նախադահուհի տիկինը : Ըստ ուրում հանդիսին մէջ՝ թագուհիէն ետքը՝ ամենէն նշանառը կինն էր այն . քաղաքային օրաշտօնատարները զանի ընդունեցան և թագուհուցն նստելիք օմեկին դիմացը նստեցուցին :

Ժամը տասին թագաւորին համար շաքարէ զինաց նախունթբակը պատրաստեցին Սէն-Ժանի եկեղեցոյ կողմը դտնուող փոքրիկ սրահին մէջ , քաղքին արծաթեայ մառանին զիմացը՝ զոր շորս աղեղնառը կ'պահպանէին :

Աւս զիշերին բարձր աղաղակներ և կայթիւններ լսուեցան . թագաւորն էր որ Լուվրէն քաղաքատունը տանող փողոցներէն կ'անցնէր , և բոլոր այն փողոցները դունաւոր լազարեններով լուսաւորուած էին :

Անմիջապէս ոստիկանները՝ իրենց չուխայէ շրջազգեստները հաղած , և որոց առջեւէն վեց ջանակիր յիսնապետներ կ'երթային , թագաւորը զիմառորեցին : Թագաւորին սանդղին վրայ հանդիպեցան , և այն տեղ վաճառականաց վարպետն անոր զալուստը շնորհաւորեց . այս շնորհաւորութեան 'ի պատասխան նորին վեհափառութիւնը ներում ինդրեց ուշ զալուն , յանցանքը Պ . կարտինալին վրայ թողլով , վասն զի պետութեան զործերու վրայ խօսելու համար մինչեւ ժամը տասն մէկ զինքը պահէր էր :

Նորին վեհափառութիւնը՝ հանդիսառոր հագուստներն հազեր էր . իրեն ուղեկից էին Կ. Ա. Վ. Պարսնը , Սուասօնի կոմսը ,

Յաղագեաը , Աօնկրիլիլի դաքսը , Էլզիօի դոքսը , Հարքորի կոմիլ , լա Թօշ-Կիւյօնի կոմիլ , Պ . Լիանգոր , Պ . Պարտասս , Գլամայլ կոմիլ և Սովորէյ ասպետը :

Ամէն մարդ դիտեց որ թագաւորը տրտում և մտայոյգ երես մ'ունէր :

Դահլիճ մը պատրաստեր էին թագաւորին , և ուրիշ մը Պարսկին (թագաւորին եղբայրը) համար : Ամէն մէկ դահլիճին մէջ դիմակաւոր հանդիսի համար զգեստներ գրեր էին : Նոյնպիսի պատրաստութիւններ տեսեր էին թագուհոյն և նախազահուհին համար : Թագաւորին և թագուհոյն հետևորդ իշխաններն ու տիկինները երկու հոգի զատ զատ պիտի հաղուէին :

Դահլիճը մտնելէն առաջ թագաւորն ապսպեց որ կարտինալն երևելուն իրեն դան իմաց տան :

Թագաւորին զալէն կէս ժամ ետքը նոր կայթիւններ լսելի եղան . թագուհոյն զալստեան յայտարար նշաններն էին , ոստիկաններն արդէն ըրածնին ըրին , և յիմնապետներն անոնց առջևնելով նորեկ նշանաւոր հիւրին առաջն առին :

Թագուհին սրահը մտաւ . ամէն մարդ դիտեց որ թագաւորին պէտք թագուհին ալ տիսուր և մանաւանդ յողնարեկ երես մ'ունէր :

Ներս մտնելու ժաման՝ պղտիկ բեմի մը վարագոյրն որ ցայն կէա զոց էր՝ բացուեցաւ և երեան ելաւ կարտինալին դունատ գէմքը որ Սպանիայի ասպետի մը պէս հագուեր էր : Իր աչերը թագուհոյն աշաց վրայ սեեւեց , և ահուէլի ուրախութեան ժը պիտ մ'անցաւ իր շրթերուն վրայէն . թագուհին իր անդամանդէ ասդիկները չէր դրած :

Թագուհին քիչ մ'ատեն սրահը մնաց որպէս զի քաղաքացոյ շնորհաւորութիւններն ընդունի և տիկիններու բարեներուն սրաւասիսանէ :

Յանկարծ թագաւորն երեցաւ կարտինալին հետ սրահին մէկ դրան վրայ : Կարտինալն անոր մեղմիկ կիսօւէր և թագաւորը շատ զունատ էր :

Թագաւորն ամբոխը ճեղքեց և անդիմակ , իր բաճկոնալին ժա-

պատէններն այն ինչ կապած՝ թագուհւոյն մօտեցաւ և այլայլուն  
ձայնով մ'ըստ .

— Տիկին, ինչո՞ւ համար, ինդրեմ, անդամանդէ ասղիններդ  
շես դրած, քանի որ զիտես թէ հաճոյք պիտի զզայի զանոնք  
տեսնելով :

Թագուհին իր ակնարկը չորս կողմեա ածեց և ետին տեսառ  
կարտինալն որ սադայէլական մզիտով մը կ'ժպտէր :

— ԱԵՀափառ տէր — պատսախանեց թագուհին այլայլուն  
ձայնով մը — վասն զի վախցայ որ այս բազմաթիւ ամբոխին մէջ  
ասղիններուն զեան մը չպատահի :

— Եւ ուկային սխալեր ես, տիկին . ես այն պարզենց ըրի քեզ  
որպէս զի անով զարդարուիս : Ճշմարիտը, շատ սխալ դատեր ես:

Եւ թագաւորին ձայնը բարկութենէն կ'զողդողար . ամէն մարդ  
կնայէր և զարմանքով մտիկ կ'ընէր առանց անցած զարձածը  
հասկնալու :

— ԱԵՀափառ տէր — ըստ թագուհին — կրնամ ասղինները  
Լուվրէն բերել տալ, և այսպէս ԱԵՀափառութեանդ փափաքը  
կ'կատարուի :

— Բերել առւր, տիկին, բերել տուր, և շուտով, վասն զի  
ժամէ մը պարը պիտի սկսի :

Թագուհին՝ ի հնապանդութեան նշան՝ ողջունեց և իր կանանց  
ետեւէն գնաց որոնք զինքը իր գահլիճը պիտի տանէին :

Իսկ թագաւորն ալ իր գահլիճը մտառ :

Սրահին մէջ պահ մը շփոթ և խառնակութիւն պատահեցան:

Ամէն մարդ գիտեր էր որ թագուհւոյն և թագաւորին մէջ ուն  
կատու մ'անցեր էր, բայց երկուքնին ալ այնքան ցած ձայնով  
խօսեր էին, որ ամէն մարդ՝ ուռ յարդանս՝ քանի մը քայլ մն-  
կուսի քաշուեր էր և բան մը չէր լսեր :

Ամենէն առաջ թագաւորն իր գահլիճէն դուրս ելաւ որսորդի  
ամենավայելու շագուստով, և Պարոնն ու միւս իշխաններն ա-  
նոր պէս հագուեր էին : Թագաւորին այս հազուստը շատ կ'վայ-  
լէր, և այնպէս հազուած իրօք տէրութեան առաջին ազատոր-  
դին կ'երևէր :

Կարտինալը թագաւորին մօտեցաւ և անոր ձեռքը տուփ մը տուաւ : Թագաւորը զայն բացաւ և երկու անդամանդէ ասղիկներ դժուաւ :

— Ի՞նչ կ'նշանակէ այս — հարցուց կարտինալին :

— Ա՛չ ինչ — պատասխանեց կարտինալը : — մինակ եթէ թաղուհին ասղիկները ստանայ , թէ և կ'տարակուսիմ , զանոնք համբցէք , ԱԵՀափառ տէր , և եթէ տաս հատ զտնէք , հարցուցէք թագուհոյն թէ ովլ արգեքք դողցած է երկու ասղիկները :

Թագաւորը կարտինալին երեսը նայեցաւ հարց ու փոքր ընելու կերպով , բայց բերանացի հարցում մ'ուղղելու ժամանակ չանեցաւ . ամենուն բերնէն զարմացման աղաղակ մը բրդաւ : Եթէ թագաւորն իր տէրութեան առաջին ազատորդին էր . թագուհին ոլ անշռւշտ ֆրանսայի ամենէն զեղանի կինն էր :

Իրաւ է որ իր որտըդուհիի հաղուստը սքանչելի կերպով կը վայցէր իրեն . կապցոյ փետուրներով թաղեայ զլսարկ մը զբեր էր , թաւշէ մարդարտազոյն թիկնոց մ'որ անդամանդէ կոճակիներով կոճկեր էր , և արծաթակերտ կապցոյ մնդուսէ բանկան մը : Իր ձախ ուսին վրայ կ'փայլէին ասղիկներն՝ որ փետուրներով և բանկնի դոյն ունեցող հանդոյցով մը կապեր էր :

Թագաւորն ուրախութենէն և կարտինալը բարկութենէն դոյլ ելան , բայց որովհետեւ թագուհին հեռու էին , չին կարող առ գիկները համբել . թագուհիին վրայ ասղիկները կ'տեսնուէին , միայն պէտք էր հասկնալ թէ տան հատ էին թէ ոչ տան երկու :

Նոյն պահուն ջութակները սպարին նշանը առուին : Թագաւորը նախագահուհիին կոզմը դիմեց , վասն զի անոր հետ պիտի պարէր , իսկ Ասեմանփայլ Պարոնն ալ թագուհոյն հետ : Ամէն մարդ իր տեղը բւնեց և պարը սկսաւ :

Թագաւորը թագուհոյն զիմացն ընկեր էր , ամէն անդամուն որ անոր քովէն անցներ , աչքով ասղիկները կ'կլւէր , վասն զի չէր կարող անոնց թիւը հասկնալ : Պաղ քրամնք մը կարտինալին հակտէն կ'հոսէր :

Պարը ժամ մը տեեց , տան վեց ձև ունէր :

Պարը բոլոր հանդիսականաց ծափահարութեան մէջ առարտելով ամէն պարարգ իր պարակիցը տեղը տարառ ձգեց . բայց թաղաւորն իր պարուհին դանուած տեղը ձգելու արտօնութիւն ունենալուն՝ աշխատժիւ թագուհուց մօտ վաղեց :

— Ծնորհակալ եմ քեզ, տիկին — ըստ նա — որ իմ փափաքս կատարելու զիջար, բայց կարծեմ թէ երկու ասղիկ պահան է զարդէդ և աչա քեզի կ'բերեմ զանոնք :

Այս ըստելով թագուհուց տուառ երկու ասղիկներ զոր կարտինալն անոր տուեր էք :

— Խնչողէս, Վեհափառ տէր — զոչեց թագուհին սուս զարմանալով — ուրիշ երկու ասղիկ եւս կ'տաս ինձ, ուրեմն այն ատեն տասն չորս ասղիկ պիտի ունենամ :

Արդարեւ թագաւորն ասղիկները համբեց, և տամն երկու համն ևս թագուհուց ուսին վրայ ամբողջ դասաւ :

Թագաւորը կարտինալը կանչեց :

— Կա՛տ ուրեմն, ի՞նչ կ'նշանակէ այս բանս, Գ. կարտինալ — հարցոց թագաւորը խիստ ձայնով մը :

— Այդ կ'նշանակէ, Վեհափառ տէր — պատասխանեց կարտինալը — որ կ'փափաքէի այս երկու ասղիկները նորին վեհափառութեան թագուհուց ընդունել տալ, ևս անձամբ ընծայել չհամարձակելով այս միջոց ընտրեցի :

— Ես, ևս այնչափ աւելի շնորհապարտ եմ Զեր բարձրութեան — պատասխանեց Աւատրիոյ տան Անան ժպիտով մ'որով կ'յայտնէր թէ այն նորահնար պարզեւէն չէր խարտեր — որչափ որ սույզ եմ որ այս երկու ասղիկները միայն նորին վեհափառութեան ընծայած տասն երկու ասղիկներուն չափ քեզի սուղի նստած են :

Տեսոյ՝ թագաւորն ու կարտինալը ողջունելով՝ թագուհին իր արդէն յատուել սենեկին ճամբան բռնեց որպէս զի հագուստը հանէ :

Այս զլիսիս սկիզբը մը ուշագրտթիւնն առ հարկի զարձած լինելով այն նշանաւոր անձերուն՝ զոր պարահանդէսը մոցոցինք,

պահ մը հեռացանք այն անձն՝ որտեղ պարտաւոր էր թագուշին տարած անլուր յաղթանակը կարտինալին վրայ, և որ դրան մ'առջե խունած ամբոխին մ.ջ խառնուելով և կորսուելով այս չորս անձանց միայն իմանալի առարանն կ'նկատէր, այսինքն թագառին, թագուշոյն, կարտինալին և իրեն միայն։

Թագուշին իր տեսնեակն այն ինչ մտեր և ա'Արդանեան քաշուելու կ'պատրաստուէր, երբ զիտեց որ մէկը թեթեսակի իր ուսին կ'դպի. զլուխը դարձուց, և զեռատի կին մը տեսաւ որ իրեն նշան կ'ընէր ետևէն երթալու։ Այս գեռատի կինը ու թագէ զիմակ մ'ունէր երեսը, բայց այս զգուշութեան չ'նայելով զգուշութիւն մ'որ աւելի ուրիշներուն համար էր քան ա'Արդանեանի, աս իսկոյն իր սովորական առաջնորդուհին ճանչեց, այս է թեթեսան և ուշիմ տիկին Պօնասիէօն։

Առջե օրը՝ ա'Արդանեան տիկին Պօնասիէօն կանչել տալով համիւ ժամանակ գտեր էր Ժէրմէն բարազանին օմեկին մ.ջ առնոր հետ տեսնուելու։ Նորատի կինն այնքան կ'շտապէր թագուշոյն իմաց տալու իր պատգամաւորին յաջող վերագրան՝ որ այս երկու սիրողներն այն ինչ կրցան քանի մը խօսք իրարու հետ ընել։ Հետևասպէս ա'Արդանեան տիկին Պօնասիէօն ետևէն զնաց կրկնակի զգացմամբ շարժեալ, այս է սիրով և հետաքրքրութեամբ։ Ճամբան զնալու ատեն, և քանի նրբագաւիթները թափուր կը գառնային՝ ա'Արդանեան կ'ուղէր նորատի կինը կեցնել, զանի բռնել, նկատել գէթ վայրկեան մը. բայց Պօնասիէօ տիկինը՝ թուշոնի պէտ կացառ՝ իր ձեռքէն միշտ կ'ասէր, և երբ պատասնին խօսիլ կամենար՝ իր սիրուհին շարհալի կերպով և հրաւմայական շարժումով մատը բերնին կ'առնէր իմացնելու համար թէ այնպիսի իշխանութեան մը ներքեւ կ'զմնուէր՝ որուն կուրօքէն հնազանդելու պարտաւոր էր, և թեթեսագոյն տրատւնջ մ'անդամ կ'արգիլէր։ Եվ վէրջէ քանի մը վայրկեան պատ՝ ի պատ գառնալէն ետև՝ տիկին Պօնասիէօ գուռ մը բացաւ և բոլորովին մութ սենեկի մը մ.ջ մոցուց պատանին։ Այն տեղ նորէն նշան մ'ը քառ անոր որ լուս ու մունջ կենաց, և վիժակէ մը ծածկուած

երկրորդ զուռ մը բանալով որմէ յանկարծ վառվուն լոյս մը  
սփռեցաւ, տիկինն աներեսյթ եղաւ:

Տ'Արդանեան պահ մ'անշարժ մնաց և ինքնովի կ'հարցներ թէ  
ո՞ր կ'զանուի, բայց այն սենեկէն ցոլացող լուսոյ նշոյլ մը,  
մինչեւ իրեն հասնող ֆերմ և հոտառէտ օգը, երկու կամ երեք  
կիներու ձայնը՝ որ ակնածելի և վայելու ոճով կ'խօսակցէին,  
քանիցս Վեհափառութիւն բառին կրկնութիւնը, այս ամէն բա-  
ներն յայանապէս կ'նշանակէին որ ինք թաղուհոյն պատկից սե-  
նեկի մը մէջ կ'զանուեր:

Տ'Արդանեան մոթին կեցաւ և սպասեց:

Թապուհին զու արթ և բարեբաստիկ կ'երևէր, և այս բանս մեծ  
զարմանք կ'պատճառէր զինքը շրջապատող անձերուն, քանի որ  
սովոր է ին զբեթէ զանի վշտակիք առնել: Թապուհին իր խըն-  
դութիւնը հանդիսին աղլորութեան և միանգամայն պարէն զդա-  
ցած հաճոյքին կ'վերագրէր, և որովհետեւ ներելի չէր թաղու-  
հոյ մը դիմարանել թէ մարի և թէ լայ, ամենքը Քարիղի ու-  
տիկաններու այս քաղաքավարական հանդէսը կ'ուվէին:

Թէ և տ'Արդանեան թագուհին չէր ճանչեր, շատ չանցաւ ա-  
նոր ձայնը միւսներէն զանաղանեց, ոչ միայն անոր օտարոտի չէշ-  
տէն, այլ և այն ափրափետական զգացումէն որ բնապէս վեհա-  
պետուհոյ մը խօսքերուն վրայ զրոշմուած է: Տ'Արդանեան ա-  
նոր մօտենալն ու հեռանալը կ'լսէր բաց դռնեն, և երկու ե-  
րեք անդամ մարմնոյ մը ստուերը տեսաւ որ լոյսը կ'ծածկէր:

Ի վերջէ յանկարծ ձեին և սպիտակութեան կողմէ հիանալի  
ձեռք մ'ու թէ մը վիժակին անցան. տ'Արդանեան հասկցաւ որ  
այն էր իր վարձքը, ծունը դրաւ, այն ձեռքը բռնեց և յարգա-  
նօք իր շրմերն անոր վրայ զրոշմեց. յետոյ այն ձեռքը քաշուե-  
ցաւ իր ձեռքին մէջ թողլով առարկայ մ'որուն մատնի մը լի-  
նելը դիտեց, դուռն անմիջապէս զոցուեցաւ և տ'Արդանեան կա-  
տարեալ մժութեան մէջ դտաւ ինքզինքը:

Տ'Արդանեան մատնին մատն անցուց և նորէն սպասեց. յայտ-  
նի էր որ ամէն բան ասով չպիտի լմնար: Իր անձնուիրութեան

Փոխարէն վարձ ստանալէն ետեւ՝ 'ի հարկէ իր սիրոյն վարձն ևս  
սիմափ ընդունէր։ Ասկէ զատ՝ թէև պարը խաղացին, սակայն  
հանդէսը հաղիւ սկսեր էր. ժամն երեքին ընթրիք պիտի ընէին,  
Սէն-Ժանի ժամացոյցը՝ արդէն քիչ ատենէն վեր՝ ժամն երկու-  
ու երեք քառորդ զարկեր էր։

Արդարե՝ փոքր առ փոքր մօտակայ սենեկին մէջ ձայները դադ-  
րեցան, յետոյ հեռացան, յետոյ ա՛Արդանեանի գտնուած սենե-  
կին դուռը բացուեցաւ և տիկին Պօնասիէօ ներս մուա. արտորնօք=

— Վերջապէս եկա՞ր — գոչեց ա՛Արդանեան։

— Լութիւն — ըստ նորատի կինն իր ձեռքը պատանիին  
շրթերուն վրայ դնելով — լութիւն, և եկած տեղէդ գարձիր,  
զնա՞ւ։

— Բայց ուր և երբ պիտի տեսնեմ քեզ նորէն — գոչեց  
ա՛Արդանեան։

— Տուն դառնալուդ՝ զտնելիք տոմսակդ քեզ պիտի յայտնէ։  
Հիմակ մեկնէ, զնա՞ւ։

Այս ըսելով նրբագալին դուռը բացաւ. և ա՛Արդանեանը  
դաշտէն դուրս հրեց։

Տ'Արդանեան տղեկի մը պէս հնազանդեցաւ առանց ընդդիմու-  
թեան և որ և է առարկութեան, որմէ կ'հասկցուի որ իրացէս  
սիրահար էր։

## ¶

### ԺԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Տ'Արդանեան վազն 'ի վաղ իր տոնը դարձաւ, թէև առա-  
ռօտեան ժամն երեքն անցեր և Քարիզի ամենէն անշահ փողոց-  
չերէ անցնելու ստիպուեր էր, սակայն դիմացը թշնամի մը չ-

Յաւ : Յայտնի է թէ զինովիերու և սիրահաճերու համար պաշտպան Աստուած մը կայ :

Իր նրբուղին դուռը կէս բաց զտառ , սանդղէն վեր ելաւ և իր ու սպասառին մէջ արգէն որոշուած կերպով կամացուկ մը զարկաւ : Բլանշէ՝ որ իր տիրոջ պատուերին համմատ՝ քաղաքատունէն երկու ժամ՝ առաջ տուն դարձեր էր , ելաւ դուռը բանալու :

— Միթէ մարդ մ'ինձի համար զիր մը բերաւ — հարցուց տ' Արդանեան աշխուժիւ :

— Ո՛չ ոք զիր բերաւ , պարոն — պատասխանեց Բլանշէ . — այլ նամակ մը կայ որ ինքնիրեն եկաւ :

— Ի՞նչ ըսել կ'ուզես , ապիւշ :

— Ըսել կ'ուզեմ թէ տուն զալուս՝ ձեր ննջարանին սեղանին կանաչ օթոցին վրայ զիր մը զտայ , թէ սենեկին բանալին իմ դրանուն էր և բնաւ չհանեցի :

— Եւ ո՞ւր է այն զիրը :

— Տեսած տեղս թողոցի զայն , պարոն : Քնական բան մը չէ որ նամակներն այսպէս մարդու տուն մտնեն : Գոնէ եթէ պատուհանը բաց , կամ միայն կէս բաց լինէր , դարձեալ խօսք չունէի , բայց ո՛չ , ամէն ծակ պնդապէս զոյ էր : Պարոն , զզոյշ եղիք , վասն զի այս բանին մէջ անտարակոյս կախարդութիւն մը կայ :

“ Նոյն պահուն՝ պատանին ննջարանը կ'վազէր և նամակը կը բանար . այս նամակը տիկին Պօնասիէ օի կողմէն և աս իմաստով դրուած էր . ”

« Քեզի ջերմաղին շնորհակալիք ունիմ ընելու և ուրիշին կողմէն : Այս իրկուն ժամը տասին Սէն-Քլու դանուէ , այն տաղաւարին դիմացն որ ու . ա'կազդրէի տան անկեան մօտ կ'բարձրանայ : ” Ա . ու . »

Տ' Արդանեանի սիրտն այս նամակը կարդալով կ'բացուէր , առնոյշ մոլոնք մը կ'զզար որ սիրահաճերու հոգին կ'նեղէ և կը դդուէ :

Առաջին անգամն էր որ սիրագիր մը կ'ընկունէր , առաջին

անդամն էր որ իր սիրուհին ժամագիր կ'լինէր անոք : Եթ սիրութ ուրախութենէ արբշեռ կ'փրանար և փոքր ինչ ևս պիտի նուազէր այն երկրային գրախափն սեմփն վրայ որ մէր կ'անուանէր :

— Աան ուրեմն, պարոն — ըստ Բլանշէ՝ որ իր ամբոջը հետզհետէ զայն տալ առնուլը տեսեր էր — լաւ, միթէ Տիշտ զուշակութիւն մ'ըրած չեղայ ըսելով թէ այդ անշահ զործ մ'է :

— Դու կ'սխալիս, Բլանշէ — պատասխանեց ա'Յրդանեան — և ասոր ապացոյց ահառասիկ սկուռ մ'որպէս զի երթաս կենացս զինի խմես :

— Ընորհակալ եմ, պարոն, ձեր տուած ոկտոտին համար, և կ'խոստանամ Տշտիւ հետեւլ ձեր հրահանդին, բայց զարձեալ սոսոյդ է որ զոց տաներու մէջ այսոքես մանող զիբերը . . . :

— Ցերկնից կ'ընկնին, բարեկամ, յերկնից կ'ընկնին :

— Ուրեմն շատ զոհ էք, պարոն — հարցոց Բլանշէ :

— Աիրելիք իմ Բլանշէ, ինչի պէս երջանիկ մարդ չկայ այս միջոցիս :

— Արդեօք ներելի՞ է ինձ այդ երջանկութենէն օդուագ քաղելով երթալ պառկել :

— Այս, զնա :

— Երկնից օրհնենքը զլուխնիդ թափին, պարոն, բայց զարեալ սոսոյդ է որ այս նամակը . . . :

Եւ Բլանշէ քաշուեցաւ գնաց դլուխն օրելով այնպիսի գէմքով որմէ կ'իմացուեր որ զեռ կ'կասկածէր, և ա'Յրդանեան իր առատաձեռնութեամբն այս կասկածը տակաւին չէր կրցած փառատել :

Տ'Յրդանեան մինակ մնալուն կրկնին և կրկնին կարդաց նամակը, յետոյ քսան անդամ համբուրեց իր սիրուհոյն ձեռօք զըրտած տառերն : Վերջապէս պառկեցաւ և ոսկեղոյն երազներ տեսաւ :

Առառու ժամն եօթին քունէն ելաւ ա'Յրդանեան և Բլանշէն կանչեց՝ որ Երկրորդ կոչումին՝ գուռը բացաւ նախորդ օրուան յուզմունքէն այն ինչ սմափած :

— Բլանշէ — ըստ անոր տ' Արդանեան — կարելի է այսօր բոլոր օրը գուրս մնամ, տատի ազատ եռ մինչեւ երեկոյեան ժամը եօթ, բայց ժամի եօթին պատրաստ զտնուէ երկու ձիով :

— Շատ լաւ — ըստ Բլանշէ — կ'երեխ թէ նորէն մեր մորթը քանի մը տեղէն ծակծկել տալու պիտի երթանք :

— Դուք քո հրացանդ և ատրանակներդ պիտի առնուս :

— Ե՛ս, միթէ արդէն չէ՞ զտշակեր — զուեց Բլանշէ : — Համ, համ, ստոյդ էի, անիծեալ նամակ :

— Բայց սիրառդ հանգարս բռնէ, ասքուշ մարդ . մինակ խընչոյքի պիտի երթանք :

— Ո՛չ, եթէ անցած օրուան զուարձութեան պէս է, խօսք չկայ . այն օրն որ գնտակներ կ'աեզզային և զետնէն ծուղակներ կ'բացուէին :

— Բայց, Պ. Բլանշէ, եթէ կ'վախնաս — վրայ բերաւ տ' Արդանեան — մինակս պիտի երթամ . աւելի լաւ կ'ուսպեմ միայնակ ուղեորիլ քան թէ երկըստ ուղեկից մ'ունենալ :

— Պարոն, զիս կ'նախատէք — ըստ Բլանշէ . — թէ և կ'յուսայի որ զիտէք թէ բնչպէս դործ կ'տեսնեմ :

— Այս, բայց կարծեցի թէ մի անդամուն բոլոր արիութիւնդ սպառեցիր :

— Պիտի տեսնէք, պարոն, որ 'ի հարկին զեռ արիութիւն ունիմ . մինակ կ'աղաչէի ձեզ որ 'ի զուր չվատնէք այս արիութիւնն եթէ կ'ուզէք որ երկար ատեն քաջ լինիմ :

— Միթէ կ'յուսամ այս իրկուն ևս քաջութենէդ քիչ մը վատնել :

— Կ'յուսամ :

— Լամ ուրեմն, խօսքիդ կ'վատահիմ :

— Արոշեալ ժամուն պատրաստ պիտի զտնուիմ . մինակ կը իրածէի թէ պահակաց ախոռը ձի մը միայն ունիք :

— Կարելի է որ այս միջոցիս հատ մը միայն զտնուի, բայց այս իրկուն չորս հատ պիտի լինին :

— Կ'երեխ թէ մեր ուղեօրութիւնը ձիերն ամբողջացնելու ուշ զեսրութիւն մ'էր :

— Ճիշտ այդպէս — ըստ ա'Արդանեան՝ նորէն հրամայտիան շարժում մ'ընելով Քլանչէի, և դուրս ելաւ :

Պ. Պօնասիէօ իր գրան վրայ էր . ա'Արդանեան միտք ունէր անցնիլ երթալ առանց արժանի փերեզակին խօսելու, բայց փերեզակն այնպիսի անոյշ և բարեմիտ կերպով իրեն բարեեց որ ա'Արդանեան ոչ միայն անոր բարեն առնլու այլ և հետը խօսելու ստիպուեցաւ :

Արդարեն ինչպէս կարելի է քիչ մ'երեսպաշտո թիւն չընել ամուսնոյ մ'որուն կինը նոյն իրկուն քեզի հետ ժամադիր եղած է ՚ի Սէն-Քլու Պ. ա'Էսդրէի առաջարին դիմացը : Տ'Արդանեան խիստ սիրալիր երեսով Պ. Պօնասիէօ մօտեցաւ :

Բնագրէս խօսակցութիւնը խեղճ մարդուն բանտարկելու թեան վրայ գարձաւ : Պ. Պօնասիէօ՝ որ անտեղեակ էր թէ՝ ա'Արդանեան Մէօնի անձանօթ մարդուն հետ ունեցած բանակցութիւնը լսած է, իր նորատի վարձկալին պատմեց Պ. որ Լաֆմա անուն հրէշին երեսէն կրած հալածանքը, անդադար զանի կարտինալին դահիճն անուանեց, և Պատրիի կղզակներու, դռնակներու, օդամուսներու, վանդակներու և տանջանքի զործիներու վրայ երկար բարակ զրոյցներ ըրաւ :

Տ'Արդանեան աննման յօժարամտութեամբ մտիկ ըրաւ անոր խօսքերն, ու երբ լնիցուց,

— Հապա տիկին Պօնասիէօ՞ — ըստ վերջապէս, — գիտեն արդեօք թէ ով յափշտակեր է զանի, վասն զի չեմ մոռնար բնաւ որ այս գառնազէտ պարագաներով քեզի հետ ծանօթանաւլու բաղդն ունեցայ :

— Ա՛Հ — ըստ Պ. Պօնասիէօ — զդոշացան այդ բանն ինձ յայմանելու, և կինա ալ իր կողմէն մեծ մեծ երդումներ ըրաւ թէ բնաւ տեղեակ չէր : Բայց դու ևս — յարեց Պ. Պօնասիէօ կատարեալ միամտութեամբ մը — դու այս օրերս ուր զացեր էիր, ոչ քեզ և ոչ բարեկամներդ տեսայ, և կարծեմ թէ Բարիզի սաւլյատակէն չըողվեցիր այն փոշին զոր երէկ Քլանչէն կօշիկներուդ վրայէն կ'սրբէր :

— Կրաւունք ո՞նիս , սիրելիդ իմ Պ . Պօնասիէօ — իմ բառ քեկամներս և ես պղտիկ ողևորութիւն մ'ըրինք :

— Միթէ հեռու աել :

— Ո՛չ , աէր Աստածած , չէ , քառսուն մղնի չափ հեռու տեղ մը . Պ . Ամուսը Գործի ջերմուկները տարինք և բարեկամներս անդ մնացին :

— Խոկ զու , դու գարձար , այնպէս չէ — վրայ բերաւ Պ . Պօնասիէօ իր կերպարանին խիստ նենդալի երեցի մը տալով — քեզի պէս աղոր տղայ մ'իր սիրուհոյն կողմէն երկարատե արձակորդներ շընդունիր , և քեզ անհամբեր կ'սպասէին ՚ի Քարիլ ; այնպէս չէ :

— Ճշմարիս վկայ — ըստ պատանին ծիծաղելով — կ'խոստովանիմ բասծդ յօժարամիտ , սիրելիդ իմ Պ . Պօնասիէօ , նա մանաւանդ անոր համար որ քեզնէ բան պահել կարելի չէ : Այս , կ'սպասէր ինձ սիրուհիս , և անհամբեր կ'սպասէր , հաւատի եմ այս մասին :

Պօնասիէօի դէմքին վրայ թեթև մնայլ մ'երեցաւ , բայց այն չափ թեթև որ տ'Արդանեան զդիտեց :

— Եւ քիչ ատենէն այս մեր ժրաջանութեան վարձքը պիտի ընդունինք — շարայարեց վերեզակը փաքր ինչ այլայլած ձայնով մը , թէ և տ'Արդանեան այս այլայլութիւնը չդիտեց ինչպէս որ շտեսեր էր պահ մ'առաջ բարեմիտ մարդուն երեսը մթադնող վաղանցիկ մնայլը :

— Ա՛չ , դու աշ բարեզուշակ մարդարէ մ'ես — ըստ տ'Արդանեան խնդալով :

— Ո՛չ , այս ըսելով կ'ուզեմ միայն իմանալ — վրայ բերաւ Պօնասիէօ — եթէ ուշ պիտի տուն դառնանք :

— Ինչո՞ւ այդ հարցումը կ'ընես , սիրելի տան աէրս — հարցոց տ'Արդանեան — միթէ ինձ սպասելու միաբ ունիս :

— Ո՛չ , վասն զի՞ւ իմ ձերբակալութենէս և տանս մէջ եղած զողութենէն վեր՝ աչ ու դողս կ'բռնէ քանի դուռս բացուի , մանաւանդ զիշերը : Ճշմարիսը , չդիտեմ ինչ ընեմ , ես զօրական մարդ չեմ :

— Լաւ ուրեմն, մի զարհութիր եթէ առաւօտեան ժամը մշակն , երկուսին , կամ երեքին զաւնամ . եթէ բնաւ չդամ , դարձալ մի զարհութիր .

Այս անդամ՝ Պօնասիէօի զոյնն այնչափ նետեց որ տ' Արդանանան առ հարիի անոր գեղնութիւնը դիտեց և հարցուց թէ ինչ ունի :

— Ո՞չ ինչ — պատասխանեց Պօնասիէօ — ո՞չ ինչ : Գլխիս եւ կած ձիւնէն վեր յանկարծական տկարութիւններ կ'ըռնեն զիս : Ե հիմակ բոլոր մարմինս սարաւու մը զգաց : Դու միա մի զներ այս բանիս , զու միայն գուն գործէ որ օրդ օր ընես :

— Ուրեմն գործ ունիմ , վասն զե երջանիկ եմ :

— Դեռ ժամանակը չհասաւ , քիչ մը սպասէ , այս իրիկուան համար ըսիր :

— Լաւ , փառք Աստուծոյ , այս իրկունը պիտի հասնի , և կարելի է զու ալ ինձի պէս անհամբերութեամբ կ'սպասես : Կարելի է որ այս իրկուն տիկին Պօնասիէօ ամուսնական բնակարանին այցելութիւն մը ընէ :

— Տիկին Պօնասիէօ այս իրկուն աղաս չէ — պատասխանեց ծանրութեամբ ամուսինը — իր դործը չներեր որ Լուվրէն զուրս ելնէ :

— Ուրեմն վայ քեզի , սիրելի տան տէրս , վայ քեզի . երբ երջանիկ եմ ես , կ'ուզեմ որ ամէն մարդ երջանիկ լինի : Բայց կ'երեսի թէ այս բանս կարելի չէ :

Եւ պատաժին հեռացաւ քահ քահ ինդալով ըրած կատակին վրայ որ իմաստն ինքը միայն հասկնալ կարծէր :

— Նայէ որ զուարձանաս — պատասխանեց Պօնասիէօ զերեղ մանական ձոյնով մը :

Բայց տ' Արդանեան բաւական հեռացած լինելուն՝ անոր խօսքը չլսեց , և եթէ լսէր անդամ , մորքի այնպիսի տրամադրութեան մէջ կ'զանուէր որ չպիտի կարենար անշուշտ դիտել :

Տ' Արդանեան Պ. տը Դրէվիլի ասլարանը դնաց , ինչպէս որ ընթերցողը կ'յիշէ , իր տո ջե օրուան այցելութիւնը շատ կարճ և անորոշ եղեր էր :

Տ'Արդանեան Պ. ար Դրէվիլը սաստիկ ուրախ դատու : Թաւ պատրն ու թագուհին իրեն հետ շատ սիրալիք կերպով վարուեր էին պարահանդիսին մէջ : Այս ալ իրաւ էր որ կարտինալը յետին ծայր անհամ և դժգոհ էր :

Առաւօտեան ժամը մէկին՝ անհանդիստ եմ բաելով պարահանդիսէն ելեր դացեր էր : Խոկ թագաւորն ու թագուհին առաւօտեան ժամը վեցին Լովով դարձեր էին :

— Հիմակ — ըստու Պ. ար Դրէվիլ ձայնը մեղմելով և սենեկին մէջ աչքը չորս կողմն ածելով տեսնելու համար թէ արդեօք մինակ են , — Հիմակ , քու վրայ խօսինք , նորատի բարեկամն . վասն զի յայտնի բան է որ յաջող վերադարձդ փոքր 'ի շատէ պատճառ տուաւ թագաւորին ուրախութեան , թագուհւոյն յաղթանակին և կարտինալին յուսահատութեան : Հիմակ պէտք է որ զդոյշ լինիս :

— Ի՞նչ բանէ կընամ վախնալ — պատասխանեց ա՛Արդանեան — քանի որ թագաւորին և թագուհւոյն պաշտպանութիւնը վայելելու բարեբազդութիւնն ունիս :

— Ամէն բանէ , քաջ զիացիր : Կարտինալը մինչեւ որ խաղարկուին հետ իր հաշիւը չտեսնէ երբէք խաղը մը մոռցող մարդ չէ , և կարծեմ թէ խաղարկուն ալ ինձի ծանօթ կապօն մ'է :

— Միթէ կարծե՞ս թէ կարտինալը քեզի չափ տեղեակ է և պիտէ որ Լոնտոն դացողն ես եմ :

— Թշուառական , Լոնտոն դացիր , լաւ : Թայց միթէ մատդ փայլող այդ աղոր անդամանդը Լոնտոնէն բերիր : Զգոյշ եղիր , սիրելի ա՛Արդանեան . թշնամիի մը պարզեն աղոր բան չէ . միթէ այդ մատնին վրայ լատիներէն ոտանաւոր մը չկայ . . . կեցիր նայինք . . . :

— Այո , անտարակոյս — պատասխանեց ա՛Արդանեան , որ երբէք չկըցեր էր միտքը տպաւորել լատիներէնի առաջին կանոնը , և իր աղիտութեամբն իր դաստիարակին յուսահատութիւն պատճառեր էր — այո , անտարակոյս , ոտանաւոր մը պիտի դտնաի կարծեմ :

— Ես աներկմիտ եմ՝ որ կայ — ըստ Պ. տը Դրէվիլ, որ  
քիչ շատ զբագէտ էր — և Պ. տը Պէնսկրատ անցածն օր բեր-  
նոց կ'ըսէր . . . : Ապասէ նայիմ. . . , ԱՇ, աշաւասիլ,

. . . Timeo danaos et dona ferentes.

Եւ այս ըսել կ'ուզէ . «Քեզի պարդեներ թուող թշնամիկ ն  
վախցիր » :

— Բայց այս անդամանդը թշնամիկ մը պարզե չէ, պարոն —  
վրայ բերաւ տ'Արդանեան — այլ նոյն խոկ թագուհոյնն է :

— Թագուհոյն, Հօ, Հօ — ըստ Պ. տը Դրէվիլ . — ար-  
դարե արքայական դոհար մ'է այդ, որ ջրի մէջ հազար ոսկի  
դահեկան կ'ածէ : Թագուհին այդ պարզեն որո՞ւ ձեռօք տուառ  
քեզի :

— Նոյն ինքն իր ձեռօք :

— Ո՞ւր տեղ :

— Եր հազուսաը փոխած սենեկին կից դահեճին մէջ :

— Ի՞նչպէս :

— Եր ձեռքը տալով ինձ համբուրելու համար :

— Ի՞նչ, թագուհոյն ձեռքը պազիր — դոչեց Պ. տը Դրէ-  
վիլ տ'Արդանեանին նայելով :

— Նորին վեհափառութիւնն այս շնորհն ընելով պատուեց զիս:

— Եւ այդ բանն ալ վկաներու առջեւ ըրաւ . անխոչեմ, ե-  
րիցս անխոչեմ թագուհի :

— Ոչ, պարոն, հանգիստ եղիր, ոչ ոք տեսաւ զանի — վր-  
այ բերաւ տ'Արդանեան և Պ. տը Դրէվիլի պատմեց դործին  
պարագաները :

— Ո՛չ, կիները, կիները — դոչեց ծերոնի զինորը — քաջ  
կ'ձանչեմ զանոնք իրենց վիպասանական երեակայութենէն. ի՞նչ  
որ խորհրդաւոր զոյն մ'ունի զիրենք կ'զրաւէ . այսպէս, անոր  
թեր տեսար միայն . հիմակ թէ որ թագուհոյն հանդիսաւ, չպի-  
տի ձանչես զանի, եթէ նա քեզի հանդիպի, չպիտի զիսնայ  
թէ դու ով ես :

— Ոչ, բայց այս անդամանդի շնորհիւը . . . — վրայ բերաւ  
պատմանին :

— Մտիկը ըրէ — բառ զ. որ Դրէվիլ — կ'ուզե՞ս որ քեզի խրատ մը տամշ, լաւ խրատ մը, բարեկամի խրատ մը :

— ԱԵԾ պատիւ ողիտի ընես ինձ, պարոն — բառ տ'Արդանեան :

— Նաւ որեմն, գիմացդ ելնող ոսկերչին զնա, և ինչ զին որ տայ այդ անդամանդը ծախէ. եթէ հրէի չափ կծծի անդամ լինի, դարձեալ ոթ հարիւր ոսկի գահեկան կրնայ տալ քեզի այդ մատնիին համար: Դահեկաններն անուն չունին, նորատի բարեկամշ, և այդ մատնին սոսկալի անուն մ'ունի, և զայն կրող կրնոյ մատնել:

— Այս մատնին ծախեմ, այս մատնին զոր իմ վեհապետու հիս տուտ ինձ, երբէք — բառ տ'Արդանեան :

— Ուրեմն քարը ներսի կողմը դարձուր, խեղճ յիմար, վասն զի ամէն մարդ դիւրտ. կրնայ հասկնալ թէ կառօճնցի կամաւոր զինուոր մը չէ կարող իր մօրը արկղկին մէջ այդպիսի դոհար մը դտնել:

— Ուրեմն կարծե՞ս թէ վախնալիք բան մը կայ — հարցուց տ'Արդանեան :

— Այսինքն, պատամի, այն որ ականի մը վրայ կ'պառկի որոն պատրոյզը վառած է, քեզի հետ բաղդատելով՝ ինքզինքը ասկահով վիճակի մէջ նկատել պէտք է:

— Շուտիկ — բառ տ'Արդանեան, որ զ. որ Դրէվիլ վըստի կերպով խօսելէն միսեր եր յուղուիլ — անտանայ, որեմն ինչ պէտք է ընել:

— Ամեն բանէ առաջ և միշտ պէտք է որ զգոյշ կենաս : Կարստինալն անչափ յիշողութիւն և երկար ձեռք ունի, հաւտայ ինձ որ քեզի խաղ մը պիտի խաղայ :

— Բայց ինչ խաղ :

— Կ'հ, միթէ զիտե՞մ ես, միթէ սատանի ամէն բաներն իր ձեռքին ներբե չե՞ն: Քիչէն քիչ կրնայ քեզ ձերբակալ ընել տալ:

— Ինչպէս, նորին վեհապետութեան ծառոյտթեան դանուոր մարդ մը կրնան ձերբակալ ընել:

— Այդ ալ խօսք է . միթէ Աթոսը ձերբակալ ընելու վախ-  
յան : Բայց ինչ և է , պատանի , միտ դիր մարդու մ'որ երսուն  
տարիէ վեր արքունիքն է . եթէ վստահ և անհոգ քննանաս , 'ի  
կորուստ կ'մատնուիս : Ահա քեզ , քեզն կ'ըսեմ որ ամէն կողմդ  
թշնամիներ տես : Եթէ քեզի հետ կուտի բռնուիլ ուղեն , և  
եթէ գրդոիշը տաս տարու տղայ անդամ լինի , նայէ որ չըրռա-  
նուիս , եթէ զիշերայն կամ ցորեկ ատեն վրադ յարձակին , նա-  
հանջէ առանց ամշնալու . եթէ կամրջէ մ'անցնիս , նախ տախ-  
տակիները նայէ հաստատ են , որպէս զի տախտակին մէկն ուրքիդ  
տակ չսահի , եթէ նորպաշէն տան մ'առջեւն անցնիս , վեր նայէ  
որպէս զի զլսիդ վրայ քար մը ըսնկնի , եթէ ուշ տուն զառ-  
նաս , սպասաւորդ թող ետեւէդ զայ , և զինեալ լինի , եթէ ըս-  
պասաւորիդ վրայ վստահութիւն ունիս : Սի վստահիր և ոչ մէ-  
կու , ոչ բարեկամի , ոչ եղածոր , ոչ սիրուհոյդ , մանաւանդ  
սիրուհոյդ :

### Տ'Արդանեան կարմրեցաւ :

— Իմ՝ սիրուհոյս — կրկնեց նա մեքենապէս — և ինչ պատ-  
ճառաւ անոր աւելի չվստահիմ քան ուրիշի :

— Վասն զի սիրուհի մը կարտինալին ամենէն սիրական որո-  
ծին է , անիից առելի կարուկ միջոց մը չունի . կին մը կրնայ  
քեզ ծախել տաս դահեկանի համար , զիայ Տալիլա . Ս . Գրոց  
հմուտ ես , հա :

Տ'Արդանեան նոյն երեկոյեան համար իսկ տիկին Պօնասիէօի  
տուած ժամադրութեան մտածեց . բայց 'ի գովեստ մը դիցաղը  
նին սպարտաւոր ենք ըսել որ առ հասարակ Պ . տը Գրէկիլի կա-  
նանց վրայ ունեցած դէշ զաղափարն իր սիրուն տան տիրուհոյն  
դէմ թեթե կասկած մ'անդամ չներշնչեց :

— Բայց աղէկ միտքս եկաւ . — յարեց Պ . աը Գրէկիլ — ինչ  
եղան քու երեք ընկերներդ :

— Ես ալ քեզն պիտի հարցնէի թէ արդեօք լուր մը չափու-  
անմաց վրայ :

— Ամենեին , սպարոն :

— Աաւ , ես ճամբուս վրայ թողոցի զանանք , Բորթոս՝ ի Շահաթիլի , թերուուն վրայ մենամարտութեամբ մը , Արամիտ՝ ի Քրէվքէօր՝ ուսին մէջ զնտակով մը , և Աթոս յԱմիեն , դրամանենագոթեան ամբաստանութեամբ դլխին վրայ :

— Կնայիս — ըստ Պ . տը Դրէվիլ — հապա դռն , դռն բնչպէս պրծար :

— Հրաշքով , պարոն , կ'խոստովանիմ , կրծքիս սրի հարուած մ'ընդունելով , և Վարդ կոմոը Քալէի ճամբուն յետնակողմը դամելով իրը թիթեռնիկ մը վիժակի վրայ :

— Կնայիս դարձեալ , Վարդ , կարտինալին մարդը , Ուօշֆօրի եղբօրդղին : Ահա , սիրելի բարեկամ , միտքս բան մը կ'զայ :

— Ըսէ , պարոն :

— Եթէ քու տեղդ լինէի , բան մը կ'ընէի :

— Ի՞նչ բան :

— Մինչդեռ սորին բարձրութիւնը զիս Բարիլ փնտոել սիւտի տայ , ես անշշուկ Բիդարտիայի ճամբան կ'բռնէի և իմ երեք ընկերներուս վրայ լուր առնլու կ'երթայի : Ի՞նչ կ'ըսես , միթէ արժանի չե՞ն այս թեթեւ հոգատարութիւնը տեսնել քու կողմէդ :

— Աղոր է խորհուրդդ , պարոն , և վաղը պիտի մեկնիմ :

— Վաղը , և ի՞նչ պատճառաւ այս իրկուն չես մեկնիր :

— Այս իրկուն , պարոն , անհրաժեշտ զործի մը համար Բարիլ պիտի մնամ :

— Ա՛հ , պատանի , պատանի , անշտշտ սիրային զործ մ'է . նորէն կ'ըսեմ , զգայ եղիք . կինը մեղ կորոյս , և բոլոր մարդիկը , և դարձեալ մեղ՝ ի կորուստ պիտի տանի միահամու : Եթէ խօսքս մտիլ կ'ընես , այս իրկուն ճամբայ ելիք :

— Անկարելի բան , պարոն :

— Աւրեմ որիշի խօսք տուած ես :

— Այս , պարոն :

— Այս առեն խնդիրը կ'փոխուի , բայց խօսք տուր ինձ որ եթէ այս իրկուն քեզ չսպաննեն , վաղը պիտի մեկնիս :

— Կ'խոստանամ :

- Ստուկի պէտք ունիս :
- Տակոսին յիսոն ոսկի դահեկան ունիմ : Կարծեմ թէ այս չափ բաւական է :
- Հասլա ընկերներով :
- Կարծեմ թէ դրամէ զուրկ չեն : Երբ Բարիզէն ելանք, իւրաքանչիւրը մեր գրպանին մէջ եօթսուն ոսկի դահեկան ունէք :
- Մեկնելէդ առաջ պիտի աեսնուին ինձի հետ :
- Հարկ չկայ կարծեմ, պարոն, եթէ նոր բան մը չպատահէն :
- Ուրեմն բարի ճամբորդութիւն :
- Ծնորհակալ եմ, պարոն :
- Եւ ա'Արդանեան Պ. աը Գրէվելին հրաժարական բարե տուաւ, իր հրացանակարայ համար ունեցած հայրական հոգասիրութենէն սիրար շարժելով :
- Տ'Արդանեան հետղյետէ Աթոսին, Բորթոսին և Արամիսին տունէն անցաւ : Եւ ոչ մէկը առն դարձեր էր : Իրենց սպասաւորներն ալ բացակայ էին, և ասոնցմէ ոչ մէկուն վրայ լուր առ ուր էին :
- Կրնար անոնց սիրուհիներու դիմել և լուր առնուլ, բայց ոչ բորթոսին, ոչ Արամիսինը կ'ձանչէր, իսկ Աթոս սիրուհի չունէր :
- Պահակներուն ապարանին առ ջեկն անցնելուն՝ ա'Արդանեան ախոռին կողմը աչք մը նետեց . չորս ձիէն երեքն արդէն հասեր էին : Բլանշէ բոլորովին շուաբած՝ զանոնք քերելու վրայ էր, և արդէն երկտքը մաքրեր էր :
- Ա՛, պարոն — ըստ Բլանշէ ա'Արդանեանը տեմնելով — սրչափ ուրախ եմ ձեզ տեմնելուս :
- Եւ ինչ պատճառաւ, Բլանշէ — հարցոց պատահին :
- Միթէ մեր տան տէր, Պ. Պօնասիրէօի վստահութիւն ունիք :
- Ե՞ս, ամենեին :
- Ա՛, շատ լաւ կ'ընէք, պարոն :
- Բայց ինչո՞ւ համար այդ հարցումը կ'ընես ինձ :
- Պասն զի երբ անոր հետ կ'խօսակցէլիք, առանց մտիկ ընելու ձեզ կ'զիակէի, պարոն, իր դէմքն երկու երեք անգամ զոյն փոխեց :

— Ալա՛շ :

— Դուք այս բանս չդիմեցիք, վասն զի տապած նամակով նիդ զբաղած էիք. բայց ընդ հակառակն ես, որ աչքս չորս բացեր էի նամակին այնպիսի տարօրինակ կերպով տուն դալուն, անոր կերպարանին ամէն շարժումները դիմեցի :

— Եւ ի՞նչպէս դտար :

— Մատնտու, պարոն :

— Իրա՞ն :

— Ասկէ զատ՝ այն ի՞նչ տոնեն ելաք և փողոցին անկիւնեն դարձաք, Պ. Պօնասիէօ իր զլիսարկն առաւ, դուռը զոյեց և ներակ համբէն վագել սկսաւ :

— Արդարե, իրաւունք ունիս, Բլանշէ, այս բաներս ինձի շատ կասկածելի կ'երեխն, և անհոգ եղիք, մեր տան վարձքն առնոր չպիտի վճարենք մինչեւ որ դործը բացէ՝ ի բաց մեզի չբացատրէ :

— Կատակ կ'ընէք, պարոն, բայց վերջը պիտի տեսնէք :

— Ի՞նչ ըսեմ, Բլանշէ, ի՞նչ որ պատահի, իմ հակախողին է :

— Ուրեմն այս երեկոյեան պառոյտէն ետ չպիտի կի՞նաք :

— Ընդ հակառակն, Բլանշէ, որչափ Պ. Պօնասիէօի ոխ ունիմ, այնչափ կ'փափաքիմ այն նամակին որոշած տեղն երթալ, թէ և դու կ'վրդովիս :

— Ուրեմն, եթէ այս է ձեր որոշումը . . . :

— Վնասան որոշում, բարեկամ. տսափ ժամն իննին այս տեղ ապարանը պատրաստ եղիք, ես պիտի զամ քեզ առնլու :

Բլանշէ տեսնելով որ իր աիրոջը դիմաւորութիւնը փոխել տալու հնարյ չկայ, խորին հառաջ մ'արձակեց և սկսաւ երբորդ ձին քերել :

Խոկ ա՛նը անեանի դալով որովհեան ինքնին խիստ խոչեմ պատանի մ'էր, փոխանակ իր տունը դառնալու՝ այն կապօն քառ հանային տունը զնաց հաշի՝ որ չորս դրայանակիրներու չքառ որութեան ժամանակ, չորօլադէ նախաձաշիկ մը տուեր էր անոնց :

## Դ

## ՏԱՐԱՆԴԱՐ

Ժամն ինչին տ' Արդանեան պահակաց ասլարանն էր, անդ  
Բլանշէն զինեալ դտաւ, չորրորդ ձին հասեր էր:

Բլանշէի զէնքն էին հրացանակն ու ատրճանակը:

Տ' Արդանեան իր սուլը ունէր և գատիէն երկու հրացանակ անցոց, յետոյ երկուքնին ալ զատ զատ ձի հեծան և անշշուկ հեռացան: Գիշերը մութ էր և ոչ ոք անոնց դուրս ենելը տեսաւ: Բլանշէ իր տիրոջը հետեւցաւ և տաս քայլ հեռուէն անոր եանէն զնաց:

Տ' Արդանեան քարափներէն անցաւ, Քօնֆէրանսի գռնէն գորս  
ելաւ և բռնեց այն ճամբան որ Սէն-Քլու կ' տանի, Ճամբայ՝ որ  
այն ատեն շատ աւելի աղօր էր քան թէ հիմակ:

Որչափ ատեն որ քաղաքն էին՝ Բլանշէ իր յարմար տեսած  
ակնածելի հեռաւորութիւնը պահեց, բայց երբ ճամբան աւելի  
ամայի և մութ դարձաւ, յուշիկ տիրոջը մօտեցաւ, այնպէս որ  
երբ Պուլոնյի անտառը մօտան՝ բնապէս իր տիրոջը հետ քովիտ  
քով դտաւ ինքդինքը: Արդարեւ, պէսք չէ պահենք որ մեծ ծառ  
ոերու տատանումն և նսեմ պուրակներու մէջ լուսնին նշոյլը սասա  
տիկ երկիւլ կ' պատճառէին անոր: Տ' Արդանեան դիտեց որ իր  
սպասաւորը տարօրինակ բան մը կ' կը:

— Կա՞ ուրեմն, Պ. Բլանշէ — հարցոց անոր — ինչ ունիս:

— Միթէ չէք տեսներ, պարոն, որ անտառներն ալ եկեղեւ  
ցիներուն պէս են:

— Ինչո՞ւ համար այդպէս կ' ըսես, Բլանշէ:

— Վասն զի՞ ինչպէս անտառի նոյնպէս եկեղեցւոյ մէջ մարդ  
բարձր խօսելու չհամարձակիր:

- Ինչո՞ւ համար չես համարձակիր բարձր խօսիլ, Բլանշէ, վասն զի կ'վախնաս :
- Այո՛, կ'վախնամ՝ որ չլսեն ձայնս, պարո՞ն :
- Չայնդ չլսե՞ն : Աակայն մեր խօսակցոթիւնը բարոյական է, սիրելի Բլանշէ, և ոչ ոք կրնայ ասոր բան մ'ըսել :
- Ա՛չ, պարո՞ն — վրայ բերաւ Բլանշէ իր նախորդ մտածութեան գալով — այն Պ. Պօնասիէօն իր ունքերուն մէջ կեղծիք մը, և շրթերու շարժման մէջ անախորդ բան մ'ունի :
- Հիմակ ո՞ր սատանան դրդեց քեզ Պօնասիէօի մտածելու :
- Պարո՞ն, մարդ կրցածը կ'մտածէ և չէ թէ ուզածը :
- Վասն զի վատասիրա ես, Բլանշէ :
- Պարո՞ն, խոհեմութիւնը վատասրտոթեան հետ չպայմանական առաքինութիւն մ'է :
- Եւ զու երջանիկ ես, այնպէս չէ, Բլանշէ :
- Պարո՞ն, միթէ առ վարը հրացանի մը փողը չէ փայլողը : Գէշ չլինիր եթէ մեր զլուխը ծռենք :
- Արդարեւ — մրմռաց տ'Արդանեան, որուն միաքը կ'զար Պ. առ Գրէվիլի խորհուրդները — արդարեւ, այս կենդանին վերջապէս ինձի ալ երկիւղ պիտի աղղէ : — Եւ իր ձին ընդուսաքալեցուց :
- Բլանշէ իր տիրոջ շարժման հետևեցաւ Ճիշտ այնպէս որպէս թէ անոր ստուերը լինէր, և ինքն ալ անոր մօտ կ'վաղէր :
- Միթէ բոլոր զիշեր սյստէս քալենք պիտի, պարո՞ն — հարցոց նա :
- Ո՛չ, Բլանշէ, վասն զի զու, զու հասար տեղդ :
- Կ'նչպէս տեղս հասայ, հասա դուք :
- Ես զեռ ես քանի մը քայլ յառաջ պիտի քշեմ :
- Ես միթէ զիս այս տեղ մինանդ պիտի թողուք, պարո՞ն :
- Միթէ կ'վախնա, Բլանշէ :
- Զէ, բայց միայն զիտել կ'ասա՛մ ձեզ որ այս զիշեր շատ ցուրտ պիտի լինի, թէ զով օդը յօդացաւ կ'տոց, և թէ յօդացաւ ոնեցով սպասաւոր մը տիտոր բան մ'է, մանսանդ ձեզ պէս թիթեաշարժ պարո՞նի մը համար :

— Եաւ, եթէ կ'մսիս, Բլանշէ, կրնաս սա վարը տեսած մէկ դինետան մէջ մտնել, և վաղն առտու ժամը վեցին ինձի կ'սորաս սես դրան առ ջե :

— Պարոն, այս առտու ինձ տուած սկոտող յարզանօք կեր ու խումբ տուի, այնպէս որ եթէ մսիմ՝ չոր տամնոց մ'անգամ չունիմ որ ծախս ընեմ :

— Ահա քեզի կես զահեկան (հինգ ֆրանք) . վաղը տեմնուինք: Տ'Արդանեան ձիէն վար իջաւ, սանձը Բլանշէի թեին վրայ ներ տեց և իր վերարկուով փաթթուելով արագօրէն հեռացաւ :

— Աստուած, որչափ կ'մսիմ — դոչեց Բլանշէ երբ իր տէրն աչքէն հեռացաւ, և տաքնալու սաստիկ պէտք զզալով՝ արտորնօք դնաց տան մը դուռը զարկաւ. որ արուարձանի դինետան մը ամեն նշաններով զարդարուած էր :

Սակայն ա'Արդանեան՝ որ արտուղի նեղ շաւիդ մը բռներ էր, իր ձամբան կ'շարունակէր և Աէն-Քլու կ'հասնէր . բայց փոխանակ մնձ արահետը հետեւելու, դզեկին ետևէն քալեց, խիստ հեռաւոր զափհէ մը զարկաւ և քիչ ատենէն որոշեալ տաղաւարին առջեր դտաւ ինքոլինքը : Այս տաղաւարը բոլորովին ամայի վայր մը կ'զանուէր : Մեծ պատ մ'որոն անկինը կ'զտնուէր տաղաւարը, նոյն դոփհին մէկ կողմը կ'երիննար և միւս կողմէն ցանկապատ մը կ'արզիլէր տնցորդները փաքրիկ պարտէղ մը մտնելու որուն խորն անշոք հիւղ մը կ'տեսնուէր :

Հետեւապէս ա'Արդանեան ժամադրութեան տեղը հասեր էր, և որովհետեւ չըսեր էին անոր որ զալուստն իմաց տայ նշանով մը, կ'սպասէր :

Զայն ձուն չէր լսուեր, կարծես թէ նոյն վայրը մայրափաղաւքէն հարիւր մղն հեռու էր : Տ'Արդանեան՝ իր եաին անգամ մը նայելն եաեւ կռնակը ցանկին տուաւ : Այս ցանկէն, պարտէղէն և հիւղէն անդին՝ թանձը մշուշ մ'իր ծալքով կ'պարուրէր այն անհունութիւնն ուր Բարիզ կ'նիրհէ, բերանարաց ունայնութիւնն մը, անհունութիւն՝ ուր կ'փալփլէին քանի մը լուսաւոր կէտէր, որ այս դժոխին դամբանական աստղերն էին :

Բայց ա'Արդանեանի համար ամէն տեսարան նպաստառը երեւոյթ կ'առնուր, ամէն մտածում՝ ժայիտ մ'ունէր, ամէն խաւար զիմահար էր: Ժամադրութեան ժամը զարնելու ժօտ էր:

Եւ իրօք քանի մը վայրինէնէ ետքը՝ Սէն-Քլուի զանդակատոնն իր որոտընդաստ լայն կոկորդէն տաս հարուած հնչեց ծանր ծանր:

Այս սղղնձէ ձայնը՝ որ դիշերային մթութեան մէջ կ'ողբար՝ սպառոր բան մ'ունէր:

Իր աշերը սևեռեր էին փոքրիկ տաղուարին վրայ՝ որ պատին անկիւնը շինուած էր, և որուն պատուանները փեղկերով փակածած էին առաջին գտարիկնի պատուհանէն զատ:

Այս պատուհանին մէջ անոյշ լոյս մը կ'փայլէր, որուն արածաթափայլ նշոյլը կ'ցոլանար երկու երեք թմբիի երերուն տեսրեներուն վրայ, որոնք բուրաստանէն դուրս ելնելով կ'բարձրանային փնջաձեւ: Անտարակոյս այս փոքրիկ զեղանցոյլ պատուհանին ետև կ'սպասէր իրեն սիրուն տիկին Պօնասիէ օն:

Այս անոյշ տեսիլէն հրապուրեալ՝ ա'Արդանեան մտադիւր կէս ժամ սպասեց աշերն այն չքնաղ փոքրիկ բնակարանին վրայ յառած՝ որուն ձեղունին ուսկեփայլ զարեանդներուն մէկ մասը կ'տեսնէր և կ'զուշափէր սենեկին միւս կողմերուն վայելչութիւնը:

Սէն-Քլուի զանդակատոնը ժամը տաս ու կէս զարկու:

Այս անզամ, առանց պատճառը հասկնալու, ա'Արդանեան երակներուն մէջ սարսուռ մը զդաց: Թաերեւ ցուրտէն կ'սարսէք և բարոյական տպառորութիւն կ'համարէր լիովին նիւթական ըզգայնութիւն մը:

Յետոյ մատովին ըստա թէ արդեօք սխալ կարդացեր էր տումառ կը, և թերեւ ժամադրութիւնը ժամը տասն մէկին էր:

Պատուհանին մօտեցաւ, լուսոյ ճառագայթի մը մէջ կեցաւ, նամակիլ զրագանէն հանեց և նորէն կարգաց: Տ'Արդանեան չէր սխալած, ժամադրութիւնը ճիշտ ժամը տասին էր:

Դնաց իր առջի տեղը բռնեց, և սկսաւ այս լուռթեան և առանձնութեան վրայ մօսայոյզ մտածել:

Ժամը տասն մէկ զարկու:

Տ'Արդանեան իրօք սկսառ վախնալ որ տիկին ուսնասիէօի զըժա-  
բաղդաթիւն մը հասած չլինի :

Իր ձեռօքն երեք անդամ ծափ զարկառ, սիրահարներու սովոր-  
քական նշան մը, բայց ոչ ոք պատասխանեց, և ոչ իսկ արձա-  
գանքը :

Այս ատեն սրամառաթեամբ մը մտածեց որ թերեւս նորատի  
կինը սպասելու ժամեն՝ քոնը տարած է :

Պատին մօտեցառ և վեր ելնելու փորձ փորձեց, բայց պատը  
զեռ նոր ծեփուած էր, և ա՛Արդանեան պարապ տեղ ըզունդը  
դարձուց :

Նոյն պահուն ծառերը միտքն ընկան, որոնց տերեւները կը  
փայլէին արծաթափայլ լուսէն, և որովհետեւ մին ճամբուն վրայ  
ցցուեր էր, մտածեց որ անոր ոստերուն մէջէն պիտի կարենար  
տաղաւարին ներքին կողմը նշմարել :

Ծառն ելնել դիւրին էր : Ասկէ զատ՝ ա՛Արդանեան հաղին  
քսան տարու լինելով քաջ կ'յիշէր դպրոցականի արհեստը : Մէկ  
վայրկենի մէջ՝ Ճիւղերուն մէջ զտնուեցառ, և թափանցիկ ապա-  
կիներէն իր աչքը մինչեւ տաղաւարին խորը սենոեց :

Տարօրինակ բան, որով ա՛Արդանեան ոտիցը ներբանէն մինչեւ  
մաղերուն արմատը սարսուռ մը զդաց, այն անոյշ լոյսը, այն  
հանդարս կանթեղը զարհութելի և անկարգ տեսարան մը կ'լու-  
սուորէր . պատուհաններուն մէկ ապակին կոտրած էր, սենեկին  
դուռը բռնի բացուեր, և կէս մը խորակած՝ ծղինիներուն վե-  
րայ կախուեր էր . սեղան մը՝ որուն վրայ անշուշտ ընաիր ճաշ  
մը զբեր էին՝ գետինն ընկեր էր . հաս ու կտոր սրուակիներ,  
ճղուած պտուղներ տախտակամածին վրայ սփռուած էին . այս  
սենեկին տեսքը կ'յայսնէր որ բուռն և յուսահատ կոիւ մ'ե-  
ղած է . այս այլանդակ խառնորդին մէջ՝ ա՛Արդանեան կարծեց  
տեսնել իսկ զգեատի ծուեններ և քանի մ'արեսն արատներ որ  
սեղանին ծածկոյթն ու վարագոյրներն արատեր էին :

Ծառէն վար իջնելու շտապեց սրաի սոսկալի բախիւնով մը,  
և կ'ուղէր տեսնել թէ արդեօք այն բռնաբարութեան նշաններն  
ուրիշ տեղ ալ կ'զտնուին :

Գիշերային անդորրութեան մէջ՝ թեթև անոյշ լոյսը միշտ կը փայլէր : Տ'Արդանեան այն ատեն տեսաւ, թէ և առաջ չեւ տեսած, վասն զի այս քննութիւնն ընելու դրդող մը չունէր, տեսաւ որ հողը՝ ասդիս շարժեր, անդին փոսեր փարուեր էր և մարդու քայլերու ու ձիու դափրերու խառն հետքը կ'ցոցնէր : Ասկէ զատ՝ կառքի մ'անիւներն՝ որ կ'երեւէր թէ բարիզէն կ'դար, կակող հողին վրայ խոր նշան մը պեղեր էր, և մինչև տաղաւարին սահմանն երկարելով նորէն բարիզ կ'գտնար :

Վերջապէս ա'Արդանեան՝ իր խուզարկութիւնները շարունակեւ լով պատին մօտ կնկան մը խզտուած ձեռնոցը զտաւ : Սակայն այս ձեռնոցին այն կողմերն որ տղմուտ դետնին չէին դպեր, անըսդիւտ թարմութիւն մ'ունէր : Այս այն հոտաւէտ ձեռնոցներէն էր զոր սիրահարները սիրոն ձեռքէ մը խզել կ'ախորժին :

Քանի ա'Արդանեան իր հետազոտութիւնը շարունակէր՝ աւելի առաս և սառ քիրտ մ'իր ճակուն կ'հոսէր, սոսկալի անձնութեամբ սիրուր կ'ձնչէր, շունչը հեալով կ'առնուր, և սակայն՝ ինքզինքն անդորրելու համար կ'ըսէր, թէ կարելի է այն տաղաւարը յարաբերութիւն չունէր տիկին Պօնասիէօի հետ, թէ դեռասի կինն այս և չէ թէ այն տաղաւարին մէջ իրեն ժամագիր եղեր էր, թէ կարելի է իր զործին համար բարիզէն չէր կրցած ելնել, և կամ էրկանը նախանձէն արգիլուած էր :

Բայց բոլոր այս պատճառները մի առ մի կ'ցրուէին, կ'կործանէին ներքին վշտալի զդացումի մ'առջե՝ որ քանի մը պարագաներու մէջ, մեր բոլոր էտթիւնը կ'համակէ և մեր բոլոր զդալի հանգամանաց կ'զոչէ թէ մնձ դժբաղդութիւն մը կ'ստառնի մեր գլխին վրայ :

Այն ատեն ա'Արդանեան լիովին խելազար դարձաւ, մնձ արահետը վազեց, արգէն բռնած ճամբէն դնաց, մինչև լաստափայտը յառաջացաւ, և լաստավարին հարց ու փորձ ըրաւ :

Ժամն եօթին մօտ՝ լաստավարը զետէն սև լօդիկով ծածկուած կին մ'անցոցեր էր, որ մնձ հոգ կ'տանէր չճանչցուելու, բայց ճիշտ այս ըրած զդուշութիւններուն համար՝ լաստավարն աւելի

ուշադրութիւն ըրեր է , և զիտեր է որ կինը նորատի էր և դեռ դաշնի :

Այս ատեն՝ այսօրուան պէս՝ շատ մը նորատի և սիրուն կիներ կային որ Սէն-Քլու կ'զային անցայտ մնալու փափաքով , և սակայն ա՛Արդանեան պահ մը չերկմտեցաւ որ լաստավարին դիտածը տիկին Պօնասիէօն չլինի :

Տ'Արդանեան՝ լաստավարին հիւղին մէջ վառած կանթեղէն առիթ բռնելով նորէն տիկին Պօնասիէօն տոմսակը կարգաց որ նայի թէ արդեօք սխալմոնք կայ , թէ ժամադրութեան տեղը Սէն-Քլու էր թէ այլուր , թէ զ . ա՛Էսդրէի տաղաւարին դիմացն էր թէ ուրիշ փողոցի մը մէջ :

Այս ամէն բաները հաստատելու կ'նկրտէին որ իր նախազդածութիւնն ՚ի գերև չպիտի ելնէր , և թէ մեծ դժբաղութիւն մը պատահած էր :

Վագելով դղեկին Ճամբան բռնեց , իրեն կ'երեւէր թէ բացակայութեան ատեն թերևս նոր բան մ'անցած էր տաղաւարը և թէ անդ նոր տեղեկութիւններ ունի ստանալիք :

Գոիհը միշտ ամայի էր , և մի և նոյն անոյշ և հանդարտ նշոյլը պատուհանէն դուրս կ'տարածուէր :

Այն ատեն ա՛Արդանեան միտքը բերաւ այն փլատակն որ թէն անխօս և կոյր , բայց անշոյշ բան մը տեսած պիտի լինէր և թերևս կարող էր խօսելու :

Որմածին դուռը զոց էր , բայց ցանկին վրայէն ցատկեց , և շղթայակապ շան մը հաջումները բանի տեղ չդնելով խրճիթին մօտեցաւ :

Նախ քանի մ'անդամ զարնելուն՝ ձայն ձուն չելաւ : Մեռեւ լական լոռթիւն մը կ'աիրէր հիւղին , ինչպէս տաղաւարին մէջ , սակայն , որովհետեւ այն հիւղին իր վերջին ապաւէնն էր , շարունակ զարկաւ :

Քիչ ատենէն կարծես թէ թեթե շշուկ մը կ'լսէ ներսէն , տարտամ շշունչ մ'որ կ'երեւէր թէ լսուելու կ'երկնչէր :

Այն ատեն ա՛Արդանեան զարնելը դադրեցոց և այնպիսի վըշ-

տոաշունչ և յուսահատ, ահաբեկ և քծնելի ձայնով մաղաշեց՝  
սր ամենէն երկուս մարդը կրնար հանդարախիլ, Ի վերջէ հին և  
որդնահար փեղկ մը բացուեցաւ, կամ կէս մը բացին և իսկոյն  
դոցեցին երբ անկեան մէկ խորշը վառող քծուծ կանթեղի մը նը-  
շոյլը՝ ա'Արդանեանի կամարը, սրին գաստապանն և հրացանակ-  
ներուն զնդերը լուսառորեց: Սակայն որչափ որ շարժումն արագ  
է ր, ա'Արդանեան ժամանակ ունեցեր է ր ծերունիի մը դլուսը  
տեսնելու:

— Յանուն երկնից — ըստ նա — մտիկ ըրէ ինձ. մէկուն  
կ'սպասէի և գեր չերեցաւ, մտատանջ կ'մաշիմ: Արդեօք շրջա-  
կաները փորձանք մը հասա՞լ, խօսէ, խնդրեմ:

Պատուհանը յուշիկ բացուեցաւ, և նորէն նոյն դէմքն երեւ-  
յառ, միայն թէ այս անգամ առաջինէն աւելի դունաստ է ր, .

Տ'Արդանեան իր պատմոթիւնը պարզօրէն պատմեց՝ դրեթէ ա-  
նուններն ալ տալով. յայտնեց թէ այն տաղաւարին մօտ ինչ-  
պէս ժամադիր եղեր է ր, և ինչպէս, անոր ուշանալը տեսնելով  
թմբին վրայ եղեր, և կանթեղին լուսով սենեկին անկեարդ վե-  
ճակը տեսեր է ր :

Ծերունին ուշալիր մտիկ ըրտաւ, նշան ընելով թէ պատմա-  
ծը ստոյդ է, աստա, երբ ա'Արդանեան տալարեց, զլուխն օրեց  
այնպիսի գէմքով որ արէկ նշան մը չէր:

— Ի՞նչ ըսել կ'ուզես — զուեց ա'Արդանեան — յանուն Աս-  
տուծոյ, շնոր բացարէ միաբդ:

— Ո՛հ, պարոն — ըստ ծերունին — ինձի բան մը մի հար-  
ցըներ, վասն զի եթէ տեսածս քեզի պատմեմ, տարակոյս չու-  
նիմ որ վերջս զէշ կ'լինի:

— Աւրեմն բան մը տեսեր ես — վրայ բերաւ ա'Արդանեան:  
— Աւրեմն, յանուն երկնից — շարունակեց նա ոսկի գահեկան  
մը նետելով — ըսէ ինձ թէ ինչ տեսար, և աղատորդույ խօսք  
կ'տամ որ սրտէս բառ մ'անգամ չպիտի հանեմ:

Ծերունին այնչափ անկեղծոթիւն և վիշտ նշմարեց ա'Արդա-  
նեանի ճակատին վրայ, որ նշմարը ըրտաւ անոր մտիկ ընելու և մեղ-  
միկ ըստա.

— Գրեթե ժամն ինն կար, փողոցը շշուկ մը լսեցի և ողեցի հասկնալ թէ բնչ է, երբ դրան մօտենալով տեսայ որ ներս մանել կ'ուզեն: Որովհետեւ աղքատ եմ և վախ չունիմ որ զիս կողոպտեն, գոռը բայցի և քանի մը քայլ անդին երեք մարդ տեսայ: Սառուերին մէջ կառք մը կար ձիերով լծուած և հեծնելի ձիերով: Այս հեծնելի ձիերն անշոշտ այն երեք մարդոց էին որ իրը ձիաւոր հագուած էին:

— Ա՛հ, իմ բարի պարոններս — զոչեցի — բնչ կ'ուզեք:

— Անշուշտ ելնարան մը պիտի ունենաս — ըստու խմբին պարագլուխն երեցողը:

— Այս, պարոն, այն ելնարանով պատուղներս կ'քաղեմ:

— Տուր զայն և տունդ մտիր, աշա սկուտ մը քեզի տրուած նեղութեան համար: Միայն լաւ զիտցիր որ եթէ տեսնելիք և լսելիք բաներուդ վրայ բերնէդ բառ մ'անդամ հանես (վասն զի ինչ սպառնալիք որ ընենք, դարձեալ ստոյդ ենք որ պիտի նայիս և մտիկ ընես), այն ատեն բանդ կ'բուսնի:

« Այս ըսելով սկսում մը նետեց ինձ, դրամն առի դեմքնէն, և ինքն ալ ելնարանս առաւ:

« Երօք, ցանկապատին գոռոն անոնց ետեւէն դոցելէն ետեւ՝ տուն մտնել ձևացոցի, բայց խոկյոն ետեսի գոնէն գուրս ելայ, և մութին սահելով՝ մինչեւ այն շամբկի տունիլ հասայ՝ որուն մէջ աեղդէն ամէն բան կրնայի տեսնել անտես:

« Երեք մարդիկ կառքն առաջ քշեր էին անշուկ, անոր մէջն փոքրիկ, դէք, կարճ, ալեսրիկ մարդ մը հանեցին, որ մութ զայն դուած հազուաստ հազեր էք: Այս մարդը զդոշութեամբ ելնարանն ելաւ, սենեկին ներսի դին նենդամոտ թեամբ նայեցաւ, կամացուկ մը վար իջաւ և ցած ձայնով մրմուաց.

— Նէ (elle) է:

« Անմիջապէս ինձի հետ խօսովը տաղսաւարին դրան մօտեցաւ, իր քովը դտնուած բանալիս զայն բացաւ, գոռը նորեն դոցեց և աներեսյթ ելաւ, նոյն պահուն՝ միւս երկու մարդիկ՝ ելարանէն վեր ելան: Փոքրիկ ձերուկ մարդը դոնակին առջեւ կ'կենար:

կառապանը կառքին ձիերը կ'բռնէր, և սպայիկ մը հեծանելիս ները :

« Յանկարծ տաղաւարին մէջ աղաղակներ բրդան, կին մը պատուհանին վաղեց և բացաւ զայն ինքդինքը վար նետելու համար: Բայց երբ երկու մարդիկը տեսաւ, ետեւ ընկաւ. երկու մարդիկ անոր ետեւէն վաղեցին սենեկին մէջ:

« Այն ատեն ուրիշ բան չտեսայ, բայց այնպիսի աղմուկ լսեցի որպէս թէ կարասիներ կ'խորտակէին: Կինը կ'աղաղակէր և օգնութեան կ'կոչէր: Բայց շատ չանցաւ աղաղակները մարեցան. երեք մարդիկ պատուհանին մօտ եկան՝ կինն իրենց թերուն մէջ բռնած. երկուքն ելարանէն իջան և կինը կառքը փոխազբցին, ուր պղափկ ծերուկ մարդն ալ միատեղ մտաւ: Այն որ տաղաւարը մնացեր էր, պատուհանը զոցեց, պահ մ'ետքը դռնէն դուրս ելաւ, և ստողեց որ կինն իրօք կառքին մէջն է. իր երակու ընկերներն արդէն ձիով կ'սպասէին անոր, ինքն ալ թամրին վրայ ցատկեց: Պայմիկն ալ իր սեղը բռնեց կառապանին մօտ, կառքն երեք ձիաւորներու պահպանութեամբ վազն՝ ի վազ հեռացաւ, և այսպէս ամէն բան լմնցաւ:

« Այն վայրինէն վեր՝ այլ ոչ ինչ չտեսայ, ոչ ինչ չլսեցի: Տ'Արդանեան՝ այս ահուելի դոյժն իմանալուն՝ ուժաթափ, անշարժ և անձայն մնաց. մինչդեռ բարկութեան և նախանձու տամէն սատանաներն իր սրտին մէջ կ'ունային:

— Բայց, աղատորդիս — վրայ բերաւ ծերունին, որուն վրայ այս համբ յուսահատութիւնն անշուշտ աւելի կ'ներդորձէր քան թէ աղաղակ ու արտսուք — օն, մի վշտանար, չսպաննեցին զանի, և այս է կարեւորը:

— Միթէ վեր՝ ի վերս կրցա՞ր իմանալ — ըստ ա՛Արդանեան — թէ ով էր այս դժոխային արշաւանքին պարազլուխը:

— Չեմ ճանչեր այն մարդը:

— Բայց քանի որ հետադ խօսեցաւ, անշուշտ զանի տեսար:

— Ա՛՛, անոր կերպարանին նկարագիրը կ'ուղես:

— Այս:

— Ա՞ծ, չոր, արեակէղ մարդ մը . սև պեխեր, սև ալք՝  
ազնուականի դէմք :

— Ճիշտ այն է — զուեց տ'Արդանեան — դարձեալ ա՛յն, միշտ  
ա՛յն . իմ սաստանաս է ըստ երեսոթին . հասղա մինսը :

— Ո՞րը :

— Պատիկը :

— Ո՛չ, այն աղնուական մարդ չէ, հաւաստի եմ. ասկէ զատ՝  
սուր չունէր մէջըը, և միւսներն յարդանօք չէին վարուեր առ  
նոր հետ :

— Սպասառոր մ'էր թերես — մրմնաց տ'Արդանեան : — Ո՛չ,  
եղկելի կին, եղկելի կին, բնչը ըրին արդեօք զանի :

— Խօսք տուիր զաղանի սպահելու — ըստ ծերունին :

— Եւ իմ խօստումն կ'կրկնեմ, առհոգ եղիր, ազատորդի եմ:  
Ազատորդի մ'իր խօսքն ունի, և դայն քեզի տուի :

Տ'Արդանեան լաստափայախն ճամբան բւնեց հոգեմաշ : Երբեմն  
չէր կարող հաւատալ որ տիկին Պօնասիկօն լինի այն, և միւս  
օրը Լուվր զտնելու կ'յուսար, երբեմն կ'վախնար որ ուրիշի հետ  
դառ մը չունենար և նախանձուտ մը վրայ զալով յանկարծ յա-  
փշտակած չլինէր : Տարակուսի մէջ կ'ծփար, կ'վշտանար և կ'յու-  
սահատէր :

— Ո՛չ, եթէ իմ բարեկամներս ասա լինէին — կ'զուէր նա  
— զէթ զանի գանելու յոյս մը կ'ունենայի, բայց ո զիտէ ա-  
նոնք ևս բնչ եղան :

Գրեթէ կէս զիշեր կար, հարկ կար Բլանշէն զտնել : Տ'Ար-  
դանեան հետզետէ զինետունները բանալ տուառ անոնց մէջ  
թեթև լոյս մը տեսնելով, և ոչ մէկուն մէջ Բլանշէն չզտաւ :

Վեցերորդ զինետան զալոն՝ սկսաւ մտածել որ այս խողար-  
կոթիւնը քիչ մը վտանգաւոր էր : Տ'Արդանեան իր սպասաւո-  
րին հետ առտուան ժամը վեցին տեսնուելու ապսպրեր էր, և  
ուր որ լինէր, իրաւոնք ունէր :

Սակայն՝ պատանին մտածեց որ արկածին պատահած կողմնըը  
մնալով, թերես այս խորհրդաւոր զործին վրայ աեղեկութիւն մը

կ'ստանայ : Ինչպէս որ ըսկնք , վեցերորդ զինետան առջեւ տ'Արք դանեան կանկ առաւ , առաջին կարդի շիշ մը զինի խնդրեց , առմնէն մոլթ անկիւնը զնաց արմկաւ . կոթնեցաւ , և այսպէս մինաշե առաւօտ սպասելու որոշեց . բայց այս անդամ ևս յոյսը գերեւ եւաւ , և թէե ուշաղիր մտիկ կ'ընէր , սակայն առևամպեալ հէք կնոջ հետքը գտնելու համար բան մը չլսեց այն լուտանաց , ծաղու և նախատալի զրոյցներուն մէջ , զոր իբրու կ'ուղղ զէին գործաւորներ , ծառամեր , սայլորդներ , որ իբրեն զտնուած այն պատուաոր ընկերութեան անդամներն էին : Աւստի կամայ ակամայ ստիպուեցաւ անդորժաւթենէ իր շիշը պարպելէն ետե , և կասկած շտալու համար՝ իր անկիւնն ըստ կարի հանդիսաւ զիրք մը բռնել և կրցածին չափ աղէկ գէշ քնանալ , Ինչպէս յայանի է , տ'Արդանեան քսան տարու էր , և այս տարիքին մէջ քունն անլրաւելի իրաւունքներ ունի , զոր մեծասասաւ կ'պահանջէ , նոյն իսկ ամենէն յուտահատ սրաւերու վրայ :

Առաւօտեան ժամը վեցին տ'Արդանեան արթնցաւ այնպիսի անձկութեամբ մ'որ դէշ զիշեր մ'անցընողին բաժինն է սովորաբ այդուն : Իր հագուստն ու կապուստը յարդարել զժար զործ մը չէր . իր վրան զլուխը նայեցաւ թէ արդեօք քնանալու ատեն զինքը կողոպտած են , և իր մասնին մատը , քսակը զըրս պանին մէջ և հրացանակները զօտիէն մացած դտնելով , ոտք եւլաւ , զինին վճարեց և դուրս եւաւ նայելու համար թէ արդեօք ըսյա աչքով քան թէ զիշերայն իր սպասաւորը զտնելու պիտի յաջողի՞ : Եւ արդարեւ տամուկ և մօխրապոյն մշուշին մէջէն առաջին տեսած բանն եղաւ բարեկիր Բլանշէն , որ երկու ձիերը ձեռքը բռնած՝ ծածուկ զինետան մը դրան առջեւ կ'սպասէր տ'Արդանեանի , որ թէե անոր ստիւն անցեր՝ սակայն և ոչ իսկ կասկածեր էր որ այնպիսի վայր մը կայ :

## Ե

ԲՈՐՅԱՌ

Տ'Արդանեան՝ շիտակ իր տունը դառնալու տեղ՝ Պ. աը Դրէ վիլի դրան առջև վար իջաւ և արագօրէն սանդղէն վեր ելաւ։ Այս անդամ միտքը դրաւ բոլոր անցած դարձածն անոր պատմելու։ Անտարակոյս՝ այս գործին վրայ շատ լաւ խորհուրդներ կրնար տալ նա . ասկէ զատ՝ ըստ որում՝ Պ. աը Դրէվիլ գրեթէ ամէն օր թագուհին կ'տեսնէր, կարելի էր որ Նորին վեհափառութենէն տեղեկութիւն մը ստանար այն հէք կնկան վրայ որոն անձնուիրութիւնն առ թագուհին անշուշտ շատ տող կ'նըստեցնէին անոր :

Պ. աը Դրէվիլ պատանիին պատմութիւնն այնպէս մտիկ ըրաւ որով կ'ցոյցնէր թէ այս արկածին մէջ բոլորովին ուրիշ բան կ'տեսնէր՝ քան սիրոյ դաւ մը . ուստի երբ տ'Արդանեան խօսքն աւարտեց,

— Հըմ — ըստ նա — այս ամէն ըստաներուդ մէջ Նորին բարձրութեան կարտինալին մատը կ'տեսնեմ։

— Բայց ինչ ընել պէտք է — ըստ տ'Արդանեան։

— Այս միջոցին, ոչ ինչ, բոլորովին ոչ ինչ, բայց եթէ Քարիզէն հեռանալ, ինչպէս որ ըսի, որչափ հնար է, շուտով։ Թագուհին պիտի տեսնեմ, այս հէք կնկան աներեսյթ լինելուն մանր պարագաներն անոր պիտի պատմեմ, անշուշտ տեղեակ չէ. այս պարագաներէն թերեւ անոր հետքը դտնէ, և թերեւ դարձիդ քեզի աղէկ լուր մը տալու կարող լինիմ։ Այս մասին իմ վրայ վստահէ։

Տ'Արդանեան զիսէր որ Պ. աը Դրէվիլ՝ թէե կապօն, խոստանալու սովորութիւն չունէր, և երբ զիսուածոլ խոստանար, խոստացածէն աւելի կ'կատարէր : Աւստի թէ անցելոյն և թէ պաղային համար լի երախտաղիտոթեամբ մնաս բարե ըստ հրամանատարին, և այս ալ որ իր կողմէն՝ ա՛Արդանեանի պէս արի և անվեհեր պատանիի մը սաստիկ համակրութիւնն մ'ունէր, սիրովին անոր ձեռքը մեղմեց յաջող ողեարութիւն մը մաղթելով :

Տ'Արդանեան Պ. աը Դրէվիլի խորհուրդներն ի զործ զնելու մտադիր՝ Գոսուայէօր փողոցը զարկաւ, որպէս զի իր սնտուկին պատրաստոթեան հսկէ : Տան մօտենալուն՝ Պ. Պօնասիէօն տեսաւ առաւօտեան հաղուստով որ դրան սեմին վրայ կեցեր էր : Խոհեմ Բլանշէին առջի իրիուն ըստածներն իր տան տիրոջ չարաղոյժ կերպարանին վրայ՝ միտքն ընկան, և սովորականէն առելի մեծ ուշադրութեամբ անոր նայեցաւ : Եւ իրօք, ոչ միայն անոր երեսին վրայ դիտեց գեղնուկ և ախտամէտ զունատոթիւն մը որ մաղձին արեան մէջ մզիլը կ'յայտնէ, թէե կրնար պատահական լինիլ, այլ և նշմարեց անոր դէմքին խորշերուն մէջ անսովոր նենգալի բօթեր : Խարեբայ մը պարկեշտ մարդու մը պէս չծիծաղիր, կեղծաւոր մ'անկեղծ մարդու մ'արտառքը չթափէր : Ամէն խարէտոթիւն դիմակ մ'է, և դիմակն որչափ որ լաւ շնուտած լինի, միշտ մարդս փոքր ինչ աելի ուշադրութիւն ընելով կարող կ'լինի զայն դէմքէ որոշէլ :

Հետեապէս ա՛Արդանեանի այնպէս երկցաւ որ Պ. Պօնասիէօ դիմակ մը կ'կրէր, և այս դիմակը խիստ անախործ էր ի տես :

Այս պատճառաւ՝ զզուանօր և անխօս պիտի անցնէր երթար այն մարդուն քոյլէն՝ երբ՝ առջի իրիկուան պէս՝ Պ. Պօնասիէօ իրեն խօսք ուղղեց :

— Լամ ուրեմն, պատանի — ըստ անոր — կ'երեի թէ զրուտի դիշերներ կ'անցընես . անօրէն, առաւօտեան ժամը եօթն է. կ'երեկի ինձ որ ամենուն հետեած սովորութեան հակառակ կ'վարութիս, և այն ժամուն որ ուրիշները դորս կ'ելնեն տունէն, դուրս կ'մտնես :

— Նոյն յանցանքը չունիս դու, վարպետ Պօնասիէօ — ըստ պատանին — և զգաստ մարդոյ տիպարն եռ : Իրաւ է որ երբ քեզի պէս ամէն մարդ նորատի և սիրուն կին մ'ունենայ, դուրս երջանկութիւն փնտուելու պէտքը չզգար . երջանկութիւնը կ'զայ քեզ գտնելու, այնպէս չէ, ող. Պօնասիէօ :

Պօնասիէօ մեռելի զոյն առաւ և սուտ ճպիտ մ'ըրաւ :

— Հաւ, հաւ — ըստ Պօնասիէօ — դու կատակաբան ընկեր մ'ես : Բայց, իմ նորատի տէրս, այս զիշեր ո՞ր կողմերը դեղեւ թշցիր, կ'երեւ թէ արտուղի ձամբաները մաքուր չէին :

Տ'Արդանեան աչքը կօշիկներուն դարձուց որ աղմով ծածկուած էին, բայց այս շարժումն ընելով փերեզակին սոլերներն ու դուլպաներն ալ դիտեց . կարծես թէ մի և նոյն տղմուտ վայրը թաթախուեր էին . թէ անոր և թէ պատանիինը բուլորովին յար և նման աղտեր կ'կրէին :

Այն ատեն տ'Արդանեանի մաքէն յանկարծ բան մ'անցաւ : Այն պղտիկ, զէր, կարձ, ալւորիկ մարդը, այն սպասառորդ նըման արարածը՝ որ մութ հագուստ հազեր էր, և ձիւորներու կողմէն յարդ և պատիւ չէր ընկուներ, անշոշտ նոյն ինք Պօնասիէօն պիտի լինէր : Էրիկն իր կնկան սուեանդին հանդիսաւուս վկայ եղեր էր :

Տ'Արդանեանին սոսկալի փափաք մ'եկաւ փերեզակին կոկորդը բռնել և զանի խեղզել, բայց, ինչպէս որ դիտենք, շատ խոհեմ տղայ մ'էր, ուստի ինքզինք զապեց : Սակայն տ'Արդանեանի դէմքին այլայլութիւնն այնքան յայտնի էր որ Պօնասիէօ սարսափի զդաց և քայլ մ'ետ քաշուելու փորձեց . բայց Ճիշտ գրան փեղկին առջև դանուելովը՝ որ զոց էր, ստիպուեցաւ այս արգելքին պատճառաւ գտնուած տեղը կենալ :

— Զարմանք, գու որ կատակ կ'ընեն, բարեմիտ մարդ — ըստ տ'Արդանեան — զիտէ անզամ մ'որ եթէ կօշիկներս սպունզի կարօտ են, քու սոլերներդ ու դուլպաներդ խոզանակի պէտք ունին : Արդեօք գու ալ քու կողմէդ, վարպետ Պօնասիէօ, զիշերն որսի՞ ելար : Ա՛հ, շուտիկ, քու հասակիդ մարդու մը ներ-

բելի չէ այդպիսի բան մը , մանաւանդ՝ երբ քեզի պէս նորատի և սիրուն կին մ'ունենայ :

— Ո՛չ , տէր Աստուած , չէ — ըստ Պօնասիէօ . — միայն Երեկ Սէն-Մանտէ զացեր էի սպասուհիի մը վրայ տեղեկութիւն հարցնելու , վասն զի շատ պէտք ունիմ , և որովհետեւ Ճամբառ ները շատ գէշ էին , անկից բերի բոլոր այս ափղմը , և ժամանակ չունեցայ զայն սրբել տալու :

Պօնասիէօի յիշած վայրը՝ իրեն իր պատյափին նպատակ , նոր ապացոյց մ'եղաւ տ'Արդանեանի կասկածները հաստատելու : Պօնասիէօ Սէն-Մանտէ ըսեր էր , վասն զի Սէն-Մանտէ Սէն-Քլուի բոլորովին զիմացի կողմն է :

Այս հաւանական պարագան առաջին միիթարութիւն մ'եղաւ Եթէ Պօնասիէօ իր կնկան ուր լինելը զիտէր՝ կարելի էր՝ բուռն միջոցներ գործածելով՝ փերեզակը բռնադատել իր բերանը բանալու ու զաղունիքը վեր հանելու : Միայն հարկ էր այս հաւանականութիւնը ստուգութեան փոխել :

— Ներէ , սիրելի Պ . Պօնասիէօ , Եթէ քեզի հետ արձակ համարձակ կ'խօսիմ — ըստ տ'Արդանեան . — բայց քնատութեան պէս ծարաւ զրուող բան մը չկայ , տստի ես ալ սաստիկ պապակեր եմ , ներէ ինձ բաժակ մը ջուր խմեմ տանդ մէջ , զիտես որ բարեկամի մէջ այսպիսի խնդիր մը չմերժուիր :

Եւ առանց իր տան տիրոջ հրամանին սպասելու , տ'Արդանեան շուտ ընդ փոյթ տունը մտաւ , և արագ ակնարկ մը նետեց անկողնին վրայ : Անկողինն աւրուած չէր , որեմն Պօնասիէօ անկօղին չէր մտեր , և այն ինչ տուն կ'գտանար և հազիւ մէկ երկու ժամ կար . մինչև որոշեալ տեղն իր կնկան ուղեկցեր էր , կամ գէթ առաջին կայանը :

— Ճնորհակալ եմ , վարպետ Պօնասիէօ — ըստ տ'Արդանեան իր բաժակը պարպելով — ահա այս միայն քեզնէ կ'խնդրէի : Այժմ տուն կ'գտանամ , Բլանշէի մաքրել պիտի տամ կօշիկ ներս , և երբ լմնայ , եթէ կ'ուղես քեզի զրկեմ որ սուերներդ սրբէ :

Եւ փերեղակը թողուց լիովին ապուշ կրթած այս այլանդակ հրաժարական բարեին վրայ , և մինչդեռ կ'հարցնէր խրովի թէ արդեօք իր քթէն բանած չէ :

Տ'Արդանեան սանդղին զլուխը Բլանշէն գտաւ լիովին շլմորած :

— Ա՛հ , պարոն — զոչեց Բլանշէ իր տէրը տեսնելուն — աշանոր լուր մ'ալ , և աչքս ճամբան մնացեր՝ ձեզի կ'սպասէի :

— Ի՞նչ կայ , չես ըսեր — հարցուց տ'Արդանեան :

— Ո՛հ , եթէ կարող էք , զոշակեցէք , պարոն , թէ ձեր բացակայութեան ժամանակ որո՞ւ այցելութիւնն ընդունեցաք :

— Ե՞րբ :

— Կէս ժամ՝ կայ , երբ Պ . տը Դրէվելի ապարանը կ'գտնուելիք :

— Եւ ովլ է եկողը , նայինք , խօսէ :

— Պ . տը Քավուա :

— Պ . տը Քավուա՞մի :

— Նոյն ինք անձամբ :

— Այսինքն , Նորին բարձրութեան պահակաց հրամանատարը :

— Նոյն ինք :

— Եկեր էր զլա ձերբակալ ընելու արդեօք :

— Այդ բանը մտքէս անցաւ , պարոն , թէև կեղծ ու պատիր և աղու դէմք մ'ունէր :

— Կեղծ ու պատիր դէմք ունէր , կ'ըսես :

— Այսինքն բերնէն շաքար ու մեղք կ'հօսէր , պարոն :

— Իրաւ :

— Կ'ըսէր թէ Նորին բարձրութեան կողմէն կ'դար որպէս զի ձեզ իր հետը Բալէ-Թօյալ տանի , Նորին բարձրութիւնը ձեր բարիքը մտածելուն :

— Հապա դու ի՞նչ պատասխան տուիր :

— Ըսի որ անկարելի բան էր , վասն զի տունը չէիք զըսւ նուեր , ինչպէս որ կրնար աչօքը տեսնել :

— Այն ատեն ի՞նչ ըսաւ :

— Ըստ որ անվերէպ ցորեին իր տունն երթաք . յետոյ կամացուկ մը յարեց . «Տիրոջք ըսէ որ Նորին բարձրութիւնը լիու-

վին տրամադիր է անոր բարկք ընելու, և թէ կարելի է այս տեսնենէ կախում ունի իր բաղդը » :

— Կարտինալին կողմէ՝ խիստ ձախող կ'զտնեմ այս ծուղակը

— վրայ բերաւ պատանին ժպտելով :

— Ճիշտ, ես ալ ծուղակը տեսայ, և ըսի որ ՚ի դարձին շատ պիտի վլուանաք ձեր բացակայութեան վրայ :

— Ո՞ւր գնաց — հարցոց ինձ Պ. աը Քավուա :

— Թրօյ ՚ի Հանրանյը — պատասխան տուի :

— Եւ ԵՌԲ դնաց :

— ԵՐԵԼ իրկուն :

— ԲԼԱՆՉԷ, բարեկամդ իմ — ընդմիջեց ո՛Յրդանեան — իրաւի դու չնաշխարհիկ մարդ մ'ես :

— Կ'հասկնաք հիմակ, պարոն, որ մտածեցի թէ միշտ առիթ չպակսիր՝ եթէ Պ. աը Քավուան տեսնել ուզէք, իմ ըսածս սուտ հանելու, ըսելով թէ մեկնած չէք, և այն տոեն ես միայն սուտ խօսած պիտի լինիմ, և որովհետեւ ազատորդի չեմ, ես կրնամ սուտ խօսիլ :

— ԱՆՀՈՂ Եղիր, ԲԼԱՆՉԷ, դու միշտ իրրե ճշմարտախօս՝ համբաւդ անարատ պիտի պահես. քառորդէ մը ճամբայ պիտի Ելնենք:

— Ես ալ այդ խորհուրդը պիտի տայի ձեղ, պարոն, և եթէ անխոչեմութիւն չէ, կրնամ հարցնել թէ ո՞ւր պիտի Երթանք :

— Կ'հարցնես. Ճիշտ քու ըսած քաղքիդ հակառակ կողմը՝ Եւ միթէ կրիմօի, Մուսքդօնի և Պազէնի վրայ տեղեկութիւն ըստանալու այնչափ փափաք չունին, ինչպէս ունիմ ես ալ իմանալու համար թէ ի՞նչ եղան Աթոս, Յորթոս և Արամիս :

— Անտարակիցս, պարոն — ըսաւ ԲԼԱՆՉԷ — և Երբ կամիք, պատրաստ եմ մեկնելու. մեղի համար, ինչպէս որ կ'դիտեմ, զուտուի օդը լաւաղոյն է այժմ քան Բարիցին : Ուստի . . . :

— Ուստի, մեր ծրարը պատրաստէ, ԲԼԱՆՉԷ, և մեկնինք. ես՝ ձեռքս դրամնիս մէջ՝ առջեւն պիտի Երթամ որ մէկու մը կառակած չտամ: Պահակաց ապարանը կ'գառ զիս կ'զտնես: Աղէկ միտքս ընկառ, ԲԼԱՆՉԷ; կարծեմ թէ մեր տան տիրով մասին իրաւացի է կարծիք, արդարեւ նողեալի սինլքոր մ'է :

— Ա՛Հ, հաւտացէք ինձ, պարոն, երբ ձեզի բան մ'ըսեմ. ևս զիմադէտ եմ, քաջ զիացիր :

Առաջ ա'Արդանեան վար իջաւ, ինչպէս որ արդէն խօսքը մէկ ըրեր էին, յետոյ ինքզինք չքմզս ընելու համար, վերջին անդամ իր երեք բարեկամաց բնակարանը զիմեց : Ինաւ անոնց կողմէ լուր մը չէին առեր, մինակ հոտառէտ և վայելչաղիր նամակ մ'եկեր էր Արամիսին : Տ'Արդանեան նամակն առաւ աիրոջը տալու : Տաս վայրկեան ետքը՝ Բլանշէ Պահակաց ապարանն երթալով՝ իր տէրը դտեր էր : Տ'Արդանեան ժամակորոյս չլինելու համար ինքն անձամբ ձիուն թամբը գրեր էր :

— Աղէկ տեղառորեցի՞ր — ըստ նա Բլանշէին, երբ այս վերաջինը միացուց պարկը կազմուածին . — Հիմակ միւս երեք ձիերն ալ թամբէ, և ճամբայ ելնենք :

— Միթէ կարծեն թէ մէյմէկ ձի մեր ետեկն քաշելով աւելի շուտով պիտի երթանք — Հարցուց Բլանշէ իր սմեղուկ դէմքով :

— Ա՛Հ, պարոն ծաղրախօս — պատասխանեց տ'Արդանեան — բայց մեր չորս ձիերով կրնանք դարձնել չորս բարեկամները, եթէ երբէք զանանք ողջ գտնենք :

— Այդ մեծ բարերազդութիւն մը պիտի լինի — պատասխանեց Բլանշէ — բայց Աստուծոյ ողօրմածութենէ յուսահատիլ պէտք չէ :

— Ամէն — ըստ ա'Արդանեան ձին հեծնելով :

Եւ միասին Պահակաց ապարանէն դուրս ելան իւրաքանչիւրը փողոցին մէկ ծայրը բռնելով, ըստ որում՝ մին Վիլէդի քաղաքադունէն և միւսը Մօնղմարդրէն պիտի ելնէին Բարիզէն՝ Աէն-Տընիի վարի կողմը վերստին միանալու համար . ռազմական հնար մ'որ երկու կողմէն ամենայն ճշդութեամբ կատարուելով յաջողագոյն ելք մ'ունեցաւ : Տ'Արդանեան և Բլանշէ Բիէրֆիդ մուան մէկտեղ :

Պէտք է խոստովանիլ որ Բլանշէ աւելի որտոտ էր յորեկը քան թէ զիշերը :

Սակայն իր բնածին խոհեմաթիւնը միշտ կ'պահէր, առաջին ողերութեան և ոչ մէկ պատահարը մոռցեր էր, և թշնամիի տեղ կ'գնէր ճամբան վրայ զավ որ հանդիսէր: Ասոր համար զլիարկը միշտ ձեռքը կ'բռնէր, որով ա'Արդանեանի կողմէն սաստիկ կշտամբանք կ'ընդունէր, ըստ որում հրացանակիրը կ'երկնէր որ չափազանց քաղաքավարութիւնն ցոյց տալով Բլանշէ սառորին մարզու մը սպասառորը չսեպուի:

Սակայն՝ բռնէ թէ անցորդները Բլանշէի մարդավարութենէ հրապորեալ, բռնէ թէ այս անդամ գարանակալ մը չկար ճամբան վրայ՝ մեր երկու ուղերոները Շանդիյի հասան անվտանգ և Կրան-Աէն-Արդէնի պանդոկն իջան, ճիշտ այն պանդոկն որ օթևաներ էին իրենց առաջին ճամբորդութեան ատեն:

Երբ պանդոկապեաը պատանին տեսաւ որուն ետեէն սպասառորն երկու ձիով կ'գար՝ յարդանօք դրան սեմին վրայ երեցաւ: Արդ՝ բատ որում ա'Արդանեան արդէն տասն մէկ մղն ճամբայ ըրեր էր, յարմար դատեց կամկ առնլու, թէ Բորժոս անդ կը դանուէր թէ ոչ: Ասկէ զատ՝ թերեւս խոհեմութիւն չէր անմիշապէս աեղեկութիւն խնդրել հրացանակիրին վրայ: Այս խորհրդականներն ընելով ա'Արդանեան առանց բնոտ հարց ու փորձ ընելու, վար իջաւ, ձիերը սպասաւորին տուաւ որ դարմանէ, փոքրիկ խուց մը մտաւ՝ որ մինակ գտնուիլ ուզողներուն յատկացած էր, և պանդոկապետին ապապրեց որ զերազնիւ դինի և կարելի եղածին չափ լաւ նախաճաշիկ մը պատրաստէ իրեն. այս հրամանին վրայ սպանդոկապետը՝ առաջին տեսքով ա'Արդանեանի մասին ստացած կարծիքը հաստատեց:

Ճետեապէս ա'Արդանեան հրաշալի արագութեամբ նախաճաշիկն ունեցաւ:

Տէ բութեան առաջին ազնուականներէն կ'կազմուէր պահաւկաց գունդը, և քանի որ ա'Արդանեան ետեէն սպասառոր ունէր և չորս փառառոր ձիով կ'ուղերուէր, ի հարկէ մնձ ներդործութիւն պիտի ընէր իր համազդեստին պարզութեան չնայելով: Պանդոկապետն անձամբ անոր նախաճաշիկը մնձարել ուզեց, և

Թ'Արդանեան այս բանս զիտելով՝ երկու բաժակ բերել տուաւ և հետևեալ խօսակցութիւնը սկսու։

— Ճշմարփաւ վկայ, սիրելի պանդոկապետ — ըստու Թ'Արդանեան երկու բաժակները լնլով — ես ամենէն ընտիր դինիդ խընդրեցի, և եթէ զիս խարեցիր, ըրած յանցանքովդ պիտի պատճուիս, վասն զի, դինին միայնակ խմել չսիրելովս, դու ալ իսձի հետ պիտի խմես։ Ուրեմն սա բաժակն առ և միասին խմնիք։ Ի՞նչ բանի խմնիք, նայինք, որպէս զի ոչ ոք առնուի։ Պանդոկիդ յաջողութեան համար խմնիք։

— Տէր իմ, մնձ պատիւ կ'ընեն ինձ — ըստու պանդոկապետը — և անկեղծօրէն շնորհակալ եմ քեզ այդ բարեմաղթութեան համար։

— Բայց մի խարուիր — ըստու Թ'Արդանեան — թերես կարծածէդ աւելի ինքնասիրութիւն կայ այս առաջարկութեանն մէջ. մինակ յաջող պանդոկներու մէջ մարդ հանդիստ կ'զանէ, իսկ ձախորդութեան մէջ զանուող պանդոկներն ամէն բան ծուռ կ'երթայ և ուղևորն ալ իր պանդոկապետին դժուարութեանց զոհ կ'մնայ. արդ՝ ես որ շատ կ'ուղևորիմ, մանաւանդ այս համբուս վրայ, կ'փափաքէի որ ամէն պանդոկապետները հարստանան։

— Կրաւ է — ըստու պանդոկապետը — կ'երեսի ինձ որ առաջին անգամը չէ որ քեզ տեսնելու պատիւն ունիմ, պարոն։

— Բա՛, կարելի է տասն անդամ՝ է որ Շանդիլիէն կ'անցնիմ, և տասնէն գէթ երեք չըրս անդամ՝ պանդոկդ իջևանած եմ։ Կը յիշե՞ս արգեօք մօտ տաս տասն երկու օր կայ որ աստ էի, բարեկամներու, հրացանակիրներու ընկերանալով. նշանաւորը սա է որ անոնցմէ մին օտարականի մը հետ կոռուի բռնուեցաւ, անձանօթ մարդ մ'էր որ ի՞նչ պատճառաւ անոր հետ կոխ բացաւ, չղիաեմ։

— Ա՛՛, իրաւի — ըստու պանդոկապետը — և քաջ կ'յիշեմ՝ այս գէպքը։ Միթէ խօսքը Պ. Բորթոսի վրայ չէ։

— Ճիշտ այդ է իս ուղեկից բարեկամիս անունը։ Առտուած իմ, սիրելի պանդոկապետս, ըսէ ինձ, արգեօք պլիսին ձուն մ'եկա՛։

— Բայց դիտեցիր անշուշտ, տէր իմ, որ չկըցաւ իր համբան շարունակել:

— Եւ արդարեւ մեղի խօսք տուեր էր միանալու, և այնուհետեւ նորէն չտեսանք զինքը:

— Աստ մնալու պատին ըրաւ մեզ:

— Ի՞նչ, աստ մնալու պատին ըրաւ քեզ:

— Այո՛, պարոն, այս պանդոկիս մէջ. մանաւանդ թէ մէծ մտատանջութեան մէջ ենք:

— Եւ ինչո՞ւ համար:

— Ըրած քանի մը ծախուց համար:

— Լաւ, 'ի հարկէ ըրած ծախսերը պիտի վճարէ:

— Ահ, պարոն, ճշմարիտը հսդի կ'տաս ինձ: Ճատ ծանր ծախսեր ըրինք, և զեռ այս առատու վիրաբյժը մեղ իմաց տուառ որ եթէ Պ. Բորթոս պարտքը չվճարէ, իզնէ պիտի պահանջեցումարը, ըստ որում ես կանչել տուի զինքը:

— Ռւբեմն Բորթոս վիրաւորուած է:

— Չեմ կարող ըսել, պարոն:

— Ի՞նչպէս, չե՛ս կարող ըսել. սակայն պարտաւոր ես ամենէն աւելի դու տեղեակ լինիլ այս բանին:

— Այո՛, բայց մեր արհեստը չներեր, պարոն, որ մեր ամէն, զիտցածն ըսենք, նա մանաւանդ երբ կանխառ իմաց կ'արտի մեղ որ եթէ բերանը խօսի՝ ականջները պիտի տուժեն:

— Լաւ ուրեմն, արգեօք կարելի՞ է Բորթոսը տեսնել:

— Վնտարակոյս, պարոն: Սանդղէն վեր ելիր, առաջին գտակիսնի առաջին թիւ սենեկին դուռը զարկ: Սիայն կանխառ ազդ տուր որ դու ես:

— Ինչպէս, իմաց տամ որ ես եմ:

— Այո՛, ապա թէ ոչ, կընաս փորձանքի մը հանդիսպիլ:

— Եւ ի՞նչ դժբաղդութիւն կրնայ պատահիլ ինձ:

— Կարելի է որ Պ. Բորթոս կարծէ թէ տան մարդերէն մէկն ես, և բարկութեան բրդելով սուրը մարմնոյդ մղէ, կամ գըն թակով դլուխող ծակէ:

— Ուրեմն ի՞նչ ըրիր անոր :

— Ստակ ուղեցինք իրմէ :

— Ա՛հ, շուտիկ, քաջ կ'իմանամ բաածդ . այդպիսի խնդրէ մը Բորթոս միշտ կ'բարկանայ երբ զբամ չոնենայ , բայց զիտեմ որ պէտք էր ստակ ունենալ :

— Մենք ալ այդպէս կարծէինք , պարոն : Որովհետեւ մեր պահն դոկին գործը շատ կամոնառոր է , և ամէն շաբաթ մեր հաշինեարը կ'պատրաստենք , ուժ օրէն մեր հաշուեղիրն անոր տարինք , բայց կ'երեւ թէ գէշ ժամուն զացինք , վասն զի այն ինչ բառ մ'ըսինք պարտքին վրայ որ մեզ սաստանային ծակը որկեց , այս ալ իրաւ է որ առջի իրկուն թուղթ խաղացեր էր :

— Առջի իրկուն , ինչպէս և որո՞ւ հետ խաղացեր էր :

— Ա՛հ , Աստուած իմ , ով կրնայ գիտնալ . աղնուականի մը հետ թերևս՝ որ ասկից կ'անցնէր և որուն լնու+ընէ առաջարկեր էր :

— Այդպէս պիտի լինի , և խեղճն ամէն բան կորուսած է :

— Մինչև անդամ ձին , պարոն , վասն զի երբ օտարականը մեխելու ելաւ , տեսանք որ իր սպասաւորը Բորթոսին երիվարը կ'թամբէր : Այն ատեն անոր դիտողութիւն ըրինք , բայց պատասխան տուառ որ ուրիշ վերաբերեալ բաներու չխառնուինք և թէ այս ձին իրն էր : Խոկոյն զործն իմաց տուինք Պ. Բորթոսին , բայց մեզի աղջարարութիւն ըրաւ թէ ապիրատներ ենք որ աղատորդին մը խօսքին վրայ կ'տարակուսինք , և թէ , քանի որ ձին իմն է ըսեր էր օտարականը , 'ի հարկէ իրը պիտի լինէր :

— Քաջ զիտեմ որ այսպէս կ'վարուի — մրմռաց տ'Արդանեան :

— Այն ատեն — շարունակեց պանդոկապետը — պատասխան զրկեցի անոր թէ քանի որ վճարման վրայ չենք կարող համաձայնիլ , կ'յուսայի որ չնորհ կ'ընէ Եկլ—որ պանդոկապետին պանդոկին անցնիլ : Բայց Պ. Բորթոս իմացուց ինձ թէ իմ պանդոկու աւելի լաւ է և աստ մնալու աւելի պատշաճ կ'համարի :

« Այս պատասխանը շատ դդուելի լինելուն՝ անոր չուին վրայ չպնդեցի : Աւտոի աղաչեցի միայն որ իր սենեակը՝ որ պանդոկին մէջ ամենէն դեղեցիկն է , ինձի տայ , և զո՞ւ լինի երբորդ զըս»

տիկոնը դաշնուած փոքրիկ սիրուն զահլիճով մը : Բայց Պ. Բոր-  
թոս ասոր ալ պատասխան տուաւ թէ , ըստ որում ժամկ ժամ  
իր սիրուհոյն կ'սպասէր , որ արքունեաց նշանաւոր կիներէն մին  
էր , պէտք էի խոստովանիլ որ պանդոկիս մէջ այն սենեակն իսկ  
ուր բնակելով պատիւ կ'ընէր ինձ , այնպիսի անձի մը համար  
միջակ էր :

« Սակայն՝ որչափ որ արդարացի դտայ այս պատասխանը , դար-  
ձեալ հարկ սեպեցի պնդել , բայց Պ. Բորթոս և ոչ իսկ ծան-  
րութիւն առաւ ինձի հետ այս մասին խորհրդակցելու , այլ ա-  
տօրձանակն առաւ , իր գիշերային սեղանին վրայ դրաւ և յայտ-  
նեց թէ սենեկէն փոխագրուելու մասին խօսք մ'անգամ ըսուի ,  
պիտի գնդահարէ այն անխոհեմ անձն որ իրեն վերաբերող բա-  
նի մը կ'խառնուի : Առափի , այն ատենէն վեր , պարոն , ոչ ոք  
իր սենեակը կ'մտնէ՝ իր սպասաւորէն զատ :

— Աւրեմն Մուսքդօնն անտ է :

— Այո՛ , պարոն , իր երթէն հինգ օր ետքը՝ այն ալ շատ նե-  
ղացած ետ զարձաւ . կ'երեսի թէ նա ևս իր ուղևորութեան մէջ  
անսախորժ բաներ կրեր է : Գէշն այն է որ իր տիրոջմէն առելի  
թեթևողի է , այնպէս որ իր ամիրոջ համար ամէն բան տակն ու  
վրայ կ'ընէ , վասն զի , զիսնալով որ իր ուղածը չպիտի տրուի  
իրեն , առանց ուղելու ամէն բան կ'առնու :

— Սա իրաւ է — պատասխան տուաւ ա՞նըլանեան — որ միշտ  
Մուսքդօնի վրայ գերազանց անձնուիրութիւն և իմացականութիւն  
դիտած եմ :

— Այդ կարելի է , պարոն , բայց երեւակայէ անգամ մ'որ  
եթէ տարին չորս անգամ միայն այնպիսի իմացականութեան և  
անձնուիրութեան որ հանդիպիմ , տունս կ'փլի :

— Ո՛չ , վասն զի Բորթոս առնելիքդ պիտի վճարէ :

— Հըմ — ըրաւ պանդոկապետը տարակուսելու երեսով մը :

— Խիստ մեծ կնկան մը մտերիմն է որ քեզ ունեցած չնշն  
պարտքին համար զինքը տագնասպի մէջ չթողուր անշուշտ :

— Եթէ իմ կարծիքս այս մասին յայտնել համարձակէի . . . :

- Ի՞նչ կարծիք ունիս :
- Նա մանաւանդ եթէ զիտցածս ըսէի . . . :
- Ի՞նչ է զիտցածդ :
- Նա մանաւանդ ի՞նչ որ հաւաստեաւ զիտեմ . . . :
- Եւ ի՞նչ բան զիտես հաւաստեաւ նայինք :
- Նախ պիտի ըսեմ որ այն մեծ տիկինը կ'ձանչեմ :
- Դու :
- Այս, ես :
- Եւ ի՞նչպէս կ'ձանչես զանի :
- Ո՛չ, պարոն, եթէ կարենայի խոհեմովթեանդ վստահիլ . . . :
- Խօսէ, և իմ ազատորդին խօսքս կ'տամ քեզ որ վստահովթեանդ վրայ չպիտի զղջաս :
- Լաւ ուրեմն, պարոն, կրնաս երեակայել որ կասկածը շատ բաներ ընել կ'տայ մարդուս :
- Ի՞նչ ըրիբ :
- Ո՛չ, անտարակցս պարտապահանջի մ'իրաւունքէն դուրս բան մը շըրի :
- Վերջապէս ի՞նչ :
- Պ. Բորթոս այն դքսուհւոյն համար զիր մը տուաւ մեզ, ինդրելով որ թղթատարին յանձնենք : Իր սպասաւորը գեռ եւ կած չէր : Եւ որովհետեւ ինքն ալ չէր կարող օենեկէն դուրս ելնել, հարկ եղաւ որ մեզի ընէ իր յանձնարարութիւնը :
- Այս :
- Փոխանակ թղթատարին յանձնելու զիրը, քանի որ սոսյդ ճամբայ, մը չէ, սպասաւորիս մէկուն թարիզ երթալը պատեհ առիթ սեպելով՝ ապսպրեցի անոր որ անձամբ դքսուհիին ձեռքը տայ : Ասով Պ. Բորթոսին նպատակը կատարած եղայ, այնպէս չէ, քանի որ խստիւ պատուէր տուեր էր որ զիրն անկորուստ հասցէին արուի :
- Գրեթէ :
- Լաւ ուրեմն, պարոն, զիտեմ արդեօք թէ ի՞նչ է այն մեծ տիկինը ըսածը :

- Ա'չ, մինակ ո՛ . Բորթոս անոր խօսքն ըրած է ինձ :  
 — Գիտե՞ս արդեօք թէ ի՞նչ է այն սուտ դքսուհին :  
 — Նորէն կ'ըսեմ, չեմ ճանչեր զանի :  
 — Ծաղլէի պառաւ տնտեսուհի մ'է , Գօքնար անուն , որ  
 քիւէն քիչ յիսուն տարու է , և տակաւին նախանձուի հովեր  
 կ'առնու : Զարմանալի կ'երևէր նաև ինձ որ իշխանուհի մը Ռւբո  
 փողոցը բնակի :  
 — Այդ բանն ի՞նչպէս իմացար :  
 — Վասն զի բարկութեան բրդաւ նամակն ընդունելով , ըստ  
 թէ Բորթոս թեթեամիտ պատանի մ'է , և թէ դարձեալ կնկան  
 մը համար ստացած է այն սրի հարուածը :  
 — Բայց միթէ իրօք սրի հարուած կերան :  
 — Ա՛հ , Աստուած իմ , ի՞նչպէս բերնէս փախուցի :  
 — Ըսիր որ Բորթոս սրի հարուած մ'առեր է :  
 — Այս , ըսի , բայց սաստիկ պատուէր տուեր էր ինձ որ մարու  
 դու բան չըսեմ :  
 — Ինչո՞ւ համար :  
 — Զգիտե՞ս , պարմ , վասն զի պարծեր էր թէ այն օտարաւ  
 կանն որուն հետ կուի բոնուած թողոցեր զացեր , զարկեր է ,  
 մինչդեռ այն օտարականն էր իրօք որ անոր մեծ մեծ ջարդելը  
 մտիկ ընելով զետին փռեց զինքը : Արդ՝ ո՛ . Բորթոս խիստ պարու  
 ծուկ մարդ լինելուն , ամեն մարդու առջև , բայց ի դքսուհին ,  
 որուն սիրալ շարժել կարծեց իր արկածին պատմութիւնն ընել  
 լով , չուզեր խօսուովանիլ որ սրի հարուած մը կերեր է :  
 — Ռւբեմն այսպէս սրի հարուածին պատճառաւ անկողին ընա  
 կած է :  
 — Եւ սրի հարուածն ալ վարպետի դործ է , հաւաստի եղիր :  
 Անարակցու բարեկամիդ հողին մարմնոյն մշջ զամած պիտի լինի :  
 — Ռւբեմն գու կուին ներկայ էիր :  
 — Պարո՞ն , հետաքրքրութենէ անոնց ետեւէն զացեր էի , այն  
 պէս որ անտես մնալով մարդը տեսայ :  
 — Եւ զործն ի՞նչպէս անցաւ :

— Ո՞չ, պատմութիւնն երկար չէ, հաւասարի եղիր: Իրարժ  
դէմ ելան. օտարականը սուտ շարժում մ'ըրաւ և բորթոսին  
զարկաւ շեշտակի, և այս բանն այնքան շուտ անցաւ որ երբ Պ.  
Բորթոս նորէն ճակատ ցցուց, կրծքին վրայ սուրն երեք մատ  
մտեր էր: Յանկարծ տապաստ ընկաւ կոնակի վրայ: Օտարա-  
կանն իսկոյն սրին ծայրն անոր կոկորդին դրաւ, և Պ. Բորթոս  
տեսնելով որ իր թշնամիին ձեռքին տակն է, խոստովանեցաւ  
որ պարտեալ է: Ասոր վրայ օտարականն անոր ամունը հարցուց:  
և երբ իմացաւ որ Բորթոս է և չէ թէ տ'Արդանեան, իր թեն  
անոր տուառ, գէալ 'ի պանդոկն առաջնորդեց և նորէն ձի հեծ-  
նելով անհետ եղաւ:

— Աւերմն այս օտարականը տ'Արդանեանը կ'փնտուէր:

— Խնձի այնպէս երեցաւ:

— Եւ միթէ դիտեն թէ ուր գնաց:

— Ո՞չ, մինչև այն ատեն տեսած չէի զինքը, և այն ատենէն  
վեր ալ նորէն չտեսայ:

— Ծատ լաւ, դիտեմ ինչ որ հասկնալ կ'ուզէի: Հիմակ կ'ը-  
սես թէ Բորթոսին սենեակն առաջին դատիկոնն է, թիւ 1:

— Այո, պարոն, պանդոկիս ամենէն աղոսրն է. սենեակ մը  
զոր ցարդ տաս անշամ վարձու տալու առիթ պիտի ունենայի:

— Պահ, հանդարտէ — ըստ տ'Արդանեան խնդալով — Բոր-  
թոս Գօքնար դքսուհիին ստակով առնելիքդ պիտի վճարէ:

— Ո՞չ, պարոն, տնտեսուհի կամ դքսուհի, և թէ իր քսա-  
կին բերանը բանայ, բան մը չէ եղածը. բայց նա բայց 'ի բաց  
պատասխան տուառ որ Պ. Բորթոսին պահանջումներէն և անհա-  
ւատարմոթենէն զզուած է, և թէ ստակ մ'անդամ չպիտի դրկէ  
անոր:

— Եւ միթէ այս պատասխանը Պ. Բորթոսին իմացուցիր:

— Ամենեին, զզուացանք այդ բանն ընելու. այն ատեն պի-  
տի հասկնար թէ իր յանձնարարութիւնն ինչ կերպով կատա-  
րեր ենք:

— Հետեւակէս հիմակ կ'ապասէ որ իրեն դրամ դայ:

— Ո՞՛ , Աստուած , այս , կ'սպանէ : Դեռ երեկ զիր զրեց : քայց այս անդամ՝ իր սպասաւորն առաւ և զիրը թղթատարին ձգեց :

— Աւ բեմն ըսածին պէս տնտեսուհին պառաւ և տղեզ կին մ'է :

— Առ նուաղն յիսուն տարու է , պարոն , և բնաւ աղւոր չէ , Բաթօին ըսածին նայելով :

— Եթէ այդպէս է , անհոգ եղիր , անոր սիրտը պիտի կակղի վերջապէս , ասկէ զատ՝ Բորթոս անշուշտ մեծ պարտք մը չունի քեզի :

— Ի՞նչպէս չունի : Արդէն քասանի չափ ոսկի դահեկան կ'ուղեմ , 'ի բաց առեալ բժիշկը : Ո՞՛ , չուզեր բանէ մը զըկուիլ , յայտնի կ'երեսի որ լաւ ապրելու սովորած է :

— Դարձեալ , եթէ իր տիրուհին զինքն երեսէ ձգէ , բարեկամներ պիտի գտնէ , ստոյդ եղիր այս մասին : Այսպէս , պարոն , բնաւ հոգ մի ըներ ; և անոր վիճակին պահանջած խնամքը տալ շարունակէ :

— Պարոն , խօստացար ինձ տնտեսուհիին խօսքը չբանալ և վէրքին վրայ բառ մ'անդամ՝ չըսել :

— Այո՛ , այսպէս որոշուած է , իմ խօսքս տուի քեզի :

— Ո՞՛ , թէ որ ըսես , անշուշտ պիտի սպաննէ զիս , կ'իմասնամս :

— Մի վախնար , կարծուածին չափ սատանայ չէ :

Այս խօսքն ըսելով մ'Արդանեան սանդղէն վեր ելաւ , պահագապետը հանդարտելով երկու բանի վրայ՝ որոց համար հոգի կ'տար , այս է իր առնելիքն ու կեանքը :

Սանդղին զլուխը՝ նրբաղաւթին ամենէն աւելի աչքի զարնող դրան վրայ դծուած էր սե կաւիճով՝ հսկայաձև և թիւը . մ'Արդանեան անդամ՝ մը զարկաւ , և ներսէն մտնելու ձայն լսելուն՝ մտաւ :

Բորթոս պառկած էր , և Մուսքոնի հետ լշես+ընէ կ'խաղար՝ ժամանակ անցընելու , մինչդեռ ճաղարով շամփուր մը կրակին

առջև կ'դառնար , և մեծ կրակարանի մ'ամէն մէկ անկիւնն երակու կասկարայի վրայ երկու սան կ'եռար , որոց մէջէն երէի և ձկի կոտրտոքի հօտ մը կ'ելնէր հոտոտելեաց հաճելի : Ասկէ զատ՝ տեղանի մ'ու գարանակի մը մարմարին վրայ շատ մը պարասի շիշեր կային :

Բորթոս՝ իր բարեկամը տեսնելուն՝ ուրախոթեան բարձր ազակ մ'արձակեց , և Մուսքդօն ոտք ելնելով յարգանօք՝ իր տեղն անոր տուաւ և զնայ կրակին վրայ եղած երկու սաներն անդամ մը դիտել , որոց , ինչպէս որ կ'երևէր , հսկողութիւնն ունէր :

— Ա՛հ , Աստուած , զո՞ւ ես — ըստ Բորթոս տ'Արդանեանի — բարի եկար , և ներէ ինձ եթէ չեմ կարող քեզ դիմաւորել : Բայց — յարեց նա անձկանօք դիտելով տ'Արդանեանը — դիտես արդէն ինձ հասածը :

— Ո՛չ , չգիտեմ :

— Միթէ պանդոկապետը քեզի բան մը չըսան :

— Քեզ տեմնելու փափաքս յայտնեցի , և շնորհ վեր ելայ : Բորթոս կարծես թէ աւելի աղատ շոնչ առնուլ սկսաւ :

— Եւ ի՞նչ հասաւ քեզ , սիրելի Բորթոս — շարունակեց տ'Արդանեան :

— Սա պատահեցաւ որ հակառակորդիս վրայ քալելու միջուցիս , որուն արդէն երեք սրի հարուած տուեր էի , և չորրորդ մը տալով միտքս զանի լմացնել էր , ոտքս քարի մը զարկաւ և ծունկս ձմշեցաւ :

— Իրան ըսիր :

— Պատոյս վրայ կ'խօսիմ : Ապիրատին բաղդէն էր , թէ ոչ հաւաստի եղիր , որ զինքն անշուշա գետինը պիտի փուէի :

— Եւ ի՞նչ եղաւ հակառակորդդ :

— Ո՛հ , չգիտեմ , իր պատիճն առաւ , և մնացորդն առնլու չսպասեց . իսկ քեզի ի՞նչ պատահեցաւ , սիրելի տ'Արդանեան :

— Այսպէս ուրեմն — շարունակեց տ'Արդանեան — այդ ոտքիդ ձմշածը կ'ստիպէ քեզ անկողնէն չելնել , սիրելի Բորթոս :

— Ա՛հ , իրօք այդ է պատճառը , տէր Աստուած . սակայն քանի մ'օրէն ոտքի վրայ պիտի ելնեմ :

— Արեմն ի՞նչ պատճառուս բարիզ չփոխադրեցար : Անտարակոյս շարաշար կ'տաղտկանաս այս աեղ :

— Իմ միտքս ալ այդ էր . բայց, սիրելի բարեկամի իմ, բան մը կայ որ պէտք է խոսառվանիմ քեզ :

— Ի՞նչ բան :

— Սա է որ՝ սաստիկ տաղտկանալոս, ինչպէս որ կ'ըսես, և դրանիս մէջ տուած եօթսուն հինգ ոսկի դաշեկաններդ ունէի, սփոփելու համար ասկից անցնող ձամբորդ մը քովս հրաւիրեցի և առաջարկեցի որ տապալի խաղանք : Առաջարկութիւնս ընդունեց, և Շմարիմար, եօթսուն հինգ ոսկի դաշեկանս իմ դրանէս անորն անցան, թող ձիս, զոր վրայ տոի : Խոկ զու ի՞նչ ըրիր, պ. ա'Արդանեան :

— Ի՞նչ օգուտ, սիրելի Բորթոս, մարդուս բազզն ամէն կողմէ շրանիր — ըստ ա'Արդանեան : — Գիտես սա առածը . «Պրժբաղդի ի խաղ, բարեբաղդի սէր» : Դու ալ սիրոց մէջ բաղդաւոր լինելուդ՝ խաղը քեզնէ վրեժ կ'առնու : Բայց բազզին փորձանքն ի՞նչ փոյթդ է, միթէ դքսո հին չունին, զու երջանիկ անզպամ, որ անտարակոյս քեզի օգնութեան պիտի հասնի :

— Լաւ ուրեմն, սիրելիդ իմ ա'Արդանեան, ի՞նչպէս ձախորդ կ'երթայ զործու — պատասխանեց Բորթոս խիստ արձակ կերպով մը — զրեցի անոր որ ինձի յիսուն լուիի չափ զումար մը զըրեկէ, որմէ անհրաժեշտ պէտք տնէի, քանի որ այս վլիճակին մէջ էի . . . :

— Լաւ, ի՞նչ պատասխան տուաւ :

— Լաւ, կ'երեկի թէ իր աղարակը կ'զանտի, վասն զի ինձի պատասխան չզրեց :

— Իբան :

— Այու, հետեապէս երեկի նախորդ նամակէս առելի ստիպողական դիր մը զրեցի, բայց ահա զու եկար, հիմակ քու վրադիսունք, սիրելիդ իմ : Կ'խոսառվանիմ որ սկսեր էի քու վրադիսունք :

— Բայց, ի՞նչպէս որ կ'երեկի, պանդոկապետ շատ լաւ կը

վարուի քու հետդ ; սիրելի Բորթոս — ըստ տ'Արդանեան՝ հիւ-  
ւանդին ցոյց տալով լեցուն պտուկներն ու պարապ շիշերը :

— Սանկ նանկ — պատասխանեց Բորթոս : — Արդէն երեք  
չորս օր կայ որ անամօթն իր հաշիւը բերաւ ինձ և ես ալ զին-  
քը վռնաեցի իր հաշուին հետ , այնպէս որ այս տեղ տեսակ մը  
յաղթող , կերպ մ'աշխարհակալ եմ : Ուստի , կ'տեսնես որ այս  
դիրքիս մէջ բռնաբարութիւն մը չգանելու համար ոտքէս ցզը-  
լուխ սպառազինեալ եմ :

— Սակայն — ըստ տ'Արդանեան խնդալով — կ'երեխ ինձ որ  
ատեն ատեն յարձակումներ կ'ընես :

Եւ իր մատով կ'ցացնէր շիշերն ու սաները :

— Դժբաղդաբար ես չեմ ելներ — ըստ Բորթոս : — Այս  
անպիտան ուսքիս Ճմշածը զիս անկողին կ'օլահէ , բայց Մուսքդօն  
դրսերը կ'արշաւէ և ինձ ուտելիք կ'բերէ : Մուսքդօն , բարե-  
կամ — շաբունակեց Բորթոս , կ'նայիս որ նոր հիւր ունինք , հե-  
տեսապէս պէտք է մեր ուտեսատին պահասը հոգաս :

— Մուսքդօն — ըստ տ'Արդանեան — քեշնէ ծառացութիւն  
մը պիտի խնդրեմ :

— Ի՞նչ , պարոն :

— Պէտք է որ հրահանդդ Բլանշէի տօս . կարելի է որ ես  
ոլ պաշարուիմ , և չպիտի դժարիմ եթէ քու միջոցաւ տիրոջդ  
վայելած առուելութիւններն անոր ձեռօք վայելեմ :

— Է՛ս , Աստուած իմ — ըստ Մուսքդօն համեստ ձայնով մը:  
— Ասկէ աւելի զիւրին բան չկայ , պարոն : Բաւական է որ մարդ  
ճարպիկ լինի , ուրիշ բան պէտք չէ : Ես զեղը մեծցած եմ , և  
հայրս , իր ձախորդ ատենները , փոքր ինչ զողորսակ էք :

— Ի՞նչ կ'ընէր :

— Պարոն , այնպիսի արհետ մը կ'բանէր զոր միշտ յաջող  
դաւը եմ :

— Ի՞նչ կ'ընէր :

— Որովհետեւ այն ատեն կաթոլիկներու և հիւկնօներու մէջ  
պատերազմ կար , և կ'զիտէր որ կաթոլիկները հիւկնօներու և

Հիւկնօները կաթոլիկներու ջարդ կ'տային , երկուստեք ալ յառնուն կըօնի , խառն հաւասար մը կ'գաւանէր , և ասով մերթ կաթոլիկ կ'գառնար՝ մերթ հիւկնօ : Արդ՝ շատ անդամ հրայցանն ուոր զարկած՝ կ'պտղտէր ցանկապատներու ետին , և երբ կ'նայէր որ կաթոլիկ մ'առանձին կ'զայ , անմիջապէս բողղքական դաւանութիւնն իր մաքին վրայ աւելի կշիռ կ'ունենար : Իր հրայցանն ուղևորին ուղղութեամբը կ'շտկէր , ապա՝ երբ տաս քայլ իրմէ հեռու զանուէր նա , արամախօսութիւն մը կ'սկսէր անոր հետ՝ որ դրեթէ միշտ կ'աւարտէր երբ ուղևորն իր կեանքն աղասելու համար քսակին անոր ձեռքը կ'տար : Պիւրին է հասկընալ՝ որ երբ հիւկնօ մը տեսնէր՝ այնպիսի վառ եռանդ մը կ'ըշշար կաթոլիկութեան համար որ չե՞ր կարող ըմբռնել թէ ինչպէս՝ քառորդ մ'առաջ մեր սուրբ իրօնին գերազանցութեան վրայ կասկածներ ունեցեր էր : Աւան զի ես , պարոն , կաթոլիկ եմ , հայրս՝ իր սկզբանց հաւատարիմ՝ իմ անդրանիկ եղբայրս հիւկնօ ըրած լինելուն :

— Ես ի՞նչ վերջ ունեցաւ այդ արժանի մարդը — հարցուց՝ Արդանեան :

— Ահ , շատ թշուառ վերջ մը , պարոն : Օր մը դարփոս ճամբռ մը մէջ կ'ըսնուի կաթոլիկէ և հիւկնօէ մը , որոց հետ արգէն զործ ըրեր և անոնցմէ ճամչցուեր էր , այնպէս որ անոր դէմ միացան և զինքը ծառէ մը կախեցին , յետոյ եկան մօսաւոր մէկ զեղի զինետան մէջ իրենց ըրած աղւոր քաջութեան վրայ պարծենալու . ես ալ իմ եղածու հետ հոն էի և զինի կը խոմէի :

— Այն ատեն ի՞նչ ըրիր — ըստու ա՛Արդանեան :

— Թոյլ տոմինք որ խօսին — վրայ բերաւ Մուսքոն : — Ապա երկուքնին դորս ելան և զատ զատ ճամբայ բունեցին : Եղբայրս զնաց կաթոլիկին ճամբռուն վրայ դարանամուտ կեցաւ , և ես ալ բողղքականին : Երկու ժամենա ամեն ի՞նչ աւարտեր էր , զատ զատ երկոքնին ալ անդին զրկեցինք , սրանչանալով մեր հօր հեռատեսութեան վրայ , որ մեզնէ իւրաքանչիւրը տարբեր տարբեր կրօնի մէջ մեծցնելու հող տարեր էր :

— Երատի, ի՞նչպէս որ կ'ըսես, Մուսքդօն, կ'երեկ թէ հայրդ վարսկեառզի մ'էր։ Եւ կ'ըսես թէ իր ձախորդ օրեքրուն մէջ այն իեղճ մարգը գողորսակ մ'էր։

— Այս, պարոն, նա սարվեցուց ինձ ծողակ մը լարել և ուռկան նետել։ Ուստի երբ աեսայ որ մեր ապիրատ պանդոկապետը զեղջուկներու բերնին յարմար խել մ'անշահ մսով մեզ կ'կերակրէ, որ մերինին պէս փափուկ ստամոքսի չէր յարմարեր, իմ հին արշեսսս սկսայ քիչ մը զործել։ Խշանին անտառակը պղարտելու ատեն՝ երէի ձամբու վրայ ծուղակներ դրի։ Կորին վըստեմութեան աւազաններու եզրը պառկելու ատեն՝ լշակներու մէջ ցանցեր սահեցի։ Այսպէս որ հիմակի, փառք Աստուծոյ, լի ու լի ունինք, ինչպէս որ կընաք ստուգել, պարոն, ձագարներ, կադաներ, ծածաններ և օձաձկեր, և այս ամէնը թեթև, օդտառէտ և հիւանդներու յարմար կերակուրներ են։

— Բայց դինին — ըստ ա'Արդանեան — դինին ովկ կ'ձարէ, պանդոկապետն արդեօք։

— Այսինքն այս և ոչ։

— Ի՞նչպէս այս և ոչ։

— Երաւ է որ նա կ'ձարէ, սակայն չդիտէ նա որ այս պատին ունի։

— Միտքդ բացատրէ, Մուսքդօն, խօսակցութիւնդ լի է խիստ հրահանդիչ բաններով։

— Ահաւասիկ, պարոն, ըսեմ։ Դիպուածն այսպէս թերաւ որ իմ պտոյաններուս ժամանակ Սպանիացի մը տեսայ որ շատ երկիրներ պարտէր էր, և մանաւանդ Նոր Աշխարհը։

— Ի՞նչ յարաբերութիւն ունի Նոր Աշխարհը սա զրամեղանին և դարանակին (commodore) վրայ եղած շիշերուն հետ։

— Համբերութիւնն, պարոն, ամէն բան կարդին պիտի բացաւըրուի։

— Ճշմարիտ է, Մուսքդօն, խօսքիդ կ'վստահիմ և մատիկ կ'ընեմ։

— Այս Սպանիացին սպասաւ որ մ'ունէր որ իրեն ընկերացեր

էր Մէքսիկոյի ողեռութեան ատենը : Այս սպասաւորն իմ հայրենակիցս էր, այնպէս որ շուտ մ'իրարու հետ կապուեցանք, քանի որ մեր բնաւորութիւններն ալ շատ նման էին իրարու : Ամէն բանէ աւելի որսի խենդ էինք, ուստի կ'պատմէր ինձ թէ ինչպէս Ամերիկայի գաշտավայրերը բնիկները վաղըներ և ցուլեր կ'որսան շարժուն խեղդով մը միայն, այն սոսկալի կենդանեաց պարանոցին անցընելով : Նախ չէի կարող հաւտալ թէ այնչափ ճարպիկ լինին որ քան երատւն քայլ հեռուեն լարի մը ծայրը կարենան ուզած տեղերնին նետել, բայց երբ փորձն ըրաւ, հարկ եղաւ պատմածին ճշմարտութիւնն ընդունիլ : Բարեկամն երատւն քայլ հեռի շիշ մը կ'զնէր, և ամէն անդամ շարժուն խեղդը նետելուն շիշը փողիկէն կ'բռնէր : Ես ալ այս կրթութեան վարժեցայ, և ըստ որում բնութիւնն ինձ քանի մը բարեմասնութիւններ տուեր է, այսօր ամենէն ճարպիկ մարդուն ողէս՝ խեղդս կ'նետեմ և որս կ'բռնեմ : Լաւ, հիմակ իմացաք : Մեր պանդոկապետը լեցուն շտեմարան մ'ունի, բայց տնոր բանալին իր ծոցէն չհաներ, մինակ այս շտեմարանն օդամուտ մ'ունի : Արդ՝ այս օդամուտէն խեղդս կ'նետեմ, և որովհետեւ դիտեմ հիմակ թէ ուր կ'զանուի հանգը, ուզածիս ոգէս կ'քաղեմ : Աշա, պարոն, այս առ թիւ նոր Աշխարհը սա գրասեղանին և գարանակին վրայ զտնուած շիշերաւն հետ յարաբերութիւն ունի : Արդ՝ կ'ուղեք մեր զինին ճաշակել, և առանց ախնաւութեան, ձեր կարծիքը պիտի ըսէք անշուշտ :

— Ճնորհակալ եմ, բարեկամդ իմ, ճնորհակալ եմ. դժբաղշարար նոր նախաճաշը ըրի :

— Լաւ ուրեմն — ըստ Բորթոս — սեղանը դիր, Մուսքդօն, և մինչդեռ մենք պիտի նախաճաշէնք, տ'Արդանեան պիտի պատմէմել դիմին հասածները, տաս օր է որ մեղնէ հեռայեր է :

— Յօժարակամ — ըստ մ'Արդանեան :

Մինչդեռ Բորթոս և Մուսքդօն նորաբոյք հիւանդներու ախորժակոյ և դժբաղդութեամբ իրարու մօտեցող եղբարց մտերմութեամբ կ'նախաճաշէին, տ'Արդանեան պատմեց թէ ինչպէս Ա-

բամիս վլիրաւոր՝ Քրէ վլքէօր մնալու ատիպուեր էր, ինչպէս Աւթոսը թողեր էր յԱմփէն՝ չորս մարդու մէջ ոգորելու որ զինքը կ'ամբաստանէին թէ զրամանենդ մ'է, և ինչպէս ինքը, տ'Արդանեան, Վարդ կոմին վրայէն անցնելու բռնադատուելով՝ կարող եղեր էր մինչև Խնկլիա հասնելու :

Բայց տ'Արդանեան իր պատմոթիւնն այս տեղ՝ կտրեց, մինակ իմացոց թէ բրիտանիայէն դարձին՝ չորս փառաւոր ձիեր հետը ըերեր էր, որոց մին բորթոսին և միւսներն իրենց ընկերներուն համար էին, յետոյ խօսքն աւարտեց յայտնելով Բորթոսին որ անոր յատկացած ձին պանդոկին ախոռը կ'զանուէր :

Նոյն պահուն Բլանշէ ներս մտաւ, իր տիրոջ կ'յայտնէր որ ձիերը բաւական հանդիսաւ առեր էին, և թէ կարելի էր երթալ զիշերը Քլէրմօն օթևանիլ :

Որովհետեւ տ'Արդանեան Բորթոսին վրայ դրեթէ ապահով էր, և իր միւս երկու բարեկամաց վրայ լուր առնելու կ'փափաքէր, ձեռքը հիւանդին կարկառեց, և իմացոց որ Ճամբայ պիտի ելնէ միւս բարեկամները փնտուելու : Եւ որովհետեւ նոյն Ճամբով ետ պիտի դառնար, եթէ եօթ ութ առոր մէջ Բորթոս Կրան-Սէն-Մարդէնի սպանդոկը զանուէր, անցնելու ատեն՝ զանի հետը պիտի առնուր :

Բորթոս պատասխանեց թէ, շատ հաւանական է որ իր ոսքի ցաւը չպիտի ներէ իրեն մինչև այն ատեն դորս ելնելու : Ասկէ զամ՝ Շանդիլի մնալու պարտաւոր էր որպէս զի իր դքսու հիւն պատասխան մը ստանայ :

Տ'Արդանեան մաղթեց որ այն պատասխանը շուտ և առետան դեր դայ, և Բորթոսը նորէն Մուսքդօնի խնամոց յանձնելէն և իր ծախսը վճարելէն ետեւ Բլանշէի հետ ուղի ընկառ իրեն հետ տարած մէկ ձիէն աղատելով :

## Զ.

ԱՐԵՄԻՑԻ ԲՆԱԲԱՆԱԲ

Տ'Արդանեան Բորթոսին ոչ ինչ չէր ըստ անոր անտեսուհիւ  
ին և վէրքին վրայ : Ծատ զգօն էր այս մեր Պէարնեցին , թէ և  
նորահասակ : Հետեապէս այնպէս կեղծեր էր թէ պարծուկ հրա-  
ցանակրին պատմած բաներուն հաւտացած է , քաջ համոզուած  
լինելով որ բարեկամութիւն մը չդիմանար երբ դաղմանիք մը վեր  
հանուի , նա մանաւանդ երբ այս դաղմանիքը զուռովութեան կ'զպի ,  
ասկէ զատ՝ մարդ բարոյական իշխանութիւն մը կ'ունենայ այն  
անձերու վրայ որոց կեանիքը դիտէ : Արդ՝ ա՛Արդանեան՝ ապա-  
գայ դաւերու խորհրդով , և որոշած լինելով իր երեք ընկերներն  
իր բաղդին երեք դործիներն ընել , շատ զոհ էր որ իր ձեռքին  
մէջ կ'ամփոփէր այն անտեսանելի թելերն որոց միջոցաւ զանոնք  
վարելու կ'յօւսար :

Ասկայն՝ բոլոր ճամբուն վրայ՝ խոր արտամութիւն մ'իր սիրու  
կ'ձմիւր , այն նորատի սիրուն Պօնասիէօ տիկնոջ կ'մտածէր որ  
իրեն անձնութրութեան վարձքը պիտի վճարէր , բայց , փուշ  
թանք ըսելու , որ այս վիշտն ոչ այնքան իր երջանկութիւնը կոս-  
րուսելուն կ'զգաք' որչափ անոր համար որ թերևս այն հէք կրն-  
կան դլիսին փորձանք մ'եկած է : Տ'Արդանեան աներկվիտ էր որ  
կարտինալին վրէժինդրութեան զոհ ընկած էր նա , և , ինչպէս  
յայտնի է , կարտինալին վրէժինդրութիւնը զարհուրելի էր ;  
Պաշտօնէին առջև ինչպէս շնորհ դտեր և իր դլիսին ձուն մը չէր  
հասեր , ահա այս բանս չէր կրնար հասկնալ , և թերևս Պ . Քա-  
վուա անոր պիտի յայտնէր , եթէ պահակաց հրամանատարը զինքն  
իր տունը դտնէր :

Զիայ բան մ'որ այնքան ժամանակ սպառէ և ճամբայ մը հաւ մտուտէ որբան մտմտոք մ'որ մտածողին բոլոր կարողութիւնները կ'համակէ : Այն ատեն արտաքին զոյտ թիւնը քունի մը կը նմանի որուն երազն է այն մտմտոքը : Ասոր ներգործութեան ժամանակն ալ չափ չունի, և ոչ անջրափետը հեռաւորութիւն : Մարգս տեղէ մը կ'լնէ և որիշ աեղ մը կ'համի, ահա բոլոր ըրածը : Անցած վայրէդ յիշամակիդ մէջ ուրիշ բան չմնար բայց եթէ աղօտ մուայլ մ'որուն մէջ ծառերու, լեռներու և գաշտանկարներու բիւրաւոր շփոթ պատկերները կ'նսեմանան : Ահա այս անրջային վիճակին մէջ ա՛Արդանեան՝ իր ձիուն ինքնովին ըլունած քալուածքով Շանթիյին Քրէվքէօրէն զատող վեց կամ ոթ մղմն տեղն անցաւ, և նոյն զիւղը հասնելուն՝ բնաւ ճամբուն վըրայ հանդիսած բաներէն բան մը չէր յիշեր :

Այն տեղ միայն յիշողութիւնն եկաւ վրան, զլուիը ցնցեց, նշմարեց այն իշխանն ուր թողեր էր զԱրամիս, և ձին յառաջ քչելով անօր դրան առջե կանկ առաւ :

Այս անդամ զինքն ընդունողը պանդոկապետ մը չէր, այլ պանդոկապետուհի մը, ա՛Արդանեան դիմադէտ էր . մէկ նայուածքով տան տիկնոջ զուարթուն խօշոր դէմքն ամփոփեց, և հասկաւ որ անոր հետ կեղծելու պէտք չունէր, և թէ այնպիսի խնդումերես անձէ մը վախնալու բան մը չկար :

— Իմ բարի տիկինս — ըստ անօր ա՛Արդանեան — արդեօք կրնան ըսել թէ մեր բարեկամներէն մին՝ զոր տասն երկու օր առաջ այս տեղ թողլու ստիպուեցանք, ի՞նչ եղաւ :

— Քսան երեքէն քսան չորս տարեկան դեղանի, անցյշ, սիւրալիք, վայելսակազմ պատանի մը :

— Ճիշտ այդպէս . ասկէ զատ՝ ուսին վրայ վէրք առած է :

— Նոյն ինքն է :

— Լաւ, պարսն, միշտ այս տեղ է :

— Ա՛հ, սուրբ վկայ, սիրելի տիկին — ըստ ա՛Արդանեան ձիէն վար իջնելով և ասնձը Բլանշէին թեփին վրայ նետելով — ինձ նոր կեանք կ'տաս . ուր է այն սիրական Արամիսս որ դրկեմ :

մասն զի կ'խոստովանիմ որ զինքը տեսնելու փափաքս մեծ է :  
— Ներէ , պարոն , բայց տարակուսելի է որ այս միջոցիս քեզ  
կարենայ տեսնել .

— Ինչո՞ւ համար , արդեօք կնկան մը հետ է :  
— Յիսուս Քրիստոս , ի՞նչ կ'ըսես , խեղջ պատանին : Ո՞չ ,  
պարոն , կնկան մը հետ չէ :  
— Ուրեմն ո՞վ կայ քովը :  
— Մօնտիտիկի երէցն ու Ամիկնի մէզվիկներու . մեծաւորը :  
— Աստուած իմ — զոչեց տ'Արդանեան — արդեօք խեղջ պա-  
տանիին վիճակը ծանրացան :

— Ո՞չ , պարոն , ընդ հակառակին , բայց հիւանդութենէ վերջն  
Աստուածոյ շնորհն անոր սիրոն իջառ , և միաքը դրաւ կրօնական  
կարդը մանել :

— Կառ է — ըստու տ'Արդանեան — մոռցեր էի որ առ ժա-  
մանակեայ կերպով հրացանակիր էր :

— Միթէ զինքը տեսնելու նորէն կ'պնդե՞ս , պարոն :

— Անշուշտ :

— Լաւ ուրեմն , պարոն , բակին այ սանդղէն կ'ելնես վեր ,  
և Յ թիւ սենեակը կ'դիմես :

Տ'Արդանեան ցոյց տրուած կողմը գնաց և արտաքին սանդուղ-  
մը գտաւ , ինչպէս որ այսօր ալ կ'դանուին այնպիսի սանդուղներ  
հին իջևաններու դասիթներու մէջ : Բայց այս կերպով կարելի  
չէր ապազայ արեղային սենեակին երթալ : Արամիսի սենեկին կիր-  
ճերը զրեթէ Արմիտի պարտէ զներով շրջապատեալ էր . Պազէն  
նրբագութին մէջ պահակութիւն կ'ընէր , և անոր Ճամբան կըտ-  
րեց այնպիսի անվէհերութեամբ որ շատ մը տարիներէ ետքը՝ հուսկ  
ուրեմն մշտապէս փափաքած նպատակին կ'հասնէր :

Արդարեւ խեղջ Պազէնի երազն եղած էր միշտ եկեղեցականի  
մը ծառայել , և անհամբեր սովակութիւն կ'ընդնշմարէր ապազային  
մէջ այն ժամն ուր Արամիս վտաւակը մէկդի թողլով կրօնաւորի  
պարեղօտը պիտի զդենուր : Պատանին անդադար կրկնելուն թէ-  
էր ոխտը կատարելու ժամը կ'հասնէր՝ Պազէն հրացանակիրին

ծառայութեան մէջ այս յուսով միայն մմացեր էր, ծառայութիւն  
մ'որուն մէջ, ինչպէս կ'ըսէր, անտարակոյս հողին սփոփի կո-  
րուսէր :

Հետեւապէս Պաղէն ուրախութեան կատարը հասեր էր: Հաս  
հաւանական էր որ այս անդամ՝ իր աէրը խօսքէն ետ չափոփ գառ-  
նար: Արմանական ցառեր բարոյական ցառերու միանալով՝ այն  
փափաքելի ներդորժութիւնը յառաջ բերեր էին. Արամիս, մար-  
մով և որասով տառապելուն՝ իր աչքն ու մոսածմուկը կրօնի  
վրայ գարձոցեր էր, և իրբե երկնից մէկ ազգաբարութիւնը հա-  
մարեր էր իրեն հասած կրկնակի պատահարը, այսինքն, իր տի-  
րուհոյն յանկարծական անյայտութիւնն և իր ուսին վէրգը:

Ընթերցող կրնայ երեակայել որ Պաղէն այս տրամադրութեան  
մէջ զտնուելով ա' Արդանեանի զալուստն իրեն շատ անախորժ  
երկցաւ, վասն զի անոր զալովի իր աէրը կրնար նորէն աշխար-  
հային բաներու մըրկին մէջ նետուիլ, ինչպէս որ ընդ երկար ա-  
նով հրապուրուեր էր: Աւստի միտքը դրաւ դուռը քաջապէս  
պաշտպանել, և ըստ որում պանդոկին տիրուհին կողմէն մատ-  
նուեր էր, չէր կարող ըսել որ Արամիս բացակայ է, և փորձ  
փորձեց նորեկ հիւրին հասկցնելու որ մեծ անխոհեմութիւն մ'ը-  
րած պիտի լինի եթէ իր աիրոջ առաւօտէն վեր միսած բարե-  
պաշտպական բանակցութիւնը վրդովէ, քանի որ, ըստ Պաղէնի,  
չէր կրնար վերջանալ երեկոյէն առաջ:

Բայց ա' Արդանեան վարպետ Պաղէնի ճարտասան ճառը բանի  
տեղ չդրաւ, և որովհետեւ իր բարեկամին սպասառորին հետ բա-  
նակրիւ մը սկսելու արամազիր չէր, պարզապէս մէկ ձեռքով զա-  
նի հեռացոց և միւսով օ թիւ դրան ճարմանողը դարձուց:

Դուռը բացուեցաւ և ա' Արդանեան մենեակը մտաւ: Արամիս  
ուե թիկնոց մը հագեր, դլուխը կլոր ու տափակ զլիսարկ մը զբեր՝  
երկայնաձեւ սեղանի մ'առջեւ նստեր էր, այս սեղանին վրայ թըղ-  
թի ծրաբներ և միաձալ ահապին մատեաններ կային. իր աջ դին  
նստեր էր մէզվիղներուն մեծուորը և ձախ դին Մօնտիտիէի ե-  
րէցը: Արագոյը իր կիսովին դոց էին և մինակ խորհրդառոր

լոյս մը կ'թողուին թափանցել ներսի կողմը՝ բարեպաշտիկ խոր-  
հուրդներ ներշնչելու նպատակաւ : Այն ամէն աշխարհիկ բաներն  
որ պատամառոյ մը սենեակը մանելով մարդուս աշքին կ'զարնեն,  
նա մանաւանդ՝ երբ այս պատանին հրացանակիր մ'է, աներեսոյթ  
եղեր էին հմայութեամբ մը, և առ ահի՝ որ անոնց տեսին աշ-  
խարհի գաղափարներու չտանի իր տէրը, Պազէն, սուրը, հրա-  
ցանակները, փետրազարդ զլիարկին և ամէն զոյն ու տեսակ ա-  
սեղնանկար բաները հեռացուցեր էր :

Բայց ասանց տեղը՝ ա'Արդանեան կարծեց տեսնել մութ ան-  
կին մը՝ պատին մէկ դամէն կախուած՝ խարազանի նման բան մը:

**Տ'Արդանեան** դուռը բանալով ազմուկ հանելուն՝ Արամիս զլու-  
խը վերցոց և իր բարեկամը ճանչեց : Բայց 'ի մեծ զարմացումն  
պատանառոյն՝ կարծես թէ իր տեսքը մեծ տպաւորութիւն մը չըրա-  
հրացանակիրին վրայ, այնչափ բաժնուեր էր անոր սիրան այս եր-  
կրիս բաներէն :

— Բարի լոյս, սիրելի ա'Արդանեան — ըստ Արամիս — հաւ-  
տա որ շատ երջանիկ եմ քեզ տեսնելուս :

— Ես ալ նոյնպէս — ըստ ա'Արդանեան — թէ և բոլորովին  
ստոյգ չեմ թէ արդեօք Արամիսի հետ կ'խօսիմ :

— Նոյն իսկ Արամիսին, բարեկամ, Արամիսին, բայց ով ազ-  
դեց այսպիսի կասկած մը քեզի . . . :

— Կ'վախնայի որ սխալ դուռ չզարնեմ, և նախ կարծեցի թէ  
իրօնականի մը սենեակը կ'մտնեմ. ապա ուրիշ սխալմունք մ'ալ  
միտքս պաշտեց, այս է թէ ծանր հիւանդ չլինիս :

Երկու մե մարդիկ ա'Արդանեանի վրայ սպառնական ակնարկ  
մ'արձակեցին՝ անոր դիտաւորութիւնն ըմբռնելով. բայց ա'Ար-  
դանեան ընաւ հող չըրաւ :

— Կարելի է քեզ անհանդիստ կ'ընեմ, սիրելի Արամիս —  
շարունակեց ա'Արդանեան — վասն զի, ինչպէս որ կ'տեսնեմ,  
իրաւունք ունիմ կարծելու որ այս պարզներուն խոստովանանք  
կ'լինիս :

Արամիս աննշմարելի կերպով կարմրեցաւ :

— Դուք զիս անհանդիստ ընես, ոչ, ընդ հակառակն, սիրելի բարեկամ, կերպնում որ կ'սխալիս, և իբրև ապացոյց ըստիս, ներէ ինձ որ քեզ ողջ առողջ տեսնելուս ցնծամ:

— Ահ, վերջապէս ինքզինքը կ'զանէ — մտածեց տ'Արդանեան — զէշ նշան չէ:

— Վասն զի, այս պարոնը, որ իմ բարեկամն է, ծանր վըտանդէ մը նոր ազատեցաւ — շարունակեց Արամիս քաղցրութեամք՝ իր ձեռօք տ'Արդանեանը ցոյց աալով կրօնաւորներուն:

— Գովլէ, Աստուած — պատասխան տուին կրօնաւորները միասին խոնարհելով:

— Այդ պարտքն արդէն կատարեցի, վերապատռելի հայրերու — պատասխանեց պատանին ինքն ալ իր կողմէն բարե տալով:

— Շատ պատեհ ժամանակին կ'զաս, սիրելի տ'Արդանեան — ըստ Արամիս — և ոյժմ վիճաբանութեան մասնակցելով՝ քու զիտութեամբ զայն պիտի լուսաբանես: Ամիէնի մեծաւորը, Մօնտիտիէի երէցն և ես քանի մ'աստուածաբանական խնդիրներու վրայ կ'առարկենք որոնք բաւական ատենէ վեր մեր ուշը զրաւեր են, շատ պիտի ուրախանամ եթէ այս մասին կարծիքդ մեզի յայտնես:

— Զինուորականի մը կարծիքը կշիռ չունի — պատասխանեց տ'Արդանեան, որ սկսեր էր ինդրոյն առած կերպարանին վրայ անհանդիստ լինիլ — և հաւաստի եղիք որ այս պարոններուն դիտութեան վստահիլ պարտաւոր ես:

Երկու սե մարդիկ նորէն բարե տուին:

— Ընդ հակառակն — վրայ բերաւ Արամիս — և քու կարծիքդ մեզի անդին պիտի լինի. ահաւաստիկ խնդիրը. Պ. մեծաւորը կարծէ թէ իմ բնաբանու պէտք է որ վարդապետական և ուսուցչական լինի:

— Բնաբանդ, ինչ, ուրեմն բնաբաններ կ'զրես:

— Անտարակոյս — պատասխան տուաւ մէղվիզը — ձեռնադրութենէ առաջ լինելիք քննութեան համար բնաբան մ'անհրաժեշտ է:

— Ձեռնապրոթիւն — զոշեց տ'Արդանեան, որ չէր կարող հաւատալ թէ իրօք ինչ որ արգէն պանդոկապետուհին և Պաղէն ըսեր էին յաջորդաբար՝ Տշմարիս լինի — ձեռնապրոթիւն :

Եւ իր աչերն ապշտոթեամբ կ'ածէր իր առջև զանուող երեք անձերու վրայ :

— Արդ — շարունակեց Արամիս՝ իր աթոռին վրայ այնպիսի շնորհալի գիրք մը բունելով որպէս թէ գոփէի մը մէջ զտնուէր, և կնոջ մը ձեռքին պէս սպիտակ և կլորիկ ձեռքը քննելով, զոր օգին մէջ կ'բունէր որպէս զի անոր արինը վար իջնէ — արգինչպէս որ լսեցիր, տ'Արդանեան, Պ. մեծաւորը կ'ուզէ որ իմ քարտղագիրս վարդավետական լինի, մինչզեռ ես կ'ուզեմ որ իստէական լինի : Եւ աշա այս պատճառաւ Պ. մեծաւորը կ'առաջարկէր ինձ սա նիւթն որուն վրայ տակալին ոչ ոք ձառեր էր, և կ'զիտեմ՝ որ փառաւոր մեկնութիւններ տալու նիւթ կ'մատակարարէ :

«Utraque manus in benediceudo clericis inferioribus necessaria est.»

Տ'Արդանեան՝ որուն հմտութիւնն արգէն գիտենք՝ անվրդով մաց այս վկայութեան առջև, ինչպէս որ անհոգ կեցեր էր երբ Պ. մը Դրէ վիլ նոյնն ըրեր էր այն ընծաներուն առթիւ զոր Պրգինկէմի կողմէ՝ տ'Արդանեանի ընծայուած կ'կարծէր :

— Եւ այս բնաբանին միտքը սա է — վրայ բերաւ Արամիս, անոր դիւրութիւն տալու համար, Երկու ձեռներն առարին կարդի քահանայից անհրաժեշտ են, երբ օրհնութիւն կ'ատան :

— Աքանչելի նիւթ — զոշեց մէ զմիլը :

— Աքանչելի և վարդավետական — կրկնեց երէցն որ լատիներէնի մասին տ'Արդանեանի չափ վարժ լինելով մէ զվիղին բերնէն վար կախուեր էր որպէս զի անոր հետ միատեղ քալէ և արձաղանքի պէս անոր ըսածները կրկնէ :

Իսկ ա'Արդանեան՝ բոլորովին անտարբեր մնաց երկու ու մարդոց արինին :

— Այս, սքանչելի — շարունակեց Արամիս, — բայց Ա. Գրաց

և Հարց հասուն ուստում մը կ'պահանջէ : Արդ՝ այս զիառուն կրօս նառորներուն յայտնեցի ամենայն խոնարհութեամբ , որ Պահակի դօրաց աշխատանքն ու առ թաղաւորն մեր ծառայութիւնը փոքր ինչ ուսմունքս բարձիթողի ընելու ստիպեր էին զիս : Ուստի աւելի գիւրութիւն պիտի զգամ եթէ ես իմ հանած նիւթս ընտրեմ դրելու , նիւթ որ այս ծանր աստուածաբանական խնդիրներու մօտ պիտի լինէր , ինչ որ է բարոյականը բնաղանցութեան մօտ՝ փիլիսոփայութեան մէջ :

Տ'Արդանեան մեծապէս կ'ձանձրանար , նոյնպէս երեցը :  
— Նայէ անգամ մ'ինչ նախաբան է — զոչեց մէզվիղը :  
— Նախաբանութիւն — կրկնեց երեցը բան մ'ըսելու համար :  
«Quemadmodum inter cœlorum immensitatem.»

Արամիս ակնարկ մը նետեց տ'Արդանեանի վրայ , և տեսաւ որ իր բարեկամն այնքան կ'յօրանջէր որ իր կզակը պիտի փրթէր :  
— Ֆրանսերէն խօսինք , հայր իմ — ըստ մէզվիղին — ո .  
տ'Արդանեան աւելի համ պիտի առնու մեր խօսքէն :  
— Այո , ձամբորդութեան պատճառաւ յոզնած կ'զառնամ — ըստ տ'Արդանեան — և բոլոր այս լատիներէնին իմաստը չեմ ըմբռներ :

— Իրաւոնք ունիս — ըստ մէզվիղը փոքր ինչ բարկացած , մինչդեռ երեցը , ուրախութեամբ յափշտակեալ , տ'Արդանեանի կ'նայէր երախտազիտութեամբ լի — լաւ ուրեմն , նայեցէք թէ ինչ մեծ օդուտ կրնայ քաղել մարդ սա մեկութենէն :

«Մովսէս , ծառայ Աստուծոյ . . . լոկ ծառայ է , քաջ կ'ի մանաք : Մովսէս օրհնեց ձեռքերովը . իր երկու թերթը բռնել կը տայ , մինչդեռ երայեցիք իրենց թշնամիները կ'զարնեն : Ուրեմն երկու ձեռօք օրհնեց : Ասկէ զատ՝ Աւետարանն ինչ կ'ըսէ . և Դրէտ շնեռու , և ոչ շնեռու :

— Դրէք դձեռու — կրկնեց երեցը շարժում մ'ընելով :  
— Ընդ հակառակին , Ա . Պետրոսի , որուն յաջորդներն են

\* Արամիս անսահման երկնեց ներքեւ :

սպասերը — շարունակեց մէզվիղը . Մատուցէ + զմագու . հասկցա՞ք հիմակ :

— Արդարեւ , պատասխանեց Արամիս զմայլելով — բայց խընդիրը շատ նուրբ է :

— Մատե՛րը — վրայ բերաւ մէզվիղը — Ա . Պետրոս մատերով օրհնեց : Պապն ալ մատերովը կ'օրհնէ . և քանի մատով կ'օհրնէ . երեք մատով , մին Հօր համար , մին Որդուոյն , և մին Սուրբ Հոգւոյն համար :

Բոլոր ներկայ դանուողները խաչ հանեցին , ո՞Արդանեան ևս անմաց օրինակին հետևելու արժան գատեց :

— Պապը Ա . Պետրոսի յաջորդն է , և երեք երկնային իշխառնութիւնները կ'ներկայէ , միւսները , այս է եկեղեցական դասապետոթեան սատրին կարգերը՝ յանուն հրեշտակաց և հրեշտակապետաց կ'օրհնեն : Խոնարհագոյն կղերը , ինչպէս սարկաւագներն և լուսարարները մշափկով կ'օրհնեն որ անթիւ օրհնող մատերու պատկեր մը կ'ներկայէն : Ահաւասիկ խնդիրը պարզաբանեալ . Argumentum omni denudatum ornamento .” Այս բնաբանով — շարունակեց մէզվիղը — սա մեծութեամբ երկու հասոր կրնամ շարադրել :

Եւ խանդալից կ'զարծէր Օհան Ռոկերանի միածալ գործին վրայ որ իր ծանրութեամբ սեղանը կ'ձնչէր :

Տ'Արդանեան սարսուռ մը զդաց :

— Իրաւի — ըստ Արամիս — այդ բնաբանին այլորութիւնը կ'ձանչեմ , սակայն կ'խոսուովանիմ միանդամայն որ իմ կարողութենէս վեր է : Ես սա խնդիրն ընտրեր էի . ըսէ ինձ ա'Արդանեան , արդեօք քու ճաշակիդ ալ յարմար չէ . Սակաւ ինչ վիշտ անպատճէ չէ Աստուծոյ ուղղեալ նուէրի մը մէջ :

— Կարճ կապէ — զոչեց մէզվիղը — վասն զի այդ բնաբանը հերոսութեան կ'մօտի . զրեթէ այդպիսի առաջադրութիւն մը կայ ֆանսէնիոս հերեսիալետին Օհուորինսոս գործին մէջ , զոր վաղ

\* Ամէն բանի անզարդ առարկութիւն :

կամ՝ անագան գահձին ձեռօք պիտի այրեն անշուշտ։ Զգոյշ եւ զիր, պատանի։ սխալ վարդապետութեանց կ'հակիս, իմ նորատի բարեկամն, վերջդ կորուստ է։

— Վերջդ կորուստ է — ըստ երեցը վշտաղին դլուխն օրեւնով։

— Աղատ միջնորդին նշանաւոր խնդիրը կ'յուզես որ մահատու խութ մ'է։ Ճակատ առ ճակատ կ'մօտենաս Պէլամեան և կէս Պէլամեան աղանդներուն։

— Բայց, վերապատուելի . . . — վրայ բերաւ Արամիս՝ փոքր ինչ շտարելով իր գլխին վրայ կարկուտի պէս տեղայող առարկութիւններէն։

— Ի՞նչպէս պիտի հաստատես — շարունակեց մէզվեղը խօսելու ժամանակ չտալով անոր — թէ մարդ ինքովինք Աստուծոյ նուիրելու ատեն՝ աշխարհս կ'ողբայ։ Մտիկ ըրէ սա երկսայրարա բանութիւնը։ Աստուած, Աստուած է, և աշխարհս սատանայ։ Ողբալ աշխարհ, սատանան ողբալ է, աչա իմ եղբակացութիւնս։

— Այդ ալ իմն է — ըստ երեցը։

— Բայց, շնորհ . . . — վրայ բերաւ Արամիս։

— Զատունն ոչ բաս, ողորմելի — զոչեց մէզվեղը։

— Սատանը կ'ողբաս . ա՛չ, իմ նորատի բարեկամ — վրայ բերաւ երեցը հեծելով — մի, սատանան մի փնտեեր, ես ինքս կը պաղստիմ քեզ։

Տ'Արդանեանի վրայ ապշութիւն կ'զար, կարծէր թէ յիմարանց կ'գտնուի, և թէ ինքն ալ միւմներուն պէս յիմար պիտի գտունայ։ Մինակ ստիպուած էր լուռ կենալու՝ իր առջև խօսուած լեղուն շիմանալուն։

— Բայց ինձի մոտիկ ըրեք — վրայ բերաւ Արամիս քաղաքավարութեամբ՝ որով կ'յայտնէր թէ սկսեր էր քիչ մը համբեռութիւնը հատնիլ, — չեմ ըստը թէ աշխարհս կ'ողբամ, ոչ, երբեք այդ խօսքը չպիտի արտասանեմ, որ անշուշտ ուղղափառական չէ . . . :

Ժէզվեղը թեերը դէալ յերկին վերուց, նոյն ըստ և երեցը։

— ԱՇ, բայց խօստովանեցեք դոնէ որ վայելուչ չէ Աստուծոյ նոտիրել այն բանն որմէ զգուած ենք լիովին։ Միթէ իրաւունք չունիմ, տ'Արդանեան։

— Անշուշտ իրաւունք ունիս — զոչեց նա։

Եթեցն ու մէզվելը ոստում մ'ըրին իրենց աթոռին վրայ։

— Ահա իմ մեկնակետս, հաւաքաբանութիւն մ'է . աշխարհ հրապոյրներ ունի, աշխարհէ կ'հեռանամ, ուրեմն ըրածս զոհողութիւն մ'է . արո՞ Գիրքը կ'ըսէ յայտնապէս . « Զոհ մ'ըրէ Տիրոջ » :

— Այդ իրաւ է — ըսին հակառակորդները։

— Ասկէ զատ — շարունակեց Արամիս՝ ականջը քամթելով կարմրցնելու համար, ինչպէս որ ձեռները կ'թոթուեէր ձերմկյնեւլու համար — տաղ մը յօրինեցի այս խնկրոյն վրայ և Պ. Պատուրին ներկայացոցի . այս մեծ մարդը շատ զովեց իմ տաղ։

— Տաղ մը — ըստա արհամարհանօք մէզվելով։

— Տաղ մը — կրկնեց մեքենապէս երէցը։

— Ըսէ, ըսէ նայինք տաղդ — զոչեց տ'Արդանեան — անով կարելի է փաքը ինչ սփոփինք։

— ԱՇ, վասն զի կրօնական բան է — պատասխան տուաւ Արամիս — ոտանաւոր աստուծաբարանութիւն է։

— Սատանայ — ըստա տ'Արդանեան։

— Ահաւասիկ — ըստա Արամիս համեստ երեսով մ'որ բոլորովին զերծ չէր դոյզն կեղծաւորութենէ։

Դուք որ կ'լաք անցեալ մը վարելի,

Դուք որ օքեր ապերջանիկ կ'անցնէք,

Զեր ամէն վիշտք վախճան առնուն պիտի,

Եթէ լոկ առ Տէր ձեր լացը նոտիրէք,

Դուք որ կ'լաք։

Տ'Արդանեան և երէցը կարծես թէ զոհ եղան։ Ժէզվելով իր առջի կարծիքին վրայ պնդեց։

— Աստուծաբանական ոճի մէջ սրբազիղծ ձաշակ մ'որչափ

անվայել բան է : Եւ արդարե ի՞նչ կ'ըսէ Ա. Օգոստինոս . Sc-  
verus sit clericorum sermo.

— Այո՛, +արողը ուեռու է որ ի իսու լնէ — ըստ երէցը :

— Արդ — ըստ շտապտ մէզիիդը տեմնելով որ իր արքան  
եակը կ'մոլորէր — արդ՝ քո քարոզդ կանանց պիտի հաճելի զայ  
միայն . Պ. Բաղրուի գատախօսութեան յաջողութիւնը պիտի ուշ  
նենայ :

— Երանի թէ — զուեց Արամիս եռանդազին :

— Կ'հային — ըստ մէզիիդը — տակտին աշխարհը բայցը Յայ  
յայ . Altissimi à sole, ի'կամ որոիդ : Աշխարհիս կ'հետևիս, նորա-  
տի բարեկամդ իմ, և կ'վախնամ որ Հոգւյն շնորհը չպիտի ներ-  
գործէ :

— Աստահ եղիր, վերապատռելի, ես իմ վրայ ապահով եմ :

— Աշխարհային անձնապատճանութիւն :

— Ես ինքունքս կ'ձանչեմ, հայր իմ, իմ որոշումն անդառ-  
նալի է :

— Ուրիմն կ'յամառին քարոզիդ այդ բնաբանը պահելու :

— Իմ մոքիս աւելի յարմար կ'երկի այն քան թէ որիշ մը,  
ուստի պիտի շարունակեմ, և յուսամ որ խորհրդիդ համաձայն  
վազն ընելիք սրբազրութենէս պիտի գոհ լինիս :

— Ծանր աշխատէ — ըստ երէցը — ընտիր արամազրութեան  
մէջ կ'թողունք գեղ :

— Այո՛, հողը լաւ սերմանուած է — ըստ մէզիիդը — և  
վախի չիս որ հունաին մէկ մասն ապառաժին վրայ ընկած լինի,  
և միւս մասը ձամբու վրայ, և թէ երիւց բաւաները հայտնէ  
ինքունք լինի, Aves coeli comederunt illam.

— Սատանան տանի քեղ և լատիներէնդ — ըստ ո'Արդան-  
եան, որուն համբերութիւնը հատեր էր :

— Մնաս բարե, որդեակ իմ — ըստ երէցը — վաղը նորէն  
տեսնուինք :

— Մնաս բարե, յանդուզն պատանի — ըստ մէզիիդը — եւ  
կեղեցւոյ մէկ լցուր լինելու կ'յուսագրես, տաք երկին որ այս լցուր  
լափազ կրակ մը չլինէր :

Տ'Արդանեան՝ որ ժամ մը շարունակ իր ըղունդները կրծեց  
էր անհամբերութենէն, կ'սկսէր միսն ալ կրծել:

Երկու սեազէմ մարդիկ ոտք ելան, Արամիսի և տ'Արդանեա-  
նի բարեւ տուին և գէալ 'ի դուռը դիմեցին: Պաղէն՝ որ կանդուն  
կեցեր և ջերմուանդ խնդութեամբ այս խօսակցութիւնը մտիկ ը-  
րեր էր, կրօնաւորները դիմաւորեց, երեցին վարդարանն ու մէջ-  
միդին խորչըդատետն առաւ, և ճամբան ցոյց տալու համար՝  
անոնց առջեւն դնաց:

Արամիս մինչև սանդղին վարը ուղեկից եղաւ անոնց և խոկոյն  
տ'Արդանեանի մօտեցաւ որ տակաւին կ'երազէր:

Երկու բարեկամներ առանձին մնալով՝ նախ լոռութիւն պահե-  
ցին շփոթութեամբ, սակայն պէտք էր որ մէկը խօսի, և ըստ ո-  
րում տ'Արդանեան այս պատիւն իր բարեկամին թողլու՝ ըստ ե-  
րեւութիւն՝ միտքը գրեր էր,

— Կ'տեսնես — ըստ Արամիս — որ նորէն իմ հիմնական դա-  
ղափարներուս դարձած եմ:

— Այո, Աստուծու շնորհը սիրադ իջեր է, ինչպէս որ քիչ  
մ'առաջ կ'ըսէր այն պարոնը:

— Ո՛չ, շատ ատենէ վեր աշխարհէ քաշուելու խորհուրդները  
կ'տածէի, և արդէն այս մասին իմ միտքս յայտներ էի քեզ,  
այնպէս չէ, բարեկամ:

— Այնպէս է, բայց իրաւ որ կարծէի թէ կատակ կ'ընէիր:

— Այսպիսի բաներու վրայ կատակ կ'լինի՞, ո՛չ, տ'Արդանեան:

— Վահ, մահուան վրայ իսկ կատակ կ'լինեն մարդիկ:

— Եւ իրաւոնք չունին, տ'Արդանեան, վասն զի մահը կո-  
րսանեան կամ փրկութեան առանող դուռն է:

— Համամիտ եմ քեզ, բայց, խնդրեմ, աստուածաբանութիւ-  
նը մէկդի թողունք, Արամիս. այսօրուան համար բաւական դատ  
առիք, իսկ ես զրեթէ մոռցայ իմ երբէք չսորված դոյդն լա-  
տիներէնս. առկէ զատ՝ պէտք է խօսավանիմ որ առտու ժամը  
տառէն վեր բան մը չեմ կերեր, և սատանայի չափ անօթի եմ:

— Հիմակ պիտի ճաշենք, բարեկամդ իմ. մինակ պէտք է յի-

շես որ այսօր ուրբաթ է, արդ՝ այսպիսի օր մը չեմ կարող ոչ  
միս տեսնել և ոչ ուտել, եթէ իմ հաշովս շատանալ կ'ուզես,  
եփած քառակուսիներ են և պտուղ:

— Ի՞նչ կ'իմանաս քառակուսի ըսելով — հարցոց ա՛Արդան-  
եան մասատանջութեամբ:

— Կ'իմանամ շոմին — վրայ բերաւ Արամիս — բայց քեզի  
համար հաւկիթ ալ պիտի եփել տամ, և այս ծանր օրինազան-  
ցութին մ'է, վասն զի հաւկիթը միս է, քանի որ անկից վառ-  
եալ կ'ձնի:

— Այդ հացիերոյթ շատ համեղ չէ, բայց փոյթ չէ, քեզի  
հետ մնալու համար պիտի հաւանիմ:

— Ծնորհապարտ եմ քեզ այդ զոհողութեանդ համար — ը-  
ստ Արամիս — բայց եթէ իմ կերակուրս մարմնոյդ օգուտ մը  
չտնի, հոգւոյդ օգասակար պիտի լինի, հաւաստի եղիր:

— Աւքեմն այսպէս, Արամիս, իրօք կրօնական կարգը պիտի  
մտնես. ի՞նչ պիտի ըսեն արդեօք բարեկամներդ, ի՞նչ պիտի ը-  
սէ ու. աը Դրէվիլ: Պիտի ըսեն թէ դասալիք մ'ես, աչա այժ-  
մէն կ'իմացնեմ քեզ:

— Կրօնական կարդը չեմ մտներ, այլ անոր կ'դառնամ: Ես  
արդէն եկեղեցին ձգեր էի աշխարհի համար, վասն զի զիտես  
արդէն որ հրացանակը վտառակը մեծ գմկամակութեամբ հազայ:

— Ես այդ բանը չզիտեմ:

— Ի՞նչ, միթէ չզիտե՞ս թէ ի՞նչպէս կղերանոցէն ելայ:

— Ամենեին:

— Ահաւասիկ պատմութիւնս. և արդարեն Ս. Գիրքը կ'ըսէ.  
Իրարու խօստովանեցէք. ես ալ քեզի խօստովանանք կ'լինիմ,  
ա՛Արդանեան:

— Ես կանխառ թողութիւն կ'տամ քեզ, կ'նայիս որ բարի  
մարդ մ'եմ:

— Բարեկամ, սուրբ բաներու վրայ կատակ մին ըներ:

— Լաւ, խօսէ, քեզ մտիկ կ'լինեմ:

— Արդ՝ կղերանոցն էի ինն տարեկան հասակէս վեր, երեք

օրէն քսան տարիս պիտի կոխէի , արբայ պիտի լինէի , և ամէն ինչ որոշուած էր , իրկուն մ'որ՝ ըստ սովորութեանս՝ տուն մը կ'երթայի և ուրախութեամբ կ'յաձախէի , — ինչ օգուտ , երբ պատանի ենք , տկար ենք , — սպայ մ'որ նախանձու աչքով կը նայէր ինձ երբ Սրբոց Վարդը տան տիրուհւոյն կ'կարդայի , յանկարծ ներս մտաւ առանց կանխառ իմաց տալու : Ճիշտ այն իրակուն որ Յուղիթի մէկ արիական զործը թարգմաներ էի և տան տիկնող կ'հաղորդէի իմ ուտանաւորներս . տան տիկինը՝ իմ ուսէս կախուած հետո կ'կարդար զանոնք և կ'զովէր անդադար ։ Կնկան զիբե՞ն՝ որ փոքր ինչ ընտանեկան էր , այս սպայն վիրաւորեց . բան մը չըսաւ , բայց երբ դուրս ելայ , նա ևս իմ ետեւ մէս ելաւ և ինձի միանալով ,

— Պարոն արբայ — ըստ ինձ — արդեօք գաւազանի հարտածներ կ'սիրե՞ն :

— Զեմ կընար պատասխանել , պարոն — ըսի անոր — քանի որ ոչ ոք համարձակած է այդպիտի հարուածներ ինձ տալու :

— Լաւ ուրեմն , մտիկ ըրէ ինձ , պարոն արբայ , եթէ նորէն գառնաս այն տունն ուր քեզի հանդիպեցայ այս իրկուն , ես պիտի համարձակիմ :

« Կարծեմ թէ վախցայ , դոյնս սաստիկ նետեց , զգացի որ ուտքերս կ'կթատին , պատասխան մը կ'փնտուէի տալու , և չղըտնելուս՝ լոեցի :

« Ապայն սրատասխանի կ'սպատէր , և տեմնելով որ կ'ուշանար , մկսաւ ծիծաղիլ , կոնակը դարձաց և տուն մտաւ :

« Ես ալ կղերանոցը դարձայ :

« Ես քաջ աղատորդի և տաքարիւն եմ , ինչպէս որ դիտած ես , սիրելիդ իմ տ'Արդանեան . նախատինքը սոսկալի էր , և որշափ որ ոչ ոք իմացաւ զայն , դարձեալ սրտիս մէջ կենդանի էր և կ'եռար : Իմ մածաւորներուս իմաց տուի որ ձեռնադրութեան համար դեռ բոլորովին սպատաստ չեմ , և իմ խնդրոյս վրայ արարագութիւնը տարի մ'ետ ձգեցին :

« Գացի Բարիզի ամենէ վարպետ զինավարժը զտայ , անոր հետ

կլաշն դրի ամէն օր սրամարտութեան դաս առնլու , և ամէն օր ամբողջ տարի մը դաս առի : Յետոյ՝ զիս նախատողին տարեդարձին օրը՝ պարեղօսս դամէ մը կախեցի , ասպետի հաղուստ հաղոյ և մէկ բարեկամուհիիս տուած պարահանդէսը զայի : Արդէն դիստէի որ իմ մարդս այն տեղ պիտի դանուէր : Ֆօրսի մօտ ֆրան-Պուրժուա փողոցն էր :

«Եւ արդարեւ իմ սպաս այն տեղն էր . անոր մօտ զայի երբ սիրերդ մը կ'երգէր կաթողին նայելով կնկան մը , և երկրորդ նուաղին մէջ տեղն անոր ձայնն ընդհատեցի , ու ըսի .

— Պարոն , միթէ միշտ կ'զմկամակի՞ս որ Բայէն փողոցը զըտնուած տունն երթամ , և միթէ դարձեալ գաւազանի հարուածներ տալու պիտի սպառնաս եթէ անդ երթալու խելքիս փչէ :

«Սպայն զարմանօք նայեցաւ ինձ և ասիս ըստ .

— Ի՞նչ կ'ուզես ըսել , պարոն , ես քեզ չեմ ճանչեր :

— Ես եմ — ըսի անոր — այն պզափիկ արբան որ Սրբոց Վալք կ'կարդայ և Յուղիթն ոտանաւորի կ'դարձնէ :

— Հա , հա , կ'յիշեմ հիմակ — ըստ սպայն հեղնօրէն — բայց ի՞նչ կ'ուզես :

— Կ'փափաքէի որ պարապոյ ժամ մ'ունենայիր որպէս զի ինձի հետ դուրսը պտոյտ մ'ընես :

— Վաղն առտու , եթէ կ'հաճիս , յօժարակամ կ'ընդունիմ :

— Վաղն առտու ուշ է , խնդրեմ , անմիջապէս :

— Եթէ անպատճառ կ'պահանջես որ . . . :

— Հապա , կ'պահանջեմ անշուշտ :

— Ուրեմն դուրս ելնենք : Տիկիններ — ըստ սպայն — դոք անհամնդիստ մի լինիք : Պարոնը սպաննելու չափ ժամանակ տուէք ինձ , և վերջին նուադն աւարտելու պիտի դառնամ :

«Դուրս ելանք :

«Սպայն առի Բայէն փողոցը տարի , միշտ այն տեղն ուր տարի մ'առաջ մի և նոյն ժամուն՝ քեզի արդէն պատմած նախատինքն ըրած էր ինձ : Սքանչելի լուսնկայ մը կար : Սուրերը ձեռք առինք , և առաջին յարձակումին իսկ զանի անշունչ դեմին տապալեցի :

— Աստանայ — ըստ ա'Արդանեան :

— Արդ — շարունակեց Արամիս — երբ տիկինները տեսան որ իրենց երդիչն ետ չդարձաւ, և Բայէն փողոցը զանուեցաւ նա սրի ահազին հարուած մը մարմնոյն վրայ, մտածեցին որ ես սպաններ եմ զանի, և այս գործը մեծ աղմուկ հանեց : Ուստի առեն մը պարեգօտը մէկդի ձգելու սահպաւեցայ : Աժոս՝ որուն հետ այն ժամանակը ծանօթացայ, և Բորթոս, որ իմ սրամարտութեան դասեր ս զատ՝ քանի մը նորանեւ սրի հարուածներ վարսել տրվեցոցեր էր ինձ, յորդոր առւին որ հրացանակրի վտաւակ հազնիմ : Թագաւորը շատ սիրեր էր իմ հայրա՝ որ Արքասի պաշարման առեն սպաննուեր էր, և այս վտաւակն ինձ շնորհ հեց : Ուստի կ'իմանաս հիմակ որ ինձի համար ժամը հասած է եկեղեցւոյ ծոցը դառնալու :

— Եւ ինչո՞ւ համար այսօր քան թէ երէկ կամ վաղը չէ : Այսօր ի՞նչ պատահեցաւ քեզ, որ թելաղբեց քեզի այդ տխոր դաղափարները :

— Այս վերքը, սիրելիդ իմ ա'Արդանեան, երկնից մէկ աղջարարութիւնն եղաւ ինձի համար :

— Բա՛, այդ վերքն որ արդէն դրեթէ դոցուած է, և ստոյդ եմ որ այսօր այդ վերքը չէ քեզ տառապողը :

— Եւ ի՞նչ բան կրնայ լինիլ — հարցոց Արամիս կարմրեալով :

— Սրտիդ վրայ վէրք մ'ունիս, Արամիս, որ աւելի ծանը և արիւնալի է, վէրք մ'որ կին մ'ըրած է :

Արամիսի աշքն ակամայ փայլեցաւ :

— Ա՛Հ — ըստ նա իր այլայլութիւնը շինովի անհողութեան ներքե քօղարկելով — մի խօսիր ինձ այդ բաներուն վրայ . միթէ այսուհեան ներելի է ինձ այդպիսի բաներ մտածել, սիրոյ վիշտեր ունենալ : Ունայնութիւն ունայնութիւն : Միթէ կարծես թէ ինելքս թռոցեր եմ, և որուն համար, բամբիչի մը, սենեկապետուհիի մը համար, որուն հետ սիրաբանած լինիմ զօրասան մը մէջ, պահ :

— Ներէ ինձ , սիրելիդ իմ , Արամիս , բայց կարծէի թէ դու  
տեղի բարձր տեղերու աչք ունիս :

— Աւելի՞ բարձր , և ինչ եմ ես որ այդչափ փառասիրութիւն  
ունենամ . խիստ չքառոր և անշան հրացանակիր մ'որ ստրկու-  
թիւնը կ'ատէ , և աշխարհիս մէջ իրեն յարմար տեղ մը չդաներ:

— Արամիս , Արամիս — զոչեց ա'Արդանեան իր բարեկամին  
նայելով վարանելի երեսով մը :

— Հող էի և հող կ'գառնամ : Մարդուս կեանքը նուաստու-  
թեամբ և աղէտքով լի է — յարեց նա տրտմելով . — այն ամէն  
թելերն որ զինքը երջանկութեան կ'կապին , մարդուս ձեռքին  
մէջ հետղչետէ կ'կառրին , մանաւանդ ոսկի թելերն : Ո՛չ , սի-  
րելիդ իմ ա'Արդանեան — վրայ բերաւ Արամիս իր ձայնին թե-  
թե դառնութեան դրօշմ մը տալով — հաւտաւ ինձ , երբ վէրք  
ունենաս , լաւ պահես : Լառութիւնը գժբաղդներու յետին ուրա-  
խութիւնն է . նայէ որ վիշտերդ մէկու շայանես , հետաքրքիր-  
ները մեր արտսուքը կ'ծծեն , ինչպէս որ ճանձերը վերառոր եղա-  
նիկի մ'արիւնը կ'քամն :

— Աւազ , սիրելիդ իմ Արամիս — ըստ ա'Արդանեան ինքն ալ  
իր կողմէն խորին հառաջ մը հանելով — զու այդ ըսելով իմ  
յատուկ պատմութիւնս կ'ընես :

— Ի՞նչպէս :

— Այո , կին մը զոր կ'սիրէի , կ'պաշտէի , բռնի ձեռքէս յա-  
փշտակիցին : Ո՞ւր է հիմակ , և ո՞ւր տարին զինքը չդիտեմ , կա-  
րելի է բանան է , կարելի է մեռած է :

— Գրնէ սա մսիթարութիւնն ունիս ըսելու թէ կամովին չը  
թողուց քեզ , և եթէ անորմէ լուր չես սունուր , թերես չէ կա-  
րող հաղորդակցիլ քեզի հետ , մինչզեռ . . . . :

— Մինչդեռ . . . . :

— Ոչ ինչ — վրայ բերաւ Արամիս — ոչ ինչ :

— Այսպէս ուրեմն աշխարհէ կ'հրաժարիս ընդ միշտ . այդ է  
քու հաստատ որոշումէ :

— Այո , ընդ միշտ : Դու այսօր իմ բարեկամն ես , վաղն

ինձի համար լոկ ստուեր մը պիտի դառնաս , կամ լաւ ևս ըսեմ , ինձի համար մեռած պիտի լինիս : Իսկ աշխարհս զերեղման մ'է , և ոչ այլ ինչ :

— Կրոջ , շատ , շատ տխուր է ըսածդ ինձի :

— Ի՞նչ ընեմ , իմ կոչումս զիս կ'քաշէ , կ'յափշտակէ կ'տանի :

Տ'Արդանեան ժպիտ մ'ըրաւ և չպատասխանեց : Արամիս շարունակեց .

— Եւ սակայն , մինչդեռ տակառին երկրիս կապուած եմ , կը փափաքէի քու և մեր բարեկամներու վրայ խօսիլ :

— Իսկ ես — ըստ ա'Արդանեան — կ'փափաքէի քու վրադ խօսիլ , սակայն աշխարհային բաներէ այնքան հեռու կ'տեսնեմ քեզ որ չեմ համարձակիր . սէրը կրողին կ'տաս , բարեկամներ քեզի համար շոք են , իսկ աշխարհ դերեղման մը :

— Ափսոս , դու ևս փորձով պիտի տեսնես — ըստ Արամիս հառաջելով :

— Ուրեմն չխօսինք այս մասին — ըստ ա'Արդանեան — և սա նամակն այրենք , որ անշուշտ քու բամբիշիդ կամ սենեկապանուհին կողմէն նոր անհաւատարմոթին մը կ'յայտնէ :

— Ի՞նչ նամակ է այդ — գոչեց Արամիս աշխուժիւ :

— Նամակ մ'որ բացակայ եղած ատենդ տունդ բերեր են , և ինձ տուին որ քեզի յանձնեմ :

— Քայց այդ նամակն որմէ՞ է :

— Ա՛հ , կարելի է լալտղին նաժիշտի մը , յուսահատ բամբիշի մը կողմէ կ'զայ . թերես տիկին Շէվրէօղի սենեկապանուհին , որ իր տիրուհւոյն հետ Գուր դառնալու սահպուած է , և սեմենթ երեւելու համար հօտուէտ թուղթ առած և իր զիրը դքսուհի մը պատկով կնքած պիտի լինի :

— Ի՞նչ կ'ըսես դու :

— Դէն , արգեօք կորուսի — ըստ նենգօրէն պատանին զիրը փնտուել կեղծելով : — Քարեբաղդօրէն աշխարհ զերեղման մ'է , մարդիկ , հետեապէս կիներ ստուերներ են , և սէրն ալ այնպիսի զգացում մ'է որ աչքիդ ստակ մը չամեր :

— ԱՇ, ա'Արդանեան, ա'Արդանեան — զոչեց Արամիս — հզիս բերանս կ'բերես :

— Վերջապէս, ահաւասիկ — ըստ ա'Արդանեան, և նամակը զրաբանէն հանեց :

Արամիս ցատկեց, նամակն առաջ, զայն կարդաց, կամ լաւ ևս լափեց, իր գէմքը կ'շողար :

— Կ'երեի թէ նաժիշտը լաւ ոճ մ'ունի — ըստ զրաբերն անհոգութեամբ մը :

— Ընորհակալ եմ, ա'Արդանեան — զոչեց Արամիս զբեթէ խելացնոր — Դուր զառնալու ստիպուեր է, անհաւատարիմ չէ նա ինձի, միշտ կ'սիրէ զիս : Արի, բարեկամ, արի քեզ զըր կեմ, երջանկութիւնս զիս հեղձամղձուկ կ'ընէ :

Եւ երկու բարեկամները սկսան պատկառելի Ս. Ուկեբերանի բոլորակիքը պարել, ոտնակօխ ընելով քաջաբար քարոզազրին թղթերն որ զետին զլորեր էին :

Նոյն պահուն՝ Պազէն ներս կ'մտնէր շոմինն ու ձուազեղը բերելով :

— Կորիր, ապիքամ — զոչեց Արամիս դտակն անոր երեսին նետելով — եկած տեղդ դնա, ասր այդ սոսկալի բանջարեղէնն ու ահուելի կերակուրը, և խորոված նապաստակ մը, գէր կուրտ աքաղաղ մը, զիստ մը և չորս շիշ հին զինի բեր :

Պազէն՝ որ իր տիրոջ երեսը կ'նայէր, և այս փոփոխութենէն բան մը չէր կրնար հասկնալ, ձուազեղը շոմինն մէջ ձղեց տըխրաղին և շոմինն ալ զետին թափեց :

— Ահա ժամ է կեանքդ նուիրել թագսորաց թաղաւորին — ըստ ա'Արդանեան — եթէ կ'հաճիս անոր քաղաքավարութիւնն մընել, Non inutile desiderium in oblatione. (Քիչ մը վիշտ անպատեհ չէ առ Տէրն ողղուած նուերի մը մէջ) :

— Սատանային ծակը զնա լատիներէնիդ հետ, իմ սիրելի ա'Արդանեան, խմնիք, թշուառական, խմնիք միշտ, շատ խըմնիք, և պատմէ ինձ թէ վարը մեր ծանօթներն ի՞նչ կ'ընեն :

## Ե

ԱԹԱՍԻՆ ԿԻ՞ՆԸ

— Հիմակ կ'մնայ մեզ Աթոսին վրայ լուր առնուլ — ըստ տ'Արդանեան կայստառ Արամիսին, երբ իրենց մեկնելն վեր մայրաքաղքին մէջ անցած դարձած բաներն անոր պատմեց, և երբ պատուական ճաշ մ'ընելով մին իր բնաբանը մոռցաւ, միւմն իր յոդնութիւնը :

— Միթէ կարծե՞ս որ Աթոսին փորձանք մը հասած լինի — հարցոց Արամիս — քանի որ այնքան պաղարիւն, արիասիրտ է, և իր սուրը ճարպիկոթեամբ կ'գործածէ :

— Անշուշտ, այդ զիտեմ. և ոչ որ ինձի չափ կ'ճանչէ Աթոսին քաջութիւնն ու ճարտարութիւնը. բայց լաւազոյն կ'համարիմ սրովս նիզակներու դէմ մաքառիլ քան թէ բիրերով. կը վախնամ որ Աթոս սպասառորաց կողմէ զանակոծ եղած չլինի. սպասառորներն ուժով զարնող և շուտով չղաղարող մարդիկ են: Ահա ասոր համար կ'խոստովանիմ որ կարելի եղածին չափ շուտ ճամբայ ելնել կ'փափաքիմ:

— Քեզի ուղեկից լինելու պիտի ջանամ — ըստ Արամիս — թէ և կ'զդամ որ ձի հեծնելու անկարող եմ: Երէկ իմ վրայ փորձ փորձեցի սա պատին վրայ տեսած ձաղկդ, սակայն ցաւէն այս բարեպաշտիկ կրթութիւնը չկրցայ շարունակել:

— Վասն դի, սիրելի բարեկամ, երբէք մարդ փորձ ըրած չէ հրացանի հարուած մը խարազանի հարուածով բուժել, բայց հիւմսդ էիր և հիւանդութիւնը մարդուս զլուխը տկար կ'գործէ, հետեապէս քեզի կ'ներեմ:

- Եւ ե՞րբ պիտի մնկնիս :
- Վաղը, այդուն, կրցածիդ չափ հանգստացիր այս զիշեր +  
և վաղը, եթէ կարող լինիս, միասին ճամբայ կ'եւնենք :
- Ռուբեմն վաղը — բառ Արամիս — վասն զի որչափ որ եր-  
կամէ կազմուած ունիս, զարձեալ հանգստանալու պի արք հար-  
կաւ կ'զգաս :
- Երբ հետեւեալ օրը տ'Արդանեան Արամիսի սենեալը մտաւ :  
զանի պատուհանը զտաւ :
- Ի՞նչ կ'նայիս այդ աել — հարցոց տ'Արդանեան :
- Կրաւ որ կ'զմայլիմ ոս երեք փառաւոր ձիերու վրայ՝ որպէ  
սանձն ախոռապանները բռնած են, այսախիս երիմարներու վրայ  
ողերիլն արդարեւ իշխանական զուարձութիւն մ'է :
- Լաւ, սիրելի Արամիս, այդ զուարձութիւնը սլիափ վայե-  
լես, վասն զի այն ձիերէն մին քուկիդ է :
- Ա՛հ, բա՛, և ո՞րը :
- Այս երեքէն ուն որ ուղես, կրնաս ընտրել :
- Եւ միմէ վրայի ծածկոյթն ալ իմն է :
- Անսարակյոս :
- Խնդալ կ'ուղես, տ'Արդանեան :
- Ա՛ւ չեմ խնդար քանի որ Փրանսերէն կ'խօսիս :
- Կ'ոն են սա ոսկեզօծ հրաշանականները (fontes), սա թաւ-  
չէ տապձակը, սա արծաթասեպ թամբը :
- Երօք քուկիդ է, ինչպէս որ սա փերեւեթող ձին իմն է, ինչ-  
պէս որ միւսն որ կ'ձախրէ Աթոսինն է :
- Կրող, այս երեքն ալ շքեղ կենդանիներ են :
- Ռուբեմն թագաւորն ըրաւ քեզի այս ընծան :
- Հաւաստի եղիր որ կարտինալը չէ . բայց այս ձիերն ուս-  
կից ձեռք ձերցի մի հարցներ, և մինակ զիացիր որ մին քուկիդ է :
- Կարմիր սալասաւորին բռնած ձին կ'առնում :
- Չամա աղեկ :
- Կեցցէ՛ Աստուած — դոչեց Արամիս — ահա ասով իմ ցառու-  
կ'զադրի . եթէ մարմնոյս մէջ երսուն զնդակ ալ ունենամ, դար-

Նեալ այն ձիուն վրայ կրնամ՝ հեծնել։ ԱՇ, հոդիս ովկայ, շատ զեղեցիկ են ասպատաննելը։ Խնձ նայէ, Պաղէն, այս տեղ եւ կուր, և շուտով։

Պաղէն տրատում եւ տառապաղին երեցաւ դրան սեմին վրայ։

— Սուրս մաքրէ, թաղեայ զլխարկս շտկէ, վերարկուիս փոշին հանէ և հրացանակներս լեցուր — ըստ Արամիս։

— Այդ վերջին պատուէրդ աւելորդ է — ընդհատեց տ'Արդանեան — հրացանակներդ արդէն լեցուն են։

Պաղէն հառաչեց։

— Օ՞ն, վարպետ Պաղէն, հանդարսէ — ըստ ա՛Արդանեան — մարդս ամէն վիճակի մէջ կարող է երկնից արքայութիւնը ժառանդել։

— Եւ սակայն, իմ տէրս արդէն ինչ քաջ աստուածաբան էր — ըստ Պաղէն զրեթէ լալով — եպիսկոպոս և թերես կարտինալ լինէր։

— Կաւ իմ խեղջ Պաղէն, ինչո՞ւ քիչ մը չես խորհիր. ինչ օգուտ ոնի եկեղեցական լինելը, խնդրեմ. ասով մարդ պատերազմի երթաւլէ չգագրիր. կ'նայիս արդէն որ կարտինալը ասդաւարտ 'ի զլուի և զեղարդ 'ի ձեռին՝ առաջին պատերազմը պիտի մղէ, և Պ. Կօհարէ տը լա Վալէդ ինչ կ'ընէ, նա ևս կարտինալ է. իր սպասաւորին հարցուր թէ քանի քանի անդամ պրօն պատրաստած է իրեն համար։

— Ափո՞ս — հառաչեց Պաղէն — զիտեմ, պարոն. այսօրուան օրս ամէն ինչ վեր 'ի վայր է աշխարհիս մէջ։

Կոյն պահուն՝ երկու պատանիներն և խեղճ սպասաւորը վար իջեր էին։

— Սա ասպատանը բռնէ, Պաղէն — ըստ Արամիս։

Եւ Արամիս սրացաւ նատաւ թամբին վրայ իր սովորական չնորհքով ու թեթեռնեամբ, բայց ձիուն քանի մը շրջան ու կորավաղ ընել տալէն ետեւ՝ ձիւորն այնպիսի անտանելի ցաւեր ըզդաց որ դպյուը նետեց և երերաց։ Տ'Արդանեան՝ որ այս դէպքը զոշակելով՝ իր աչքը Արամիսի վրայ տնկեր էր, դէպ անոր վառ վեց, թերուն մէջ առաւ և զինք խոցը տարաւ։

— Լաւ, սիրելի Արամիս, ինքզինքդ խնամել տուր — ըստ  
նա — ես առանձին պիտի երթամ Աթոսը՝ փնտոելու :

— Դու պղնձէ մարդ մ'ես — ըստ անոր Արամիս :

— Ո՛չ, բաղդ ունիմ միայն և ոչ այլ ինչ. բայց ինձ սպա-  
ռելու ատեն ի՞նչ կեանք պիտի վարես : Մատերու և օրհնութիւն-  
ներու վրայ մեկնութիւններ պէտք չեն, կ'իմանաս, հա :

Արամիս ժպտեցաւ :

— Ոտանաւորներ պիտի շինեմ — ըստ նա :

— Այո, տիկին Շէվրէօղի նաժիշտին սիրադրին հօտով խըն-  
կեալ ոտանաւորներ : Պաղէնին առողանութիւն սորվեցուր, առով  
թերևս սփոփիս : Իսկ ձին, ամէն օր քիչ մը հեծիր, և քիչ  
քիչ պիտի վարժիս անոր ընթացքին :

— Ո՛չ, այդ մասին անհոգ եղիր — ըստ Արամիս — զիս պատ-  
րաստ պիտի զտնես քեզ հետևելու :

Իրարու մաս բարե ըսին, և տաս վայրկեան ետքը՝ ա՛Արդա-  
նեան իր բարեկամը Պաղէնին և պանդոկապետուհիին յանձնելէն  
ետև՝ Ամբէնի կողմը կ'արշաւէր :

Բայց Աթոսն ի՞նչպէս պիտի զաներ, և նայինք պիտի կարենա՞ր  
զտնել :

Շատ վտանգաւոր վիճակի մէջ ձգեր էր զանի, և թերես նը-  
կոն ընկած մեռած էր : Այս մատուքն իր ճակատը մթաղնեւ-  
լով՝ անոր քանի մ'անդամ հառաջներ հանել տուաւ, և ինք-  
նովին քանի մ'երդո մներ ըրաւ վրէժ լուծելու համար : Տ'Ար-  
դանեանի բարեկամներէն Աթոս ամենէն տարւոքն էր, և հետեա-  
պէս՝ առ երեսյթո՝ իր ճաշակին և համակրութեան այնչափ են-  
թակայ չէր երեւր :

Սակայն այս ազատորդիին համար յատուկ նախապատռութիւն  
մ'ունէր : Աթոսին ազնիւ և վեհանձն կերպարանը, այն մեծու-  
թեան փայլակներն որ ուր ուրեմն իր կամովին ընտրուած մթու-  
թենէն կ'փայլատակէին, այն իր անայլայլելի և միօրինակ ընտ-  
րութիւնն որով աշխարհիս ամենէն դիւրավար ընկերակիցը կը  
դառնար, այն իր բռնազրուիկ և կծու խնդութիւնը, այն իր քա-

ջամբառութիւնն՝ որ թերևս անխոչէնմ համարուէր եթէ հազուադիւտ պաղարիսնութեան մ'արդիւնքը չլինէր, այս ամէն բարեմասնութիւնները ա'Արդանեանի ոչ միայն համարումն ու բարեկամութիւնը կ'զրաւէին, այլ նաև անոր հիացում կ'ազդէին:

Եւ արդարմ՝ եթէ վայելչակաղմ ու ազնիւ պաշտամիան Աթոսը՝ ո՛. որ Դրէ վիլի հետ բաղդատենք՝ իր խնդում օրերուն ժամանակ՝ անորմէ վար չէր մնար. հասակը միջակ էր, սակայն այս հասակն այնպիսի ընտիր ձեւ և համեմատութիւն ունէր, որ շատ անգամ Բորթոսին հետ ըրած կոխներուն մէջ այս հսկան ընկճեր էր, որուն մարմնային ոյժն առակ դարձեր էր հրացանաւկիրներուն մէջ. իր դլուխը՝ որ սուր աշոնք, ուղիղ քիթ ունէր, և ծնօս մը Պրուդոսին ծնօտին նման՝ անհետիլի մեծութեան և վայելչութեան դրոշմ ունէր. իր ձեռներն՝ որոնց վրայ բնաւ հոգ չէր տաներ, Արամիսին յուսահատութիւն կ'պատճառէին, որ իրեններն անդադար կ'մաքրէր նշանառով և հոտաւէտ իւղերով. իր ձայնին հնչիւնը թափանցիկ և միանգամայն հեշտալուր էր, և ասկէ զատ՝ Աթոս՝ որ միշտ աննշան և փոքր կ'ցուցունէր ինքողինքը, անսահմանելի բան մ'ունէր, այս էր որ ամենէն փայլուն ընկերութեան սովորութեանց գիտակ կ'երևէր, և աղնուազգի վարմունքն՝ իրը անզէտս՝ իր ամենէն մանր շարժումներուն մէջ նշմարելի էր:

Եթէ հացկերայթ մը տրուէր՝ Աթոս սքանչելի կերպով կ'անօրինէր, իւրաքանչիւր կոչնականի՝ իր նախնեաց կամ ինքնիրեն ստացած կարգին և աստիճանին համեմատ տեղ ցոյց տալով: Եթէ կնքաղիտական խնդիր մը յուղուէր, Աթոս տէրութեան բռնոր աղնուական զերպատառները, անոնց աղզաբանութիւնը, դաշնակցութիւնը, զինադրոշմն և զինուց ծագումը կ'ձանչէր: Քաղաքավարութեան վերաբերող ամենէն մանր պարագան զիտէր, զիտէր թէ մեծ կալուածատէրներու իրաւոնքն ինչ էր, քաջ զիտէր որորդութեան և բարձրգութեան արհեստը, և օր մ'այս արհեստին վրայ խօսելու ժամանակ՝ նոյն իսկ Լուի Ֆ. ի զարմանք պատճառակը էր, թէ և այս թաղաւորն այս մասին անհման վարպետ մ'էր:

Նոյն ժամանակի պայտագալուներուն պէս՝ Աթոս ձի կ'հեծնէր և զէնք դործածելու մասին խիստ յաջողակ էր. ասկէ զատ՝ իր դաստիարակութեան այնքան խնամք տարեր էին՝ նոյն իսկ դրայրացական ուսմանց մասին՝ այն ատեն հաղուադիւտ բան մ'էր այս ապատորդիներուն մէջ, որ Արամիսի արձկած Հատիներէն հատ ու կոստրներուն վրայ կ'ծիծաղէր ու Բորթոս ալ զանոնք հասկնալու երես մը կ'ցուցնէր. երկու երեք անդամ իսկ պատահած է՝ ի մեծ զարմացումն իր բարեկամաց, երբ Արամիս իր Հատիներէնէն սիսալ մ'ընէր, որ Աթոս բայի մը ժամանակն ու բառի մը հուլովն ուղղած է. իսկ իր ուղղասփրութիւնն անվկանդ էր այն դառն մէջ՝ ուր զօրականներ իրօնի և Խղճի կանոնաց հակառակ կ'վարուէին, սիրահարները մեր օրուան խիստ փափկութեան դէմ, և աղքատներն Աստուծոյ եօթերորդ պատահիրանին դէմ։ Աւրեմն Աթոս արտաքոյ կարդի մարդ մ'էր :

Եւ սակայն այս ընտիր բնաւորութիւնը, այս դեղեցիկ արարածը, այս նուրբ էոթիւնն անզգայօրէն նիւթական կենաց կը դառնար, ինչպէս որ ծերունիները մարմական և բարոյական առշամութեան կ'զառնան։ Աթոս՝ իր զրկանաց ժամերուն մէջ, և այս ժամերը յանախ կ'ունենար, իր լուսաւոր մասը լիսվին կ'կորուսէր և կարծես թէ խոր մթութեան մէջ աներևոյթ կ'լինէր :

Այն ատեն կիսաստուածն անհետ լինելով՝ հազիւ ուրեմն մարդ մը կ'մնար։ Գլուխը կոր, աչքը մարած, լեզուն ծանը ու դրաւարին, Աթոս շատ երկար ժամնը կ'նայէր կամ իր շիշին և բաժակին, կամ Կրիմօին, որ անոր նշաններուն հնազանդելու վարժ, իր տիրոջ անթարթ (atone) ակնարկին մէջ ամենէն աննշան փափաքը կ'նշմարէր և անսիջապէս զոհ կ'ընէր։ Եթէ այսպիսի մէկ ժամ մը չորս բարեկամներ ՚ի մի վայր զումարուէին՝ բուռն ձգով Աթոսին բերնէն դուրս եկած բառ մը՝ բոլոր խօսակցութեան նիւթ կ'դառնար։ Իսկ միւս կողմէ՝ Աթոս չորս հողիի ըմպած զինին կ'խմէր, և այս ալ ուրիշ նշանով չէր յայտներ բայց եթէ ունաքերը քիչ մ'աւելի զդալի կերպով պատահելով և աւելի խոր տրամաթիւն մը ցոյց տալով։

Տ'Արդանեան՝ որուն հետապնին և սուր միտքը կ'ձանչենք՝ ուակախին այս թախծոթեան պատճառը չէր հասկցած, և ոչ պատահած ժամերը նշանակած, թէ և այս մասին իր հետաքրքրութիւնը զոհ ընելու պէտք ուներ: Աթոս երբէք զիր չէր ստանար, երբէք ուրիշներէ ծածուկ ընթացք մը չէր բռներ:

Կարելի չէր ըսել որ այս արտմութիւնը դրգոռողը զինին էր, վասն զի այս արտմութիւնը փարատելու համար զինի կ'խմէր, թէ և, ինչպէս ըսինք, այս գեղով աւելի արառում տխուր կ'գառնար: Այս սեամաղձութիւնը կարելի չէր նաև խաղի վերագրել, վասն զի Բորթօսին բռնած ընթացքին հակառակ, որ խաղի բաղդին ամէն փոփոխութիւնները երգելով կամ լուսանկով կ'յայտներ, Աթոս՝ թէ վաստկէր և թէ կորուսեր՝ մի և նոյն անդըրդուելի կերպարանը կ'ցուցնէր: Գիշեր եղած է որ հրացանակիրներու ընկերութեան մէջ՝ հազար ոսկի դահեկան շահած և ասպամինչև տօնի օրերու համար ունեցած ոսկեթել զօտին կորուսած է, և գարձեալ այս ամէնը, նաև հարիւր ոսկի շահած է տանց իր աղուր ունքը մազի չափ վեր կամ վար շարժելու, առանց իր ձեռներուն սպիտակափայլ զզնն այլայլու, առանց իր խօսակցութիւնն՝ որ նոյն իրկուն ախորժելի էր, հանդարտ և ախորժելի լինելէն դադրէր:

Նոյնպէս իր դէմքը մթագնողը՝ մեր դրացի անկլիացոցը պէ՞ս մթնոլորտի ազգեցութիւնը չէր. վասն զի այս արտմութիւնն աւելի կ'աստիանար սովորաբար տարսոյն աղուր օրերուն մօտ. յունիս և յուլիս Աթոսի ահուելի ամիսներն էին:

Ներկային համար ցառ չո՞նէր, իսկ երբ ապազային վրայ խօսք լսէր, ուսերը կ'բարձրացնէր. ուրեմն իր զաղտնիքն անցելոյն մէջ էր, ինչպէս որ տ'Արդանեանի համար անորոշակի ըստեր էր:

Այս խօրհրդաւոր երկոյինն որ իր բոլոր անձին վրայ սփռուած կ'երեկը, աւելի հետաքրքրաշարժ կ'զործէր այն մարդը՝ որուն աչքն ու բերանը՝ նոյն իսկ ամենէն կատարեալ զինովութեան մէջ ոչ ինչ չէր յացանած, թէ և ամէն հնարազէտ միջոցներով անոր հարցումներ ուղղած լինէին:

— Լաւ որեմն — կ'մոտածէր ա՛Արդանեան — կարելի է խեղճ  
Աթուը մեռած է այս պահուս , և իմ՝ պատճառուս մեռած , վասն  
զի զինքն այս դործին ես մղեցի , թէ և անոր շարժառիթը չգիտէր ,  
արդիւնքը չպիտի զիտնայ և որմէ օգուտ մը չպիտի քաղէ :

— Այս ալ 'ի համար առնջու է , պարոն — կ'ըսէր Բլանշէ  
— որ հաւանապէս մեր կեանքն անոր պարտաւոր ենք : Միթէ կը  
յիշէք թէ ինչպէս զոշեց . « Տ'Արդանեան , շուտ համբայ առ ,  
ես բռնուեր եմ » . և իր երկու հրացանակները պարզելէն ետև՝  
ինչ սոսկալի շաշիւն կ'հանէր իր սրովը : Կարծես թէ քանի մարդ ,  
կամ լաւ ես քսան կատաղի սատանաներ էին կուողները :

Եւ այս խօսքերը ա՛Արդանեանի եռանդը կ'զրգուէր , որ իր ձին  
կ'վառէր , թէ և վառուելու պէտք չունէր ձին , քանի որ վազ  
ընդ վազ կ'երթար :

Ըստառեան ժամը տասն մշկին Ամիկէ նը տեսան , ժամը տասն  
մէկ ու կէսին՝ անիծեալ պանդոկին դրան առջև հասան :

Տ'Արդանեան ստէպ մտածեր էր լաւ վրէժ մը լուծել այն  
նենգաւոր պանդոկապետին , վրէժ մ'որ կ'մտիթարէ , գէթ յուս  
սով : Ուստի պանդոկը մտաւ զլիսարկն աշաց վրայ իջեցոցած ,  
ձախ ձեռքը սրին դաստակին վրայ դրած և աջ ձեռքով խարա-  
զանը հնչեցնելով :

— Միթէ կ'ձանչն զիս — ըստ պանդոկապետին , որ բարե-  
տալու համար կ'յառաջանար :

— Այդ պատիւը չունիմ , տէր իմ — պատասխան տուառ նա՝  
ա՛Արդանեանի փայլուն կազմածէն աչերը շւացած :

— Ա՛հ , չե՞ս ձանչեր զիս :

— Ա՛չ , տէր իմ :

— Լաւ , երկու բառով յիշողութիւնդ պիտի շտկեմ : Ի՞նչ  
ըրեր այն ազատորդին որուն դէմ , դրեթէ տասն հինգ օր առաջ ,  
ամբաստանութիւն հանեցիր որպէս թէ գրամանենդ է :

Պանդոկապետին դոյնը նետեց , վասն զի ա՛Արդանեան խիստ  
սպառնալից դիրք մ'առեր էր , և Բլանշէ ալ իր ակրոջ ըրածը  
կ'ընէր :

— ԱՇ, տէր իմ, մի խօսիր ինձ այդպէս — զուեց սղանդուհապետն իր լալաղին ձայնով — ա՛հ, տէր իմ, որչափ սղի նըստաւ ինձ այս սխալմունքը : Ա՛հ, որչափ գժբաղդ եմ :

— Քեզի կ'ըսեմ, այն ազատորդին ի՞նչ եղաւ :

— Ճնորհ ըրէ ինձ մտիկ ընելու, տէր իմ, և ներող եղիր, կ'ազաշեմ, քիչ մը նստիր :

Տ'Արդանեան՝ բարկութենէն և անձկութենէ լուռ ու մունջ կեցած, իբրև դատաւոր սօբառնալից նստաւ : Բլանչէ զուողաբար անոր թիկնաթոռին կոթնեցաւ :

— ԱՇաւասիկ պատմեմ քեզի եղելութիւնը, տէր իմ — վրայ ըերաւ դողդոջուն — վասն զի այս ժամուս կ'ձանչեմ, դու էիր ասկից մեկնողն երբ քու ակնարկած ազատորդիիդ հետ այն կըուին ունեցաւ :

— Այո, ես եմ, ուստի քաջ կ'տեսնես որ եթէ բոլոր ճըշմարտութիւնը չյայտնես, ինձ շնորհ մը սպասելիք չունիս :

— Ուրեմն շնորհ ըրէ մատիկ ընելու, և բոլորովին սայզը պիտի իմանաս :

— Մտիկ կ'ընեմ :

— Ինձի իմաց տուեր էին կառավարութեան կողմէն որ երևելի դրամանենդ մ'իմ սպանդուկս պիտի զայ իր շատ մ'ընկերներովու : Բոլորն ալ սկահակներու կամ հրացանակիրներու պէս ծըպտեալ : Քու ձիերդ, սպասաւորներդ, քու դէմքդ, տէր իմ, ինձի նկարագրեր էին :

— Ապա, ասու — ըստ տ'Արդանեան, որ շուտ մը հասկցաւ թէ այն ճշղրիս նկարագիրն որո՞ւ կողմէ տուեր էր սպանդոկապետը :

— Ուստի կառավարութեան հրամանին համեմատ՝ պէտք եղած սահպողական կարդադրութիւնն ըրի, որպէս զի կարծեցեալ գրամանենդները ձերբակալ ընեմ :

— Վերջը — ըստ տ'Արդանեան, որ քանի այս կրամանենդ բառը կ'լսէր, արիւնը դլիին կ'զարնէր :

— Ներէ ինձ, տէր իմ, որ այսպիսի բաներ կ'ըսեմ, բայց ասոնք ըսելով կրնամ ինքովինքու արդարացնել : Կառավարութիւնն

ինձի սարսափ տուեր էր, և դիտես որ պանդոկապետ մը պէտք  
է որ կառավարութեան հետ լաւ վարուի:

— Բայց նորէն կ'ըսեմ, այն ազատորդին ուր է, ի՞նչ եղաւ:  
Մեռաւ, կենդանի՞ է:

— Համբերութիւն, տէր իմ, ահա պիտի պատմեմ: Ուստի  
արդէն դիտածդ պատահեցաւ, և արտօրնօք մէկնիլդ կարծես  
թէ գործին վախճանին օդնեց — յարեց պանդոկապետն այնպիսի  
նրբմտութեամբ՝ որ տ'Արդանեանի ուշը զրաւեց: — Այն քու ա-  
զատորդի բարեկամդ յուսահատօրէն ինքզինքը պաշտպանեց: Եթ  
սպասառորը՝ որ անակնկալ գիտուածով կառավարութեան մար-  
դոց հետ կուրի բռնտեր էր, որոնք ախոռապանի պէս ծպտեր  
էին . . . :

— Ա՛հ, թշուառական — զուեց տ'Արդանեան — ամենքնիդ  
ալ խօսքը մէկ ըրեր էիք, և չդիտեմ ի՞նչ պատճառաւ ձեզ բնա-  
ջինջ չեմ ըներ:

— Ափսոս, ո՛չ, տէր իմ, ամենքնիս ալ միաբան չէինք, և  
հիմակ դու ինքնին պիտի դատես: Վու բարեկամդ (ներէ եթէ  
հարկաւ ունեցած պատրաւոր անունով չեմ կուեր զինքը, վասն  
զի անունը չգիտենք) բարեկամդ՝ իր երկու հրացանակներով եր-  
կու մարդ զինաթափ ընելէն ետե՛ նահանջեց ինքզինքը պաշտ-  
պանելով առօք 'ի ձեռին, և անով իմ մարզերէս մին հաշմելէն  
զատ՝ զիս ալ՝ սրին տափակ կողմէն զարնելով՝ ուժաթափ ըրաւ:

— Բայց, անզզամ՝ դահիճ, պիտի ընցնես խօսքդ — ըստ  
տ'Արդանեան — Աթոս, Աթոս ի՞նչ եղաւ:

— Ինչպէս որ ըսի, աէր իմ, նահանջելու աան՝ ետին շտե-  
մարանին սանդուղը դատաւ, և որովհետեւ դուռը զոց էր, բանա-  
լին քաշեց և ներսի զին սպասարուեցաւ: Որովհետեւ զանի այն  
տեղ դանելու ստոյդ էին, ազատ թռողացին:

— Այս — ըստ տ'Արդանեան — բոլորովին մեռցնելու միաք  
շունէին, այլ կ'ուզէին բանտարկել:

— Տէր Աստուած, բանտարկել, տէր իմ. ընդ հակառակն,  
ի'երդնում որ ինք զինքը բանտարկեց: Կախս ծանր կրիւ մը տաւ

բեր էր, մէկ հարուածով արդէն մարդ մը սպաններ, և ուրիշ երկու հողի ալ կարեվէր վիրաւորուեր էին: Մեռելն ու երկու վիրաւորներն առին տարին իրենց ընկերներն, և երբէք ոչ ասոնց և ոչ միւսներուն խօսքը լսեցի: Կոյն իսկ ես, երբ խելքս դլուխս եկաւ, դացի Պ. կառավարիչը գտնելու, և անոր պատմեցի ամէն անցած դարձածը: Բայց Պ. կառավարիչը կարծես թէ այլ յայլմէ եղաւ, ըստ թէ բոլորովին անտեղեակ է ըստաներուս, թէ իմ առած հրամաններս իր կողմէն չէին, և եմէ երբէք մէկու մ'այս պատահական կոռուին վրայ բան մ'ըսելու դըժքաղդութիւնն ունենամ, զիս կախել պիտի տայ: Կ'երեի թէ սխալեր եմ, պարոն, մին միւսին տեղ ձերբակալ ըրեր եմ, և այն զրո ձերբակալ ընել պէտք էին՝ խոյս տուեր էր:

— Բայց Ամոս — զոչեց տ'Արդաննեան, որուն անհամբերութիւնը կ'աւելնար կառավարութեան այս դործին հրամար ունեցած անտարբերութենէն — Ամոս ի՞նչ եղաւ:

— Արովչետե կալանաւորին ըրած անիրաւութիւնս դարմանելու փոյթ ունէի — վրայ բերաւ սպանդոկապետը — դէպ ՚ի շտեմարանը դացի որպէս զի անոր պատառութիւն տամ: Ահ, պարոն, անի մարդ չէր, այլ սատանայ մը: Երբ ազատելու առաջարկութիւնս ըրի, բարեկամդ յայտնեց թէ իրեն դարան կ'լարենք և թէ գուրս ելնելէն առաջ՝ կ'ուզէր պայմաններ դնել: Ըսի անոր խոնարհաբար որ պատարաստ եմ իր պայմաններն ընդունելու, վասն զի քաջ զիստէի որ դէշ վիճակի մը մէջ ընկեր էի Նորին վեհափառութեան մէկ հրացանակրին վրայ ձեռք վերցնելովս:

— Կախ կ'ուզեմ որ իմ սպասաւորս բոլորովին զինեալ ինձի յանձնուի — ըստ:

« Ծուտ մ'այս հրամանը կատարեցինք. վասն զի քաջ կ'ըզ դաս, պարոն, որ պատրաստ էինք բարեկամիդ ամէն խնդրածը կատարել: Պ. Կրիմօ (ասի իր անունը յայտնեց թէե շատ չխօսմիր) ուստի Պ. Կրիմօ վար շահմարան իջաւ, թէե վիրաւորեալ էր, երբ իր տէրը զինքն ընդունեց, դրան ետին պատնէշ քաշեց և հրամայեց որ մեր կրակակը դառնանք:

— Բայց վերջապէս — դոչեց տ'Արդանեան — ուր է նա , ուր  
է Աթոս :

— Շտեմարանին մէջ , պարո՞ն :

— Ինչպէս , թշուառական , միթէ մինչև այսօր շտեմարանին  
մէջ կ'պահես զինքը :

— Մե՛ծդ Աստուած , բնաւ , պարո՞ն . ինչո՞ւ շտեմարանին մէջ  
պիտի պահէինք : Ա՛հ , թէ որ կարենաս զանի այն տեղէն հա-  
նել , սպարո՞ն , բոլոր կենացս մէջ քեզի շնորհապարա պիտի լի-  
նիմ , իբրև պաշտպանս քեզի պիտի պաշտեմ :

— Ուրեմն շտեմարա՞նն է , զանի կրնամ՝ գտնել :

— Անշոշո , սպարո՞ն , անդ մնալու կ'յամառի : Ամէն օր Ճան-  
կով մը հայ կ'տանք անոր լուսամուտէն , և միս երբ խնդրէ .  
բայց , աւաղ , ամենէն շատ հաց և միս չսպառիր : Անզամ մը  
փորձ փորձեցի իմ երկու սպասարկներովս վար իջնել , բայց բա-  
րեկամի սոսկալի կատաղութեան մէջ ընկաւ : Իր հրացանակնե-  
րուն ձայնը լսեցի որ կ'լեցնէր , և ծառան ալ իր աարձանակը  
կ'պատրաստէր : Յետոյ , երբ հարցուցինք թէ ինչ միտք ունին ,  
տէրը պատասխանեց որ իր ծառային հետ կրնան քառսուն ան-  
դամ հրացանը պարպէլ , և թէ մինչև վերջին զնտակը պիտի  
արձակեն քան թէ թողուն որ մեզնէ մէկը շտեմարանն ոտք կո-  
խէ : Այն ատեն , սպարո՞ն , դայի կառավարչին բողոք տուի , և  
ան ալ ըստ որ արժանի պատիժս կ'կրեմ , և թէ ուրիշ անզամ  
պանդոկս ի ծեանող պատուառը իշխաններ նախատելու չպիտի  
յանդզնիմ :

— Այնպէս որ այն ատենէն վեր . . . — Վրայ բերաւ տ'Ար-  
դանեան որ պանդոկապետին ողորմելի կերպարանին վրայ ակամայ  
կ'ծիծաղէր :

— Այնպէս որ այն ատենէն վեր , պարո՞ն — շարունակեց պան-  
դոկապետը — շատ տխուր կեանք մը կ'վարենք . վասն զի , պա-  
րո՞ն , պէտք է զիտնաս որ մեր բոլոր զինիի պաշարը շտեմարա-  
նին մէջ է . շիշերով զինի , տակառով զինի ունինք , նոյնպէս  
զարեջուր , եղ և համեմոնք , ճարպ և ապուխտ , և որովհետեւ

վար ի ջնելու արդիլեալ է մեզի, ստիպուած ենք ոչ զինի և ոչ տաելիք չհանել օթևանող ճամբորդներուն, այնպէս որ ամէն օր պանդոկս կ'քայքայի: Եթէ շաբաթ մ'ես անցնի և մեր բարեկամը շտեմարանը մնայ, բռլորովին կործանեցայ դ'նաց:

— Եւ քեզի վայել է, անօրէն: Միթէ չէ ի՞ր տեսներ մեր կերպարանէն որ ազնուական մարդիկ ենք և չէ թէ գրամաննդներ:

— Այո՛, պարսն, այո՛, իրաւոնք ունիս — ըստ պանդոկապետը: — Բայց, նայէ, միտ դիր, ահա նորէն բարկոթեան բրդաւ:

— Անտարակոյս զինքն անհանդիստ ըրած են — ըստ տ'Արդանեան:

— Բայց պէտք է որ զինքն անհանդիստ ընեն — զոչեց պանդոկապետը — վասն զի հիմակ երկու ազնուական անկլիացիք մեր պանդոկն իջան:

— Լաւ, ինչ կայ:

— Ի՞նչ կայ. անկլիացիք լաւ զինին կ'սիրեն, ինչպէս որ զիսես, պարսն. եկոլներն ալ լաւազոյն զինիէն խնդրեցին: Հետեապէս կինս խնդրած պիտի լինի ո: Աթոսէն որ ներս մանէնորեկ պարսններուն խնդիրը կատարելու համար, և այն ալ ըստ սովորականին՝ մերժած պիտի լինի. ահ, Տէր Աստուած, նորէն մկան գոռ ու զոշումը:

Իրօք տ'Արդանեան շտեմարանին կողմը մեծ աղմոնկ մը լսեց, սաք ելաւ, և պանդոկապետն առջել ձգելով, որ ձեռները կը պրկէր, և Բլանշէ իր հրացանակով ետեէն երթալով, կուտին կողմը դ'նաց:

Երկու ճամբորդները կատղեր էին, երկար արշուանք մ'ըրեր և անօթի ծարաւ կ'մեռնէին:

— Բայց բռնութիւն մ'է այս — կ'զոչէին անոնք խիստ լադաղիարէն խօսելով, թէ և օտարականի շեշտով — որ այս խենդ մարդը պանդոկին խեղճ մարդոց չթողաւր որ իրենց զինին ծախսն: Լաւ, մենք ալ գուռը պիտի խորտակենք, և եթէ շատ կատղած է, զանի պիտի սպաննենք:

— Քիչ մը կամաց դացեք, պարոններ — ըստ տ'Արդանեան իր մէջքէն ասորձանակները քաշելով — ոչ ոք չպիտի սպաննէք, հաւասարի եղիք :

— Լաւ, լաւ — կ'ըսէր դրան ետեւէն Աթոսի հանդարտ ձայնը — թող ներս մանեն փոքր տղաք տառը այս պարոնները, և այն ատեն կ'տեսնենք :

Որչափ որ քաջ կ'երեւէին երկու անկլիացի ազնուականները, վարաննելով իրարու երես նայեցան. կարծես թէ նոյն շտեմարանին մէջ՝ ժողովրդային աւանդութեանց մէջ յիշուած հսկայական դիւցազուններու պէս, սովորուեկ պայիկ մը կար, և ոչ ոք կարող էր շտեմարան մօնել առանց իր պատիմն ընդունելու :

Պահ մը լուսթիւն սղահեցին. բայց 'ի վերջէ երկու անկլիացիք ընկրկելու ամշցան, և երկոքէն աւելի կոռուասէրը սանդղին հինգ կամ վեց աստիճաններէն վար իջաւ և պատ մը փլելու չափ ուժով կից մը տուաւ դրան :

— Բլանչէ — ըստ տ'Արդանեան իր հրացանակները լեցնելով — ես վեր գանուողն իմ վրաս կ'աւնում, դու ալ վար զըտնուողին չափը տուք : Ա՛հ, պարոններ, դուք հակատամարտ կ'ուշգէք, լաւ որեմն, հիմակ հակատամարտը պիտի տեսնէք :

— Աստուած իմ — գոչեց Աթոս խոր ձայնով մը — կարծեմ թէ տ'Արդանեանի ձայնը կ'լսեմ :

— Արդարեւ — ըստ տ'Արդանեան ըստ կարգի ձայնը բարձրացնելով — ես ինքս եմ, բարեկամ :

— Ա՛հ, լաւ, այն ատեն — ըստ Աթոս — այս գուռ խորտակողները պիտի կոփենք :

Անկլիացիները սուրերը քաշեր էին, բայց երկու կրակի մէջ կ'գտնուէին. պահ մ'ես վարանեցան, բայց առաջին անդամուն պէս դոռոզութիւնը յաղթեց և երկրորդ կից մը գուռը վերէն վար դղրդեց :

— Մէկզի կեցիր, տ'Արդանեան, մէկդի կեցիր — գոչեց Աթոս — մէկդի կեցիր, հրացանս պիտի քաշեմ :

— Պարոններ — ըստ տ'Արդանեան՝ որ երբէք խոչեմութիւնը

ձեռքէ չէր ձգեր — պարոններ, մտածեցէք անդամ մը : Համբեր բռութիւն, Աթոս : Գէշ դործի մը կ'ձեռնարկէք և ձեր վրայ դընտակներ պիտի տեղան : Ահա սպասաւորս և ես երեք դնտակ պիտի արձակենք ձեզ, շտեմարանէն ալ նոյնչափ պիտի ընդունիք. ասկէ զատ՝ մեր ստորերն ալ ունինք, և քաջ զիտցիք որ՝ բարեկամն և ես բաւական լաւ կ'խաղանք մեր սրերով : Թողուցէք որ ձեր և իմ գործերս հաշտարար կերպով լմացնեմ : Քիչ ատենէն ձեր ուզած զինին կ'ընդունիք, այս մասին կ'ապահովեմ ձեզ :

— Եթէ երբէք զինի մնաց — խանչեց Աթոսի հեղնական ձայնը : Պանդոկապետը զզաց որ ողնակրէն պար քրտինք մը կ'հոսի : — Ի՞նչ, միթէ զինի չմնաց — մրմնաց նա :

— Կրող, անշուշտ կայ — վրայ բերաւ տ'Արդանեան . — ուստի անհոգ եղիք, կարելի չէ որ երկու հոգի բոլոր մառանին զինին խմած լինին : Պարաններ, ձեր ստորերը պատեանը դրէք :

— Լաւ, դուք ալ հրացանակները ձեր դօտիէն անցուցէք :  
— Յօժարակամ :

Եւ ա'Արդանեան օրինակը ստուաւ : Ցետոյ Բլանչէի կողմը դառնալով նշան ըրաւ անոր որ հրացանը վար առնու :

Անկլիացիք համոզուելով՝ իրենց ստորերը պատեանը դրին քըրթմնջելով : Անոնց պատմեցին Աթոսին բանտարկութեան պատմութիւնը, և որովհետեւ լաւ ազատորդիներ էին, պանդոկապետը մեղադրեցին :

— Հիմակ, պարաններ — ըստ տ'Արդանեան — վեր ձեր սենեակն ելիք, և խօսք կ'տամ որ տաս վայրկենէն ինչ որ կ'փափէիք ձեղի պիտի բերեն :

Անկլիացիք բարեեցին ու դուրս ելան :

— Հիմակ որ մինակ եմ, սիրելի Աթոս — ըստ տ'Արդանեան — կ'աղաւեմ, դուռը բաց :

— Անմիջապէս — ըստ Աթոս :

Այն ատեն՝ դղբդմամբ վար ընկան փայտեր և զերաններ՝ որ Աթոսի դրան ետին դրած մոյթերն ու պատնէշներն էին, և պաշարեալն ինքն անձամբ կ'տապալէր զանոնք :

Պահ մ'ետքը զուռը բացտեցաւ և երեան ելաւ Աթօսի զուշ  
նատ դէմքն որ արագ ակնարկ մը նետելով՝ չորս զին կ'զննէր :

Տ'Արդանեան անոր վիզն ընկաւ և զորովազին զանի զրկեց .  
յետոյ այս խոնաւ բնակարանէն գուրս հանել ուղեց զանի , և  
այն ատեն միայն դիտեց որ Աթօս կ'երերար :

— Միթէ վիրաւորուած ես — ըստ անոր :

— Ե՞ս , ամեննեին . մինակ սաստիկ զինով եմ , և երբէք մարդ  
մը զինով լինելու համար իզնէ լաւագոյն բան չէ ըբած : Կեց-  
ցէ Աստուած , պանդոկապետս , կարծեմ թէ մինակ ես հարիւր  
յիտոն շիշ զինի խմած պիտի լինիմ :

— Գլութի՛ն — զուչց պանդոկապետը — եթէ սպասաւորը  
մինակ տիրոջը խմած զինիին կէսը խմց , իմ բանս բուսաւ :

— Կրիմօ պարկեշտ ընտանիքէ սպասաւոր մ'է , և անշուշտ  
չէ համարձակած իմ ըբածս ընելու . մինակ տակառէն խմած  
է . նայէ անդամ մը խիցը դնելու մոռցեր է : Կ'լսե՞ս , բան մը  
կ'հոսի :

Տ'Արդանեան քահ քահ խնդաց և այս քրքիջը պանդոկապե-  
տին սարսուռը ջերմի փոխեց :

Նոյն պահուն՝ Կրիմօն ալ իր տիրոջ ետեն երեցաւ , հրացանն  
ուսին զարկած՝ զլուխն երերուն , Որիւպէնսի պատկերներուն մէջ  
երեցող արբշու այծեմարդերուն պէս : Առջեէն և ետեէն ողող-  
եալ էր եղոտ հեղուկով , և պանդոկապետը զիտեց որ այն հե-  
ղուկն իր լաւագոյն ձէթն էր :

Ամէնքն ՚ի միասին մնձ սրահէն անցան և զացին պանդոկին  
լաւագոյն սենեակը նստան , վասն զի տ'Արդանեան իր իշխանու-  
թեամբը զայն բռնեց :

Նոյն պահուն՝ պանդոկապետն ու կինը շտեմարան վազեցին  
կանթեղներով , այն շտեմարանն ուր իջնելու երկար ատենէ վեր  
իրենց արդիլեալ էր , և իրենց աչքին սոսկալի տեսարան մը  
ներկայացաւ :

Պատնէշներէն անդին , որոց մէջ Աթօս խրամներ բացեր էր  
դուրս ելնելու համար և որոնք խուրձերէ , տախտակներէ և պա-

բառ տակառներէ կ'բաղկանային, և ուազմական արհեստին համեմատ՝ իրարու վրայ դիզուեր էին, աստ և անդ՝ ձեթի և զինիի լճակներու մէջ՝ ի լուզ կ'տեսնուեին, բոլոր կերտած ապոխտներուն բեկորները, մինչդեռ գէզ մը կոտրած շիշեր՝ շտեմարանին ձախ կողմը ծածկեր էին, և տակառ մ'որուն ծորակը բաց մնացեր էր, նոյն ծակէն կ'կօրուսէր իր արեան վերջին կաթիլը։ Աւերման և մահուան պատկերը, ինչպէս որ կ'ըսէ հին բանաստեղը, կ'տիրէր անդ իրքե ճակատամարտի մը մէջ։

Գերաններէն կախուած յիսուն ապոխտէն՝ հազիւ տաս հատ մնացեր էին։

Այն ատեն պանդոկապետին և կնկանն ոռնալը մառանին կամարը թնդացուց, նոյն ինքն տ'Արդանեան վրդովեցաւ։ Խոկ Աթոս՝ գլուխն անդամ ետին չդարձուց։

Սակայն ցալին յաջորդեց կատղութիւնը։ Պանդոկապետը շամփուրվ մը զինուեցաւ, և իր յուսահատութեան մէջ՝ վազեց այն սենեակն ուր երկու բարեկամներ քաշուեր նստեր էին։

— Գինի՛ — ըստ Աթոս պանդոկապետը տեսնելով։

— Գինի՛ — զոչեց ապուշ կրթած պանդոկապետը — զինի՛, բայց արդէն հարիւր ոսկի դահեկանի զնով զինի խմեցիր. բայց ես կործանած, կորած, ջնջուած մարդ մ'եմ։

— Վա՛շ — ըստ Աթոս — մենք շարունակ մեր ծարաւն անցընելու չոփ խմեցինք։

— Եթէ դո՛հ լինէիք միայն խմելով, դարձեալ հոդ չէր, բայց բոլոր շիշերն ալ կոտրեր էք։

— Զիս շիշերու կոյսի մը վրայ հրելովդ՝ զետին զլորեցան, յանցանքը քուկդ է։

— Բոլոր ձեթս կորաւ։

— Ձեթը զերազանց սպեղանի մ'է վէրքի համար, և հարկ էր որ այս խեղչ Կրիմօն իրեն ըրած վէրքդ դարմանէր։

— Բոլոր երշիկներս կրծեր են։

— Անբաւ մկեր կան շտեմարանը։

— Այս ամէն բաները պիտի վճարես — զոչեց պանդոկապետը կատաղօրէն։

— Անպիտան , անզգամ — ըստ . Աթոս ուրք ելնելով , բայց իսկոյն վար ընկաւ . իր ուժին չափը նոյն միջոցին ցցուց : Տ' Արդ դանեան անոր օգնութեան հաստ խարազանը վերցնելով :

Պանդոկապետը քայլ մ'ետ առաւ . և սկսաւ առատ արտառք թափել :

— Այսուհետեւ պիտի սորվիս — ըստ տ' Երդանեան — աւելի մարդավարութեամբ վարուելու . Աստուծոյ քեզ զրկած յաճախորդ ներու . հետ :

— Աստաւած , սատանայ չե՞ս ըսեր :

— Սիրելի բարեկամդ իմ — ըստ տ' Արդանեան — եթէ նորէն մեր գլուխը ցաւցնես , երթանք պիտի չորսերնիս ալ շտեմարանին մեջ փակուելու , և պիտի նայինք թէ իրօք ըսածիդ չափ վնասներ կրած ես :

— Լաւ , այն , պարոններ — ըստ . պանդոկապետը — անիրաւեմ , կ' խստուվանիմ , բայց ամէն մեղաց թողութիւն կայ . գուք իշխաններ էք , իսկ ես խեղչ պանդոկապան մը . ուստի իմ վրայ զութ ունեցիք :

— Ա՛Հ , թէ որ այդպէս խօսիս — ըստ . Աթոս — իմ սիրտս պիտի պատուի և արտսուք պիտի վազին աչերէս , ինչպէս որ զինին տակառէդ կ' վազէր : Երկնցանին չափ սատանայ չենք . նայինք , հոս եկուր , քիչ մը խօսակցինք :

Պանդոկապետն անհանդիստ սրտով մօտեցաւ :

— Քեզի ըսի որ մօտ դաս , մի վախնար — շարունակեց Աթոս : — Այն միջոցին որ քեզի պիտի վճարէի , քսակս սեղաւնին վրայ զրեր էի :

— Այն , տէր իմ :

— Այն քսակս վաթսուն ուկի կ' պարունակէր . ուր է այն :

— Ոստիկանութեան դուռն է , տէր իմ . ըսին թէ շինծու դըրամ՝ է :

— Լաւ , քսակս ինձի դարձուր և վաթսուն ուկին քեզի պահէ :

— Բայց , տէր իմ , քայլ զիտես որ ոստիկանութեան ձանկը բոնածը շուտով չձգեր : Եթէ սուտ զրամ՝ լինէր , դարձեալ յոյժ մը կ' մնար , բայց դժբաղդաբար լաւ դրամներ են :

— Դու անոր հետ դործդ կարդի դիր, այդ բանն ինձ չվեց քարերիր, մասաւանդ որ քովս Փրանք մ'անգամ չունիմ:

— Կայինք, ըսէ — յարեց ա'Արդանեան — ուր է Աթոսին հին ձին:

— Ախոռն է:

— Ա'րշափ կ'ամէ:

— Շատ շատ յիսուն ոսկի:

— Աւթսուն ոսկի կ'ամէ, առ այն ձին և բերանդ մի բանար:

— Ինչպէս, ձիս կ'ծախե՞ս մի — ըսաւ Աթոս — իմ Պայազիսս կ'ծախե՞ս, և Ճամբաս ի՞նչ բանի վրայ պիտի ընեմ, միթէ Կրիստին վրայ:

— Աւրիշ ձի մը բերի քեղի — — ըսաւ ա'Արդանեան:

— Աւրիշ մը:

— Եւ փառաւոր ձի մը — զոչեց պանդոկապետը:

— Աւրեմն, եթէ իմ ձիէս աւելի աղլոր և նորահասակը կայ, առ հինը, և մեզի զինի բեր:

— Ի՞նչ զինի կ'ուզես — Հարցուց պանդոկապետը բոլորովին կայտառացած:

— Այն զինիէն որ շտեմարանին խորը նեղ տախտակներուն մօտ է, գեռ ևս քսան հինդ շիշ կայ, միւսները վար ընկնելուս՝ կոտրեցան: Վեց շիշ բեր առ այժմ:

— Բայց կայծակ մ'է այս մարդը — ըսաւ մեկուսի պանդոկաս պետը — եթէ տասն հինդ որ միայն այս տեղ մնայ և խմածը վճարէ, դործերս կարդի կրնամ դնել:

— Եւ մի մոռնար — շարունակեց ա'Արդանեան — նոյն զինիէն չորս շիշ ալ անկլիացոց տանելու:

— Հիմակ — ըսաւ Աթոս — մինչև որ զինին բերեն, պատմէ ինձ, ա'Արդանեան, թէ մեր միւս ընկերներն ի՞նչ եղան:

Տ'Արդանեան պատմեց անոր թէ ի՞նչ կերպով Բորթոսը զտեր էր անկողնին մէջ Ճմլած ոտքով, և Արամիսն ալ սեղանի մ'առջե՝ երկու աստուածաբարաններու մէջ: Խօսքն աւարտելու ատեն՝ պանդոկապետը ներս մտաւ ապսովրուած շիշերով և ապուխտով մ'որ, իր լաւ բաղդէն, շտեմարանէն դորս մնացեր էր:

— Ա. է — ըստ Աթոսիր և տ'Արդանեանի բաժակը լընված — աչա Բորթոսին և Արամիսին գործը պատմեցիր . բայց դու, բարեկամ, ի՞նչ անիս, և յատկապէս քեղի ի՞նչ պատահեցաւ : Զարագոշակ դէմք մ'ունիս, կ'նայիիմ :

— Աւաղ — ըստ տ'Արդանեան — պատճառն այն է որ ես ձեր ամենէն ապերջանիկն եմ :

— Դու ապերջանիկ, տ'Արդանեան — ըստ Աթոս : — Նայինք, ի՞նչպէս ապերջանիկ եղար, պատմէ ինձ գործը :

— Ետքը — ըստ տ'Արդանեան :

— Ե՛տքը, և ի՞նչ պատճառաւ ետքը . թերես կ'կարծես թէ զինով եմ, տ'Արդանեան : Լաւ միտ դիր սա ըսածիս . զինով եղած ատենս միայն կարծիքներս շատ յստակ կ'զտնեմ : Ուստի խօսէ, ականջս չորս բացեր եմ :

Տ'Արդանեան պատմեց անոր տիկին Պօնասիէօի Հետ անցած արկածը :

Աթոս առանց ունքերը պուտոելու մտիկ ըրաւ, յետոյ, երբ խօսքը լմնցուց,

— Այս ամենը մնոտիք են — ըստ Աթոս — սնոտիք :

Այս էր Աթոսին սովորական խօսքը :

— Դու միշտ մնոտիք կ'ըսես, սիրելիդ իմ՝ Աթոս — ըստ տ'Արդանեան — այդ խօսքդ բնաւ քեղի չվայլեր, քանի որ գու կին սիրած չես :

Աթոսին մարած աչքը յանկարծ վառեցաւ . բայց փայլակ մ'էր այն, և առաջուան պէս պաղ և անորոշ դարձաւ :

— Երաւ է — ըստ նա հանդարաօրէն — ես երբէք սիրած չեմ :

— Ուստի կ'տեսնե՞ս, քարսիրտ մարդ — ըստ տ'Արդանեան — որ իրաւոնք չունիս մեր փափուկ սիրտերու մասին խիստ լինիլ :

— Փափուկ սիրտեր, ծակուած սիրտեր — ըստ Աթոս :

— Ի՞նչ կ'ըսես :

— Ես կ'ըսեմ թէ սէրը վիճակահանութիւն մ'է որուն մէջ վաստկողը՝ մահ կ'վաստիի : Ըստ երջանիկ ես որ կորուսիր ր

նասցդ եղիք, իմ սիրելի ա՛Արդանեան, և եթէ խորհուրդ մ'ու-  
նիմ քեզ տալու, սա է որ միշտ կորուստ ընես :

— Բայց կարծես թէ շատ կ'սիրեր զիս :

— Կարծես թէ :

— Տղայ, չկայ մարդ մ'որ քեզի պէս հաւտացած չլինի թէ  
իր սիրուհին զինքը սիրած է, և չկայ մարդ մ'որ իր սիրուհին  
խարուած չլինի :

— Բաց 'ի քեզնէ, Աթոս, քանի որ մէկը սիրած չես :

— Իրաւ է — ըստ Աթոս՝ պահ մը լուռ կենալէն ետե — ես,  
Ես երբեք սիրուհի ունեցած չեմ, խմնիք :

— Աւրեմն, քանի որ փիլիսոփայ մ'ես — ըստ ա՛Արդանեան  
— զիս հրահանգէ, զիս պահպանէ . պէտք ունիմ քան սորվե-  
լու և միսիթարուելու :

— Ի՞նչ բանէ միսիթարուելու :

— Իմ դժբաղդութենէս :

— Դժբաղդութինդ ծիծաղ կ'շարժէ — ըստ Աթոս ուսերը  
վեր առնլով — հետաքրքիր եմ իմանալ թէ ի՞նչ պիտի ըսես  
եթէ քեզի սիրավէալ մը պատմեմ :

— Միթէ քեզի՞ հասած է :

— Կամ իմ մէկ բարեկամիս, ի՞նչ փոյթ :

— Ըսէ, Աթոս, պատմէ :

— Խմնիք, այս լաւագոյն է :

— Խմնիք և միանդամայն պատմէ :

— Իրաւ է, այդ կրնար լինիլ — ըստ Աթոս իր բաժակը  
պարսկելով և նորէն լինով — այս երկու դորձը միասին կրնան  
երթալ :

— Մաիկ կ'ընեմ — ըստ ա՛Արդանեան :

Աթոս ինքզինքն ամփոփեց . և քանի ինքզինքը կ'ամփոփէր,  
զոյնը կ'նետէր : Գինովութեան այն ասաիմանին մէջն էր երբ  
դռեհիկ զինեմոլներ վար կ'ընկնին և կ'ընանան : Իսկ Աթոս ար-  
թուն կ'երազէր : Գինովութեան այս քնաջր չութիւնն ահուելի ե-  
րեսիթ մ'ունէր :

— Կ'պահանջնջմս որ անալատնառ պատմմմ քեզ — Հարցոց յ նա: — Մանաւանդ կ'աղաչեմ քեզ — ըստ տ'Արդանեան: — Աւրեմն փափաքդ պիտի կատարեմ: Իմ բարեկամներէս մին, իմ բարեկամներէս մին, կ'լսե՞ս, ես չէ — ըստ Աթոս խօսքն ընդհատելով տիտոր ժպիտով մը — իմ դատառիս կոմսերէն մին, այսինքն տիւ Պէրի, Տանտօլօի կամ Մօնդմօրանսիի մը պէս աղնուական մը՝ քսան հինգ տարուան եղած ատէն՝ տասն վեց տարեկան օրիորդի մը սիրահարեցաւ, օրիորդ մ'որ Աստղիին պէս գեղանի էր: Իր անտիսական պարզութեան մէջ Հրավառ ողի մը ուներ, չէ թէ կնկան՝ այլ բանաստեղծի մ'ողի: Նա հաճելի չէր լինէր այլ կ'զինովցնէր. փոքրիկ աւանի մը մէջ կ'աղքըրէր իր եղբօրը քով՝ որ երէց էր: Երկուքնին ալ այն երկիրն եւ կեր էին, ուսկից կ'զային՝ ոչ ոք զիտէր, բայց օրիորդն այնաքան զեղանի, և եղբայրն այնքան բարեկաշա տեսնելով՝ ոչ ոք կ'մտածէր հարցնելու թէ ուսկից կ'զան: Սակայն կ'լսէին թէ աղնուազդի ընտանիքէ են: Իմ բարեկամո՞ որ երկրին իշխանն էր, կրնար զանի հրապուրել կամ բռնի առնուլ, ըստ հաճոյս, առ զատ էր. ով կարող էր այս երկու օտարականներու, երկու անձնութերու օգնութեան դալ: Դժբաղդաբար պարկեշտ մարդ մ'էր, անոր հետ կարդուեցաւ յիմարը, տիմարը, ապուշը:

— Բայց ինչո՞ւ այդպէս կ'ըսես, քանի որ զանի կ'սիրէր — Հարցոց տ'Արդանեան:

— Քիչ մը համբերէ — ըստ Աթոս: — Կոմնն իր կինը զըռեսկը տարաւ և իր գաւառին առաջին տիկինն ըրաւ, և պէտք է ճշմարիտն ըսել, նոր կոմսուհին ալ իր աստիճանին յարմար կը վարուէր:

— Լաւ ուրեմն — Հարցոց տ'Արդանեան:

— Լաւ, օր մ'որ որսի ելեր էր իր էրկան հետ — շարունակեց Աթոս մեղմաձայն և շուտ շուտ խօսելով — ձիէն վար ընկաւ և մարեցաւ. կոմնն անոր օդնութեան հասաւ, և որովհետեւ հազուսաներուն մէջ կ'խղդուէր, իր դաշցնով զանոնք պատռեց և անոր ուսը բացաւ: Գտիր, տ'Արդանեան, թէ ինչ ունէր ուսին վրայ — ըստ Աթոս քահ քահ խնդալով:

- Ի՞նչպէս դիմնամ — հարցուց տ'Արդանեան :
- Ըստշանաձև խարան մը — ըստ Աթոս — նշաւակուած էր :  
Եւ Աթոս մի ումազ կլեց ձեռքը բռնած բաժակը :
- Ի՞նչ սոսկալի բան — զոչեց տ'Արդանեան — ի՞նչ կ'ըսես :
- Ճշմարտութիւնը : Սիրելիոր իմ, հրեշտակը սատան մ'էր :  
Խեղճ նորատի կինը զողութիւն ըրեր էր :
- Հապա կոմն ի՞նչ ըրաւ :
- Կոմը մեծ իշխան մ'էր, իր երկրին մէջ բացարձակ իշխանութիւն կ'վարէր, կոմսուհին հաղուսաները բոլորովին պատռեց, անոր ձեռները կոնսակէն կապեց և զանի ծառէ մը կախեց :
- Տէր Աստուած, Աթոս, սպանութիւն մը — զոչեց տ'Արդանեան :
- Այս, սպանութիւն, և ոչ այլ ինչ — ըստ Աթոս մեռելի պէս գունատ գէմբով : — Բայց կարծեմ թէ զինիս հատաւ :
- Եւ Աթոս մնացած վերջին շիշն ալ փողիկէն բռնեց, բերնին մօտեցուց և մէկ անդամուն խմնց որպէս թէ սովորական բաժակ մը զինի կ'իմէր :
- Յետոյ իր զելուխն երկու ձեռքին մէջ առաւ . տ'Արդանեան անոր առջե կեցաւ ահարեկ :
- Ասով զեղանի, բանաստեղծական և սիրառէտ կիներն աշքէս ելան — ըստ Աթոս՝ զելուխը վերցնելով և առանց կոմսին սիրավէպը շարունակել մտածելու — Աստուած ալ քեզ լնձի պէս բժշկէ, խմենք :
- Այսպէս ուրեմն մեռած կինը — թօթովից տ'Արդանեան :
- Դեռ կ'ատրակուսիս — ըստ Աթոս : — Բայց բաժակդ երկինցուր . ահա քեզ ապտխու, անօրէն — զոչեց Աթոս — այլ ևս զինի չունինք :
- Հապա իր եղայրն ի՞նչ եղաւ — յարեց տ'Արդանեան երկանութեամբ :
- Եր եղայրը — վրայ բերաւ Աթոս :
- Այս, քահանայն :
- Ա՛ս, հարց ու փորձ ըրի որպէս զի այն ալ կախել տամ :

քայց արթուն փրթեր էր, առջի օրէն իր վիճակը ձգեր փառիներ էր:

— Միթէ իմացա՞ր թէ այն ապիրատն ով էր:

— Անտարակոյս զեղանի կնոջ առաջին սիրահարն ու դաւակիցն եղած պիտի լինէր, արժանի մարդ մ'որ թերեւ շինծու երեց եղեր էր իր տիրուհին կարդելու և անոր բաղզը շինելու: Յուսամ որ պատառ պատառ ըրած են զինքը:

— Ոչ, Աստուած իմ, Աստուած իմ — ըստ ա՛նրդանեան այս սոսկալի արկածին վրաց այլ յայլմէ եղած:

— Քայց սա ապուխտէն ինչո՞ւ չես ուտեր, ա՛նրդանեան, համեղ է — ըստ Աթոս անկից շերտ մը կտրելով և պատանիին պնակին մէջ դնելով: — Ի՞նչ դժբաղդութիւն մ'որ ասոր պէս միայն չառ շտեմարանին մէջ դունուեցաւ. այն ատեն յիշուն շիշ զինի աւելի սլիտի կարծնայի խմել:

Տ՛Արդանեան այս խօսակցութիւնն այլ ես չէր կարող տանիլ, որով թերեւ խելազարեր պիտի. իր երկու ձեռքին վրայ գլուխը դրաւ. և սուտ քուն եղաւ:

— Երիտասարդներն այլ ես զինի խմել չզիտեն — ըստ Աթոս դժութեամբ անոր նայելով — թէև ասի ամենէն լսոն է:



## ԱՆԴՐԱԳՈՒՅՆ

Տ՛Արդանեան՝ Աթոսի յայտնած դազտնիքին վրայ՝ բոլորովին շուարեր էր. սակայն այս աղօա յայտարարութեան մէջ շատ բաններ իրեն մութ կ'երեւէին. նախ՝ լիովին զինով մարդ մը պատմեր էր այն արկածն այնպիսի մէկու մ'որ կէս զինով էր, և սա-

կայն ա՞Արդանեան՝ որչափ որ գլուրկօնցի քանի մը չիշ զինիին շողեն զլուխը զարկած էր, հետևեալ առառու Աթոսին մէն մի խօսքն այնպէս կ'յիշեր որպէս թէ քանի իր բերնէն ելնէին իր մտքին մէջ գրոշմուէին։ Բոլոր այս իր կասկածը՝ ստուգութիւնը դժնելու աւելի զրդիր տուաւ իրեն և իր բարեկամին տունը զնայ հաստատ միաքը դնելով առջի օրուան խօսակցութիւնը նորէն բանալու, բայց Աթոսը բոլորովմն սիմափած դտաւ, այսինքն մարդկան մէջ ամենէն նրբամիտն և անթափանցելին։

Սակայն հրացանակիրն անոր ձեռքը չերմաղին սեղմլէն ետև՝ միտքը կանխեց և ըստաւ։

— Երէկ շատ զինով էի, սիրելի ա՞Արդանեան։ այս բանս այս առատ զղացի լեզուն որ գեռ շատ թանձր էր, և երակիս զարկէն որ շատ վրդովեալ էր. զրաւ կ'զնեմ որ հազար տեսակ այլ ընդակ բաներ ըստած պիտի լինիմ։

Եւ այս խօսքերն ըսելով իր բարեկամին նայեցաւ այնպիսի անթարթ աչօք՝ որմէ ա՞Արդանեան շփոթեցաւ։

— Բայց, ոչ — պատասխանեց ա՞Արդանեան — և եթէ քաջ կ'յիշեմ, շատ սովորական բաներ ըսիր։

— Ա՛, կ'զարմացնես զիս։ Կարծէի թէ քեզի խիստ ողբալի պատմութիւն մը պատմեցի։

— Երաւ որ — ըստ ա՞Արդանեան — կ'երեկի թէ ես քեզնեւ աւելի զինով էի, վասն զի բան մը չեմ յիշեր։

Աթոս այս խօսքին հաւատ չընծայեց և վրայ բերաւ։

— Անտարակոյս դիտեցիր, սիրելի բարեկամ, որ ամէն մարդ կերպ մը զինովութիւն ունի, ախուր կամ զուարթ։ Ես երբ խմեմ, կ'տիրիսմ, և իմ սանտուիս ըղեղիս մէջ տողորած ամէն ողբալի պատմութիւնները պատմելու տենչ մը կ'զզամ։ Այս է իմ պակասութիւնս, մեծ պակասութիւն մ'է, կ'խոստովանիմ, բայց, ինչ որ է, լաւ խմող մ'եմ։

Աթոս այնպէս բնական կերպով կ'ըսէր այս բանս՝ որ ա՞Արդանեանի համոզումը սարսեցաւ։

— ԱՇ, իրօք այդպէս է — վրայ բերաւ պատանին Տշմարս  
տութիւնն ըմբռնելու փորձ փորձելով — ուրեմն սա պիտի լինի  
յիշածս, ինչպէս մարդ երազ մը կ'յիշէ, թէ կախեալներու վը-  
րայ խօսք ըրինք :

— ԱՇ, կ'նային ուրեմն — ըստ Աթոս գեղնելով՝ թէե ծի-  
ծաղելու փորձ կ'փորձէր — ես այդ մասին ստոյդ էի, կախեալ-  
ներն իմ ճիւաղներու են :

— Այս, այս — ըստ ա՛Արդանեան — և աշա յիշողութեանս  
կ'զայ, այս, խնդիրը . . . կեցիր ըսեմ. . . կնկան մը վրայ էր:

— Տես անդամ մը — պատասխանեց Աթոս գրեթէ կապտա-  
ղոյն դառնալով — իմ գեղձան կնկան նշանաւոր պատմութիւնս  
է, և երբ այս պատմութիւնը պատմեմ, պատճառն այն է որ յե-  
տին ծայր դինով եմ :

— Այս, Ճիշտ է — ըստ ա՛Արդանեան — գեղձան կնկան պատ-  
մութիւնը, մեծ, զեղանի, կապուտակն կնկան :

— Այս, և կախեալ կնկան :

— Եր էրկան ձեռօք որ քեզի ծանօթ իշխան մ'է — շարու-  
նակեց ա՛Արդանեան աչքն Աթոսին վրայ սեեռելով :

— Լաւ, տես սակայն թէ որչափ մարդս ուրիշ մը վտանգի  
մէջ կ'ձգէ երբ ըսածը չղիսեր — վրայ բերաւ Աթոս ուսերը վեր  
բարձրացնելով, որպէս թէ ինքնն իր վրայ կ'ողբար — իրաւ որ  
սյսուհետեւ չեմ ուղեր գինովալ, ասի շատ զէշ սովորութիւն  
մ'է :

Տ'Արդանեան լոռութիւն պահեց :

Յետոյ Աթոս յանկարծ խօսակցութիւնը փոխելով,

— Լաւ միտքս ընկատ — ըստ նա — շնորհակայլ եմ ինձի  
բերած ձիուդ համար :

— Միթէ ճաշակիդ յարմաք է — հարցոց ա՛Արդանեան :

— Այս, բայց յոդնութեան վարժ ձի մը չէ :

— Կ'սխալիս, տաս մզսն ճամբայ կտրեցի և մէկ ու կէս ժամ  
իսկ չքշեց, և այնչափ չողներ էր որ կարծես թէ Աէն-Սիւլ-  
րիսի շրջանը միայն ըրեր էր :

— Բայց ինձ նայէ , հիմակ շատ պիտի ցաւիս :

— Ինչո՞ւ պիտի ցաւիմ :

— Որովհետեւ ձին ձեռքէս ելաւ :

— Ի՞նչպէս :

— Ըսեմ քեզի , այս առառ ժամը վեցին արթնցայ , դու խուլի պէս կ'քնանայիր , և ի՞նչ ընելիքս չդիտէի , դեռ ևս մեր երէ կուան անառակո թենէ բոլորովին անբանացած էի . մեծ սրահն իջոյ և անկլիացի մը զասյ որ ձիալաճառի մը հետ ձիու մը վըրայ սակարկո թիւն կ'ընէր : Անոր մօտեցայ , և երբ տեսայ որ հարիւր ոսկի զահեկան (հաղար Փրանք) կ'ընծայէր աշխէտ ձիու մը համար : Աղատորդի եմ , Աստուած վկայ — ըսի անոր — որ ես ալ ծախու ձի մ'ոնիմ :

— Եւ շատ ընափր է — ըսաւ նա — երէկ տեսայ զայն , բարեկամիդ սպասաւորն անոր սանձէն բռներ էր :

— Միթէ հարիւր ոսկի դահեկան կ'ամէք :

— Կ'ամէ . և այդ զնով կ'ծախեն արդեօք ինձի :

— Զէ , չեմ ծախեր , այլ անոր համար կ'խաղամ :

— Կ'խաղամ մի :

— Այո :

— Ի՞նչ խաղ :

— Տապեղուլոնիք :

— Մեր ըսածն իսկըն դործաղթեցինք , և ձին կորուսի : Ահ , մոռցայ ըսելու , օրինակի համար , որ երիվարին ծածկոյթը նուրէն վաստկեցայ :

Տ'Արդանեան բառական անսախործ կերպարան մը ցցուց :

— Միթէ ըսածս դմարդ եկաւ — ըսաւ Աթու :

— Անշոշա . ինչո՞ւ Ճշմարիտը չըսեմ — վրայ բերաւ ո՛Արդանեան : — Այն ձին Ճակատամարտի օր մը մեզ պիտի Ճանչցըլնէր : Այն զբաւ մը , յիշատակ մ'էր : Աթու , շատ գէշ վարտեր ես :

— Կ'հ , սիրելիոյ իմ բարեկամ , դու իմ տեղս անցիր — վըրայ բերաւ հբացանակիրը — ես ձանձրութենէս ո կ'մեռնէի , և աս-

կից զատ, չշմարիտը կ'ուղես, անկլիական ձիերը չեմ սիրեր: Նայինք, եթէ կ'ուղես որ մէկը մեղ ճանչէ, լաւ, թամբը կը բաւէ, բաւական նշանաւոր է: Իսկ ձիուն դալով կրնանք պատրուակ մը գտնել անոր կորստեան համար: Սատանայ, ձի մը միշտ մահկանացու է, դիցուք թէ իմա խլինք կամ քու ունեցեր է:

Տ'Արդանեան միշտ խորշումած զէ մքով կ'նայէր:

— Ճատ գժարս կ'զայ — շարունակեց Աթոս — որ այն կենանիներուն այնքան կապուած կ'երեիս, վասն զի դեռ պատմութիւնս չաւարտեցի:

— Ուրեմն ուրիշ ինչ ըրիր:

— Չիս կորուսելէն ետև՝ ինն տասի դէմ, տես անդամ մը խաղը, միտքս եկաւ քու ձիուդ համար խաղալու:

— Լաւ, բայց յուսամ որ մինակ միտք ունեցար:

— Բնաւ, միտքս խկոյն զործադրեցի:

— ԱՇ, իրան — զոչեց ա'Արդանեան մտատանջ:

— Այու, խաղացի և կորուսի:

— Ի՞մ ձիս:

— Քու ձիդ, եօթն ութի դէմ. կէտ մը պակաս էր . . . ուակիր քաջ զիտես:

— Աթօս, կ'երդնում որ խելքդ կորուսեր ես:

— Սիրելիդ իմ, երէկ քեզի իմ խենդուխելառ պատմութիւններս պատմելու ատեն՝ պարտաւոր էիր ըսել ինձ այդ բանը, և չէ թէ այս առողու: Ուստի ձիդ կորուսի բոլոր կազմածովն ութամբովը:

— Բայց այդ սոսկալին բան է:

— Բայց սպասէ, դեռ ամեն բան չըսի. քաջ խաղամնլ մը պիտի գառնայի, թէ որ չշամանէի, բայց կ'յամառիմ, ինչպէս որ երբ զինի խմեմ, ուստի յամառեալ մնացի . . . :

— Բայց ինչ բանի խաղացիր, ուրիշ բան մը չունէիր:

— Ունէի, ունէի, բարեկամդ իմ, մատդ փայլող մատանին ունէի զոր երէկ զիտեցի:

— Այս մատանին — զոչեց ա'Արդանեան՝ ձեռքն աշխաժիւ մատանին տանելով:

— Եւ որովհետեւ անդամանդէ քաջ կ'հասկնամ, քանի որ ինձի համար ատենոք գնած եմ, անոր զին կտրեցի հաղար ոսկի դաշեկան :

— Յուսամ՝ որ — ըստ տ'Արդանեան ծանրօրէն և վախէն կէս մը մռած — որ անդամանդս չիշեցիր :

— Ընդ հակառակին, սիրելի բարեկամ։ քաջ կ'իմանաս որ այդ մատնին մեր միակ միջոցն էր. անով կրնացի վաստկիլ մեր թամբերն ու ձիերը. ասկէ զատ՝ ճամբան շարունակելու համար պէտք եղած դրամը :

— Աթու, ինձ սարսուո. կ'ազդես — դոչեց տ'Արդանեան :

— Ուստի իմ ընկերիս խօսեցայ անդամանդիր վրայ, վասն զի այն ևս դիտեր էր զայն։ Զարմանք, բարեկամ, կարելի բան է որ երկնից մէկ աստղը մատդ ունենաս և ոչ ոք ուշադրութիւն ընէ անոր :

— Լմնցուը խօսքդ, սիրելիդ իմ, լմնցուը — ըստ տ'Արդանեան — վասն զի պատոյս վրայ կ'ըսեմ, այդ պաղարինութեամբդ զիս կ'սպաննես :

— Ուստի այդ անդամանդդ տաս մաս բաժնեցինք, իւրաքանչիւրը հարիւը ոսկի դաշեկան հաշուելով :

— Ա՛չ, զու կ'ուզես խնդալ և զիս փորձել — ըստ տ'Արդանեան, որուն մազերէն սկսեր էր բռնել բարկութիւնը, ինչ պէս եղիականին մէջ Աքիլլէսի մազերէն կ'բռնէ Աթենաս :

— Ա՛չ, բնաւ կատակ չեմ ըներ, հաւտաւ. ես կ'ուզէի տեսնել թէ ինչ պիտի ընէիր եթէ տեղս լինէիր. տասն հինգ օր կար որ մարդու դէմք չէի տեսած, և չիշերու հետ բերան բերնի տալով անբան դարձեր էի :

— Բայց այդ իրաւոնք մը չէ իմ անդամանդիս խաղաս — պատասխանեց տ'Արդանեան իր ձեռքը ջանիդ կծմամբ սեղմելով :

— Սակայն վերջը մոփիկ ըրէ, անդամանդին ամէն մէկ մասին համար զատ խաղացի առանց փոխարինի. տասն երեք խաղէ ետքն ամենն ալ կորուսի. 43 թիւը միշտ աղէտաբեր եղած է ինձի, յուլիսի 43հն էր որ . . . :

— Թշուառական — զոչեց տ'Արդանեան սեղանէն ելնելով։ նոյն օրուան պատմութիւնն առջի օրուանը մոռցնել տառեր էր իրեն։

— Համբերութիւն — ըստ Աթոս — ես յատակաղիծ մ'ունէի։ Անկլիացին տարօրինակ մարդ մ'էր. առտու տեսայ որ Կրիմօին հետ կ'խօսէր, և Կրիմօ իմաց տուաւ ինձ որ անկլիացին առաջարկեր է իրեն ծառայութեան մտնելու։ Ես ալ Կրիմօի, լուակաց Կրիմօի խաղացի տաս մաս բաժնելով։

— Ա՛հ, այդ չափազանց է — ըստ տ'Արդանեան ակամայ քահանա խնդալով։

— Կ'լսե՞ս Կրիմօի համար իսկ խաղացի, և Կրիմօի տաս մասով, թէե բոլորը մէկէն դահճեկան մը չաժեր, անդամանդը կը վաստիիմ։ Հիմակ թէ որ կրնաս ըսէ թէ յարատեւութիւնն առաքինութիւն մը չէ։

— Իրաւի, շատ ծիծաղելի բան — զոչեց տ'Արդանեան մինթարուելով և խնդալէն կուշոը բռնելով։

— Կրնաս երևակայել որ բաղդս բացուելուն՝ անմիջապէս անդամանդին համար խաղացի։

— Ա՛հ, կրնդ — ըստ տ'Արդանեան նորէն տիրելով։

— Ուստի վերստին կմեցի, քու թամբերդ, ապա ձիոր, ապա իմ թամբերս, ապա իմ ձիոք ձեռք ձգեցի, և նորէն կորուսի։ Ե վերջէ, թամբդ ձեռք ձգեցի։ յեայ իմս։ Ահա այս վիճակին մէջն ենք։ Սքանչելի խաղ մ'է, ասոր համար այնչափով զոհ եղայ։

Տ'Արդանեան շունչ առառ, որպէս թէ պանդոկն իր կուրծաքին վրայէն վերուցին։

— Վերջապէս անդամանդը մեաց ինձ — ըստ նա վեհերուտութեամբ։

— Անարանտ, սիրելի բարեկամ։ ասկէ զատ՝ քու Պուսէ վալիդ թամբն և իմս։

— Բայց առանց ձիու՝ թամբերն ինչ պիտի ընենք։

— Ես միտք մ'ունիմ այս մասին։

- Աթոս, զիս դող կ'հանես :
- Մտիկ ըրէ, շատ ատենէ վեր խաղ խաղացած չես, դաւ,  
տ' Արդանեան, այնպէս չէ :
- Եւ խաղալու ալ փափաք չունիմ :
- Երգում մի՛ ըներ : Ըսի որ շատ ատենէ վեր խաղացած չես,  
և անշտշառ ձեռքդ բաղդաւոր կրնայ լինիլ :
- Լաւ, ապա :
- Լաւ, անկլիսային և իր ընկերը տակաւին աստ են : Դիմեցի  
որ շատ կ'ցաւին թամբերը կորուսելնուն . իսկ դու ալ երիւ  
վարիդ աչք ունիս : Ես տեղդ լինէի, թամբդ խաղի կ'գնէի ձիւ  
ուդ դէմ :
- Բայց մէկ թամբի չպիտի ուղէ խաղալ :
- Երկուքին համար խաղայ . ես քեզի պէս ինքնասէր չեմ :
- Միթէ դու կ'խաղայի՞ր — ըստ տ' Արդանեան վարանելով  
որ այնչափ ակամայ կ'զբաւուէր Աթոսի վստահութենէն :
- Պատույս վրայ կ'երդնում, և մէկ հարուածով :
- Բայց սա կայ որ ձիերը կորուսելով, շատ կ'փափաքէի դէք  
թամբերը պահել :
- Ռւրեմն անդամանդիդ համար խաղայ :
- Ո՛չ, այդ ուրիշ բան է, երբէք, երբէք :
- Սատանայ — ըստ Աթոս — պիտի առաջարկէի քեզ որ  
Քլանշէն խաղի դնես . բայց որովհետեւ անդամ մայդ բանն ը-  
րի, անկլիսային պիտի մերժէ թերես :
- Իրաւի, սիրելիդ իմ Աթոս — ըստ տ' Արդանեան — լաւ  
և տնիմ բանի մը չխաղալ :
- Մե՛ղք — ըստ Աթոս պաղութեամբ — անկլիսային ոսկւով  
բեռնաւորուած է : Ե՛չ, Աստուած իմ, փորձէ անդամ մը խաղը.  
քանի մը վայրկենի խօսք է :
- Հասկա թէ որ կորուսանեմ :
- Պիտի վասակիս :
- Բայց թէ որ կորուսանեմ :
- Լաւ, այն ատեն թամբերը կ'տաս :

— Խաղ մը պիտի փորձեմ — ըստ տ'Արդանեան :

Աթոս անկլիացին փնտոելու ելաւ և զանի ախոռը դտաւ ուր ընչասիրութեամբ թամբերը կ'քննէր : Առիթը լաւ էր : Աթոս խոկոյն պայմաններն առաջարկեց . երկու թամբ՝ ձիու մը կամ՝ ըստ հաջոյ՝ հարիւր ոսկիի գէմ : Անկլիացին շուտ մը հաշիւն ըրաւ . երկու թամբ միայն ինքնին երեք հարիւր ոսկի կ'ամէին, անկլիացին հաւանեցաւ :

Տ'Արդանեան դողդողալով տապեղուլունքը նետեց և երեք թիւ ելաւ . իր դունաստութենէն Աթոս զարհուրեցաւ և բաւական սեպեց ըսելու .

— Ահա տիտոր խաղ մը , ընկեր . իսկ դու , պարոն , ձիեւ բուզ թամբերը պիտի շահիս :

Անկլիացին յաղթանակառ ուլունքը դարձնելու անդամ՝ հոդ չըրաւ , առանց նայելու սեղանին վրայ նետեց , այնքան ապահ հով էր յաղթութեան վրայ . տ'Արդանեան դլուխը դարձուցեր էր իր սրտնեղութիւնը սքօղելու համար :

— Դէն , դէ՞ն — ըստ Աթոս իր հանդարտ ձայնովը — այս խաղը տարօրինակ է . կենացո մէջ չորս անդամ միայն տեսեր եմ . երկու մեկնակ (Ձ) :

Անկլիացին նայեցաւ և զարմացաւ մնաց . տ'Արդանեան նայեցաւ և ուրախացաւ մնաց :

— Այո — շարունակեց Աթոս — մինակ չորս անդամ . անդամ մը Պ . տը Քրէքիին տունը , անդամ մ'իմ զեղի . . զղեակս , երբ զղեակ մ'ունէի , երրորդ անդամ մը Պ . տը Գրէվելի տունը , ուր ամենքնիս ալ հիացանք , վերջապէս չորրորդ անդամ մ'ալ զինետունը , որ ինձի հանդիպեցաւ և որով հարիւր ոսկի և ձաշ մը կորտսի :

— Աւքեմն , պարոն , ձիդ առ նորէն — ըստ անկլիացին :

— Անտարակոյս պիտի առնում — ըստ տ'Արդանեան :

— Աւքեմն փոխարէն չպիտի խաղանք :

— Մեր պայմանին մէջ , ինչպէս որ կ'յիշես , փոխարէնը չկար :

- Կրառ է , ձին սպասաւորիդ պիտի տրուի , սպարոն :
- Պահ մը համբերէ — ըստ Աթոս — եթէ կ'ներես , սպարոն , բարեկամիս խօսք մը պիտի ըսեմ :
- Ըսէ :
- Այս ատեն Աթոս ա'Արդանեանը մէկդի կանչեց :
- Լաւ — ըստ անոր տ'Արդանեան — ի՞նչ կ'ուզես նորէն , սատանայ , կ'ուզես որ խաղամ , այնպէս չէ :
- Ո՞չ , կ'ուզեմ որ մտածես :
- Ի՞նչ բան :
- Հիմակ ձին ետ պիտի առնուս , այնպէս չէ :
- Անշնուշտ :
- Գէշ պիտի ընես . ես հարիւր ոսկի դաշեկանը պիտի առնում . դիտես արդէն որ թամրերուն դէմ ձիուն , կամ հարիւր ոսկիի համար՝ ըստ հաճոյս՝ խաղացիր :
- Այո , դիտեմ :
- Ես հարիւր ոսկին պիտի առնում :
- Լաւ , ես ձին պիտի առնում :
- Գէշ պիտի ընես , նորէն կ'ըսեմ . ի՞նչ օգուտ պիտի ունենայ ձի մը մեր երկուքին համար , ես չեմ կրնար զաւակին վրայ հեծնել . Այսօնի երկու որդուոց պիտի նմանինք որ իրենց եղբայրը կարուսեր էին . չես կրնար իմ քովէս այդ շքեղ ձիով գնալով՝ նուաստութիւն մ'ընել ինձ : Ես , առանց վայրկեան մը վարանելու՝ հարիւր ոսկին կ'առնուի . Բարիզ դառնալու համար ստակի պէտք ունինք :
- Ես այն ձիէն չեմ կրնար զաւակիլ , Աթոս :
- Եւ իրաւոնք շտնիս , բարեկամիդ իմ . ձի մը կրնայ խըրտածիլ . ձի մը կրնայ զայթիլ (butter) և սահիլ . ձի մը կըրնայ խըրտածիլ երիվարի մը կերած մատրին մէջէն ուտել . այն առեն ձի մը կամ հարիւր ոսկի կորուսած պիտի լինիս . ողէտք է որ ձիատէր մ'իր երիվարը կերակրէ , մինչդեռ հարիւր ոսկին իր տէրը կ'կերակրէ :
- Բայց ի՞նչպէս պիտի դառնանք :

— Կ'հարցնե՞ս, մեր սպասաւորներու ձիերուն վրայ, մեր կերասանէն ամէն մարդ պիտի հասկնայ որ աղնուական մարդիկներ ենք :

— Ե՞նչ աղլոր կերպարան պիտի ունենանք զբասաներուն վրայ, մինչդեռ Արամիս և Բորթոս իրենց երիվարներուն վրայ պիտի ճախրեն :

— Արամիս և Բորթոս — գոչեց Աթոս, և ակսաւ ծիծաղիլ :

— Ե՞նչ կայ — հարցուց ա՛Արդանեան որ իր բարեկամին ծիծաղէն բան մը չէր հասկնար :

— Լաւ, լաւ, շարունակենք — ըստ Աթոս :

— Ուրեմն քու կարծիքդ սա է որ . . . :

— Հարիւր ոսկին առնունք, ա՛Արդանեան, հարիւր ոսկիով մինչեւ ամսոյս վերջը կրնանք հարկինք ընել, բաւական նեղութիւններ քաշեցինք, զիտես, և զէշ չլինիր եթէ փոքր ինչ հանս դստանանք :

— Հանգստանանք, ո՛չ, ո՛չ, Աթոս . Բարիզ հասնելուս՝ այն խեղճ կինը փնտուելու պիտի ելնեմ :

— Լաւ, միթէ կարծես թէ ձիդ այնքան օղուտ կրնայ ունեալ նսպատակիք համար, որքան հարիւր կլորիկ ոսկիները : Հարիւր ոսկին առնելը նայէ, բարեկամ, հարիւր ոսկին առնելը նայէ :

Տ'Արդանեան զիջանելու համար՝ սրատձառի մը միայն պէտք տնէր : Աթոսին մէջ բերածը շատ ընտիր գտաւ : Ասկէ զատ՝ կը վախնար որ Աթոսին աշքին եսսակը չերեկի դիմադրելովը . ուստի հաւանեցաւ և հարիւր ոսկին ընտրեց . անկլիացին անմիջապէս նոյն գումարը համրեց :

Յետոյ մտածեցին միայն համբայ ելնել : Խաղաղոթիւն հասաւատուելով բաց ՚ի Աթոսին ձիէն, ծախսը վեց ոսկի կտրեց . ա՛Արդանեան և Աթոս՝ Բլանշէի և Կրիմօի ձիերն առին, երկու սպասաւորները ճամբայ ելան հետի թամբերն իրենց զլսին վրայ կրելով :

Որչափ որ երկու բարեկամներու հեծանելիներն անպիտան էին,

իրենց սպանաւորներէն անցան և Քրէվքէօր հասան : Հեռուելն Արամիսը տեսան որ թախծազին պատշանին կոթնած , իմ Ան — ու պէս պէս , փոշելի հորիզոնը կղիտէր :

— Այ , Արամիս , ի՞նչ կընես այդ տեղ — զուեցին երկու բարեկամներ :

— Ա՛յ , զու ես , ա'Արգանեան , զու ես , Ամոս — ըստ նորատի երիտասարդը — կ'մտածէի թէ ի՞նչ արադութեամբ աշխարհիս բարիքը կ'անհետին , և իմ անկլիական երիվարտ՝ որ կ'հեռանար և փոշիի մրրկի մը մէջ այժմ իսկ անհետ կ'լինէր , երկրիս երերուն անհաստատութեան մէկ կենդանի պատկերը կ'ընծայէր ինձ : Կոյն իսկ մարդուս կեանքը սա երեք բառով կրնանք լուծել . այս է , Erat, est, fuit. . . :

— Վսով իրօք ի՞նչ ըսել կ'ուզես — հարցոց ա'Արգանեան , որ սկսեր էր Տշմարտութեան վրայ տարակուսիլ :

— Վսով ըսել կ'ուզեմ թէ աւանակի պէս սակարկութիւն մը ըրի հիմակ . վաթսուն լուի , ձի մ'որ՝ իր ընթացած կերպէն , կրնաց ըսել թէ քիչէն քիչ ժամուան մը մէջ հինդ մղոն պիտի քալէ :

Տ'Արգանեան և Ամոս քահ քահ ինդացին :

— Սիրելիոք իմ՝ ա'Արգանեան — ըստ Արամիս — կ'աղաչեմ , զիս մի մեղադրեր , հարկն օրէնք չունի . ասկէ զատ՝ առաջին պատիմն ես կ'կրեմ , վասն զի այն վաստազի ձիավաճառն առ նուազն յիստն ուկի զողցաւ իզնէ : Ա՛յ , դուք լաւ տնտեսներ եք , զուք որ ձեր սպասաւորներուն ձիերով կ'ուզեսրիք և ձեր շքեղ երիվարները ծանր ծանր ետևէն քաշել կ'աւաք :

Կոյն սպահուն դոց սայլ մ'որ քիչ ատենէ վեր Ամիքնի Տամրուն վրայ կ'երեւէր , կանկ առաւ , և անկից ելան Կրիմօն ու Բլանշէ զլուխոնուն վրայ թամրերը դրած : Սայլը Բարիզ կ'զառնար պարագ , և երկու սպասաւորները զիրենք փոխադրել տալու համար՝ սպայման զրեր էին սայլորդին զինի խմբնել ողեւրութեան ժամանակ :

— Ի՞նչ է այն — ըստ Արամիս անցած գարձածը դիտելով  
— մինակ թամբերը կ'աեսնեմ :

— Հիմակ հասկցա՞ր բանը — ըստ Աթոս :

— Բարեկամներս , Ֆիշտ դոք ալ ինձի պէս ըրեր էք : Եթէ բնազդումով մը ձիւս թամբը պահեցի : Է՛յ , ինձ նայէ , Պաղէն , իմ նոր թամբս այս պարոններուն թամբերուն քովը տար :

— Եւ ի՞նչ ըրիր երեցներդ — հարցոց տ'Արդանեան :

— Սիրելիզ իմ , հետեւեալ օրը զանոնք ճաշի հրաւիրեցի — ըստ Արամիս — համահամ զինի ունիմ այս տեղ , խօսքը մեր մէջ մնայ , կրցածիս չափ զանոնք զինովցուցի . այն ատեն երեցը պատուիրեց ինձ որ վտաւակս չհանեմ , և մէ զիլիդն ալ աղաւէց որ զինիքն իբր հրացանակիր ընդունել տալու աշխատիմ :

— Առանց բնաբանի — գուցեց տ'Արդանեան — առանց բնաբանի , ես բնաբանին բարձումը կ'պահանջեմ :

— Անկէ ՚ի վեր — շարունակեց Արամիս — ախորժելի կեանք մը կ'վարեմ : Միավանկ ոտանառոր քերթուած մը սկսայ . բաւական դժուարին է , բայց ամէն բանի մէջ արժանիքը դժուարութեան մէջ է : Նիւթը սիրային է , ձեզի առաջին երգը պիտի կարդամ , չորս հարիւր ոտանառոր կայ և վայրկեան մը կ'տեէ :

— Ճշմարիս վկայ , սիրելիի իմ Արամիս — ըստ տ'Արդանեան որ լատիներէնին չափ ոտանառորներն ալ կ'ատէր — դէշ չես ըներ եթէ գժուարութեան արժանիքին առելցնես նաև համառօտութեան արժեքը , և այն ատեն սույզ կ'լինիս զոնէ որ քերթուածդ կրկին զին պիտի ունենայ :

— Յետոյ — շարունակեց Արամիս — քերթուածս պարիեշտ զդացումներ կ'արտայայտէ , ինչպէս որ պիտի տեսնես : Է՛յ , բարեկամներ , ուրեմն Բարիզ կ'գառնանք : Կեցցէ , ես պատրաստ եմ . ուրեմն երթանք պիտի տեսնելու այն բարի Բորթոսը , ուղածս այդ է : Այն նշանառոր ասպուշին ոլէ աք ունէի , զիտէք արդեօք : Նա երբէք իր երիվարը չպիտի ծախէր եթէ փոխարէն թաղաւորութիւն մ'անզամ տային : Կ'փափաքիմ արդէն աեսնել զինիքն իր կենդանիին և թամբին վրայ : Հաւաստի եմ որ Մեծ Մօկոլին կերպարանը պիտի ունենայ :

Ժամ՝ մը դադար առին ձիերուն հանգիստ տալու համար , Ա-

բամիս իր հաշիւը վճարեց, Պաղէնը սայլակին մէջ դրաւ իր ընկերներուն հետ, և ճամբայ ելան երթալ Բորթոսը զանելու համար:

Բորթոս ստք ելեր էր, և ա'Արդանեանի առջի անդամ տեսածէն նուազ գունատ կ'ըսէր. Բորթոս սեղանի մ'առջեւ նստեր էր, թէ և մինակ, սակայն անոր վրայ չոր հոգւոյ համար կերակոր կար. այս ճաշը մսեղէն համեմալ ուտելիքէ, ընտիր դինիէ և սքանչելի պտուղներ կ'ըսականար:

— Ա՛Հ, Աստուած վկայ — ըստ նա ստք ելնելով — քաջազէպ ժամանակին կ'հասնիք, պարոններ, ևս ալ նոր լմնցոցեր էի ապուրս, և հիմակ ինձի հետ պիտի ճաշէք անշուշտ:

— Հօ, հօ — ըրաւ ա'Արդանեան — անտարակոյս խեղդով բոնած չէ Մուսքոն այս շիշերը, ահաւասիկ խոզի ճարպով խորովեալ որթի միս, եղան քամակի խորտիկ մը . . . :

— Կազդուրելու կ'ջանամ — ըստ Բորթոս — ոյժս կազդուրելու. որչափ տկար կ'ձգեն այն ճմշած ստները, միթէ դոք երբէք ճմշած ստք ունեցե՞ր էք:

— Ո՛չ երբէք. մինակ կ'յիշեմ որ Ֆէրու փողոցը՝ մեր ունեցած կոտին մէջ սրի հարուած մ'ընդունեցայ, որ տասն հինգ կամ տասն ութ օրուան մէջ զրեթէ նոյն արդիւնքն ունեցաւ:

— Բայց այս ճաշը մինակ քեզի համար չէր, սիրելիդ իմ Բորթոս — ըստ Արամիս:

— Ո՛չ — ըստ Բորթոս — քանի մը զրացիներու կ'սպասէի ուրնկ իմաց տուին ինձ թէ չպիսի դան ճաշի. անոնց տեղը կը բոնէք, և այս փափոխութեամբ մեծ կորուստ չեմ ըներ: Կ'յ, Մուսքոն, աթոռներ բեր, և շիշերը իրկնապատիէ:

— Միթէ զիտէք թէ այս տեղ մեր կերածն ինչ է — ըստ Աթոս տաս վայրկենէ ետքը:

— Իրաւ որ — պատաօխանեց ա'Արդանեան — ես ակքանով և ըսկով խորոված որթ կ'ուտեմ:

— Իսկ ես դառնուիկ փափուկ միս — ըստ Բորթոս:

— Իսկ ես հար փոխ միս — ըստ Արամիս:

— Ամենքնիդ ալ կ'սխալիք , պարոններ — պատասխանեց ծանր բոթեամբ Աթոս — ձիու միս է կերածնիդ :

— Մի ըսեր — զոշեց տ'Արդանեան :

— Ձիու միս — ըրաւ տ'Արդանեան զզուանօք երեսը ծըռամբկելով :

Տինակ Բորթոս պատասխան չառաւ :

— Այս, ձիու միս , այնպէս չէ, Բորթոս . մեր կերածը ձիու միս չէ . թերեւս թամբերն ալ միասին :

— Ո՛չ , պարոններ , թամբը պահեցի — ըստ Բորթոս :

— Իրաւ որ , իրարմէ վար չենք մնար — ըստ Արամիս — կարծես թէ խօսքը մէկ ըրեր ենք :

— Ե՞նչ ընեմ — ըստ Բորթոս — այն ձին այցելումերուս նուսաստոթիւն մ'էր , և չուզեցի զանոնք նուսասացնել :

— Ասկէ զատ՝ գքուհիդ միշտ ջերմակները պիտի լինի , այն պէս չէ — վրայ բերաւ տ'Արդանեան :

— Տիշտ անդ է — պատասխանեց Բորթոս : — Արդ , Ճշմարիս վկայ , զաւառիս կառավարիչը , այն կոչնականներէն մին՝ որոն այսօր Ճաշի կ'սպասէի , այնքան փափսփեցաւ ձիս ստանաւու որ զայն անոր տոփի :

— Տոհիր — զոշեց տ'Արդանեան :

— Ո՛չ , Աստուած իմ , այս , տոփի . բոն բառն է — ըստ Բորթոս — վասն զի հարիւր յիսուն ոսկի կ'ամէր այն երիվարը , և ապիրատը մինակ ութուն ոսկի վճարեց :

— Անշոշտ առանց թամբի — ըստ Արամիս :

— Այս , առանց թամբի :

— Գիտեցիք անշոշտ , պարոններ — ըստ Աթոս — որ գարւեալ Բորթոս մեղնէ աւելի շահաւոր սակարկութիւն մ'ըրեր է :

Ահա այն ատեն բարձրաձայն ծիծաղներ բրդան՝ որով խեղճ Բորթոս բոլորովին շփոթեցաւ . բայց քիչէն անոր բացատրեցին այս գուարթութեան պատճառը , և ինքն ալ անոնց միացաւ աղմկալի ձայնով՝ ըստ սովորութեանը :

— Հետեապէս ամենկինիս ալ ստակ ունինք հիմակ — ըստ տ'Արդանեան :

— Բայց իմ մասիս չէ այդ խօսքը — ըստ Աթոս — Արամիւնի սի սպանիական գինին այնքան լառ դասյ որ վաթսուն շիշի չափ սպասաւորներուն այլակին մէջ գնել տոտի, և այս պատճառաւ ստակս նուազեցաւ :

— Իսկ ես — ըստ Արամիս — երեակայեցէք միանդամ որ Մօնտիտիէի եկեղեցւոյն և Ամիէնի մէ զվիզներուն մինչև վերջին սուս տուեր էի . ատկէ զատ՝ խոստումներ ըրեր էի և հարի էր զանոնք կատարել, թէ ինձի և թէ ձեզի համար պատարադ ընելու խնդրեր էի, այն պատարազները պիտի ընեն, պարոններ, և տարակոյս չունիմ որ անուլ մեր զործերը յաջող պիտի երթան :

— Իսկ ես — ըստ Բորթոս — միթէ կարծէք թէ ես աժան բրդայ ոտքի ցաւովս . սուանց հաշուելու Մուսքոնի վէրքը, որուն համար օրն երկու անդամ վիրաբոյժը բերել տալու ստիպուեր էի, վիրաբոյժը կրկին դին առաւ իր այցելաթիւններուն համար, սա պատրուակաւ որ այն ապուշ Մուսքոնն այնպիսի տեղ մ'առեր էր զնտակն որ սովորաբար զեղաղործներու կցուցուի . ուստի ապսարեցի անոր որ այսուհետեւ մարմնոյն այն կողման վէրք չառնու ընաւ :

— Աղէ, աղէ — ըստ Աթոս տ'Արդանեանի և Արամիսի հետ ժպիտ մը փոխանակելով — կ'նայիմ որ այն խեղչ ծառային համար չափէն աւելի ծախս ըրեր ես, ասկից կ'իմացուի որ լաւ աէր մ'ես :

— Կարծ կապեմ — շարունակեց Բորթոս — եթէ ծախիք վճարեմ, դարձեալ երսունի չափ սկուտ պիտի մնայ քնիլս :

— Իսկ իմ քովս ալ տաօնի չափ ոսկի — ըստ Արամիս :

— Աղէ, աղէ — ըստ Աթոս — կ'երեսի թէ ընկերութեան կրէս սոսներն ենք : Հարիւր ոսկի դահեկանէդ ի՞նչ մնայ քեզ, տ'Արդանեան :

— Ի՞մ հարիւր ոսկիէս : Դախս, յիսուն հատ քեզի տոտի :

— Այդպէս կարծես :

— Անտարակոյս :

— Ահ, իրաւ է, կ'յիշեմ :

- Ասկից զատ՝ պանդոկապետին վեց հատ վճարեցի :
- Ի՞նչ անսուն է այն պանդոկապետը : Ինչո՞ւ համար առնոր վեց ոսկի տուիր :
- Դու ըսկը որ վճարեմ :
- Իրաւ է որ շատ բարեսիրաւ եմ . հապալ մնացորդ հաշուին համար :
- Քսան հինգ ոսկի — ըսաւ տ'Արդանեան :
- Խել ես — ըսաւ Աթոս՝ իր գրպանէն մանրուք դրամ հանելով — Ես . . . :
- Դու, ո՞չ, բան մը չունիս :
- Ճշմարիստ վկայ, այնչափ դոյզն բան, որ մեծ դումարին վըսայ բարդելու հարկ չկայ :
- Հիմակ հաշուենք թէ բոլորը մէկէն ո՞րչափ ստակ ունինք :
- Բորթոս :
- Երսուն սկուտ :
- Արամիս :
- Տաս ոսկի դահեկան :
- Հապա գու, տ'Արդանեան :
- Քսան հինգ :
- Համագումարն ո՞րչափ է — ըսաւ Աթոս :
- Չորս հարիսր եօթսուն հինգ ֆրանք — ըսաւ տ'Արդանեան որ Արքիմէդէսին պէս կ'համրէր :
- Երբ Բարիղ հասնինք, գեռ ևս չորս հարիսր ֆրանք պիտի ունենանք — ըսաւ Բորթոս — և ասկէ զատ՝ թամբերը :
- Հապա մեր վաշտին ձիերը — ըսաւ Արամիս :
- Լու, սպասառոներու շորս ձիերը՝ չորս տիրոջ ձի կ'ընենք և վիճակով կ'հանենք . չորս հարիսր ֆրանքին կիսով՝ ձիազուրկին համար ձի մը կ'առնունք, իսկ մեր գրպանին փշրունքը տ'Արդանեանի կ'տանք որ բաղդառը ձեռք մ'ունի, և առջեն ելն նող խաղաքանը կ'երթայ կ'խաղայ և այսպէս ամէն բան կարգի կ'մտնէ :
- Ուրեմն ճաշենք — ըսաւ Բորթոս — կերակորը պաղեցաւ :

Դորս բարեկամները՝ որ այսուհետեւ տեղի հանդարտ էին իւրենց ապագային վրայ, լաւ ճաշ մ'ըրին, և մասցորդները Պ. Մոռաքդօնի, Պաղէնի, Բլանչէի և Կրիմօնի թողոցին:

Բարիդ համելով տ'Արդանեան՝ Պ. աը Դրէվիլի մէկ զիրը դտաւ, որ կ'իմացյնէր թէ՛ իր խնդրոյն համեմատ՝ թաղաւորը հրացանակիր դնդին մէջ մտնելու շնորհն անոր կ'ընծայէր:

Որովհեաւ տ'Արդանեանի բոլոր փափաքածն ալ այս էր, 'ի բաց առեալ 'ի հարկէ տիկին Պօնասիկ օն գտնելու փափաքը, խնդագին վազեց իր ընկերներուն քով, որոցմէ կէս ժամ առաջ հեռացեր էր, և զորս շատ տիսուր և մտատանջ վիճակի մէջ զըտաւ: Աթոսին տունը իորհհրդի կստած էին, և այս բանս միշտ ծանրակշիռ պարագաներու նշան էր:

Պ. աը Դրէվիլ այն ինչ իմաց տուեր էր անոնց թէ Նորին վեհափառութիւնը միտք ունի մայիսի առաջին օրը պատերազմ բանալու և թէ պարտաւոր են անմիջապէս իրենց զէնն ու զարդը պատրաստել:

Այս չորս փիլիսոփաներն իրարու երես նայեցան ապշած, Պ. աը Դրէվիլ մարզից մասին չափազանց խիստ էր:

— Եւ զէն ու զարդի համար ո՞րչափ ստակ պէտք է — ըստ տ'Արդանեան:

— Ա՛հ, խօսելու հարկ չկայ — վրայ բերաւ Արամիս — մեր հաշիներն սպարդիական կծտութեամբ ըրինք, ամէն մէկուն հազար հինդ հարիւր ֆրանք պէտք է:

— Չորս անգամ տասն հինգ կ'ընէ վաթսուն, այսինքն վեց հազար ֆրանք — ըստ Աթոս:

— Ես — ըստ տ'Արդանեան — կ'երեկ ինձ որ եթէ մեզնէ ամեն մէկը հազար ֆրանք տնենայ, իրաւ է որ չէ թէ իբր սպարդացիք, այլ իրեւ փոխանորդ կ'խօսիմ. . . :

Այս փօխանորդի խօսքը Բորթոսն արթնցուց:

— Դէն, զաղափար մ'ունիմ — ըստ նա:

— Արդէն այդ մեծ բան է. Ես, զաղափարի ստուերն անզամ չունիմ — ըստ Աթոս պաղութեամբ. — իսկ տ'Արդանեանի գառ

լով, պարոններ, պէտք է զիսանալ որ մեր զնդին մէջ մտնելուն համար զգացած ուրախութենէն խենդեցեր է . հաղար Փրանք մի, ահա ես կ'յայտնեմ ձեզ որ մինակ ինձի համար երկու հաղար Փրանք պէտք է :

— Զորս անգամ երկու կ'ընէ ութ — ըստ նոյն միջոցին Արամիս — ուրեմն մեր սպասուց համար ութ հաղար ոսկի պէտք է , և այս սպասուց մէջէն մինակ մեր ունեցած թամբերը դուրս ձգելու է :

— Ասկէ զատ — ըստ Աթոս, երբ տեսաւ որ տ'Արդանեան Պ . առ Գրէվիլի շնորհակալ լինելու համար դուրս ելնելով դուռ կ'զոցէր — ասկէ զատ՝ ունինք նաև այն դեղեցիկ անդամանդն որ մեր բարեկամին մատը կ'փայլի : Սատանան, տ'Արդանեան այնքան բարեսփրա ընկեր մ'է որ իր բարեկամները նեղութեան մէջ չըողուր, քանի որ իր մատը՝ թաղաւորի մո փրկանքն աժող մասնի մ'ունի :

## Թ

ԶԵՆ ՈՒ ԶԱՐԴԻ ՈՐՄՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Այս չորս բարեկամներէն ամենէն շատ հոգ տանողը տ'Արդանեանն էր անշուշտ, թէև տ'Արդանեան, իրեւ պահակ առելի դիւրութիւն ունէր զէն ու զարդը պատրաստելու քան թէ հրացանակիրներն որ մէն մի իշխաններ էին . բայց մեր կասքօնցի նորեկ զօրականը, ինչպէս որ ընթերցողը զիսեց, նախատես և գրեթէ ժլատ բնաւորութիւն մ'ունէր, և ասով հանդերձ (հակագէմները բացարձէ) պարծոկ էր Բորթոսին չափ : Տ'Արդանեան այս սնապարծութեան ողին հետ նոյն պահուն նուազ ե-

սասէր մտասաննջութիւն մ'ունէր : Որչափ որ տիկին Պօնասիէօի վրայ տեղեկութիւններ ստանալու ջանաց , սակայն բնաւ լուր մը շառաւ : Պ . ար Դրէվիլ թագուհւոյն խօսեր էր այս մասին , սակայն թագուհին չգիտէր թէ նորատի փերեղակուհին ուր կ'զրանուէր և խոսացեր էր զանի փնտուել տալու : Բայց այս խոստումը շատ տարտամ էր և չէր կրնար տ'Արդանեանի ասկահովութիւն մը տալ :

Աթոս իր սենեկէն դուրս չէր ելներ , իր զարդն ու սարքը պատրաստելու համար միաբը զրեր էր քայլ մ'անդամ շառնուլ :

— Գեռ ևս տասն հինգ օր ունինք — կ'ըսէր իր բարեկամներուն — լու ։ Ճժէ այս տասն հինգ օրէն ետե՛ բան մը չգտնեմ , կամ լաւ ևս ըսեմ , բան մը չգայ զիս դանելու , որովհետև լաւ կաթողիկ մ'եմ և չեմ ուզեր զլուխս հրացանի տալ , Նորին բարձրութեան չորս պահակներու , կամ ութ անկլիացիի հետ կուրի պիտի բռնուիմ , և պիտի մանամարտիմ մինչեւ որ զիս ըսպաննող մէկը զմնուի , և այս բանս անվրէալ պիտի պատահի , քանի որ հակառակորդներս շատոր սիրահի լինին : Այն ատեն պիտի ըսեն թէ թագաւորին համար մնայ , և այսպէս իմ պաշտօնած կատարած պիտի լինիմ առանց զարդ ու սարքի պէտք ունենալու :

Քորթոս իր պատցար կ'շարունակէր , ձեռները կոնակի վրայ զրեր էր , և զլուխս վեր վար ընելով կ'ըսէր .

— Ես իմ խորհուրդու 'ի զործ պիտի դնեմ :

Արամիս մտայոյդ և մազերը վեր 'ի վերոյ յոսպապած , լուռ ու մունջ կ'կենար :

Այս մանր պարագաներէն դիւրին է դիտել որ հրացանակիրներու մէջ մեծ տագնապ մը կ'տիրէր :

Միւս կողմէն սպասաւորները՝ Հիսուլիտի երիվարներուն պէտի իրենց տեարց մտառանջութեան մասնակից էին : Առուպքոն հայի կեղեներու պաշար մը կ'պատրաստէր . Պաղէն՝ որ միշտ ջերմառանդութեան կ'միտէր և կեղեցիները կ'յաճախէր . Բլանչէ կ'նաւէր որ ճանաերն բնչպէս կ'թուին , և Կրիմօ՝ որ ընդհանուր

Ճախորդութեան առթիւ՝ չէր կրնար իր տիրոջ պահած լոռւթիւնն ընդհատել, քարեւն՝ ի գութ շարժելու կերպով հառաջներ :

Երեք քարեկամները, վասն զի ինչպէս որ ըսինք, Աթոս իր հանգերձանքը պատրաստելու համար քայլ մ'անգամ չընելու երդմներ էր, երեք քարեկամներն այսպէս ուրեմն առաջ կանուխ դուրս կ'ելնէին և ուշկեկ տուն կ'գառնային։ Փողոցները կ'պարտէին՝ ամէն սալաքարի վրայ աչք նետելով այն յուսով թէ իրենցմէ առաջ անցնող մարդիկ արդեօք քսակ մը ձգած չեն։ Կարծես թէ ամենուն հետքը կ'որոնէին՝ այնքան ուշադիր կ'գիտէին ամէն կողմ։ Երբ իրարու հանդիպէին՝ վշտաղին ակնարկներ կ'արձակէին, որով կ'ուզէին ըսել։ Արդեօք բան մը զտա՞ր։

Սակայն Բորթոս՝ կանխաւ խորհուրդ մը զանելով անոր վըրայ անդուլ որոճալուն՝ ամենէն առաջ զործի սկսողն եղաւ։ Իսրայի այս արժանի Բորթոսը զործի մարդ է։ Տ'Արդանեան հետեւալ օրը զանի տեսաւ որ դէպ ՚ի Սէն-Լէօ եկեղեցին կ'գիտէր, և ինքն ալ անոր ետեւէն զնաց քնազգումով մը։ սուրբ վայրը մտաւ իր պեխը վերցնելէն և ուժային երկնցնելէն ետեւ, և այս բանս իր յաղթական դիտաւորութիւնները կ'յայանէր միշտ Որովհետեւ տ'Արդանեան ինքզինքը պահելու համար կ'զգուշանար, Բորթոս կարծեց թէ ոչ տեսաւ զինքը։ Տ'Արդանեան անոր ետեւէն զնաց։ Բորթոս զնաց սիւնի մը մէկ կռջմը կռթնեցաւ։ իսկ ա'Արդանեան՝ միշտ անտես մնալով՝ միւս կողմը կը թնեցաւ։

Ճիշտ նոյն պահուն քարոզ կար և այս պատճառաւ եկեղեցին բազմութիւնը շատ էր։ Բորթոս՝ այս սպարազան առիթ բանելով սկսաւ կիներն ակնոցով դիտել։ Մուսքդօնի հոգատարութեան շնորհիւը՝ իր ափով արտաքին տեսքը բնաւ ներքինին չքառորութիւնն երևան չէր հաներ։ իր թաղեայ զլիսարկը թէե փափր ինչ մաշեր էր, թէե իր փետուրը փոքր ինչ թուլցեր էր, իր բանուածները փոքր ինչ թարշամեր էին, հիւսկէնները (dentelle) ցաւատեր էին, սակայն կէս մթութեան մէջ բոլոր այս պական

սութիւնները կ'անհետէին, և Բորթոս միշտ գեղանի Բորթոսն էր :

Տ'Արդանեան դիտեց որ Բորթոսի և իր յենած սիւնակին խիստ մօտ բազմարանի մը վրայ տեսակ մը գեղանի, այլ հասուն, փոքր ինչ գեղնագոյն, փաքր ինչ վախտ կին մը, բայց գէդ և վէս կ'երեւէր իր ու դատակովը : Բորթոսի աշերը զաղան ու գողի այս կընկան վրայ կ'գառնային, յետոյ խորանին վրայ կ'թթթուային :

Իր կողմէ՝ տիկինը՝ որ ատեն ատեն կ'կարմրէր՝ փայլակի արագութեամբ Բորթոսի վրայ ակնարկ մը կ'նետէր, և իսկոյն Բորթոսի աշերը կատղութեամբ կ'թթթուային : Յայտնի է որ այս հընարքը սեազտակ կինը սաստիկ կ'վիրաւորէր, վասն զի արիւնու տելու չափ շրթերը կ'խածնէր, քթին ծայրը կ'քերէր, և իր աթոռին վրայ յուսահատօրէն կ'տարու բերէր :

Եւյս տեսնելով Բորթոս՝ իր պեխը նորէն ոլորեց, իր արքայիկը նորէն երկնցուց, և սկսաւ դասին մօտ զանուող գեղանի կնկան մը նշանագրիներ ընել. և այս կինն ոչ միայն գեղանի էր, այլ անշուշտ մեծ տիկինն մը, վասն զի իր ետին կեցեր էին սեռկ մ'որ բարձ մը բերեր էր, որուն վրայ տիկինը ծունը կրկներ էր, և նամիշտ մ'որ զինանշան պարկ մը բռներ էր որուն մէջ կնոջ կարդացած ալօթազիքը կ'դնէր :

Սեազտակ տիկինն իր քօղին ծալքերուն մէջէն Բորթոսին նայուածքը կ'զիտէր, և տեսաւ որ թաւշէ բարձ, սեռկ սպասարոր և նամիշտ ունեցող կնկան կ'նսյէր :

Նոյն պահուն Բորթոս վարպետ խալ մը կ'խաղար . ակնթարթներ կ'ընէր, մատերը շրթերուն վրայ կ'դնէր, սմսնդուկ ժապիտներ կ'ընէր որ արդարեւ գեղանի արհամարհեալ կինը կ'սպաննէին :

Աւսամի իբր ճշոց՝ հառաջ մ'արձակեց կուրծքը զարնելով այնաքան ուժգին, որ ամէն մարդ նոյն իսկ կարմիր բարձով տիկինը անոր կողմը գարձաւ, Բորթոս անվրդով մնաց, որչափ որ ամէն բան քաջ ըմբռներ էր, բայց չհասկնալու կ'զարնէր :

Կարմիր բարձով տիկինը մեծ տարսորութիւն ըրաւ սեազտակ

տիկնոջ վրայ, վասն զի շատ գեղանի էր, և զանի իրեւ ահարա կու ոսոխ մը նկատեց, նոյնպէս մեծ տպաւորութիւն ըրաւ Բորթոսին վրայ, որ սեադտակ կնոջմէ աւելի սիրուն դտաւ զանի, մեծ տպաւորութիւն ըրաւ նաև տ'Արդանեանի վրայ, որ Մէօնի, Քալէի, Տովորի տիկինը ճանչեց, և որուն Միլէտի անուն տալով իր հալածիչ, սպիտառ մարդը բարեեր էր:

Տ'Արդանեան՝ առանց կարմիր բարձով տիկինն աչքէ հեռացնելու, Բորթոսին հանրագէտ ընթացքը դիտելու շարունակեց, որով սաստիկ կ'զրունուր. կարծեց զուշակել որ սեադտակ տիկինն Ռւրս փողոցին զործակալուհին էր, նա մանաւանդ անոր համար որ Սէն-Լէօի եկեղեցին յիշեալ փողոցին մօս էր:

Այն ատեն մակաբերեց որ Բորթոս Ճանդիյի մէջ կրած պարտութեան փոխարէնը կ'աշխատի հանել, քանի որ զործակալուհին խիստ ըմբռսա երեցեր էր իր քսակին նկատմամբ:

Բայց այս ամէն իրողութեանց մէջ տ'Արդանեան դիտեց նաև որ և ոչ դէմք մը Բորթոսի քծնի ձեւրուն կ'պատասխանէր: Լոկ անուրջ և պատրանք էին ասոնք, բայց իրական սիրոյ համար, կայ ուրիշ իրականութիւն մը քան անուրջներն ու պատրանքը:

Քարոզը լմնցաւ. գործակալուհին գէպ ՚ի օրհնած ջուրը դիմց, Բորթոս անորմէ առաջ անցաւ, և փոխանակ մէկ մատը՝ բալոր ձեռքը թաթիսց: Գործակալուհին ժպտեցաւ, կարծելով որ Բորթոս իրեն համար այսպէս կ'շտապի, սակայն շուտով և անդթօրէն զգաց որ սխալեր է. վասն զի՞ իրը երեք քայլի շափ անորմէ հեռու կ'գտնուէր, Բորթոս զլուխը դարձոց, կարմիր բարձով կնկան վրայ ածելով իր անթարթ աչքը, մինչդեռ այն բարձրադիր տիկինն ոտք ելեր կ'մօտենար իր ետևէ ձգելով սեւոկն ու նաժիշտը:

Երբ կարմիր բարձով կինը Բորթոսին մօտեցաւ, Բորթոս ջրաթաթախ ձեռքն օրհնած տաշտէն հանեց. զեղանի բարեպաշտուհին իր նուրբ ձեռնով Բորթոսի կոշտ ձեռքին դպաւ, ժպտելով խաչ հանեց և եկեղեցիէն դուրս ելաւ:

Այս բանս շատ ծանր եկաւ գործակալուհին. աներկմատ ե-

դաւ որ այն կնկան և Բորթոսին մէջ սիրային յարաբերութիւնն  
մը կայ : Եթէ մնձատոն կին մը լինէր, անշուշտ պիտի մարէր,  
բայց որովհետեւ գործակալուհի մ'էր, բաւական համարեց բուռն  
զայրացմամբ հրացանակին ըսել .

— Ե՛ս, Պ. Բորթոս, ի՞նչպէս ինձի օրհնեալ ջուր չես ըն-  
ծայեր :

Բորթոս՝ այս ձայնը լսելուն՝ ոստում մ'ըրաւ այնպիսի մարդու  
մը պէս որ հարիւր տարտան քունէ մը կ'արթննայ :

— Տի . . . ափկին — զոչեց նա — միթէ զու ես : Ի՞նչպէս է  
էրիկդ, այն իմ սիրական Գոքնարս : Միթէ առաջուան պէս ժը-  
լան է : Ուր էին իմ աչերս որ չկրցայ քեզ տեսնել այս երկ-  
մամեայ քարողին ատեն :

— Քեզնէ քանի մը քայլ հեռի էի, սպառն — սպատախանեց  
զործակալուհին — բայց զիս չտեսար, վամն զի մինակ աչք ու-  
նիս այն զեղանի կնկան համար որուն քիչ մ'առաջ օրհնած ջուր  
տուիր :

Բորթոս այնպէս կեղծեց թէ: շփոթած է :

— Ա՛ս — ըստ նա — ուրեմն գիտեցիր . . . :

— Կայր լինիլ պէտք է մարդ չղիտելու համար :

— Այո՛ — ըստ անհոգութեամբ Բորթոս — իմ մէկ գքուհի  
բարեկամուհիս է որուն հետ տեսնուելու զժուարութիւն կ'քաշեմ  
իր էրիկը նախանձուտ լինելուն, ուստի ինձի իմաց տուեր էր որ  
այսօր պիտի զայ զիս տեսնելու ոյս անշուք եկեղեցւոյն մէջ՝ այս  
անծանօթ թաղին մէկ անկին:

— Պ. Բորթոս — ըստ զոհմակալուհին — արդեօք կ'հաճին  
թեդ ինձի տալու հինգ վայրիենի համար . քեզի հետ խօսելու  
կ'փափաքիմ :

— Ի՞նչպէս չէ, ափկին — ըստ Բորթոս՝ աչքը քթթելով  
ինքն իրեն խաղամոլի մը պէս որ լարած որողայթին վրայ կ'ժպտի:

“Նոյն սպահուն՝ ա՛ւըգանեան Միլէտիի ետեսէն կ'երթար, Բոր-  
թոսին կողմն ակնարկ մը նետեց և անոր յաղթական քթիթը  
դիտեց :

— Հէ, հէ — ըստ իւրովի խորհելով նոյն իդամով ժամանակ տարօրինակ հէշտ բարոյականի տեսութեամբ — ահատափիկ մեր պարոնը պիտի կարենայ թերեւս մինչև որոշեալ ատեն իր զէննու զարդը պատրաստել:

Բորթոս՝ իր զործակալու հիին թեկին ճնշման հպատակելով, ինչպէս կ'հպատակի նաւակ մը զէկին, Աէն-Մակլուար վանատունը հաստ, որ բանուկ անցք մը չէր և երկու ծայրէն շըրջանակով մը փակուած էր: Ցորեկը՝ մինակ մուրացիաններ կը տեսնուէին անդ որ կերակուր կ'ուտէին, կամ տղեկներ՝ որ կը խաղային:

— Ա՛հ, Պ. Բորթոս — գոչեց զործակալու հին, երբ ստուդեց որ նոյն տեղոյն բնիկներէն զատ՝ օտար անձ մը չկար զիբենք դիւտող և մտիկ ընող — ա՞չ, Պ. Բորթոս, դու քաջարի յաղմող մ'ես, ինչպէս որ կ'երեկի:

— Ե՞ս, տիկին — ըստ Բորթոս կոկոզալով — և ինչո՞ւ համար այդպէս կ'ըսես:

— Հապա ի՞նչ կ'նշանակէ ին ըրած նշմայրներդ և օրհնեալ ջուրը: Բայց այն տիկինն իշխանուհի մը պիտի լինի անշուշտ իր սեռու սպասաւորով և նամիշտովը:

— Կ'սիսալիս, Է՛հ, Տէր Աստուած, ոչ — պատասխանեց Բորթոս — պարզապէս զքսուհի մ'է:

— Հապա ի՞նչ է այն սուրհանդակն որ գուռը կ'սպասէր, և այն կառքը պՃնազզեստ կառապանով որ իր աթոռին վրայ կ'ըսապատէր:

Բորթոս ոչ սուրհանդակ տեսեր էր և ոչ կառք, սակայն տիկին Գօքնար՝ նախանձոտ կնկան մ'աչքով ամէն բան տեսեր էր:

Բորթոս ցաւեցաւ՝ առաջին անգամուն իսկ կարմիր բարձով տիկինն իշխանուհի մ'է չըսելուն:

— Ա՛հ, զեղանի կանանց սիրական զաւակն ես, Պ. Բորթոս — վրայ բերաւ զործակալու հին հառաչելով:

— Բայց — պատասխանեց Բորթոս — բնութեան օժտած այս մարմնական ոյժով՝ շատ բաղդաւոր անձ մ'եմ:

— Աստուած իմ, ինչպէս մարդիկ ամեն բան շուտ մը կ'մոռնան — զոչեց զործակալուհին աչերը գէալ յերկին վերցնելով:

— Կանանց չափ շուտ մոռցող չեն, կարծեմ — պատաժխանեց Բորթոս — վասն զի կրնամ՝ ըսել, տիկին, որ ես քու զօհդեղայ, երբ վերաւորեալ, կիսամեռ՝ վիրաբոյժներու կողմէ երեսի վրայ մնացի. Ես՝ որ անուանի դերդաստանի մը շառաւիդն եմ, ես որ քու բարեկամութեանդ վստահեր էի, մազ նաև վէրքերէս պիհափ մեռնէի, և ապա անօթութենէ՝ Շանդիյիի մէկ անշահ պանդոկի մը մէջ, և նոյն միջոցին իմ հրավառ դիբերուս պատասխան մ'անդամ դրելու չհաճեցար:

— Բայց, Պ. Բորթոս — մրմար զործակալուհին, որ կարծէք թէ՝ նոյն ժամանակի ամենէ երեսելի կանանց ընթացքը նաշելով ինքն անիրաւ էր:

— Ես որ քեզի համար զոհեցի, պարանուհի . . . :

— Քաջ դիտեմ:

— Կոմսուհի . . . :

— Պ. Բորթոս, մի ձգմբ զիս:

— Կոմսուհի . . . :

— Պ. Բորթոս, զիս դետնէ դետին կ'ուարնես:

— Դքսուհի . . . :

— Պ. Բորթոս, վեհանձն եղիք:

— Իրաւունք ունիս, տիկին, և խօսքս պիտի կտրեմ:

— Բայց էրիկս միայն չուզեր փոխ տալու խօսքն անդամ լսել:

— Տիկին Գօքնար — ըստ Բորթոս — յիշէ անդամ մ'ինձ գրած առաջին դիրդ զոր յիշողութեանս մէջ անջինջ կ'պահեմ: Գործակալուհին հեծեծեց:

— Բայց պէտք է ըսել նաև — յարեց նա — որ խնդրած զումարդ փոքր ինչ մեծ էր:

— Տիկին Գօքնար, ես քեզ նախաղաս կ'համարէի: Եթէ միանդամ . . . դքսուհիին դրէի . . . անունը չեմ ուզեր ըսել, վասն զի սովորութիւն չունիմ իին մը բերան տալ, բայց սա պիտեմ որ ուղած դումարս ինձ պիտի զբկէր՝ բաւական էր որ անդամ մը դրէի անոր:

Գործակալուհին արտօսը մը թափեց :

— Պ. Բորթոս — ըստ նա — կ'հաւաստեմ քեզ որ զիս մեծապէս պատճեցիր, և եթէ ապագային մէջ այնպիսի նեղութեան մէջ ընկնիս, ապատօրէն ինձի կարող ես դիմել :

— Ե՛ս, տիկին — ըստ Բորթոս իբր գժարը զալով — ստակի վրայ մի խօսիր, կ'աղաւեմ, շատ նուաստ բան է :

— Այսպէս ուրեմն ալ չես սիրեք զիս — ըստ ծանր և տըրտում կերպով գործակալուհին :

Բորթոս վեհապանծ լռութիւն մը պահեց :

— Միթէ այդպէս կ'պատասխանես ինձ . ափսոս, հիմա խելքս հասաւ :

— Մտածէ անդամ մ'ինձ ըրած նախատինքդ, տիկին . այն նախատինքդ այս տեղ կեցած է — ըստ Բորթոս ձեռքը սրտին վրայ դնելով և ուժով պնդելով :

— Պիտի գարմանեմ զայն . աղէ, իմ սիրելի Բորթոս :

— Այլ սակայն ես քեզնէ ինչ կ'պահանջէի — վրայ բերաւ Բորթոս՝ միամութեամբ ուսերը շարժելով — մի միայն փոխ ստակ և ոչ այլ ինչ : Արդարեւ, ես անխոհեմ մարդ չեմ: Դիտեմ որ հարուստ չես, տիկին Գօքնար, և թէ ամուսինդ ստիպուած է խեղճ դատախազներու արինը ծծել քանի մը սկուտ շահելու համար : Ո՛չ, թէ որ կոմսուհի, մարքիզուհի կամ դքսուհի լիս նէիր, այն ասեն խնդիրը կ'փոխուէր և աններելի յանցանք մը գործած կ'լինէիր :

Գործակալուհին վիրաւորուեցաւ :

— Քաջ զիտցիր, Պ. Բորթոս — ըստ — որ իմ արկզս, որ չափ որ գործակալուհիի մ'արկզ է, թերես աւելի լեցուն է քան քու կոլոր կործանեալ ալչրող կիներդ :

— Աւրեմն կրկնակի նախատած ես ինձ — ըստ Բորթոս՝ զործակալուհիին թեն իր թեմն քաշելով — վասն զի թէ որ հարուստ ես, տիկին Գօքնար, քու մերժումէ չկրնար արդարանալ :

— Երբ հարուստ եմ կ'ըսեմ — պատասխանեց գործակալուհին, որ զզաց թէ պէտք եղածէն աւելի խօսեցաւ — ոլէտք չէ

լուսածս բառ առ բառ առնուլ : Իրօք շատ հարուստ չեմ, սակայն  
ունենո՞ւ եմ :

— Ճշմարիտը կ'ուզե՞ս — ըստ Բորթոս — այս խօսքը դոցենք,  
կ'աղաչեմ, դու իմ արժէքս չճանչցար . համակրութեան նշոյլը  
չմնաց ալ մեր մէջ :

— Քանի՞ ապերախտ ես :

— Ա՛հ, կ'յորդորեմ քեզ որ գանդատիս — ըստ Բորթոս :

— Ուրեմն քու դեղանի դքսուհինդ դնաւ . չեմ արդիլեր ալ  
քեզի :

— Ե՛ս, անի կարծածիս չափ երես առած չէ :

— Կրկին կ'ըսեմ, Պ. Բորթոս, վերջին անգամ կ'հարցնեմ  
քեզի . արգեօք դեռ զիս կ'սիրե՞ս :

— Աւաղ, տիկին — ըստ Բորթոս կարելի եղածին չափ մե-  
լամաղձու ձայն մը հանելով — երբ նոր սկատերազմի մ'երթա-  
լու կ'պատրաստուիմ, այնպիսի պատերազմի մ'ուր կարծեմ պի-  
տի սպաննուիմ, ինչպէս որ իմ նախաղդացումս ինձի կ'ըսէ . . . :

— Ո՛հ, այդպիսի խօսքեր մի ըներ — դոչեց դործակալուհին  
յանկարծ հեծկլտալով :

— Զայն մ'ինձի այդպէս կ'ըսէ — յարեց Բորթոս հետզետէ  
մելամաղձու կերպարան մ'առնլով :

— Լ.ալ կ'ըսես եթէ ըսես որ նոր սէր մ'ունիս :

— Բնաւ, ես քեզի բացէ 'ի բաց կ'ըսեմ : Ամենին նոր բան  
մը սիրաս չշարժեր, նա մանաւանդ, սա տեղ, սրտիս խորը բան  
մը կ'զդամ որ քեզի համար կ'զարնէ : Բայց, տասն հինգ օրէն,  
ինչպէս որ զիտես կամ չես զիտեր, այն աղետաբեր պատերազմը  
պիտի բացուի . մեծ հոդ պիտի տանիմ իմ զէն ու զարդիս հա-  
մար : Ասկից զատ՝ ընտանիքս տեսնելու համար ուղևորութիւն մը  
պիտի ընեմ դէով 'ի Պըդանցի ներսերը, որպէս զի իմ չուփս  
ժամանակ՝ պէտք եղած զումարը ճարեմ :

Բորթոս վերջին կոիւ մը տեսաւ սիրոյ և աղաչութեան մէջ :

— Եւ որովհետեւ — յարեց նա — եկեղեցին տեսած դքսուհին  
իդ հողերն իմ կալուածիս մօտ են, ուղևորութիւնը միասին պի-

տի ընենք : Ինչպէս որ զիտես , ձամբորդութիւն մ'այնքան երակար չերեկիր երբ երկու հողի մէկ տեղ ընկն :

— Ուրեմն բարիզի մէջ բնաւ բարեկամ չունիս , Պ . Բորթոս — ըսաւ դործակալու հին :

— Կարծէի թէ ունիմ — ըսաւ Բորթոս իր մելամաղձոտ կերպարանն առնլով — բայց դիտեցի որ սխալը եմ :

— Ունիս , բարեկամ ունիս , Պ . Բորթոս — վրայ բերաւ զորակալու հին այնպիսի եռանգով մ'որմէ ինքն իսկ զարմացաւ . — վաղը մեր տունն եկուր : Դու իմ մօրաքեռուս որդին ես , հետեւ պէս իմ մօրաքեռորդիս . Բիգարտիայի Նուայօն քաղքէն կ'զաս , շատ մը դատեր տնիս բարիզի մէջ , իսկ դործակալ չունիս : Միթէ այս ըսածներս լու ըմբռնեցիր :

— Խիստ քաջ կերպով , տիկին :

— Ուրեմն ձաշի ատեն եկուր :

— Շատ լաւ :

— Խսկ էրկանս առջև անվեհեր երեցիր , որ շատ խորամանէ է , թէն եօթսունն երեք տարու է :

— Եօթսունն երեք տարու , կրո՞ղ , բնչ աղւոր տարիք — վըրայ բերաւ Բորթոս :

— Մեծ տարիք , ըսիւ կ'ուզես , Պ . Բորթոս : Ուստի իմ սիրելի մարդօ կարելի է այսօր վաղը զիս որբեարի թողու . — շաբանակեց դործակալու հին Բորթոսին նշանական ակնարկ մը նետելով : — Աղէին այն է որ ամուսնութեան պայմանագրով՝ ամէն ստացուած ամսնէն վերջը կենդանի մնացողը պիտի ժառանգէ :

— Ամենն ալ — ըսաւ Բորթոս :

— Ամենն ալ :

— Ինչպէս որ կ'աեսնեմ' , շատ զլուշաւոր իին մ'ես եղեր , սիրելի տիկին Գօքնարս — ըսաւ Բորթոս դործակալու հոյն ձեռքը գորովազին սեղմելով :

— Ուրեմն հիմակ ալ հաշտուեցա՞փ , սիրելի Պ . Բորթոս — ըսաւ կինը նազելով :

— Ցմահ հաշտ պիտի մնանք — պատասխանեց Բորթոս նոյն կերպով :

- Աւրեմն կրկին տեսնուինք , դաւաճանս :
- Տեսնուինք , մըռացկուս :
- Վաղը , իմ հրեշտակս :
- Վաղը , կենացս լոյսը :

## Ժ

## ՄԻԼԵՏԻ

Տ'Արդանեան Միլէտիին ետևէն դայեր էր անորմէ անտես մնաւ լով . զիսեց որ կառք մը կ'չեծնէ , և կառապանին տուած հրամանը լոեց որով կ'ապսպրէր անոր Սէն-ժէրմէն դնալու :

Անօգուտ էր հետի հետեիլ կառքի մ'որ սրբնթաց կ'երթար երկու ուժեղ ձիերու շնորհիւ : Ուստի տ'Արդանեան ֆէրու փող դոցը դարձաւ :

Սէնի փողոցին մէջ Բլանշէի հանդիսպեցաւ , որ ծաղարարի մը կրպակին առ ջն կանկ առեր , հիացմամբ կ'զիտէր ախորժելի ձեռով բլիթ մը :

Տ'Արդանեան հրամայեց սպասաւորին որ երթայ Պ . տը Գրէ-վիլի ախոռէն երկու ձի քաշէ պատրաստէ , մին իրեն և միասը Բլանշէի համար , և զայ իսկոյն զինքն Աթոսին տունը դտնէ , վասն զի Պ . տը Գրէ-վիլ միանդամ ընդ միշտ յայտներ էր տ'Արդանեանի որ իր ձիերն ուղածին պէս դորձածէ :

Բլանշէ Գոլոմպիէի փողոցին կողմը զարկաւ և տ'Արդանեան Փէրու փողոցին կողմը : Աթոս իր տունն էր , ախորազին պարպելով Ասլանիոյ այն նշանաւոր շիշ մը դինին զոր Բիգարտիա ըստած ուղեռութենէն բերեր էր : Կրիմօի նշան ըրաւ որ տ'Արդանեանի բաժակ մը բերէ , և Կրիմօյ ըստ սովորութեան , հրամանը կատարեց :

Այն ատեն տ'Արդանեան պատմեց Աթոսին թէ ինչեր անցան եկեղեցին Բորժոսի և զործակալուհին մէջ, և թէ ինչպէս իրենց ընկերը թերեւ իր զէնն ու զարդը ճարելու ատիկած է :

— Իսկ ես — պատասխանեց Աթոս այս պատմոթեան — ես շատ հանդարտ եմ, իմ թամբիս ծախսը բնառ կիներէն չպիտի առնում :

— Եւ սակայն գեղանի, քաղաքավար, աղնուական լինելովդ, սիրելիդ իմ Աթոս, այդ քու սիրաւէտ կերպարանիդ ոչ իշխանուհի և ոչ թագուհի կարող է գիմանալ :

— Որչափ նորատի է այս տ'Արդանեանը — ըստ Աթօս՝ իր ուսերը վեր ածելով : Եւ Կրիմօխն նշան ըրաւ որ երկրորդ շիշմալ բերէ :

Դոյն պահուն՝ Բլանշէ իր դլուխը կիսբաց դռնէն համեստութեամբ մացուց, և իր տիբոջ խմաց տուաւ որ երկու ձիերը պատրաստ են :

— Ի՞նչ ձիեր — հարցուց Աթոս :

— Երկու հատ ձի, զոր Պարէվիլ փոխ տուաւ ինձ պըտայտի համար, և որոց վրայ շրջան մը պիտի երթամ ընեմ՝ ի Սէն-Ժէրմէն :

— Եւ ի՞նչ երթաս պիտի ընելու ՚ի Սէն-Ժէրմէն — հարցուց վերստին Աթոս :

Այն ատեն տ'Արդանեան պատմեց թէ եկեղեցին որու հանդիպեր էր, և ինչպէս զարեր էր այն կինը՝ ու վերարկու հաղնող և քոնքին վրայ սպի մ'ունեցող աղնուականին հեա՝ որ իր ամենօրեայ մամուռքն էր :

— Ուրեմն անոր սէր ունիս, ինչպէս ատեն մը տիկին Պօնասիէն կ'սիրէիր — ըստ Աթօս՝ իր ուսերն արհամարհանօք բարձրացնելով, որպէս թէ մարդկային տկարութեան վրայ կ'զթար :

— Ե՞ս, ամենելին — զոչեց տ'Արդանեան : — Մինակ հետաքրքիր եմ՝ պարզելու այն զաղտնիքն որուն հետ յարաբերութիւն ունի այս կինը : Զգիտեմ ի՞նչ պատճառաւ կ'երեւակայեմ թէ այս կինը, որչափ ինձ անծանօթ է և ես ալ իրեն անծանօթ, իմ կինացս վրայ ներդորձութիւն մ'ունի :

— Ճշմարիտը, իրաւոնք ունիօ — ըստ Աթոս — չեմ ճանա  
չեր կին մ'որ երբ կորսոի, արժէ որ մարդս զանի փնտոելու  
ծանրութիւնն առնու : Տիկին Պօնասիէօ կորեր է, վայ իր զլսին,  
թող ինքողինքն երեան հանէ :

— Ո՛չ, Աթոս, ո՛չ, կ'սխալիս — ըստ տ'Արդանեան — ես  
իմ հէք Գօնստանսս քան զառաջինն աւելի կ'սիրեմ, ե Եթէ ա-  
նոր դանուած տեղը զիտնայի, աշխարհիս ծայրն անդամ լինէր,  
իսկոյն Ճամբայ պիտի ելնէի զանի իր թշնամեաց ձեռքէն ազա-  
տելու համար . բայց չդիտեմ ուր է, բոլոր իմ հետազոտու-  
թիւններս անարդիւն ելան : Ի՞նչ օդուտ, պէտք է քիչ մը ըս-  
փոփիլ :

— Ուրեմն Միլէտիին հետ սփոփիր, սիրելիդ իմ տ'Արդան-  
եան, բոլոր սրտովս կ'մաղթեմ քեզ այս բանս, եթէ կրնայ քեզ  
բերկըութիւն պատճառել :

— Մտիկ ըրէ, Աթոս — ըստ տ'Արդանեան — փոխանակ այս  
տեղ փակուած նստելու, ինչպէս որ էիր երբեմն բանտը, ձի  
հեծիր և եկոր ինձի հետ Սէն-Ժէրմէն պարտէ :

— Սիրելիդ իմ — պատասխանեց Աթոս — երբ ձի ունենամ  
կ'հեծնեմ, թէ ոչ հետիւն կ'երթամ :

— Լան, ես — պատասխանեց ա'Արդանեան ժպտելով Աթոսի  
մարդատեցութեան վրայ, որ եթէ ուրիշ մ'ունենար՝ անտարակիցս  
պիտի վիրաւորուէր — ես քեզի չափ հպարտ չեմ. դտած ձիուս  
վրայ կ'հեծնեմ, Ուստի, մնաս բարե, սիրելիդ իմ Աթոս :

— Երթաս բարե — ըստ հրացանակիթը՝ նշան ընելով Կրի-  
մօի որ նոր բերած շիշին խիցը բանայ :

Տ'Արդանեան և Բլանշէ ձիերը հեծան և Սէն-Ժէրմէնի Ճամ-  
բան բունեցին :

Ճամբան վրայ՝ տ'Արդանեան շարունակ կ'մտածէր Աթոսի՝ ախ-  
իին Պօնասիէօի նկատմամբ ըսածին վրայ : Թէև տ'Արդանեան  
խիստ զդայուն բնաւորութիւն չունէր, սիրուն փերեզակուհին իւ-  
րական տպաւորութիւն մ'ըրեր էր իր սրտին վրայ . ինչպէս որ  
կ'ըսէր՝ պատրաստ էր զանի փնտոելու համար աշխարհիս ծայրն

Երթալ : Քայց աշխարհ՝ շատ ծայրեր ունի, մի պիայն սա պատճեռ ուաւ որ կլոր է, այնպէս որ ո՛ր կողմը դառնալ չդիտէք :

Սակայն առ այժմ պիտի ջանար հասկնալու թէ ով էր Միւլէախն : Միւլէտին սև վերաբերով մարդուն խօսեր էր, ուրեմն զանի կ'ձանչէր : Արգ՝ տ'Արդանեանի մարդին մէջ՝ սև վերաբերով մարդն էր որ երկրորդ անդամ տիկին Պօնասիէօն առեանգեր էր: Ուրեմն տ'Արդանեան կէս մը սուտ կ'ըսէր, և այս ալ շատ քիչ ստել էր, երբ կ'ըսէր թէ Միւլէտին որոնելու ելնելով նոյն միջոցին Գօնստանծն ալ փնտռելու ելած կ'լինէր :

Այսպէս մտածելով և ատեն ատեն իր ձիուն խթան տալով՝ տ'Արդանեան ձամբայ ըրեր և Սէն-Ժէրմէն հասեր էր: Յորդէն այն տաղաւարը՝ ուր տաս տարի ետքը Լուի ԺԴ. պիտի ծնէր, քերելով անցեր, և նոյն պահուն ամայի փողոց մը մտեր էր, աջ ու ահեակ դիսելով՝ իր զեղանի անկլու հիփն հետքը նշմարելու յուսով, երբ աղոր տան մը զետնայարկին վրայ, որ՝ ժամանակին սովորութեան համեմատ՝ փողոցին վրայ պատռհան մը չտնէր, իրեն ծանօթ դէմք մը տեսաւ: Նոյն դէմքը ծաղկադարդ դարատափի մը վրայ կ'ըրջէր: Բլանչ ամենէն առաջ զայն ձանչեց :

— Է՛ս, պարո՞ն — ըսաւ տ'Արդանեանի դառնալով — միթէ չէք ձանչեր սա դէմքն որ կ'յօրանջէ որիներուն նայելով:

— Ո՛չ — ըսաւ տ'Արդանեան — և սակայն հաւաստի եմ որ այս դէմքն առաջին անգամ՝ չէ որ կ'տեսնեմ:

— Այդ բանին տարակոյս չկայ — ըսաւ Բլանչ — այն խեղճ Լիւպէն՝ Վարդ կոմսին սպասաւորն է, այն՝ որուն չափը տուիք ասկէ ամիս՝ մ'առւաշ Քալէի մէջ, կառավարչին զեղատան ձամբուն վրայ:

— Ա՛հ, քաջ կ'յիշեմ — ըսաւ տ'Արդանեան — և այս ժամուս զանի կ'ձանչեմ: Միթէ կարծես թէ քեզ ձանչէ ինքը,

— Իրաւ որ, պարո՞ն, այնքան սաստիկ վրդոված էր որ չեմ կարծեր թէ իմ յիշատակս որոշակի պահած լինի մոքին մէջ:

— Լաւ ուրեմն, դնա ան սպասաւորին հետ խօսէ — ըսաւ

Թ' Արդանեան — և տեղեկացիր խօսակցելով եթէ իր աէքը մեռամծ է :

Քլանշէ ձիէն վար իջաւ, շխտակ Լիւպէնին կողմը զնաց որ իրօք զանի չճանչեց, և երկու սպասաւորները մտերմօրէն սկսան խօսակցիր, մինչդեռ ա՛Արդանեան երկու ձիերը գուեհի մը մէջ կ'քշէր, և տան մը շրջանն ընելով կաղնիէ ցանկապատի մ'ետեւէն անոնց խօսակցութիւնը մտիկ կ'ընէր :

Ցանկապատին ետին պահ մը դիտելէն ետեկ՝ կառքի մը ձայնը լսեց, և տեսաւ Միլէտիին կառքն որ իր զիմացի կողմն եկա կեցաւ, Տարակոյս չկար որ Միլէտին մէջն էր : Տ' Արդանեան իր ձիուն վզին վրայ երկնցաւ որպէս զի անտես մնալով ամեն բան տեսնէ :

Միլէտի իր դեղձան մաղերով չքնառ դլուը դռնակէն հանեց, և իր սենեկապահուհւոյն հրամաններ տուաւ :

Այս վերջնը՝ որ քսան երկու տարու սիրուն, թեմեաշարժ, վառ վոռն օրիորդ մ'էր, մեծատոն կնկան մը ճշմարիտ նամիշտ մը, քայլոտնէն վար իջաւ, որուն վրայ՝ ժամանակին սովորութեան համաձայն նստեր էր, և գէպ՝ ի զարամափը դիմց՝ ուր ա՛Արդանեան Լիւպէնը տեսեր էր :

Տ' Արդանեան նամիշտին ետեկն նայեցաւ, և անոր գէպ՝ ի զարամափը դիմցը տեսաւ: Բայց դիպուածով ներսէն եկած հրամանի մը հնաղանդելու համար Լիւպէն ներս մներ էր, այնպէս որ Բլանշէ մինակ մնացեր էր, և չորս կողմը կ'զիտէր տեսնելու համար թէ ա՛Արդանեան որ կողմն դացեր էր :

Նամիշտը Բլանշէի մօանցաւ, և կարծելով թէ Լիւպէնն է, անոր փոքրիկ տոմսակ մ'երկնցոց ու ըստ .

— Տիրոջդ համար է :

— Ի՞մ տիրոջս համար — վրայ բերաւ Բլանշէ զարմանալով:

— Այո, և շատ տիպողական է . ուստի շուտով ան :

Այսուհետեւ նամիշտը գէպ՝ ի կառքը վազեց, որ արդէն եկած կողմը դարձոցեր էր զլուխը՝ քայլոտնին վրայ ելաւ նըստաւ և կառքը ճամբայ ելաւ :

Բլանշէ վեր վայր դարձուց տոմսակը , յետոյ կրական հնազանդութեան վարժ՝ դարսաւափէն վար ցատկեց , զոիչէն անցաւ և քսան քայլ հեռու ա'Արդանեանի հանդիպեցաւ , որ ամէն ինչ տեսած լինելով , անոր առաջը կերթար :

— Ահա ձեղի թուղթ մը , պարոն — ըստ Բլանշէ պատսանիին ներկայելով տոմսակը :

— Ինձի՞ համար — ըստ ա'Արդանեան — միթէ սաղյդ ես :

— Զարմանք , ի՞նչպէս ստոյդ չեմ . նաժիշտն ըստ . «Այս թուղթը տիրոջդ համար է » : Եեզնէ զատ տէր չունիմ , ուստի . . . . : Սուրբ վկայ , փոքրիկ սիրուն աղջկուկ մ'էր այն նաժիշտը : Տ'Արդանեան դիրք քացաւ և սա խօսքերը կարգաց .

«Անձ մ'որ չկրնար ըսել թէ ո՛քչափ քու հոգդ կ'տանի , կը փափաքի իմանալ թէ ո՛ք օրը կարող ես անտառակը պտոյտ մը ընել : Վաղը Շան-տիւ-Ցրա-ա'Օր պանդոկը զալով սե ու կարմիր սպասաւոր մը պատսախանիդ պիտի սպասել » :

— Հօ , հօ — ըստ իւրովի ա'Արդանեան — ահաւասիկ տաքուկ գործ մը : Կ'երեխ թէ Միլէտի և ես մի և նոյն անձին առողջութեան համար հոգ կ'տանինք . լան ուրեմն , Բլանշէ , ի՞նչպէս է այն բարի Պ . Վարդը . մեռած չէ ուրեմն :

— Ո՞չ , պարոն , լառ է , որչափ կրնայ լինիլ մարդ մը չորս հարուած ընդունելէն ետեւ . վասն զի , առանց յանդիմանութեան , կ'ըսեմ որ այն սիրելի ազատորդիկն չորս հարուած տուիք , և տակաւին շատ տկար է , զրեթէ բոլոր արիւնը կորուսած լինելուն : Ինչպէս որ ձեզ ըսեր էի , Լիւպէն զիս չհանչեց , և ձեր արկածը մէկ ծայրէն միւս ծայրը սպասմեց :

— Շատ լառ , Բլանշէ , դու սպասաւորներուն թագաւորն ես . Հիմակ ձիոց հեծիր և շուտ կառքին հանինք :

Երկար չըրին . հինգ վայրկենէ՝ կառքը տեսան որ Ճամբռ մը ետեխ կողմը կեցեր էր , պերճօրէն հազուած ձիւոր մը գոնակին առջեւ կ'երեւէր :

Միլէտին և ձիւորն այնքան տաք կ'խօսէին , որ ա'Արդանեան կառքին միւս կողմը կանկ առաւ , և բաց ՚ի սիրուն նաժիշտէն , ոչ ոք դիտեց անոր ներկայութիւնը :

Խօսակցոթիւնն անկլիարէն կ'ընէին , լեզու մ'որ տ'Արդանեանի անծանօթ էր , բայց՝ պատանին՝ Միլէտիին ձայնէն գուշակց որ շատ բարկացած էր , տիկինը վերջին շարժում մ'ընելուն՝ պատանին լիովին ըմբռնեց խօսակցոթեան նիւթը . հովահարով մ'այնպէս ուժզին հարուած մը տուա՛ որ փոքրիկ դորձին փշոր փշոր եղաւ :

Զիաւորը քըքիջ մ'արձակեց՝ որով կարծես թէ Միլէտիին զայրոյթ պատճառեց :

Տ'Արդանեան մտածեց որ միջամտելու ժամ մ'է , միւս դռնակին մօտեցաւ , և յարշանօք զլիարկն հանելով ,

— Տիկին — ըսաւ — կ'ներէք արդեօք որ ձեղ ծառայեմ . կ'երեկի ինձ որ այս ձիաւորը ձեզ բարկացուց : Հըաման մը տուէք , տիկին , և անոր անմարդավարութիւնն անմիջապէս պիտի պատճեմ :

Միլէտի այն ինչ օտարին ձայնը լսելուն՝ դառնալով պատանիին կ'նայէր զարմանօք , և երբ խօսքն աւարտեց ,

— Պարոն — ըսաւ խիստ լւա զաղղիարէն խօսելով — սրտովին քու պաշտպանութեանդ ներքե պիտի մտնէի՛ եթէ ինձի հետ վիճաբանող անձն եղացըս չլինէր :

— Ա՛հ , ուրեմն ներողամիտ եղիք ինձ — ըսաւ տ'Արդանեան : — Տիկին , կրնաք համկնալ որ այդ բանը չղիտէի :

— Ինչո՞ւ մը խօսքին կ'խառնուի այս թեթեսօլիկ մարդը — զոշեց մինչև գռնակին բարձրութիւնը ծոելով այն ձիտորն՝ ուրուն համար Միլէտին ըսեր էր թէ իր ազգականն է — և ինչո՞ւ համար իր համբան շարունակեր :

— Դո՞ւ ես թեթեսօլիկ — ըսաւ տ'Արդանեան՝ ինքն ալ ձիտն վրայ ծոելով և միւս գռնակին կողմէն պատասխանելով — ճամբաս չեմ շարունակեր , վասն զի այս տեղ կանկ առնուլ կ'ախորժիմ :

Զիաւորն անկլիարէն քանի մը խօսք ուղղեց իր քրոջը :

— Ես քեզի զաղղիարէն կ'խօսիմ — ըսաւ տ'Արդանեան . — ուստի շնորհ ըրէ , խնդրեմ , նոյն լեզուով պատասխանելու : Գու

այս տիկնոջ եղբայրն ես եղեր, բայց բարեբաղդօրէն, իմ եղբայրս չես :

Ընթերցողը թերևս կարծէ որ Միլէտին՝ ինչպէս քնապէս ամէն կի՞ն երկչոտ լինելով, այս կռուին սկիզբը պիտի միջամտէր, որպէս զի աւելի շտաբնայ + բայց, ընդ հակառակն, իր կառքին խորը մտաւ, և կառապանին պոռաց պաղութեամբ մը .

—Պանդոկը դարձիր :

Սիրուն նաժիշտը մտայոյզ ակնարկ մը նետեց տ'Արդանեանի, որուն լաւ կերպարանը կարծես թէ իր վրայ ազդեցութիւն ըցեր էր :

Կառքը ճամբայ ելաւ և երկու մարդիկն իրարու դէմ առ դէմ թողոց նիւթական արդելք մ'իրենց մէջ շմալով :

Զիաւորը շարժում մ'ըրաւ կառքին հետևելու . բայց տ'Արդանեան, որուն բարիութիւնն արդէն կ'եռար, աւելի սաստկացեր էր Ճանչելով այն անկլիացին որ, յՆմիէն, իր ձին վաստկեր և քիչ մնաց Աթուէն իր անդամանդն ալ պիտի շահէր, սանձը բռնեց և զանի կեցուց :

—Է՛ս, պարոն — ըսաւ — դու քան զիս թեթևութիկ կ'երեւիս, վասն զի ինձ կ'թուի որ արդէն մոռցար մեր մէջ սկսած փոքրիկ վէճը :

— Հա՛, հա՛ — ըսաւ անկլիացին — դու ես դարձեալ, իմ վարպետս : Ուրեմն դու միշտ խաղ մը խաղալու սահմանուած ես :

— Այո՛, և ասով կ'յիշեմ որ փոխարէն առնուլ պէսք եմ : Պիտի նայինք, սիրելի պարոն, թէ ի՞նչպէս շեփորիկը, նոյնպէս սուրը շարժելու Ճարպիկ ես :

— Կ'նայիս որ սուր չունիմ քովս — ըսաւ անկլիացին — միթէ անդէն մարդու մը դէմ քաջութիւն պիտի ծախես :

— Ես կարծեմ թէ սունդ սուր մ'ունիս — պատասխանեց տ'Արդանեան : — Սակայն դարձեալ, ես երկու հատ ունիմ, եթէ կ'հաճիս, մէկին համար քեզի հետ կ'խաղամ :

— Անօդուտ է — ըսաւ անկլիացին — այդպիսի գործիներ բաւական ունիմ իմ քովս :

- Լաւ ուրեմն , իմ արժանի աղատորդիս — վրայ բերաւ տ' Արդանեան — երկայնազ պյնն ընտրէ և եկուր զիս իրկոն զտիր :
- Խնդրեմ , ո՞ր կ' ուզես զամ :
- Լուքսանպուրկի ետին , չքնաղ թաղ մ' է այս տեսակ իմ առաջարկած պատշյաներուս համար :
- Շամտ լսու , պիտի զամ :
- Ժամը քանիին :
- Վեցին :
- Զմոռնամը ըսելու որ մէկ երկու բարեկամ՝ ոնիս հաւանապէս :
- Բայց երեք հաս ունիմ՝ որ իմ խաղացած գերս խաղալու պատիւ պիտի սեպեն :
- Երեք հաս , սքանչելի է . ինչպէս աղուր կ' հանդիպի — ըստ տ' Արդանեան — ճիշտ իմ հաշուիս կ' զայ :
- Հիմակ ըսէ ինձ թէ դու ովլ ես — հարցուց անկլիացին :
- Ես Պ. տ' Արդանեանն եմ , կասքօն աղատորդի , պահակ զօրական՝ Տէղէսարի զնդին մէջ : Հասդ դու :
- Ես , ըրտ Աինդր եմ , Ծէֆիլտի Պարոն :
- Լաւ , խոնարհ ծառայ եմ , պարոն — ըստ տ' Արդանեան — թէև այնպիսի անուներ ոնիս զոր միտք պահել զժուարին է :
- Եւ իր ձին մարակելով՝ վաղ ընդ վաղ մեկնեցաւ և Բարիզի ճամբան բռնեց :
- Ինչպէս որ այսպիսի պարագաներու մէջ սովոր էր ընելու , տ' Արդանեան շիտակ Աթոսին տունը զնաց :
- Աթոսը զտաւ , որ մեծ բազմոցի մը վրայ երկնցեր էր , և այն տեղ , ինչպէս որ ըսեր էր , կ' սրբամէր որ զէնն ու զարդը դայ զինքը զտնէ :
- Տ' Արդանեան՝ Աթոսին պատմոց անցած դարձածը . սակայն Պ. Վարդի նամակը զալունի պահեց :
- Աթոս զմոցլեցաւ իմանալով որ անկլիացիի մը հետ պիտի իռուէր : Արդէն ըսինք որ այս էր իր երազը :
- Անդի ջապէս մարդ զրկեցին Բորթոսն ու Արամիսը կանչելու ; և անոնց խնդիրը յայտնեցին :

Բորթոս պատենէն սուրը հանեց և սկսաւ պատին դէմ վաշրել ատեն ատեն ընկրկելով և պարողի մը պէս ծռմրկելով։ Արամիս՝ որ անդադար իր քերթուածին կ'աշխատէր, Աթոսին դահնջն մէջ փակուեցաւ և ազալցեց որ երբ սուրը պատենէն հանելու ժամը զայ, այն ատեն ձայն տան իրեն։

Աթոս նշմայրով շեշ մը զինի խնդրեց Կրիմօէն։

Իսկ ա' Երգանեան՝ փոքրիկ յատակաղիծ մը պատրաստեց ինքնին, որուն գործադրութիւնը վերջէն պիտի տեսնենք, և որմէ շնորհալի արկած մը կ'յուսար, ինչպէս որ մերմ ընդ մերմ իր զէմքին վրայ տեսնուած ժպիտներէն նշմարելի էր և իր մոտախոչ կերպարանը կ'յայտնէր։

## ՃԱ.

ԱՆԿԼԻԱՑԻՆԵՐ ԵՒ ԳԱՎԱՒՏԱՅ ԻԵՐ

Երբ որոշեալ ժամը հասաւ՝ չորս հրացանակիրներն իրենց ըստասաւորներուն հետ Լոքսանսոտքի ետին գացին՝ այծերու ձըդուած շրջապատի մը մէջ։ Աթոս այծեպանին ստակ տուաւ որ անկից հեռանայ։ Սպասաւորներն ալ պահակութիւն ընելու սահմանուեցան։

Շատ չանցաւ լուակաց խումբ մը մօտեցաւ, նոյն շրջապատէն ներս մտաւ և հրացանակիրներուն միացաւ. ապա, անդրծովեան սովորութեան համեմատ՝ ամենքն իրարու ներկայացան։

Անկլիացիները իփստ բարձրադիր անձեր էին, իրենց հակառակորդներուն այլանդակ անուններն ոչ միայն զարմացման՝ այլ մտատան ջութեան առիթ տուին իրենց։

— Բայց դարձեալ — ըստ լորտ Անդր, երբ երեք բարե-

կամներ իրենց անուններն ըսին — չղիտենք թէ ով էք, և այդպիսի անուններ կըող մարդոց հետ չղիտի մենամարտինք, այդ անունները հովիւներու անուններ են :

— Արդարեւ, ինչպէս որ կ'ենթադրէք, միլորա, սուտ անուններ են — ըսաւ Աթոս :

— Եւ այս պատճառաւ աւելի մեծ փափաք մ'ոնինք ձեր Ճշմարիտ անուններն իմանալու — պատասխանեց անկլիացին :

— Սակայն մնդի գէմ յանձն առ իր խաղալու՝ առանց մեր անունը դիմանալու — ըսաւ Աթոս — այնպէս որ մեր երկու ձիերը վաստիեցար :

— Իրաւ է, բայց այն ատեն մեր ստակը վտանգի մէջ կը դնէինք, այս անդամ մեր արիւնը վտանգի մէջ պիտի դնենք. մարդիկ ամենուն հետ կ'խաղան, բայց իրենց հաւասարին հետ կ'մենամարտին :

— Իրաւացի է ըսածդ — պատասխանեց Աթոս, և չորս անկլիացիներէն կանչեց այն որուն հետ պիտի կուռէր և իր անունը կամցուկ մ'ըսաւ :

Բորթոս և Արամիս նոյնն ըրին :

— Միթէ այս կ'բաւէ քեզ — ըսաւ Աթոս իր հակառակորդին — և միթէ զիս բաւական մեծ ազնուական կ'զտնես որպէս զի շնորհ ընես ինձի հետ չափուելու :

— Այս, պարոն — ըսաւ անկլիացին խոնարհելով :

— Լաւ որեմն, հիմակ կ'ուզե՞ս որ քեզի բան մ'ըսեմ — վըրայ բերաւ Աթոս պաղութեամբ :

— Ի՞նչ բան — հարցոց անկլիացին :

— Այսինքն, շատ աւելի աղէկ պիտի ընէիր եթէ չստիպէիր զիս անունո յայտնելու :

— Ինչո՞ւ համար :

— Վասն զի կարծեն թէ մեռած եմ, և պատճառներ ունիմ ապրիւս զաղտնի պահելու, ուստի պիտի ստիպուիմ քեզ սպաննելու :

Անկլիացին՝ Աթոսին երեսը նայեցաւ կարծելով թէ կատակ կ'ընէ, բայց Աթոսին ըսածն ամենեին կատակ չէր :

— Պարոններ — ըստաւ Աթոս՝ խօսքն ուղղելով իր ընկերներուն և միանդամայն անոնց հակառակորդներուն — միթէ պատրաստ էք :

— Այս — պատասխանեցին ամենքը միաբերան անկլիացի և զաղղիացի :

Եւ իսկոյն մարը մտնող արեւուն նշոյլներէն ութ հատ սուր շողացին, և պայքարը տիսաւ այնպիսի կատաղութեամբ՝ որ բնական է կրկնակի թշնամի եղող մարդկան :

Աթոս սուրը կ'շարժէր այնպէս հանդարտութեամբ և կանոնով որպէս թէ սուսերամարտի սրահ մը գնուեր :

Քորթոս՝ Շանդիյիի արկածէն վեր՝ իր վրայ ունեցած չափազանց վստահութիւնն ուղղելով՝ նրբամտութեամբ և խոհեմութեամբ լի խաղ մը կ'խաղար :

Արամիս՝ որ իր քերթուածին երրորդ նուազն աւարտելու պէտք ունէր՝ կ'արտորար իրը բազմազբաղ մարդ մը :

Ամենէն առաջ Աթոս իր հակառակորդը սպաննեց. հարուած մը միայն տուեր էր անոր. բայց, ինչպէս որ արդէն իմացուցեր էր, հարուածը մահատու էր, սուրը սրտէն թափ անցաւ :

Երկրորդ՝ Քորթոս՝ իր հակառակորդը խոաին վրայ փոեց. անոր ազդրը ծակեր էր: Այն ատեն՝ անկլիացին՝ առանց աւելի ևս դիմագրելու՝ իր սուրը յանձներ էր, Քորթոս զանի զրկեց և կառքը տարաւ ձգեց :

Արամիս՝ այնքան ուժին մղեց իր հակառակորդը՝ որ յիսուն քայլի չափ նահանջելուն ետեւ՝ ի վերջէ բոլոր ուժով խոյս տալ սկսաւ և աներեւոյթ եղաւ՝ մինչդեռ սպասաւորները ծաղրելով կ'աղաղակէին :

Խսկ տ'Նըրդանեան՝ պարզապէս և մի միայն պաշտպանողական խաղ մը խաղացեր էր, յետոյ՝ երբ զիտեց որ իր սոսիր շատ յոզնած է՝ ուժին հարուած մը տալով անոր սորբը ձեւքէն թուցուց։ Անկլիացին ինքը ինքն անզէն աեսնելով՝ երկու երեք քայլ ընկրկեց. բայց՝ նոյն պահուն՝ իր սորբը սահեցաւ և կըռ նակին վրայ ընկաւ :

Տ'Արդանեան սրացաւ ցատկեց անոր վրայ , և առ ըզ կոկորդին յենլով ,

— Այժմ կրնամ՝ քեզ սպաննել , պարսն — ըստ անկլիացին ին — և իմ իշխանութեանս տակն ես , բայց կեանքդ քեզ կը բաշխեմ քու քրոջդ սիրոյն համար :

Տ'Արդանեան լիակատար ուրախութեան մէջ էր . կանխաւ յարդարած յատակագիծն իրացնելու վրայ էր , և որուն յաջողութիւնն իր դէմքին վրայ մեր արդէն ակնարկած ժպիտները բերին :

Անկլիացին՝ այսպիսի բարելոտ աղստորդի մը հակառակորդ ունենալուն վրայ զմայլելով՝ տ'Արդանեանն իր թերուն մէջ սեղամց , երեք հրացանակիրներուն շատ մը գդուանք ըրաւ , և որովհետեւ թորթութին հակառակորդն արդէն կառքին մէջ նատեր և Արամիսինը կծիկը դրեր էր , մինակ մեռնողին վրայ հոգ տարին :

Որովհետեւ Թորթոս և Արամիս անոր հաղուստները հանեցին այն յուսով որ իր վէրքը կաբեվէր չէ , խոշոր քսակ մ'ընկառ դօսիէն : Տ'Արդանեան քսակն առաւ և լորտ Նվազրի ներկայացուց :

— Եւ ինչ կ'ուզես որ ընեմ այդ քսակը — ըստ անկլիացին :

— Իր ընտանիքին պիտի գարձնես — ըստ տ'Արդանեան :

— Եւ ո՞չչափ հոգ կ'ընէ այդ չնչին զումարին համար ընտանիքը . տասն հինգ հազար ոսկի եկամուտ կ'ժառանդէ . այդ քսակը սպասառոներուդ համար պահէ :

Տ'Արդանեան քսակը դրաբանը դրաւ :

— Խսկ հիմակ , իմ գեռասի բարեկամն , վասն զի յուսամթէ կ'ներես ինձ այս անունը քեզի տալու — ըստ լորտ Այնոքը — այս իրկուն խսկ , եթէ կամիս , քրոջս՝ Միլէտի Քլարիկին պիտի ներկայեմ քեզ . վասն զի կ'ուզեմ որ նա ևս քեզ պաշտպանէ , և որովհետեւ պալատին մէջ՝ ի նպաստ քեզ խօսք մ'ըսելուն՝ քեզի օդատակար կընայ լինիլ :

Տ'Արդանեան խնդութենէն կարմրեցաւ , և հաւանութեան նընշան խոնարհութիւն մ'ըրաւ :

\* Նոյն պահուն՝ Աթոս ա՛Արդանեանի մօտեցեր էր : — Ի՞նչ պիտի ընես այդ քսակը — ըսաւ անոր մեղմիկ ականք չէ՞ն վար : — Միտքս քեզի յանձնել էր զայն, սիրելիդ իմ Աթոս : — Ինձի՞ , և ի՞նչ պատճառաւ : — Կ'հարցնե՞ս , հակառակորդ սպաննեցիր . ասի կապուաը կողագուան է : — Ե՛ս , թշնամեց մ'ապրուսաը ժառանցե՛մ — ըսաւ Աթոս — որու տեղ կ'գնես զիս : — Այս է սովորութիւնը պատերազմի մէջ — ըսաւ ա՛Արդանեան — և ի՞նչ պատճառաւ մնամարտութեան մէջ նոյն սովորութեան չպիտի հետեւինք : — Պատերազմի դաշտին մէջ անգամ — ըսաւ Աթոս — երբեք այդպիսի բան մ՛ըրած չեմ : Քորթոս ուսերը վերոց : Արամիս՝ շրթերու շարժումով մ՛ըմոխն հաւան գտնուեցաւ : — Աւրեմն — ըսաւ ա՛Արդանեան — այս ստուկը սպասառորներուն տանք , ինչպէս որ լորտ Վինդր ըսաւ : — Այս — ըսաւ Աթոս — այս քսակը չէ թէ մեր այլ անկենացոց սպասառորներուն տանք : Աթոս քսակն առաւ և կառապանին ձեռքին մէջ նետեց : — Ահա քեզի և ընկերներուդ համար է : Հիմնովին դրամէ զուրկ անձի մը կողմէն այս մնծասրտութիւնը նոյն իսկ Քորթոսին զարմանք պատճառեց , և զաղղիական այս վեհանձնութիւնը , զոր լորտ Վինդր և իր բարեկամն որիշներուն ալ պատմցին , նպաստառոր տպաւորութիւն մ՛ըրաւ ամէն տեղ , բաց ՚ի Պ. Կրիմօի , Մուսքդօնի , Բլանշէի և Պաղէնի վրայ : Լորտ աը Վինդր ա՛Արդանեանէ բաժնուելով իր քրոջը հասցէն անոր տուաւ . Բլանշալ կ'բնակէր թիւ ն , որ այն առեն նորաձեւ թաղ մ՛էր : Սակայն խօսք կ'տար զալ զինքն առնուլ ներկայացնելու համար : Տ'Արդանեան ժամադիր եղաւ անոր Աթոսին տունը՝ ժամն ութիւն :

Մեր Ասաքօնին զլուխն այս ներկայացումը սաստիկ կ'զբաղեացնէր : Այլիշեր թէ ինչ տարօրինակ կերպով այն էակը մինչև զայն կէտ իր ճակատա՛րին հետ խառնուեր էր : Սա համոզումն ունէր թէ կարտինալին մէկ արարածն էր այն , և սակայն անյաղթելի կերպով դէպ անոր կ'հակէր այնպիսի զդացմամբ զոր մեկնել զիւրին չէ : Եր միակ երկիրը սա էր որ Միլէտին չճանչէ զինքն իրրե Մէտոնի և Տուվրի մարդը : Այն առեն տիկինը գիտէր որ ու . ար Դրէվիլի մէկ բարեկամն էր ինքը , և հետեապէս հոգւով մարմնով թագաւորին մարդն էր , որով իր առաւելութեանց մէկ մասը կ'կորուէր , վասն զի Միլէտին ճանչցուերով ինչպէս ինքը զանի կ'ճանչէր , անոր հետ հաւասար խաղմը կ'խաղար : Խոկ Միլէտիին և Վարդ կամին մէջ սկսած դաւանն նկատմամբ՝ մեր անձնապատճեն պատճենին հազիւ ուրեմն հոգ կ'առանէր , թէ և մարգիզը դեռահանակ , զեղեցիկ , հարուստ էր և կարտինալին պաշտպանութիւնը կ'վայելէր : Սակայն քիչ բան չէ քսան տարու և Դարսդ քաղաքը ծնած լինելը :

Տ'Արդանեան ամենէն առաջ տուն զնաց և շողշողուն կերպով հաղուեցաւ շքուեցաւ , ապա Աթոսին բնակարանը զնաց , և իր սովորութեան համեմատ՝ ամէն բան պատմեց : Աթոս անոր խորհուրդները մտիկ ըրաւ , յետոյ զլուխը ցնցեց , և տեսակ մը դառնութեամբ ապսորեց անոր որ խոհեմութիւնը ձեռքէ չձգէ :

— Ի՞նչ — ըստ անոր — այն ինչ բարեսփրատ , չքնաղ , կատարեալ կին մը կորուսիր , ինչպէս որ կ'ըսէիր , և աչա արդէն ուրիշի մ'եաւէն կ'վաղե՛ս :

Տ'Արդանեան զցաց այս յանդիմանութեան Ճշմարտութիւնը :

— Տիկին Պօնասիկէօն սրտովին կ'սիրէի , մինչդեռ Միլէտին զլսովս կ'սիրեմ — ըստ նա — անոր տունն երթալովս՝ նպատակս է իմանող թէ պարտին մէջ ինչ դեր կ'խաղար :

— Ի՞նչ դեր կ'խաղայ , Ճշմարիաը , քու ըսածներէդ դժուարին չէ դուշակել , անսարակոյս կարտինալին մէկ զործակալը պիտի լինի , որ քեզի դարան մը կ'լարէ , որուն մէջ զլուխոդ պիտի ձգես անշուշտ :

— Կրող, իմ սիրելի Աթոս, կ'երեի ինձ որ ամէն բան ուն  
ակնոցով կ'դիտես :

— Սիրելի իմ, կանանց վատահոթիւն չոնիմ, ինչ ընեմ.  
արդէն վարձքս զտայ, մանաւանդ խարտէշ կանանց կողմէ : Միւ-  
լէտի խարտէշ է, ըսիր ինձ կարծեմ :

— Իր մազերը խիստ աղոր գեղձանիկ գոյն ունին :

— Ա՛հ, իմ խեղճ ա՛ւրդանեան — ըստ Աթոս :

— Մաիկ ըրէ, միտքս տեղեկութիւններ ստանալ է, ապա,  
իմ փափաքած տեղեկութիւններս առնըն ետև՝ պիտի հեռանամ :

— Տեղեկացիր — ըստ սառնութեամբ Աթոս :

Լորտ Վինդր որոշեալ ժամուն հաստա, բայց Աթոս ժամանա-  
կին իմանալով՝ միւս սենեակը մտնելուն, ա՛ւրդանեանը մինակ  
զտաւ, և ըստ որում, ժամը զբեթէ ութ էր, սկասանին առաւ  
տարաւ :

Վարը վայելու կառք մը կ'սպասէր, և որովհետեւ երկու ըն-  
տիր ձիերով լծուեր էր, քանի մը վայրկենի մէջ Քլաս- Բուա-  
յալ հասան :

Միլէտի Քլարիկ ծանրութեամբ ընդունեց ա՛ւրդանեանը : Իր  
ապարանը խիստ շքեղ կերպով զարդարուած էր, և թէ և շատ  
անկի իացներ՝ պատերազմի պատճառաւ վրնտուելով՝ ֆրանսային  
կ'հեռանային, կամ հեռանալու մօտ էին, Միլէտին իր տան  
համար նոր նոր ծախսեր ըրեր էր. ասկից կ'հետեւ որ անկ-  
լիացիքն արտաքսող ընդհանուր անօրէնութիւնն իրեն չէր վե-  
րաբերէր :

— Ահա այս է — ըստ Լորտ Վինդր՝ ա՛ւրդանեանը քըոջը  
ներկայելով — այս է այն պատանին՝ որուն ձեռքն է ը իմ կեանք,  
և բնաւ չողեց իր յաղթութիւնն 'ի չար դործածել, թէ և կը կ-  
նակի թշնամի է ինք, վասն զի ես զանի նախատեցի, և ես անկ-  
լիացի եմ: Ուստի, տիկին, անոր շնորհակալ եղիր, եթէ զիս  
կ'սիրես :

Միլէտի ունքը թեթե մը պոստեց. այն ինչ նշմարելի մոայլ  
մը ձակտէն անցաւ, և շրթերուն վրայ այնպիսի այլանդակ ժը-

պիտ մ'երեցաւ, որ պատանին, որ այս եռակի դոյները տեսաւ, կարծես թէ սաբառու մը զգաց :

Եղբայրը ոչ ինչ չդիտեց. դարձեր էր Միլէտի սիրական կապիճն հետ խաղալու, որ իր թիկնոցէն քաշեր էր :

— Բարի եկար, պարօն — ըստ Միլէտի այնպիսի ձայնով մ'որուն տարօրէն անուշութիւնը հակապատկեր մը կ'ընծայէր ա'Արդանեանի անոր երեսին վրայ դիտած սրտնեղութեան նշաններուն հետ — այսօր իմ երախտաղիտութեանս յաւիտենական իրաւունքներ ստացար :

Այն ատեն անկլիացին դարձաւ և առանց մանր պարագայ մը զանց ընելու՝ մենամարտութիւնը պատմեց : Միլէտի ու շադիր մը տիկ ըստ, սակայն դիւրին է տեսնել որ, թէ և ձիղ կ'ընէր իր տարսութիւնները սրօղելու, այս պատմութիւնն իրեն բնաւ ախորժելի չէր : Արիւնը զլիօին կ'զարնէր և իր փոքրիկ ոտքը շրջազդեստին ներքեւ անհամբերութեամբ կ'շարժէր :

Լորտ Վինդը բան մը չտեսաւ : Յետայ խօսքն աւարտելէն ետեւ սեղանի մը մօտեցաւ, ուր ափսէով գրուեր էր Սպանիոյ շիշ մը դինի և բաժակներ : Երկու բաժակ լցուց և նշմայրով մը ա'Արդանեանը հրասիրեց որ խմէ :

Տ'Արդանեան դիտէր որ անկլիացի մը շատ կ'զժարի եթէ առաջարկած բաժակը մէկը մէրժէ : Ուստի սեղանին մօտեցաւ և երկրորդ բաժակն առաւ : Սակայն Միլէտին աչքէ չէր հետացուցեր, և հայլիին մէջ դիտեց նա իր երեսին կրած փոփոխութիւնը : Հիմակ որ Միլէտին կարծէր թէ ոչ ոք կ'աեսնէր զինքը, զղացում մ'որ վայրագութեան կ'նմանէր, իր ոք մքը կ'վառէր : Իր թաշկինակը կ'խածնէր ակրաներովը :

Նոյն միջոցին այն փոքրիկ սիրուն նամիշտը՝ զոր ա'Արդանեան արդէն տեսներ էր, ներս մտաւ, անկլիարէն քանի մը խօսք ըստ լորտ Վինդը, որ խելոյն ա'Արդանեանէն ներում խնդրեց երթալու ստիստղական զործի մը համար, և պատոիրեց իր քրոջ որ իրեն համար ներողութիւն խնդրէ :

Տ'Արդանեան և լորտ Վինդը մտերմօրէն իրարու ձեռք սեղ-

մեցին և պատանին նորէն Միլէտիին մօտ եկաւ : Միլէտիին դէմքը հիանալի արագութեամբ՝ իր շնորհալի երեսյթն առեր էր, մինակ թաշկինակին վրայ քանի մը ցանցառ կարմիր արաւներէն կ'իմացուէր որ իր շրթերն արինելու չափ խածեր էր :

Իր շրթերը չքնաղ էին, կարծես թէ բուստ էին :

Խօսակցութիւնը զուարթուն դարձուած մ'առաւ : Միլէտին ինքզինքը բոլորովին դտած կ'երեւէր : Պատմեց նա որ լորտ Ալինդը իր եղբայրը չէր այլ իր տազըրը, թէ անոր պղպտիկ եղբօրը հետ կարգուէր էր, որմէ որբեարի մնացեր էր մէկ զաւակով : Այս զաւակը լորտ Ալինդը միակ ժառանգորդը պիտի լինի, եթէ լորտ Ալինդը բնաւ չկարգուի : Այս ամէն բանէն տ'Արդանեան քող մը կ'նշմարէր որ բան մը կ'ծածկէր, բայց տակալին այս քողը չէր տեսներ :

Սակայն կէս ժաման խօսակցութենէ ետքը՝ տ'Արդանեան համոզուեր էր որ Միլէտին իր հայրենակիցն էր . այնպէս մաքուր և վայելու կերպով դաղղիարէն կ'խօսէր, որ այս մասին բնաւ կասկածելու տեղի չտնէր :

Տ'Արդանեան՝ իր անձնուիրութեան 'ի նշան՝ շատ մը սիրային և քծնի խօսքեր ըրաւ . Միլէտին ժամանեցաւ այն ամէն անհամ և անլի խօսքերուն որ մեր կասքօնին բերնէն կ'ելնէին : Մեկնելու ժամը հասաւ, տ'Արդանեան հրաժեշտ տուաւ Միլէտիին և սրահէն դուրս ելաւ մարդոց մէջ երջանկալցոյնը :

Սանդղին վրայ՝ տ'Արդանեան սիրուն նաժիշտին հանդիպեցաւ, որ անցնելու ատեն մեղմիկ մ'անոր քսուելուն՝ կաս կարմիր եղաւ, ներում խնդրեց անոր գպելուն այնպէս անոյշ ձայնով որ ներումն իսկոյն անոր շնորհուեցաւ :

Տ'Արդանեան միւս օրը նորէն այցի եկաւ և առջի օրուանէ աւելի սիրով ընդունուեցաւ : Լորտ Ալինդը տունը չէր, և Միլէտին նոյն երեկոյեան ընդունելութեան պատին ըրաւ : Այնպէս մը ցցուց թէ անոր համար մեծ համակրութիւն մ'ունի, հարցուց թէ ուսաբ է, ոյք էին իր բարեկամները և եթէ երբեմն չէր մը տածած որ . կարտինալին ծառայութեան մտնել :

Տ'Արդանեան , ինչպէս որ ընթերցողը զիտէ . իր քսմնամնոյ հօսակին նայելով շտո խոհեմ էր , յիշեց Միլէտին վրայ ու նեցած կասկածները . շատ զովեց Նորին բարձրութիւնը , ըստ անոր որ կարափնալին ստահակաց զնդին մէջ անտարակոյս սիտի մտնէր եթէ երրեք Պ . առ Քավուա ճանչած լինէր , փոխանակ Պ . առ Դրէ վիլը ճանչելու :

Միլէտի խօսակցութիւնը փոխեց առանց որ և է կըկցանքի , և խիստ թուլակի կերպով Հ . ըցոց ա՛Արդանեանի եթէ երրեք Անկը լիս չէ գացած :

Տ'Արդանեան պատասխան տուաւ որ Պ . առ Դրէ վիլ զրկեր էր զինքը պակաս երիվալներու . տեղը լիցնելու համար սակարակել , և թէ իրրե առզին չորս հատ հետք բերեր էր :

Միլէտի՝ խօսակցութեան ժամանակ երկու երեք անգամ շըրա թերը պնդից , այնպիսի Կասքօնի մը հետ էր դործն որ վարապետորդի մէր :

Առջի օրուան ժամուն՝ ա՛Արդանեան ձգեց զնաց : “Նրբազառ թին մէջ նորէն սիրուն Քէղիին հանդիսեցաւ , այս էր նամիշտին անունը : Նամիշտը բարեսիրութեան երեսով անոր նայեցաւ որ անկեղծ էր : Բայց ա՛Արդանեան այնչափ իր սիրուհոյն կը մտածէր , որ մինակ անոր վերաբերող բաները կ'զիտէր :

Տ'Արդանեան Միլէտիին տունն եկաւ երկրորդ և երրորդ օրը , և ամէն իրկուն Միլէտի ևս քան զես նորհալի ընդունելութիւն մը կ'ընէր անոր :

Ամէն իրկուն՝ թէ նախասենեկին , թէ նրբազառին , թէ սանդզկին վրայ սիրուն նամիշտին կ'հանդիսէր :

Բայց , ինչպէս որ ըսինք , ա՛Արդանեան բնաւ ուշադրութիւն չէր ըներ այն խեղճ Քէղիին յամառութեան :

## ԺԲ

ԳՈՐԾՎԱԿԱՆԻ ՄՔ ՀԱՇՔ

Սակայն սոյն մենամարտութիւնը՝ որուն մէջ բորթոս այնպիսի փայլուն դեր մը խազացեր էր, իր գործակալուհին մաքեն չէր հանած : Հետեւեալ օրը՝ ժամը մէկին մօտ՝ Մուսքդօնին վերջին անդամ մ'ալ վրան դլուիր մաքրել առաւ և նրա փողոց գիշեց այնպիսի քայլ առնլով՝ որմէ կ'իմացուեր որ կրկնակի բաղշաւոր էր :

Եր սիրտը կ'զարներ, բայց ո՞ւրդանեանի սրտին պէս՝ նոր և անհամբեր սիրով չէր բախեր : Աչ, աւելի նիւթական շահ մ'իր արինն եփ կ'հաներ, ՚ի վերջէ այն խորհրդաւոր սեմն ներս պիտի մաներ, այն անծանօթ սահղղէն վեր պիտի ելներ որմէ մի առ մի ելեր էին վարպետ Գօքնարի սկոտները :

Իրօք կաշիէ սնտոկ մը պիտի տեմնէր՝ որուն նկարը քսան անզամ երազը տեսեր էր. երկարաձև ու խորոնի սնտոկ մը՝ կրպակած, ժանդապած, զետնին զամուած. սնտոկ մ'որուն խօսքը սաէսպ լսեր էր, և զոր զործակալուհոյն փոքր ինչ չոր բայց և այնպէս վայելու ձեռները պիտի բանային իր սքանչացեալ աշաց առ ջեւ :

Ասկէ զայտ երկրիս վրայ թափառող մարդը, առանց ապրուստի մարդը, առանց ընտանիքի մարդը, պանդոկներու, դինետուններու, կապէլներու սովորած մարդը, սաէսպ պատահական հաստ պատահաններով դոհ լինելու ստիպեալ փափկասուն որկրամուը՝ տան կերակուններ պիտի ճաշակէր, հանդիսա տուն տեղ պիտի վայելէր, և յօժարակամ պիտի ընդունէր այն մանր մունք

ինամքը, որ այնչափ տելի ախորժելի կ'երեին, որչափ որ մարդ դաժան է, ինչպէս կ'ըսեն հինորեայ զինորներ :

Ամէն օր՝ իբրև քեռորդի՝ զալ պատուական սեղան մը նստիլ, ծեր զործակալին գեղնուկ և խորշոմած ճակատը պարզել, փոքր ինչ զործակալին զրագիրները փետել, անոնց ֆարանի (bassette) էտուտուեի passee-dix և լանդանեի նուրբ և զործնական ձեռքը սորվեցնելով՝ և իբրև վարձք անոնցմէ շահելով՝ մէկ ժամուան տալիք դասուն փոխարէն՝ իրենց միամնենոյ խնայողութիւնները, այս ամէն բաները Բորթոսին սիրալ կ'բանային :

Իրառ է որ հրացանակիրն ատկից անկից զործակալներուն վըս բայ պաշտօած բանբանանքը կ'ըսէր, որ՝ իրենց մահուանէ ետքն ալ յարատեցին, որպէս թէ կծծի, կցիր և ծումապահ են, բայց գարձեալ, քանի մը խնայողութեան ժամերէ զատ՝ զոր Բորթոս ինխատ դժպհի համարեր էր, զործակալուհին շատ առատասիրտ կ'զտնէր, թէե զործակալուհի, և հետևապէս այս անդամ ևս յուսաց որ անոր տունը վայելուչ կերպով զարդարուած ոլիտի գտնէ :

Սակայն դրան առջե՝ հրացանակիրը քիչ մը կասկածեցաւ, անոր տեսքն աչաց հրապուրելի չէր. ժահահու և մթին նրբուղի մը կար, հազլու թէ սանդուղը ձողերէ թափանցող լուսէ մը՝ որ մօտակայ բակէ մը կ'զար, կ'լուսաւորէր, առաջին դստիկոնին վրայ ցած դուռ մը կար մնձ զամերով զրուագուած, Կրան՝ Շալլէի դլիսաւոր դրան մը պէս :

Բորթոս մատով դուռը հրեց. բարձր և գունատ գիւանադպիր մը, անկառու մազերու թաւուտի մը տակ ծածկուած՝ եկաւ գուռը բացաւ. և բարեեց այնպիսի մարդու մը կերպարանկով որ ըստ ախպեալ է յարկել ուրիշին վրայ բարձր հասակ որ ոյժ կ'յայտնէ, զինորական հագուստ՝ որ վիճակ կ'յայտնէ, և կարմրուն երես՝ որ լաւ ապրելու սովորութիւն կ'յայտնէ :

Այնպէս փոքրագոյն զրագիր մը կար առաջնոյն ետել, ուրիշ մեծագոյն մ'երկրորդին ետեւ, տասն երկու տարեկան դպրիկ մը երրորդին ետեւ :

Ընդ ամէնն երեք ու կէս դրագիր , և այս բանս նոյն ժամանակին համար կ'յայտնէր թէ խիստ բանուկ դիւան մ'էր :

Թէ կ' հրացանակիրը ժամը մէկին պիտի զար , դործակալուհին կէս օրէն վեր ակնդէտ կ'նայէր , և իր ոիրահարին սրտին՝ և թերես ստամբքին վրայ վստահելով կ'յուսար որ որոշեալ ժամէն յառաջ կ'հրամէ :

Ուստի տիկին Գօքնար սենեկին դռնէն եկառ Ճիշտ այն միջոցին որ իր հիւրը սանդղին գռնէն կ'զար , և այս արժանի կրնկան երևոյթը զինքը մեծ շփոթոյթենէ մ'ազատեց : Գրաղիրները հետազօտ աչք ունէին , և հրացանակիրն ալ այս ելեէջ շաբքին վրայ ինչ մտածելիքը շդիտնալով ափ 'ի բերան կ'մնար :

— Եմ քեռորդիս է — գոչեց դործակալուհին — ներս մտիր , մամիր , Պորթոս :

Բորթոս անունն այլանդակ երևցաւ . զրաղիրներուն և սկսան ծիծաղել , բայց Բորթոս զլուխը դարձնելուն՝ ամնքն իրենց նախկին ծանրութիւնն առին :

Գործակալ նօտարին դահլիճը զացին զրաղիրներուն գտնուած նախասենեկէն և զիւանէն , ուր պարտաւոր էին մնալ : Այս գիւանատունը տեսակ մը սև սրահ մ'էր թղթերով զարդարուած : Գիւանէն ելնելով խոհանոցը աջ կողմը թողուցին և ընդունելութեան սրահը մտան :

Այս ամէն սենեակներն որ իրարու հետ հազորդակցութիւն ունէին , Բորթոսին լաւ խորհուրդներ չներշնչեցին : Այն ամէն բաց գռներէն խօսողին ձայնը հեռուէն պիտի լսուէր , ասկէ զատ՝ արագ և հետազնին աչք մը նետեր էր անցնելու ատեն խոհանոցին վրայ , և ինքնին կ'խոստովանէր յամօթ դործակալուհին և ցաւ 'ի սիրտ , թէ չտեսեր էր այն կրակը , այն կենդանութիւնը , այն շարժումը որ լաւ ճաշի մ'ատեն՝ սովորաբար որկրամնլութեան այն սրբավայրը կ'տիրեն :

Գործակալ նօտարն անշուշտ այս այցելութեան կանխառ տեղեակ պիտի լինէր , վասն զի Բորթոսը տեսնելուն՝ զարմանք մը չշայանեց , և Բորթոս դէպ անոր գնաց անվրդով դէմքով և մարդավարութեամբ բարե տուաւ :

— Կ'երեի թէ ազդակից ենք, ու, Բորթոս — ըստ զործակալն իր եղեղնեայ թիկնաթուին վրայ թևերուն չափովս վեր եւ նելով :

«Ծերունին՝ մեծ ու սե վերաբկուով մը վառթթուած՝ որուն մէջ իր վտիս մարմինը կ'կորսուէր, կանաչազոյն եր և շոր, իր փոքրիկ գորշ աչերը կարիկհանի պէս կ'փայլէին և կարծես թէ իր ծամածուռ բերնին հետ՝ դէմքին ամենէն կենդանի մասն էին : Դժբաղզարար իր սրունքն այլ ևս չէին կարող ոսկրուտ մարմոյն օղնել. հինգ վեց ամսէ՝ վեր՝ արժանի զործակալն այս կը քման ենթակայ լինելով՝ այնուհետեւ քիչ քիչ իր կնկան դերին դարձեր էր :

Ռւատի համակերպելով միայն ծերունին իբր ազդակից ընդունեց Բորթոսը : Եթէ վարպետ Գօքնարի ուալքն ու ձեռքը բռնէր, ու, Բորթոսի հետ որ և է արենակցութիւն սղիսի մերժէր :

— Այո, պարոն, մենք ազդակից ենք — ըստ Բորթոս առանց այլայլելու, թէ և արգէն բնաւ միտքէն չեր անցուցած որ խանդաղին սղիսի ընդունուի տանուտէրէն :

— Կարծեմ թէ կանանց կողմէն — ըստ նենդապէս զործակալը :

Բորթոս այս կատակը չըմբռնեց և տեսակ մը սպարզմատ թիւն համարելով սրտովին խնդաց : Տիկին Գօքնար՝ որ դիտէր թէ սպարզմիտ զործակալն իր տեսակին մէջ խիստ հաղուադիւտ մարդմէր, քիչ մը ժպակեցաւ և շատ կարմրեցաւ :

Վարպետ Գօքնար՝ Բորթոսը դալուն՝ մոայցոյզ կերպով նայեր էր իր կաղնիկ՝ զրասեղանին դիմացը զտնուող մեծ պահարանի մը վրայ : Բորթոս հասկցաւ որ այն պահարանը, թէ և երազին մէջ տեսածին ձեր չունէր, երանելի մատուկը սղիսի լինէր, և ուրախ եղաւ որ իրականութիւնն իր երազէն վեց ուսք աւելի բարձրութիւն ունէր :

Վարպետ Գօքնար՝ իր ազդարանական խողարկութիւններն աւելի առաջ չքշեց, այլ իր անհանդիսա ակնարկը պահարանէն Բորթոսին վրայ ածելով՝ բաւական համարեց ըսելու :

— Մեր սպարոն քեռորդին՝ պատերազմի ղնալէն առաջ՝ շնորհ պիտի ընէ անշուշտ անդամ՝ մը մեղի հետ ճաշելու, այնպէս չէ։ տիկին Գօքնար :

Այս անդամ՝ Բորթոսի կուրծքին վրայ իջաւ հարուածն ու ինքը զայն զդաց, կ'երեի թէ տիկին Գօքնարի ևս զդալի եկաւ, վասն զի յարեց նա .

— Իմ քեռորդիս նորէն տունը ոտք չպիտի կոխէ եթէ անոր լաւ ընդունելու թիւն մը չընենք, բայց, եթէ լաւ ընդունինք, գարձեալ շատ քիչ ժամանակ ունի Բարիղ մնալու, չետևապէս մեղ տեմնելու, տստի հարկ է խնդրել որ սրարապ դուած ժամանակները՝ մեղի զայ անցըն։՝ մինչեւ ճամբայ ելնելը։

— Ո՛չ, իմ սրո նքս, իմ ցաւազար սրունքս, ուր եք — մըր մնաց Գօքնար, և փորձ փորձեց ժպաելու :

Տան աիրուհւոյն այս պատեհ օգնութիւնը՝ այն միջոցին որ Բորթոսի որովայնապաշտ յոյսերն ՚ի գերեւ պիտի ելնէին, հրացանակրին երախտագիտութիւնը զրդուեց առ իր տիրուհին :

Քիչ ստենէն ճաշի ժամը հասաւ : Սեղանատունն անցան որ ընդարձակ սկամոյր սրահ մ'էր խոհանոցին դիմացի կողմը։

Գրադիրներն՝ որ ըստ երետ.թիւն՝ տան մէջ անսովոր տնոյշ հստեր առեր էին, զի՞ւորական ճշգութիւն մը կ'արահէ ին, և իրենց աթոռակիները բռներ կեցեր էին որպէս զի խոկոյն սեղան նուին։ Արդէն սոսկալի տենչանօք իրենց ծնօաները կ'շարժէին։

— Թշուառականներ — մտածեց Բորթոս երեք սովալլուկ զրադիրներուն վրայ ակնարկ մը նետելով՝ վասն զի դպրիկը՝ ինչպէս յայտնի է, դատաւորական սեղանին պատոյն մասնակից չէր կընար լինիլ — թշուառականներ, եթէ ևս քեռորդւոյս տեղը լինէի, այսպիսի որկրամոլներ չէի պահէր։ Կարծես թէ վեց շարաթէ վեր անօթի կեցող նոտարեկեալներ են։

Պարպետ Գօքնար ներս մտաւ, զլորուն թիկնաթուին վրայ նատած, զըր աիկին Գօքնար ընդ առաջ կ'քշէր, և Բորթոս ալ անոր աջակից եղաւ որպէս զի էրիկը մինչեւ սեղանը զլորեն։

Այն ինչ ներս մտաւ որ վարպետ Գօքնար ևս՝ իր զբուդիրներուն պէս քիմն ու ծնօաները շարժեց։

— Հօ, հօ — ըստ նա — ահաւասիկ հոտանուշ ապուր մը :  
— Այս ապուրն ի՞նչ տարօրինակ հոտ կրնայ ունենալ — ըստ Բորթոս դեղնուկ, առատ, այլ անհոտ ապուր մը տեսնելով, և որուն վրայ քանի մը ցանցառ հացի կեղևներ կ'լողային իբրև կղզեակներ արշիպեղադոսի մը մէջ :

Տիկին Գօքնար ժպանցաւ, և նշմայր մ'ընելուն՝ ամենքը սեղան նստան եռանդադին :

Ամենէն առաջ վարպետ Գօքնարի մեծարեցին, յետոյ Բորթոսին, վերջը տիկին Գօքնար իր սկաւառակը լեցուց և անհամբեր գրադիրներուն բաժնեց առանց արդանակի կեղևներ :

Նոյն պահուն՝ սեղանատան դուռը ճունչելով ինքնին բացուեցաւ, և Բորթոս կիսրաց փեղկերուն մէջն փոքրիկ գպրիկը տեսաւ, որ կոչոնքին մասնակից լինիլ չկարենալով, իր չոր հացը կ'ուտէր խոհանոցին և սեղանատան կերակուրի կրկնակի հոտերուն մէջ :

Ապուրէն ետե՛ սպասուհին խաշած հաւ մը բերաւ, ճոխութիւն մ'որ այնպէս բանալ տուաւ կոչոնքաններու արտեանունքն որ կարծես թէ պիտի պատուին :

— Կ'նայիմ որ ընտանիքդ կ'սիրես, տիկին Գօքնար — ըստ ծերունին զրեթէ՛ եղերական ժպիտով մը — արդարեւ քեռորդւց ընտիր մեծարանք մը կ'ընես :

Խեղձ հաւը նիշար էր և վրան այնպիսի խոշոր կաշի մ'ունէր որ ոսկրներն որպան ճղնէին՝ չէին կարող զայն ծակել, անտարակոյս երկար բարակ փնտուած պիտի լինէին այն հաւն օրպէս զի զայն իր թառին վրայ գտնեն, որ թերես զառամութենէ մեռնելու համար քաշուեր էր :

— Կրո՞լ — ըստ մասովի Բորթոս — այս ի՞նչ տխուր բան է, ծերութիւնը կ'յարդեմ, սակայն երբ տապկած կամ խաշած է, բանի տեղ չեմ գներ :

Եւ Բորթոս չորս դին նայեցաւ դիտելու համար թէ արգեօք ուրիշներն ալ իրեն համամիտ էին, սակայն ընդ հակառակն՝ հրաբորքը աչեր տեսաւ որ արդէն այս վսիմ հաւը կ'կլէին, թէ և իր արհամարհանաց առարկան եղեր էր :

Տիկին Գօքնար պնակն իրեն առջև քաշեց, ճարպիկութեամբ հաւին երկու մեծ ու սև թաթերը զատեց և իր էրկան սկաւառակին մէջ դրաւ. վիզը կտրեց և զլիսին հետ մէկ դի պահեց իրեն համար, թեւը Բորթոսին համար երկնցուց, և ապա սպասուհայոյն յանձնեց կենդանին, որ գրեթէ ամբողջ ետ գարձաւ, և այնիքան շուտ աներեսոյթ եղեր էր որ հրացանակիրը հաղիւ ժամանակ ունեցեր էր դիակելու թէ՝ զրագիրներն իրենց յոյսն 'ի գերեւ ելած տեսնելով՝ ինչ այլակերպ շարժումներ պիտի ցոյց տային անոնց, իւրաքանչիւրն իր բնաւորութեան և բարուց համեմատ:

Հաւին տեղ՝ պնակ մը բակլա բերին, ահաղին պնակ մ'որուն մէջ ոչխարի քանի մ'ոսկրներ, որ 'ի սկզբան կ'կարծուէր թէ միս ունէին, իբրև թէ կերակուրին երեսը կ'երևէին:

Ինյոյ զրագիրներն այս խարէ ութենէ չըռնուեցան, և տիրագին դէմքեր համբերատար երևոյթ մ'առին:

Տիկին Գօքնար զրագիրներուն բաժնեց այս կերակուրը տան տիկնոջ յարմար չափաւորութեամբ:

Գինիին կարզը եկեր էր: Վարպետ Գօքնար խճաքարէ խիստ փոքրիկ շիշէ մը զրագիրներուն բաժակին երրորդ մասը զինի լցուց, դրեթէ նոյն հաւասար համեմատութեամբ իր բաժակին ալլցուց, և շիշն խիսյն Բորթոսի և տիկին Գօքնարի կողմն անցաւ:

Գրադիրներն այս երրորդ մաս զինին ջրով կ'խառնէին, յետոյ երբ բաժակին կէսը կ'պարագէին, նորէն ջուր կ'լցնէին, և այսպէս կ'շարունակէին միշտ, որով մինչև ճաշին վերջը տեսակ մը զինի կ'խմէին որ կարկեհանի զոյնը փոխելով՝ այրած տպագիտնի դոյն կ'առնուր:

Բորթոս համին թեւն երկչուութեամբ կերաւ, և դոզաց երբ սեղանին տակէն զգաց գործակալուհւոյն ծունկին որ իրենին կը դադէր: Նոյնպէս այն ջրախառն զինիէն կէս բաժակ խմեց, և կարծեց թէ Մօնառքէօյի այն սոսկալի անախործ զինին էր որ վարժքմաց անզամ սարսափ կ'աղդէր:

Վարպետ Գօքնար տեսնելով որ Բորթոս այն յստակ զինին կ'կլէ, հառաչեց.

— Արիթէ այս բակլայէն չե՞ս ուտեր , իմ Բորթոս քեռորդիս  
— ըստ տիկին Գօքնար այնպիսի ձայնով մ'որ ըսել կ'ուղէր .  
ինդրեմ , մի ուտեր :

— Շուտիկը տանի զիս եթէ ուտեմ — մրմռայ կամացուկ մը  
Բորթոս . . . :

Յետոյ բարձրաձայն շարունակեց .

— Շնորհակալ եմ քեռաղջիկս , կշտացայ :

Պահ մը լուռթիւն տիրեց . Բորթոս ինչ կերպարանք առնուլ  
չդիտէր : Գործակալը քանի մ'անդամ կրկնեց .

— Ա՛հ , տիկին Գօքնար , դովեստից արժանի ես . Ճաշդ իրօք  
Հշմարիտ խնջոյք մ'էր . Ասուած՝ որչափ շատ կերայ :

Եւ սակայն վարպետ Գօքնար կերեր էր միայն իր ապուրը ,  
հաւին սև ոսպերն և այն միակ ոսկըն որուն վրայ քիչ մը միս կար :

Բորթոս կարծեց թէ իր քթէն կ'րոնեն , և սկսաւ իր սկիսը  
վեր վերցնել և ունքը պոստել . բայց տիկին Գօքնարի ծունկը  
մեղմիկ մ'եկաւ իր ծնկին դպաւ . համբերութեան յօրդորելու համար :

Այս լուռթիւնն ու մեծարանքի դադարումը՝ որ Բորթոսի հա-  
մար անիմանալի էին , ընդ հակառակն՝ սոսկալի նշանակութիւն  
մ'ունեին դրագիրներուն համար : Գործակալ նօտարը նշմայր մը  
և տիկին Գօքնար ժպիտ մ'ընելուն՝ դրագիրները սեղանէն ծանր  
ծանր ելան , աւելի ծանր կերպով երենց զենջակը ծալեցին ,  
ապա ողջոյն տուին և մեկնեցան :

— Գացէք , տղափս , դացէք մարսելու աշխատելով — ըստ  
ծանրաբար նօտարը :

Երբ դրագիրները մեկնեցան , տիկին Գօքնար ուրք ելաւ և մա-  
ռանէ մը հանեց կտոր մը սպանիր , սերկեիլի անուշեղէն և բլիլ  
մը՝ զոր անձամբ շիներ էր նշերով և մեղոսվ :

Վարպետ Գօքնար ունքը պոստեց , վասն զի շատ կերպակուր  
կ'տեսնէր . Բորթոս շրթերը պնդեց , վասն զի կ'նայէր որ ուտե-  
լու բան չկար :

Կայեցաւ անդամ մ'որ արդեօք բակլայի սկնակը կեցեր է ,  
տեսաւ որ բակլան ալ աներեսոյթ եղեր էր :

— Երասի խնջոյք մ'է այս — զոչեց վարպետ Գօքնար իր առ թոռին վրայ երերալով — ճշմարիտ խնջոյք մը , Epuloe epula-  
rum . . . : Կակուլոս Լուկուլոսի առնը կհաշէ :

Բորթոս իր մօտ զտնուած շշին նայեցաւ , և յուսաց որ դի-  
նիով , հացով և պանիրով պիտի կարենայ ճաշ մ'ընել , բայց  
դինի չկար , շիշը պարապ էր . պարոն և տիկին Գօքնար այս  
բանս շտեսնելու զարկին :

— Ծամ լաւ — ըստ Բորթոս իւրովի — ահա իմ փափաքս կը  
կանին :

Աւստի փոքրիկ դգաղ մ'անուշ բերանը տարառ , և ակուաները  
փակչտեցան տիկին Գօքնարի փակչուն խմորեղէնովը :

— Ահա ամէն ինչ կատարեալ է — ըստ նա : — Ահ , եթէ  
տիկին Գօքնարի հետ իր ամուսոյն պահարանը քննելու յոյս  
չունենայի , խնդիրը կ'փոխուէր :

Վարպետ Գօքնար՝ այսպիսի ճաշի մը բերկրանքը վայելելէն  
ետև՝ ճաշ մ'որ իրեն աչքին շռայլութիւն կ'թուէր , իր կէս օր-  
ուան քունը քաշելու պէտքը զդաց : Բորթոս կ'յուսար որ այն  
տեղն իսկ Գ . Գօքնար պիտի երկննար քնանալու համար , բայց  
անիծեալ զործակալու խօսք մաիկ ընել չուզեց . հարկ եղաւ զին-  
քը սենեակի տանիլ , և մինչեւ որ իր պահարանին դիմացը չտա-  
րին զինքը՝ զոհ չեղաւ , նա մանաւնդ՝ առ զզուշութեան , իր  
սովն անոր շրջանակին կոթնցուց :

Գործակալուհին Բորթոսը մօտակայ սենեակ մը տարառ , և  
սկսան հաշտութեան պայմաններն որոշել :

— Կընաս շաբաթն երեք անգամ ճաշի դալ մեզի — ըստ տի-  
կին Գօքնար :

— Ծնորհակալ եմ — ըստ Բորթոս — չեմ ուզեր ծանրու-  
թիւն տալ . առկէ զատ՝ պէտք է որ իմ զէն ու զարդս պատրաս-  
տելու հոգ տանիմ :

— Երաւ է — ըստ դործակալուհին հեծեծելով — միշտ այն  
միշտահ զէն ու զարդը չես մոռնար :

— Աւաղ , այսի — ըստ Բորթոս — այն զարդը կայ :

— Բայց ինչ բանէ կ'բաղկանայ ձեր մարմնոյն համդերձանքը,  
ո՛. Բորթոս :

— Ո՛չ, շատ բաներէ — ըստ Բորթոս — հրացանակիրներն՝  
ինչպէս որ դիտես, ընտրեալ զինորներ են և շատ առարկանեւ-  
րու պէտք ունին, որոնք պահակներուն և վարձկան զօրականնեւ-  
րուն անպէտ են :

— Բայց մանր նկարագրէ նայիմ:

— Բայց բոլորին համար . . . — ըստ Բորթոս, որ լաւագոյն  
ունէր համազումար ծախոն ըսել քան մանր պարագաներ :

Գործակալու հին գողղողալով կ'սպասէր :

— Քանի՞ է — ըստ նա — յուսամ որ բաւական է . . . :

Կարձ կապեց, խօսքը չկրցաւ աւարտել :

— Ո՛չ, ոչ — ըստ Բորթոս — բաւական է միայն երկու հա-  
զար հինգ հարիւր ֆրանք. կարծեմ նաև թէ խնայողութիւն ը-  
նելով, կրնամ երկու հազար ֆրանքով զործս տեսնել :

— Աստուած իմ, երկու հազար ֆրանք — զուցց նա — բայց  
այդ զումարը լոկ մարդու մը հարսաւութիւնը կ'կազմէ :

Բորթոս խիստ նշանակական կերպով երեսը թթուեց, տիկին  
Գօքնար անոր միտքը հասկցաւ :

— Մանր պարագաներն իմանալ ուզեցի — ըստ տիկին Գօք-  
նար — վասն զի շուկան շատ ազգական և յաճախորդ ունենա-  
լուս, զրեթէ ստոյգ էի քու առնելիք զինէդ հարիւր վար զնով  
առնուլ քեզի պէտք եղած բաները :

— Հա՛, հա՛ — ըստ Բորթոս — իրօք այդ մտօք հարց ու փորձ  
ըրիր :

— Այս, սիրելի Պ. Բորթոս, միթէ ամենէ առաջ ձիու մը  
պէտք չունիս :

— Այս, ձիու մը :

— Լա՛, ես քու ուզած ձիդ ունիմ:

— Ա՛ս — ըստ Բորթոս զուարթաղին — ահա իմ ձիու հա-  
րը դամնք, կ'մնայ բոլոր կաղմածը զտնել, և այս այնպիսի բա-  
ներէ կ'բաղկանայ զորս մինակ հրացանակիր մը կրնայ զնել, և  
երեք հարիւր ֆրանքով կարելի է ձեռք ձգել :

— Երեք հարիւր ֆրանք . լաւ , դիցուք թէ երեք հարիւր ֆրանք է — ըստ դործակալուհին հառաչելով :

Բորթոս ժպտեցաւ . ընթերցողը զիստէ արգէն որ Պլքինկէմէն եկած թամբ մ'ունէր , հետևապէս այն երեք հարիւր ֆրանքը նենգօրէն դրանը նետել կ'ուզէր :

— Ասկէ շատ — շարունակեց նա — իմ սպասուրս ալ ձի մը կ'ուզէ և ես պայուսակ մը . իսկ զինուց զալով աւելորդ է այս մասին մտածել , վասն դի գէնք ունիմ :

— Սպասաւորդ ձի մը կ'ուզէ — վրայ բերաւ երկմտելով դործակալուհին — այդ մեծ իշխան մ'է ուրեմն , բարեկամ :

— Է՛ս , տիկին — ըստ հպարտօրէն Բորթոս — միթէ կարծես թէ ես անպիտան մարդ մ'եմ :

— Ո՛չ , միայն կ'ըսէի թէ աղւոր ջորի մը ձիու չափ յարմար կրնայ գալ ծառայի մը , և կ'երեի ինձ թէ Մուսքոնի համար եթէ սիրուն ջորի մը գնենք . . . :

— Լաւ , թող ջորի մը լինի — ըստ Բորթոս — իրաւունք ունիս , սպանիացի շատ մեծ իշխաններ տեսած եմ , որոց հետեւակները ջորիներով կ'երթային : Բայց հարկ է ուրեմն , տիկին Գօքնար , ինչպէս որ կրնաս մտածել , որ դարզմանակով և բռժումներով լինի ջորին :

— Հանդարտ եղիր — ըստ դործակալուհին :

— Կ'մայ պարկը — վրայ բերաւ Բորթոս :

— Ո՛չ , այդ մասին բոլորովին անհոգ եղիր — զուեց տիկին Գօքնար — Երիկս հինգ վեց հատ պարկ ունի , լաւագոյնը կ'ընտրես . նա մանաւանդ հատ մ'ունի զոր ճամբորդութեան ժամանակ շատ կ'սիրէր , և մէջն անբար բան կ'առնու :

— Ուրեմն պարկդ պարանպ է — հարցոց միամտօրէն Բորթոս :

— Անշոշտ պարապ է — պատասխանեց նոյնպէս միամտօրէն դործակալուհին :

— Ա՛ս , բայց ինձ ոլէաք եղած պարկը խիստ լեցուն պարկ մ'է , սիրելիդ իմ — զուեց Բորթոս :

Տիկին Գօքնար նորէն հառաչներ արձակեց : Աօլիէր տակաւ

ւին իր Ագուն թատրերդութիւնը չէր յօրինած : Ճետեապէս ու ուրիշն գոքնար հարբակօնէն նախաղաս կ'համարուի :

Աերջապէս զէն ու զարդին միւս մասերն ալ մի և նոյն կերպով վիճաբանութեան ներքեւ ընկան , և բանակցութեան արդիւնքը սա եղաւ . որ զործակալուհին հարբիր փրանք պիտի տար , և միանգամայն ձի ու ջորի մը պիտի զտնէր որոնք բորթուն ու Մուսքոնը փառաց հասցնելու պատիւը պիտի ունենային :

Այս սրայմաններն որոշելէն ետե՛ Բորթոս տիկին Գոքնարի մաս բարե ըստ : Այս վերջինը կ'ուզէր զանի վար զնել անոր անոյշ աչքեր բնելով , բայց Բորթոս զինուորութեան պահանջումները մէջ բերաւ , և հարկ եղաւ . որ զործակալուհին զիջանի թագաւորին :

Հրացանակիրը առն զարձաւ՝ շատ անօթի և սասաիկ նեղացած :

## ԺԳ

### ՆԱԺԴԵՑՏ ԵՒ ՏԻՐՈՒՀԻ

Սակայն , ինչպէս որ ըսինք , ո'Յորդանեան իր խղճին ձայնին և Աթոսի խոհական խրատներուն չանսալով՝ ժամէ ժամ՝ առելի ևս կ'սիրահարէր Միլէտիին . հետեապէս ամէն օր անվրէ այ կ'երթար իր սիրոյ նուելըն անոր մատուցանելու՝ վստահ լինելով մեր բաղդասոր Կասրօնն որ վաղ կամ անաղան ախիլինն ևս իր սիրոյն պիտի պատասխանէր :

Երկուն մ'որ բարձր՝ ի գլուխ և ոսկի անձրեսի սպասող մարդու մը ովէս թեթևակի Միլէտիին տունը կ'երթար՝ նաժիշտը կառնաղըն սեմին վրայ տեսաւ . բայց այս անզամ՝ սիրուն Քէղին զոհ չեղաւ անոր զալիլ միայն անցնելու ատեն , այդ մեղմիկ սունոր ձեռքը բռնեց :

— Քաջ է — ըստ իւրովի տ'Արդանեան — իր տիրուհոյն  
կողմէն ինձ ըսելիք բան մը պիտի ունենայ , թերեւ ժամադրու-  
թեան տեղ մը պիտի ցոյց տայ , և իր տիրուհին համարձակած  
չպիտի լինի բերանացի ըսելու : — Եւ զեղանի նամիշտին երեսը  
նայեցաւ յետին ծայր յաղթական կերպով մը :

— Կ'փափաքէի քեզի քանի մը խօսք ըսել , պարոն ասպետ . . .  
. — թոթովից նամիշտը :

— Խօսէ , աղջիկս , խօսէ — ըստ տ'Արդանեան — մտիկ  
կընեմ :

— Այս տեղ կարելի չէ , վասն զի քեզի ըսելիքս շատ եր-  
կար և մանաւանդ շատ զաղտնի է :

— Լաւ ուրեմն , ի՞նչ ընենք :

— Եթէ յանձն առնուս ինձ հետեւելու — ըստ երկչուաւ-  
թեամբ Քէղի :

— Ուր որ կ'կամիս , սիրոն աղջիկ , պատրաստ եմ զալու :

— Ուրեմն եկուր :

Եւ Քէղի որ տ'Արդանեանի ձեռքը չէր թողած , զանի փոք-  
րիկ և կլոր սանդղէ մը վեր հանեց , և տասն և հինգ աստիճան  
ելնելէն ետե՛ դուռ մը բացաւ :

— Ներս մոխր , պարոն ասպետ — ըստ անոր — այս տեղ-  
առանձին պիտի լինինք և կրնանք խօսիլ :

— Եւ որո՞ւ է այս սենեակը , իմ զեղանի աղջիկս — հարցուց  
տ'Արդանեան :

— Իմն է , պարոն ասպետ , և տիրուհոյս սենեկին հետ հա-  
զարդակցութիւն ունի սա դոնէն : Բայց անհոգ եղիք , նա մեր  
խօսքը չպիտի կարենայ լսել , կէս զիշերէն առաջ չքնանար  
թնաւ :

Տ'Արդանեան իր չորս կողմն ակնարկ մը նետեց : Փոքրիկ սե-  
նեակը թէ հաշակի և թէ մաքրութեան կողմէ շատ ազոր էր .  
բայց ակամոյ իր աշխը սեւեցան այն գրան վրայ , որ Քէղիի  
խօսքին նայելով Միւլէտիին սենեակը կ'տանէր :

Քէղի պատանեոյն մտքին մէջ անցածը գուշակեց և հառաշ-  
մարձակեց :

— Միթե իմ տիրուհիս շատ կ'օիրե՞ս, պարոն ասպետ — ըստ անոր :

— Ո՛չ, բերնով չեմ կարող բացատրել, Քեղի, վրան կը խենամ :

Քեղի երկրորդ անգամ հառաչեց :

— Աւա՛ղ, տէր իմ — ըստ նա — մեղք եղաւ քեզի :

— Եւ ի՞նչ ցաւալի բան կ'տեսնես այս բանիս մէջ — հարցոց ա'Արդանեան :

— Վասն զի, պարոն — վրայ բերաւ Քեղի — իմ տիրուհիս քեզ ամենեին չսիրեր :

— Հեյ — ըրաւ ա'Արդանեան — արլեօք ի՞նքն ապսպեց քեզի այդ բանն ինձ ըսելու :

— Ո՛չ, ոչ, պարոն, այլ ես ի՞նքնին քու շահուդ համար, միտքս դրի քեզի յայտնելու :

— Ընորհակալ եմ, բարի Քեղի, մի միայն բարի դիտառութեանդ համար, վասն զի այդ հաղորդակցութիւնը, ի՞նչպէս որ կընաս վկայել, բնաւ ախորդելի չէ :

— Այսինքն, բնաւ չես հաւտար ըսածիս, այնպէս չէ :

— Սիրուն աղջիկ, մարդ դժուարաւ կ'հաւտայ միշտ այդպիսի խօսքերու, եթէ ոչ ուրիշ բանի, դէթ ի՞նքնասիրութեան պատճառաւ :

— Աւրեմն ինձ չես հաւտար :

— Կ'խոստավանիմ որ՝ եթէ ըսածդդ փորձով չհաստատես . . . :

— Ի՞նչ կ'ըսես ասոր :

Եւ Քեղի իր ծոցէն փոքրիկ տումասկ մը հանեց :

— Ինձի համար չէ — ըստ ա'Արդանեան աշխուժիւ տումասկն առնելով :

— Ո՛չ, ուրիշն համար է :

— Ուրիշն համար :

— Այս :

— Եր անոնը, անունն ի՞նչ է — զուեց ա'Արդանեան :

— Նայէ հասցէն :

— Թ. Վարդ կոմ։ :

Աէն-Ժէրմէնի անցքին յիշատակը շուտ մ'ինքնաստան կառաքօնին միտքն ընկառ։ Փայլակի արագոթեամբ պահարանը պատռեց՝ առանց Քէղիի նայելու, որ աղաղակ մ'արձակեց տեսնելով անոր ընելիքը կամ լաւ և՛ ըրածը։

— Ո՛չ, Աստուած իմ, պարոն ասպետ — ըստ նա — ի՞նչ կ'ընես։ :

— Ե՛ս, ոչ ինչ — ըստ տ'Արդանեան, և սկսաւ կարդալ, և իմ առաջին տօմսակիս պատասխան չստոիր. միթե անհանդիստ ես, կամ մոռցար արդեօք թէ տիկին Կիզի պարահանդիս սին մշջ ինչ աչքեր կ'նետէիր ինձ։ Ահաւասիկ առիթը, կոմս, ձեռքէ մի փախցներ ։ :

Տ'Արդանեան դեղնեցաւ, իր ինքնասիրութիւնը վիրաւորեցաւ և կարծես թէ սիրոյ մշջ ես վէրք առաւ։ :

— Խեղջ սիրելի տ'Արդանեան — ըստ Քէղի արդահատելի ձայնով մ'ե պատանիկին ձեռքը նորէն սեղմլով։

— Դժու իմ վրայ կ'ցաւիս — բարի աղջիկ — ըստ տ'Արդանեան։ :

— Ո՛չ, անտարակոյս, բոլոր սրտովս, վասն զի ես զիտեմ՝ թէ ինչ է սէրը։ :

— Դժու զիտես թէ ինչ է սէրը — ըստ տ'Արդանեան՝ առաջին անգամ անոր դէմքը նայելով փոքր ինչ ու շաղրութեամբ։

— Աւանդ, այս։ :

— Լաւ ուրեմն, փոխանակ վրաս ցաւելու, առելի աղէկ կ'ըսնէիր եթէ արիտհիւդ վրէժ լուծելու ինձ օդնէիր։ :

— Եւ ինչ տեսակ վրէժ լուծել կ'ուզես։ :

— Կ'ուզէի անոր վրայ յաղթանակ տանիլ և ոսոխս հեռացնել։ :

— Երբէք չպիտի օդնեմ քեզի այդպիսի բան մ'ընելու, պարն ասպետ — ըստ Քէղի աշխուժիւ։ :

— Եւ ինչ պատճառաւ — հարցոց տ'Արդանեան։ :

— Երկու պատճառ ունիմ։ :

— Որո՞նք են։ :

— Առաջինը սա է որ սիրուհիս քեզ երբեք չպիտի սիրէ :

— Ի՞նչպէս զիտես :

— Վասն զի անոր սիրտը վիրաւորեցիր :

— Ե՞ս, և ի՞նչ բանի մէջ անոր սիրտը վիրաւորած կրնամ լինիլ, ես որ, զանի ձանչելէս վեր, իբրև ստրուկ անոր ուայց առջև կ'ապրիմ. խօսէ, կ'աղաշեմ:

— Այդ բանն այն մարդուն միայն պիտի խոստովանիմ. . . որ իմ հոգւոյս խորը կարող պիտի լինի կարդալ :

Տ'Արդանեան երկրորդ անդամ Քէղիին նայեցաւ : Կորատի օրիորդն այնպէս թարմ էր ու զեղանի, որ այս հանդամանքը շատ դքսուհիներ իրենց պասեպով գնելու արամաղիր կրնային գանուիլ :

— Քէղի — ըստ անոր — երբ որ ուղես՝ սրտիդ խորը պիտի կարդամ, եթէ այդ է քու կամքդ, սիրելի աղջիկ, — և անոր համբոյը մը տուաւ որով նորատի օրիորդը կիրասի պէս կարմրեցաւ :

— Ո՛չ, ո՛չ — զուեց Քէղի — զու զիս չես սիրեր, այլ միայն սիրուհիս կ'սիրես, քիչ մ'առաջ այդպէս ըսիր բերնովդ :

— Եւ միթէ այդ բանն արդեւք մ'է երկրորդ պատճառդ յայտնելու :

— Երկրորդ պատճառը սա է, պարոն ասպետ — վրայ բերան Քէղին նախ համբոյրէն, և ասպա պատանեցն նայտածքի բացատրութենէ սիրտ առնլով — որ սիրոյ մէջ ամէն մարդ իրեն համար կ'աշխատի :

Այն ասեն միայն տ'Արդանեան յիշեց Քէղիի նոտաղուն ակնարկները, նախասենեկին մէջ, սանդղին վրայ, նրբագաւթին մէջ անոր ստեղծ հանդիպիլը, ամէն անդամ անոր հանդիպելուն ձեռքի շօշափումները, և խեղզուկ հառաջները, բայց մեծ տիկնոջ հաճելի լինելու եռանդով վառ նաժիշտն արհամարհեր էր. ով որ արծիւ կ'որայ, ճնճղուկը բանի տեղ չդներ :

Բայց այս անդամ մեր կասքօնն իսկոյն զիտեց թէ ի՞նչ օգուտ կրնար քաղել այն սէրէն զոր Քէղի այնպիսի պարզ կամ լրբենի կերպով մը խոստովաներ էր. այսինքն, Վարդ կոմնին ղըկած

առմանկներն արդիւլել, խորել, նոյն տեղ ամէն անցած դարձած նիմանալ, Քէղիի սենեակն ամէն ժամ մտնել, որ իր տիրուհոյն սենեկին կից էր: “Աենգաւորը” ինչպէս որ կ’տեսնուի, արդէն մտովին կ’զոհէր խեղճ աղջիկն որպէս զի ինքնայօժար կամ բռնի Միլէ ամին սատանայ:

— Լաւ ուրեմն — ըստ նորաատի օրիորդին — կ’ուղե՞ս, սիրական Քէղիս, քեղի կասկածելի երեցած սիրոյս մէկ փորձը տամ:

— Կ՞նչ սէր — հարցոց նորաատի օրիորդը:

— Այս սէրը զոր քեղի համար զշալու պատրաստ եմ:

— Եւ ի՞նչ է այդ փորձը:

— Միլէ կ’ուղե՞ս որ այս իրկուն՝ սովորաբար տիրուհոյդ հետ անցուցած ժամանակս՝ քեղի հետ անցընեմ:

— Ո՛չ, անտարակոյս — ըստ Քէղի ձեռներն իրարու զարսնելով — յօժարակամ կ’ուղե՞մ:

— Լաւ ուրեմն, սիրելի աղջիկ — ըստ ա՛նրդանեան թիկանաթոտի մը վրայ նստելով — արի ըսեմ քեղի որ զու բոլոր տեսած նայիշաներէս ամենէն սիրունն ես:

Եւ անոր այնչափ աղլոր բաներ ըստ, որ խեղճ աղջիկը հաւատաց . . . վասն զի հաւատալու փափաք ունէր: Սակայն՝ ի մեծ զարմացումն ա՛նրդանեանի, սիրուն Քէղին բաւական հաստատամտութեամբ անոր առաջարկութեանց գէմ կ’մաքառէր:

Ժամանակը շուտով կ’անցնի երբ յարձակելով և ովաշտուկանուելով կ’անցընէ մարդ:

Կէս զիշեր զարկաւ, և զրեթէ նոյն սրահուն Միլէ ամի հնչառ կին ձայնը լսելի եղաւ:

— Տէր Աստուած — զուշց Քէղի — ահա տիրուհիս զիս կը կանչէ, գնաւ, շուտ զնաւ:

Տ՛Արդանեան ուրբ եւստ, փեղոյրն առաւ որպէս թէ հնազանդելու միտք ունէր, յետոյ մեծ պահարանի մը գուռը բանալով շտապտ՝ փոխանակ սանդղինը բանալու անոր մէջ ոքլեցաւ, Միլէ ամին շրջապլեստներուն և վարշամակներուն միջել:

— Կ՞նչ կ’ընես այդ տեղ — զուշց Քէղի:

ՏՇԱՐԴԱՆՆԵԱՆ՝ որ կանխառ բանալին առեր էր, իր պահարաւնին մէջ փակուեցաւ առանց պատասխան տալու :

— Լաւ ուրեմն — զոչեց Միլէտի կծու ձայնով մը — միթէ կ'քնանայի՞ր որ հնչակը զարնելուս իսկոյն չեկար :

Եւ ա՛ՅՐԴԱՆՆԵԱՆ լսեց որ ուժին հաղորդակցութեան դուքը կ'բանային :

— Ահա եկայ, Միլէտի, եկայ — զոչեց Քէղի իր տիրուհոյն առաջն առնլով արտորնօք :

Երկոքնին ալ ննջարանը մտան, և որովհետև մէջի գուոց բաց մնաց, ա՛ՅՐԴԱՆՆԵԱՆ լսեց Միլէտիին ուղած յանդիմանութիւններն առ նամիշտը. վերջապէս հանդարտեցաւ և խօսակցութիւնն իր վրայ դարձաւ մինչդեռ Քէղի իր տիրուհին կ'հանուեցնէր :

— Լաւ — ըստ Միլէտի — ինչո՞ւ համոր այս իրկուն մեր Կասպօնը չերեցաւ :

— Ինչպէս, տիկին — ըստ Քէղի, միթէ չեկամ : Միթէ տակուին երջանիկ չեղած՝ թեթևամտութիւնը բռնեց :

— Ո՛՛, չէ, անշոշա Պ., տը Գրէվիլ կամ Պ. Տէղէսար արդելք մ'եղած պիտի լինին : Ես իմ ապրանքս զիսեմ, Քէղին եղանի ճանկիս տակ բռնած եմ :

— Ի՞նչ պիտի ընես անոր, տիկին :

— Ինչ պիտի ընեմ . . . : Այդ մասին անհոդ եղիր, Քէղի, այն մարդուն և իմ մէջ բան մը կայ, որմէ անտեղեակ է . . . : Քիչ մնաց որ նորին բարձրութեան առջև իմ համարումս պիտի կորուսէի իր պատճառաւ . . . : Ո՛՛, վրէժ պիտի լուծեմ :

— Կարծէի թէ կ'սիրես զինքը, տիկին :

— Ե՛ս սիրեմ զինքը, զանի կ'անդոսնեմ. ապոշ մ'է որ լորտ Վինդրի կեանքն իր ձեռքն եղած ատեն՝ զանի չափաննեց, և երեք հարիւր հաղար Փրանք ինձ կորուսել առաւ :

— Կրառ է — ըստ Քէղի — որդիդ իր հօրեղօօր միակ ժառանդորդն էր, և մինչև չափահաս լինելն անոր հարսառ թիւնը պիտի վայելէիր :

Տ'Արդանեան յոտից ցղլուխ սարստու մը զդաց , երբ լսեց որ այս անուշ է ակն զինքը կ'յանդիմանէ՝ այն սուր ձայնովը զօր խօսակցութեան ժամանակ իսկ մեղմելու դժուարութիւն կ'քաշէր , այնպիսի մարդ մը չսպաննելուն՝ որ իրեն բարեկամութեան շատ նշաններ ցոյց տուեր էր :

— Ռւսակի — շարունակեց Միլէտի — արդէն անորմէ վրէժս առած պիհափ լինէի , եթէ , չզիտեմ ինչ պատճառաւ , կարտի նաևն ապսպած չլինէր ինձ հեան անուշութեամբ վարուելու :

— Ո՛հ , այս , բայց , տիկին , դու անխնայ վարուեցար անոր սիրած փոքրիկ ինկան հետ :

— Ո՛հ , քոսուայէօր փողոցին փերեզակուհին ըսել կ'ուզես . միթէ արդէն չմուցան որ այնպիսի էակ մը կար : Կրտսի , աղոսք վրէժ :

Պաղ քրտինք մը կ'հոսէր ա'Արդանեանի ճակտէն . այս կինն անտարակոյս հրէշ մ'էր :

Նորէն ականջ կախեց ա'Արդանեան , բայց գժրաղղօրէն տիւ բահին իր հաղուստն աւարտեր էր :

— Լաւ է — ըստ Միլէտի — մենեակդ մտիր , և վաղն աշխատէ վերջապէս տուած զրոյս պատսխան մը ձեռք ձղել :

— Գիրը ո՛վ . Վարդի ողոեալ չէ — ըստ . Քէղի :

— Անշոշտ ո՛վ . Վարդի պիտի տրուի :

— Ահա ասիկ պարոն մը — վրայ բերաւ . Քէղի — որ բոլորու վին խեղճ ա'Արդանեանի ներհակ բնութիւն մ'ունի :

— Դուքս ելիք , օրիորդ — ըստ Միլէտի — մեկնութիւններ չեմ սիրեր ,

Տ'Արդանեան դրան զոցուիլը , յետոյ երկու պարզունակի աղւմուկը լսեց , որով Միլէտի իր խուցը կ'փակուէր . Քէղին ալ իր կողմէն բայց շատ կամաց , դուռը կզպեց . այն ատեն ա'Արդանեան պահարանին դուռը հրեց :

— Ո՛ Աստուած իմ — ըստ մեղմիկ Քէղի . — ի՞նչ ունիս , որչափ դեղնած ես :

— Ի՞նչ զարշելի արարած է — մըմոաց ա'Արդանեան :

— Առութիւն, լոռութիւն, դորս ելի՞ր — ըստ Քէղի — միշնորմ միայն կայ իմ և Միլէտիին սենեկին մէջ, մէկ խուցէն միւսին մէջ խօսուածը կ'ըստի :

— Ահա, այդ պատճառաւ իսկ չպիտի դորս ենեմ — ըստ տ'Արդանեան :

— Ինչպէս — ըստ Քէղի կարմրելով :

— Կամ լաւ ևս ըսեմ, պիտի մեկնիմ . . . աւելի ուշ :

Եւ Քէղին գէպ իրեն քաշեց, դիմագրելու ճար չկար, դիմագրութիւնն որչափ աղմուկ կրնայ հանել, ուստի Քէղի ձայն ձռն չհանեց :

Այս շարժումը վրէժինդրութեան շարժում մ'էր Միլէտիին դէմ : Տ'Արդանեան տեսաւ որ իրաւացի է այն խօսքը մէ վրէժինդրութիւնը դից զուարձութիւնն է : Ուստի, ա'Արդանեան՝ եթէ քիչ մ'աւելի սիրտ ունենար, այս նոր յաղթանակով զոհ կրնար լինիլ, բայց տ'Արդանեան միայն փառասիրութիւն ու դռուզութիւն ունէր :

Սակայն պէտք է ըսել, իրրե զովեստ տ'Արդանեանի, որ Քէղիի վրայ ստացած ազգեցութենէն նախապէս օգտիլ տղեց տիկին Պօնասիէօի ինչ լինելն իմանալու փորձ փորձելով, բայց նորաւախ օրիորդը խաչի վրայ երդում ըրաւ որ բոլորովին անտեղեալ է այս մասին, վասն զի իր տիրուհին կիսով միայն իր դաղտնիքը կ'յայտնէր, միայն կարող էր հաստատել որ Պօնասիէօ մեռած չէ :

Սակայն ինչ պատճառաւ Միլէտին քիչ մ'ես իր համարումը պիտի կորուսէր կարտինալին առջե, չղիտէր բնաւին, բայց այս անզամ, տ'Արդանեան աւելի տեղեալ էր անորմէ, որովհետեւ արշ զիլեալ նաւու մէջ տեսեր էր Միլէտին այն միջոցին որ ինքն Անկիւաէն կ'հեռանար, և կասկածեր էր որ անդամանդեայ ասղիներուն դործին համար է :

Բայց այս ամէն բաներու մէջ սա յայանի էր միայն որ Միլէտիին իրեն դէմ ունեցած ճշմարիտ ատելութեան, խորին ատելութեան, անհաշտ ատելութեան բուն պատճառը իր տաղըը չըստ պաննելն էր :

Տ'Արդանեան հետեւալ օրը Միլէտիին տունը գնաց : Միլէտին նոյն պահուն շատ նեղացած կ'երևէր , և ա՛Արդանեան աներիբայ մտածեց որ իր սրանեղութեան պատճառը Պ . Վարդէն պատասխան չստանալն էր : Քէզի ներս մտաւ , բայց Միլէտի զանի խառի ընդունեց : Այն ատեն ա՛Արդանեանի այնպիսի ակնարկ մը նետեց որ ըսել կ'ուղէր . Նայէ քեզի համար ո՛րչափ կ'տառապիմ :

Սակայն երեկոյթին վերջերը՝ նազելի տիկինը կակղցաւ , ա՛Արդանեանի անուշ խօսքերը ժպտելով մտիկ ըրաւ , մինչև անդամ իր ձեռքը տուաւ համբուրելու :

Տ'Արդանեան գուրս ելաւ ինչ խորհիլ չգտնելով , բայց որովհ շետեւ այնպիսի պատանի մը չէր որուն գլուխը դիւրաւ դարձընել հնարին լինի , Միլէտիին հետ սիրաբանելու ժամուն՝ մըտքին մէջ պատիկ յատակաղիծ մը յօրիներ էր :

Քէզին գրան վրայ զտաւ , և առջի իրիկուան պէս անոր սենեակը մտաւ : Քէզի շատ յանդիմանութիւններ լսեր էր , իբրեանչոգ՝ յանցաւոր գատուեր էր : Միլէտի Վարդ կոմսին լոռութիւնը չէր կրնար մեկնել , և Քէզիին ապսպրեր էր առտու ժամը ինինին սենեակը գալ երրորդ նամակ մ'առնլու համար :

Տ'Արդանեան խօսք առաւ . Քէզիին որ առնելիք զերը հետեւալ առտու . իրեն տունը բերէ . խեղձ աղջեկն իր սիրահարին ամէն խնդիրները կատարելու խօստացաւ . խենդ դարձեր էր :

Առջի օրուան պէս անցաւ ամէն բան . ա՛Արդանեան իր պահարնին մէջ փակուեցաւ , Միլէտի կանչեց Քէզին , իր հազուսար հանեց , զանի համբեց և դուռը նորէն զոցեց : Առջի անդամուն պէս՝ ա՛Արդանեան առտուան ժամը հինգին տուն դարձաւ :

Ժամը տասն մէկին Քէզիի գալը տեսաւ . Միլէտիի մէկ նոր զիրը ձեռքը բռներ էր : Այս անդամ խեղձ օրիորդը զժուարութիւն չցուցուց տումակը ա՛Արդանեանի տալու . թողուց որ ուղածը կատարէ . հոգւով մարմնով իր աղլոր զինորին յանձներ էր ինքզինքը :

Տ'Արդանեան. տոմսակը բացաւ և հետեւալը կարդաց .

«Ահա երբորդ անդամն է որ կ'զրեմ թէ կ'սիրեմ քեզ : Զգոյշ կեցիր որ չորրորդ զիր մ'ալ շղբեմ ըսելու համար թէ քեզ կ'ատեմ :

«Եթէ զզջաս ինձի հետ բոնած ընթացքիդ վրայ , այս զիրա քեզի յանձնող օրինրդը պիտի ըսէ քեզ թէ ինչ կերպով մարտ դավար մարդ մ'իր ներումը կրնայ ստանալ » :

Տ'Արդանեան կարմիրցաւ և քանի մ'անդամ զոյնը նետեց այս տոմսակը կարգալով :

— Ո՛հ , դու միշտ զանի կ'սիրես — ըստ Քեղի , որ պահ մը իր աչքը պատահոյն դէմքէն չէր հեռացուցած :

— Ո՛չ , Քեղի , դու կ'սխալիս , այլ ևս չեմ սիրեր զանի , բայց անոր քամահանաց վրէժն առնուլ կ'ուզեմ :

— Այս , կ'ձանչեմ վրիժառու ողիդ , արգէն ինձի ըսիր :

— Քեղի ինչ , Քեղի , քաջ զիտես որ մինակ քեզ կ'սիրեմ :

— Ի՞նչպէս կարելի է զիտնալ այդ բանը :

— Անոր ունեցած արհամարհանքէս :

Քեղի հառաջեց :

Տ'Արդանեան դրիչ մ'առաւ և դրեց :

«Տիկին , մինչեւ այսօր կ'կասկածէի թէ քու երկու զիրերդ ինձ ուղղուած լինին , այնքան անարժան կ'համարէի զինքս այդ պատոյն , ասկէ զատ՝ այնքան հիւանդ էի , որ պատասխան տառ պիտի վարանէի :

«Բայց այսօր հարկ է որ քու անշափ բարեսրտութեանդ հաւատմ , վասն զի ոչ միայն քու զիրդ , այլ նաև նամիշտդ կ'հաստատեն թէ քեզնէ սիրուելու երջանկութիւնն ունիմ :

«Պէտք չունի ինձ ըսելու թէ ինչ կերպով մարդավար մարդ մը կրնայ ներում գտնել . ուստի պիտի զամ իմ ներումն անձամբ իմուրել այս իրկուն ժամը տասն մէկին : Նթէ օր մ'ես ուշանամ , պիտի կարծեմ թէ նոր նախատինք մ'ըրած պիտի լինիմ քեզի :

«Այն զոր աշխարհիս երջանկադոյն մարդն ըրիր :

«ԿՈՄՍ ՏՅ Ա.ԱՐԴ»:

Այս զիրը նախ և առաջ շնչնու էր, ասքա անքաղաքավարութիւն, իսկ մեր արդի բարուց տեսութեան կերպով տեսակ մը լատահամբաւութիւն մ'էր. բայց այն ժամանակներն այսօրուան պէս փափկութիւն չկար: Ասկէ զատ՝ տ'Արդանեան՝ ինչպէս որ ինքնին կ'խստովանէր, Միլէտին ծանր ծանր գաւաճանութեամբ յանցաւոր կ'գատէր, և անոր վրայ բնաւ համարում չունէր: Եւ սակայն այս անվատահութեան չնայելով կ'զդար որ անմիասիրով մը կ'այրէր այն կնկան համար, Արհամարհանօք արթշուտովանք մը, բայց տուփանք կամ ծարաւ, ինչ որ կ'ուզես սեպէ:

Տ'Արդանեանի դիտաւորութիւնը շատ պարզ էր, Քէղիին խցէն իր տիրուհւոյն սենեակը կ'մտնէր, զարմացման, ամօթապարտութեան, ահ ու դողի առաջին վայրկենէն օգուտ պիտի քաղէր Միլէտիին վրայ յաղթութիւն մը տանելու, թերեւս չաշջողէր, բայց զիպուածին ալ թողուլ հարկ էր ձեռնարկին մէկ մասը: Ութ օրէն պատերազմը պիտի բացուէր, և պէտք էր մեկնիլ, տ'Արդանեան կատարեալ սէր հիւսելու ժամանակ չունէր:

— Ահաւասիկ — ըստ պատանին Քէղիին յանձնելով կընքուած տոմսակը — այս զիրը տիրուհւոյդ տուր. Պ. Աարդի պատասխանն է այս :

Խեղձ Քէղին մահատիս զոյն մ'առաւ, կ'զուշակէր թէ այն զիրին պարունակութիւնն ինչ էր:

— Մտիկ ըրէ, սիրելի աղջիկս — ըստ անոր տ'Արդանեան — քաջ կ'հասկնաս որ այս բանս աղէկ զէշ ելք մը պիտի ունենայ, Միլէտիին կրնայ կասկածիլ որ զու իմ սպասաւորիս յանձնած ես առաջին տոմսակը, փոխանակ կոմինն սպասաւորին տալու, թէ միւսներն ալ ես բացի, մինչդեռ կոմսը պիտի բանար, այն ատեն Միլէտին քեզ տունէն պիտի վռնտէ, և զու աղէկ զիտես որ այսչափ վրէժինդրութեամբ դոհ լինող կին մը չէ:

— Աւաղ — ըստ Քէղի — որո՞ւ համար այսչափ բաներու դըլուխ ծոեցի անձիս վատանդովը:

— Ինձի համար, քաջ զիտեմ, իմ զեղանիս — ըստ երիտասարդը — և ասոր համար կ'երդնում որ շատ շնորհապարտ եմ քեղի:

- Բայց վերջապէս ի՞նչ կ'պարունակէ այս տումակը :
- Միլէտի կրնայ ըսել քեզի :
- Ա՛հ, զու զիս չես սիրեր — զոչեց Քէդի — և ես շատ դժբաղդ եմ :

Այս յանդիմանութեան պատասխան մը կայ որով կիները միշտ կ'խարբուին . տ'Արդանեան այնպէս պատասխանեց որ Քէդի բոլոր վովին սխալմունքի մէջ մնաց :

Սակայն Քէդի շատ լայտ նամակը Միլէտիին տալու յանձնառու լինելէն առաջ, բայց վերջապէս հաւանեցաւ, և տ'Արդանեանի ուղածն ալ այս էր :

Եսկէ զատ՝ պատանին խօսք տուաւ իրկունը կանուխիեկ տիրուհւոյն քովէն հեռանալ, և զալ իր սենեակը ժամանակ անցընել :

Այս խոսնումը բոլորվին միսիթարեց խեղճ Քէդին :

## ԺԴ

ԱՐԵՄԻՍ ՈՒ ԲՈՐԹՈՍ ԻՆՉՊԻՍ Կ'ՊԱՏՐԱՍՏԵՆ ԻՐԵՆՑ

ԶԷՒՆՆ ՈՒ ԶԱՐԴԸ

Զորս բարեկամներ՝ իւրաքանչիւրն իր զէնն ու զարդը որսալու հետամուտ լինելէն վեր՝ զերար չէին տեսներ ստէպ և որոշեալ տեղ մը չէին միանար : Ամէն մէկն առանձին կ'հաշվը ուր որ գտնուէր, կամ լաւ ևս՝ ուր որ կարող էր : Միւս կողմէն զինս որրական ծառայութեան ալ մաս մը կ'հանէին այն անգին ժամանակէն, որ այնչափ շուտ կ'անցնէր : Միայն շաբաթն անգամ մ'Աթոսին տունը դումարուելու խօսք ըրեր էին, ժամը մէկին մօտ, վասն զի Աթոս՝ իր ըրած երդման համեմատ՝ իր դրան մեմն չէր անցներ այնուհետեւ :

Տիշտ այն օրն էր որ Քեդի ա՛Արդանեանի տունն եկեր Էր զանի դանելու, զումարման օր մը :

Այս ինչ Քեդի դուրս ելաւ, որ ա՛Արդանեան Գերու փողոցին կողմը զիմեց :

Տ'Արդանեան՝ Աթոսն ու Արամիսը միատեղ դժաւ որոնք կ'փիւ լիսոփայէին : Արամիս նորէն կամք կ'յայտնէր կրօնական կարգը մտնելու : Աթոս՝ իր սովորութեան համաձայն, ոչ անոր միտքը փոխելու և ոչ քաջալերելու կ'աշխատէր : Աթոս սա կարծիքն ունէր որ ամէն մարդ ազատ է իր կամքին հետեւելու : Մինչեւ որ մարդ մ'իրու խորհուրդ չհարցնէր՝ չէր տար, և դարձեալ հարկ էր երկու անդամ հարցնել :

— Ընդհանրապէս մարդ խորհուրդ կ'հարցնել : — Կ'ըսէր նա որպէս զի անոր չհետեի, կամ, եթէ հետևի, նպատակն է խրատատուն յանդիմանելու պատրուակ մ'ոնենալ :

Բորթոս՝ ա՛Արդանեանէ պահ մ'ետքը հասաւ . հետևապէս չորս բարեկամները միատեղ զումարուեր էին :

Այս չորս դէմքը՝ չորս տարբեր զգացումներ կ'բացատրէին, Բորթոսինը՝ հանդարատութիւն, ա՛Արդանեանինը՝ յոյս, Արամիսին՝ անձկութիւն, Աթոսին՝ անհողութիւն :

Պահ մը խօսակցելէն ետե՝ յորում Բորթոս կերպով մը հառ կցուց որ բարձրագիր անձ մը զինքը նեղութենէն ազատելու խօսք տուեր է, Մուսքդօն ներս մտաւ :

Եկեր էր աղաչելու Բորթոսն որ իր տունը դայ, ուր, կ'ըսէր խիստ ողորմնի գէմքով մը, իր ներկայութիւնն անհրաժեշտ էր :

— Միթէ հանդերձանքս եկա՞ն :

— Այս և ոչ — պատասխանեց Մուսքդօն :

— Բայց վերջապէս չե՞ս կարող ըսել . . . :

— Եկուր, պարոն :

Բորթոս ոտք ելաւ, բարեկամները բարեեց և Մուսքդօնին եւ տեսէն դնաց :

Պահ մ'ետքը՝ Պաղէն՝ զբան սեմին վրայ երեցաւ :

— Ի՞նչ կ'ուզես, բարեկամ — ըստ Արամիս այնպիսի լեզով անուշութեամբ որ իրեն յատուկ էր երբ կրօնական զդացումներով միտքը պաշարուած լինէր :

— Մարդ մը քեզի տունը կ'սպասէ — սրատասիսանեց Պաղէն,

— Մա՛րդ մը, ի՞նչ մարդ :

— Մուրացկան մը :

— Ողորմութիւն առւր անոր, Պաղէն, և ըսէ անոր որ խեղճ մողաւորիս համար աղօթք ընէ :

— Այն մուրացկանը քեզի կ'ուզէ խօսիլ անպատճառ, և կը պնդէ թէ շատ պիտի զոհ լինիս զինքը տեսնելով :

— Միթէ ինձի համար մասնաւոր բան մը չըսան :

— Այս, ըստ : Եթէ Պ. Արամիս — ըստ նա — զալ զիս տեսնելու վարանի, կ'յայսնես անոր որ Դուր քաղքէն կ'զամ :

— Դուրքէն — զոչեց Արամիս : — Պարոններ, հազար ներում կ'ինդրեմ, բայց անտարակոյս այն մարդը սպասած լուրերս կը բերէ ինձ :

Եւ իսկոյն ոտք ելնելով՝ ընդ փոյթ հեռացաւ :

Առանձին մնացին Աթոս և տ'Արդանեան :

— Կարծեմ թէ այս սատանաներն իրենց զործը կարգի դրած են : Քու կարծիքդ ի՞նչ է, տ'Արդանեան — հարցուց Աթոս :

— Գիտեմ որ Բորժոս յաջողութեան համբան զտեր էր — ըստ տ'Արդանեան — իսկ Արամիսի գալում ստոյգը, բնաւ հոդ չեմ տանիր վրան : Բայց դու, սիրելի Աթոս, զու որ վեհանձնօրէն բաշխեցիր անկլիացիին ոսկիները, թէև քու օրինաւոր դոցքդ էին, դու ի՞նչ պիտի ընես :

— Շատ զոհ եմ այս չարաձմիկը սպաննելուս, բարեկամ, վասն զի անկլիացի մը սպաննել օրհնած հաց ուտել է . բայց թէ որ դրամը զրապանս նետէի, իրբու խղճի խայթ մը զիս պիտի նեղէր :

— Ա՛աշ, սիրելի Աթոս . արդարեն անիմանալի զաղափարներ ունիս :

— Գոյենք, զոյենք այդ խօսքը : Գիտես արդեօք ի՞նչ կ'ըսէր

ինձ զ. աը Գրէվիլ, որ երէկ այցելութեան դալով զիս պատճ  
ուց, կ'ըսէր թէ կարտինալին պաշտպանած անկլիայիներուն  
հետ ստէոլ տեսութիւն կ'ընես :

— Այսինքն անկլուհին մը հետ տեսութիւն կ'ընեմ, այն կիւ-  
նը՝ որու վրայ արգէն քեզի խօսած եմ:

— Ա՛չ, այո, այն խարսեց կինն որու առթիւ քեզի խրատ-  
ներ տուի և բնականապէս զդուշցար անոնց հետեւլու :

— Քեզի արգէն պատճառներս բացարեցի :

— Այո, անով զէն ու զարդդ հոգալու կ'յուսաս, կարծեմ:  
և այս է պատճառդ :

— Ամենեին. քաջ տեղեակ եմ որ այն կինը տիկին Պօնա-  
սիէօի առեանզին մէջ մատ տնի :

— Այո, և կ'հասկնամ, կին մը զանելու համար, որիշի մը  
հետ կ'սիրաբանես, այդ ամենէն երկար ճամբան է, բայց ամե-  
նէն զուարձալին է :

Քիչ մեաց որ տ'Արդանեան ամէն բան Աթոսին պիտի պատ-  
մէր, բայց կէտ մ'արդիլէց. Աթոս խիստ էր պատոյ խնդիրնե-  
րու նկատմամբ, և մեր սիրահարին շինած փոքրիկ յատակագծին  
մէջ՝ քանի մը բաներ կային, որ անտարակոյս պարզակրօնին հա-  
ւանութիւնը չպիտի ստանար, ինչպէս որ տ'Արդանեան կանխաւ-  
ստոյգ էր. հետեապէս լաւ ևս համարեց լոռութիւն պահել, և  
որովհետեւ Աթոս խիստ անտարբեր մարդ մ'էր, տ'Արդանեանի  
խոսուվանութիւնն այնչափով վերջ առեր էր :

Ուրեմն պիտի թողունք այս երկու բարեկամները՝ որ իրարու-  
կարեոր բաներ չտնէին հաղորդելու, Արամիսին ետեէն երթա-  
լու համար :

Երբ Արամիս իմացաւ թէ իրեն հետ խօսիլ ուզով մարդը  
Պուրէն կ'զայ, տեսանք թէ ինչ արագութեամբ երիտասարդը  
Պազէնին հետեւցաւ կամ լաւ ևս զանի կանխեց, ուստի գէրու  
փողոցէն ոստուտելով՝ հասաւ Աօմիրար փողոցը :

Արդարե տուն մանելով կարձահասակ, ուշիմ աչերով մարդ  
մը զտաւ, թէ և չնոտիներով ծածկուած էր :

— Մի՛Շե զո՞ւ ես զիս խնդրողը — ըստ Հրացանակիրը :

— Այսինքն Պ. Արամիսը կ'խնդրեմ. միթէ դու այսպէս կը կոչուիս :

— Ես ինքս եմ. միթէ ինձ յանձնելու բան մ'ունիս :

— Այու, եթէ բանուած թաշկինակ մը ցոյց տաս ինձի :

— Ահաւասիկ — ըստ Արամիս վլոգն բանալի մը հանելով և եպենոսէ փոքրիկ արկղ մը բանալով որ զաղտակրով դրուադած էր — ահաւասիկ, ան'ս :

— Ըստ լու — ըստ մուրացկանը — սպասաւորդ զրկէ :

Եւ արդարեւ՝ Պաղէն՝ հետաքրքիր լինելով իմանալու թէ մուրացկանն ի՞նչ կ'պահանջէ տիրոջմէն, անոր քայլին հետեւ և դրեթէ անոր հետ խոցը մոտեր էր. բայց այս արադոթենէ ոչ ինչ չշահեցաւ, մուրացկանին խնդրոյն վրայ՝ Հրացանակիրը նըշան ըրտ անոր որ քաշուի, և ան ալ ստիպուեցաւ հնագանգելու :

Երբ Պաղէն հեռացաւ՝ մուրացկանն իր չորս դին շուտով աչք մը նետեց, որպէս զի ստուգէ թէ ոչ ոք զինքը կ'տեսնէ կամ կ'լսէ, և իր հնոտի թիկնոցը՝ զոր կաշիկ զօտիով մը թուլակի սեղմեր էր, բանալով սկսաւ իր բանկոնակին վերի կողմի կարերը քակել, և անկից նամակ մը հանեց :

Արամիս ուրախութեան ձայն մ'արձակեց նամակին կնիքը տեսնելով, զերը համբուրեց, և զրեթէ կրօնական յարդանօք նամակը բացաւ և սա տողերը կարդաց.

« Բարեկամ, բաղդն այնպէս կ'ուզէ որ դեռ ևս ժամանակ մը իրարմէ զատուած մնանք, բայց երիտասարդութեան զեղեցիկ օսթերն անդառնալի կերպով կորսուած չեն : Դու գտն պարագդ կատարե բանակը, ես ալ իմու կ'կատարեմ այլուր : Գրաբերիս բերածն ընդունէ . պատերազմի զնաւ իրբե զեղանի և բարի աղատուրդի, և մոտածէ ինձ, ես որ զօրովազին կ'համբուրեմ սե աչերդ : »

« Մնաօ բարեւ, կամ լաւ ևս՝ ի կրկին տեսութիւն ։ »

Մուրացկանը միշտ կարերը կ'քակեր. իր աղստութ լամերէն մի առ մի հանեց հարիւր յիստն հատ Սպանիոյ կրկին ոսկի զահեկան, բարեկեց, և համբայ ելաւ, Հրացանակիրն ապուշ կրթած անոր խօսք մ'ուղղելու համարձակելէն սուած :

Այս ատեն Արամիս վերստին կարդաց նամակը, և դիտեց ոք յետոյ գրեալ մ'ունի :

«Յ. Գ. Գրաբերիս լաւ ընդունելութիւն մը կրնաս ընել, վասն զի Սպանիոյ աւաղանի և կոմն է» :

— Ուկեզօծ երազներ — զոչեց Արամիս : — Ո՛չ, աղւո՞ր կեանք, այս, գեռ նորատի ենք, այս, տակաւին երջանիկ օրեք պիտի վայելենք : Ո՛չ, քեզի, քեզի սփիտի նուիրեմ սէրս, արշւնս, կեանքս, ամէն, ամէն բան, իմ զեղանի տիրուհիս :

Եւ խանդազին կ'համբուրէր նամակը, առանց սեղանին վրայ փայլող ոսկիներն իսկ նայելու :

Պազէն դուռը քերեց, Արամիս պատճառ մը չունէր զանի ներս չընդունելու, ուստի հրաման տուաւ որ դուռը բանայ :

Պազէն ապշած մնաց ոսկին տեսնելով, և մուցաւ որ տ'Արդանեանի դալուստն իմացնելու համար եկեր էր . վասն զի տ'Արդարանեան հետաքրքիր լինելով իմանալու թէ ով էր այն մուրաց կանը, Աթոսին տունէն ելնելով Արամիսին եկեր էր :

Արդ՝ տ'Արդանեան Արամիսի հետ ազատ համարձակ լինելով երբ դիտեց որ Պազէն իր զալուստն իմաց տալու մոռցաւ, ինքն անձամբ երեցաւ :

— Ա՛յ, սատանայ, իմ սիրելի Արամիս — ըստ տ'Արդանեան եւն — թէ Գուրէն քեզի զրկուած սալորներն են ասոնք, իմ զովեստներս չես մոռնար անշուշտ զանոնք քաղող պարտիզամնին :

— Կ'սխալիս, սիրելիդ իմ — ըստ Արամիս միշտ խոհեմութեամբ — իմ զրքածախս այն ինչ զրկեց ինձ միավանկ ոտանաւ ւորներու քերթուածիս զինը զօր արդէն այն տեղ սկսեր էի :

— Ա՛չ, իրաւ — ըստ տ'Արդանեան . — լաւ ուրեմն, զրքածախտ շատ վեհանձն է, սիրելի Արամիս, այսչափ միայն կրնամը ըսել քեզի :

— Ինչպէս, պարոն — զոչեց Պազէն — միթէ քերթուած մը այդչափ սուղ կ'ծախուի, անհաւատալի է ինձ : Ո՛չ, պարոն, դու ուզածդ կրնաս ընել, կրնաս ու . Վուադիւրին և ու . ուէնս սէրատին հաւասարիլ : Ես այդ ալ կ'սիրեմ : բանաստեղծ մը,

դրեթե արքայ մ'է : ԱՇ, Պ. Արամիս, բանաստեղծ եղիք ու  
ըեմն, կ'աղաչեմ քեզ :

— Պաղէն, բարեկամս — ըստ Արամիս — կարծեմ թէ խօս  
սակցութեան կ'խառնուիս :

Պաղէն համկցաւ որ անվայիլ բան մ'ըրաւ . զլուխը ծռեց և  
դուրս ելաւ :

— ԱՇ — ըստ տ'Արդանեան ժպիտով մը — քու դործերդ ոս-  
կիի գնով կ'ծախես, շատ երջանիկ ես, բարեկամ, բայց զգու  
շացիր, սա նամակն որ վտաւակէդ դուրս կ'ելնէ՝ հիմակ պիտի  
կորուսնես, և անտարակոյս զբաժախտ ուղղած է քեզի :

Արամիս կաս կարմիր եղաւ, նամակը դրապանը մղեց և վերաբ-  
եռն կոճկեց :

— Սիրելի տ'Արդանեան — ըստ նա — եթէ կ'հաճիս, եր-  
թանք մեր բարեկամները զմնելու, և ըստ որում հարուստ եմ,  
այսօր նորէն կ'ակսինք միասին ձաշելու՝ մինչեւ որ ձեր հարուստ  
լինելու կարգը զայ :

— Իրաւ որ — ըստ տ'Արդանեան — հրաւերդ յօժարամիտ  
կ'ընդունիմ: Բաւական ատեն կայ որ շենքով շնորհքով ձաշ մը  
ըրած շենք միասին, և որովհետեւ այս դիշեր ես փոքր ինչ վը-  
տանդաւոր արշաւանք մ'ունիմ ընելու, չպիսի գժարիմ, արդարէ,  
եթէ զլուխս քանի մը շիշ Պուրկօնյի հին զինիով տաքցնեմ:

— Թող Պուրկօնյի զինի լինի, ես ալ կ'սիրեմ զայն — ըստ  
Արամիս, որուն մնաւորութեան դաղափարները ցրուեր էին ոս-  
կիին տեպքէն :

Եւ քանի մ'ուկի դրապանը զնելէն ետեւ՝ ժամանակին պիտոյքը  
հոգալու մտօք, միւնքները դաղափարէ արկղին մէջ պահեց, ուր  
կ'զսնուեր նաև նշանաւոր թաշկինսակն որ իրեն հմայեկի աեղ  
ծառայեր էր :

Երկու բարեկամներ նախ Ալուսին տունը զային՝ որ դուրս չել-  
նելու համար ըրած երդման հաւատարիմ՝ վրան առաւ ձաշն իր  
տունը բերել տալու, և որովհետեւ խոհակերական խնդիրները լաւ  
կ'հասկնար Աթու, ա՝ Արդանեան և Արամիս կերակուրի կարեոր  
հողն անոր յանձնեցին յօժարակամ:

Բորթոսին տառը կ'երթային՝ երբ Պաք փողոցին անկիւնը Մուսաքոնին հանդիպեցան՝ որ ողբումը լի դէ մքով իր առջևէն կ'բժի ըսրի մ'եւ ձի մը :

Տ'Արդանեան զարմացման աղաղակ մ'արձակեց որ խնդովենէն լիսովին զերծ չէր :

— Ա՛հ, իմ գեղին ձիս — զուեց նա : — Արամիս, նայէ անգամ մը սա ձին :

— Ա՛հ, այս ի՞նչ սոսկալի յովատակ է — ըստ Արամիս :

— Լաւ, սիրելիդ իմ — վրայ բերաւ ա'Արդանեան — այս ձիս մը է որ բարիդ եկայ :

— Ի՞նչպէս, պարոն, միթէ այս ձին կ'ձանչէք — ըստ Մուսաքոնի :

— Բնատիպ զոյն մ'ունի — ըստ Արամիս — առաջին անգամն է որ այս դոյնով ձի մը կ'տեսնեմ :

— Կ'հուտամ՝ ըսածիդ — վրայ բերաւ ա'Արդանեան — ուստի երկոք սկսողի ծախեցի, և անտարակոյս նոյն մազն է, վասն զի ոսկրոտին տասն ութ ֆրանք անդամ շարժեր : Բայց այս ձին Մուսքոնի ձեռքն ի՞նչպէս անցեր է արդեօք :

— Ա՛հ — ըստ ազասաւորը — խօսքը մի ընէք, կ'աղաչեմ, մեր գքսուհւոյն էրկանը սոսկալի մէկ խաղն է այս :

— Ի՞նչպէս, Մուսքոն :

— Այու, մեծ շնորհ ունինք մեծատուն կնկան մ'առջն, այս է գքսուհի . . . բայց, ներեցէք, տէրա ապսպից ինձ գաղտնապահ լինիդ . այն կմնը ստիօփեր էր մեղ փոքրիկ յիշատակ մ'ընդունիլ, այսինքն Սպանիոյ փառաւոր նժոյդ մ'եւ անտալուսեան ջորի մը, որոնք սքանչելի էին 'ի աես . էրիկին այս բանս խմացաւ, ճամբուն վրայ մեզի դրկուած այն երկու փառաւոր կենադանիները դրաւեց և անոնց տեղ այս ահաելի աւանակները տուաւ :

— Ուրեմն հիմակ ետ կ'դարձնես — ըստ ա'Արդանեան :

— Անտարակոյս — վրայ բերաւ Մուսքոն . — յայսնի է որ այս տեսակ հեծանելիներ չենք կրնար ընդունիլ մեզի խոստացուած կենդանիներուն փոխարէն :

— Հարկաւ, ոչ, թէ և կ' փափաքէի իմ զեղին՝ ձիոս վրայ տեսնել Բորթոսը, ասկից կրնայի դաղափար մ' տնենալ թէ Բարիդ գալու ատենս ևս ինչ կերպարան ունէի: Բայց, Մուսքդօն, Ճամբար շարդիլենք, զնա տիրոջդ յանձնարարութիւնը կատարէ, զնա: Միթէ տէրդ տունն է:

— Այս, պարոն — ըստ Մուսքդօն, — բայց հաւտացէք: շատ նեղացած է:

Եւ իր ճամբան շարունակեց գէպ ՚ի Կրան-Օկիւսթէնի քարտիը, մինչդեռ երկու բարեկամք անբաղդ Բորթոսին դուռը զարնելու կ'երթային: Սակայն Բորթոս տեսեր էր անոնց բակէն անցնիլն և բանալու միաք չունէր: Հետեապէս երկու բարեկամները պարապ տեղը դուռը զարկին:

Սակայն Մուսքդօն իր ճամբան կը շարունակէր և Բօն-Նէօֆէն անցնելով՝ միշտ իր առջենն քշելով երկու առանակները, Աւրս Փողոցը հասաւ: Յետոյ՝ իր տիրոջ պատուերին համեմատ՝ ձին և ջորին գործակալ նօտարին դրան մուրճին կապեց, առանց անոնց ապագայ վիճակին հոդ ստանելու: ապա զարձաւ Բորթոսին քով և յայտնեց թէ իր յանձնարարութիւնը կատարեր է:

Քիչ ատենէն ետքը՝ երկու գժբաղդ կենդանիները՝ որ առաւտուն վեր բան մը չէին կերպած՝ այնքան ազմուկ հանեցին դրան մուրճը վերցնելով և իջեցնելով՝ որ գործակալն իր գործիկին ապսպից որ երթայ նայի թէ որուն են այն ձին և ջորին:

Տիկին Գօքնար իր ըրած ընծան ճանչեց և այս վերադաբձէն բան մը չհասկցաւ: բայց քիչ ատենէն Բորթոսի այցելութիւնն ամէն ինչ մեկնեց: Հրացանակրին աչաց մէջ փալփլով բարկութիւնը, թէ և ինքինքը զսպելու կ'ջանար, զգայուն սիրուհոյն ոիրտը թունդ հանեց: Արդարե՛ Մուսքդօն յայտներ էր իր տիրոջ որ ա՛ Արդանեանի և Արամիսի հանդիպեր էր ճամբուն վրայ, և թէ ա՛ Արդանեան ճանչեր էր իր Պէարնեան զրաստը՝ գեղնուկ ձին տեսնելով, քանի որ անով Բարիդ մաեր էր և երեք սկզբին ձախեր էր:

Բորթոս՝ Ան-Մակլուար վանատունը պեսնուելու համար զոր-

ծակալուհոյն հետ յամադիր լինելոն ետև՝ դուրս ելաւ։ Գորս  
ծակալը տեսնելով որ Բորթոս կ'մկնի, հրաւիրեց զինքը ճաշի,  
և հրացանակիրն այս հրաւերը վեհափառ կերպարանքով մը մերժեց։

Տիկին Գօգնար դողդողալով Սէն-Մակլուար վանատոնը զնաց,  
վասն զի քաջ կ'զոշակէր լսելիք յանդիմանոթիւնները, բայց  
Բորթոսի խրոխտ ձեւերէ ն հմայուեր էր։

Ինքնասիրութիւնը վիրաւորուած մարդու մը բերնէն ինչ լու-  
սանք և կշտամբանք որ հնարին է թափել կնկան մը գլուխն վը-  
րաց, Բորթոս իր զործակալուհոյն զլիին վրաց թափեց։

— Ափսոս — ըստ նա — ձեռքէս եկածն ըրի։ Մեր ծուխե-  
րէն մէկը ձիավաճառ է, դիւանին պարագ ունէր և վճարելու-  
կ'ընդդիմանար։ Ես ալ այն ջորին և ձին առի պարտուցը փոխա-  
րէն. խօսք առեր էր որ երկու թագաւորական հեծանելիներ  
դրէւ ինձ։

— Լաւ ուրեմն, տիկին — ըստ Բորթոս — եթէ քեզ հինգ  
սկոդէն առելի պարտաւոր էր, քու ձիավաճառ զող մ'է։

— Երդիլեալ չէ աման զնով բան ծախտ առնուլ, Պարո՞ն  
Բորթոս — ըստ զործակալուհին ինքզինք արդարացնել ուզելով։

— Աչ, ափկին, բայց անոնք որ աման բան կ'փնտուեն պար-  
տաւոր են ուրիշներուն ներել առելի վեհանձն բարեկամներ փըն-  
տուելու։

Եւ Բորթոս ընդ կրուկն դառնալով՝ քայլ մ'առաւ դուրս ել-  
նելու համար։

— Պարո՞ն Բորթոս, Պարո՞ն Բորթոս — պոռաց զործակալու-  
հին — զիտեմ որ անիրաւ եմ, պէտք չէր որ սսկարկէի քանի  
որ քեզի պէս ձիաւորի մը համար հեծանելի մը սղիւթի զնէի։

Բորթոս՝ առանց պատասխան տալու՝ երկրորդ քայլ մ'առաւ  
քաշուելու համար։

Գործակալուհին կարծեց թէ Բորթոս շողշողոն ամպի մը մէջ  
կ'գանուի և չըրս կողմը դքսուհիներ և մարքիզուհիներ կեցած՝  
անոր ոտքն սակելի ծրաբներ կ'նետեն։

— Կեցիր, յանուն Աստոծոյ, Պարո՞ն Բորթոս — զոչեց նա  
կեցիր և խօսինք։

— Քեզի հետ խօսիլ զլիսիս փորձանք բերել է — ըստ Բորգիուս :

— Բայց, ըստ ինձ, ի՞նչ կ'ապահանջես :

— Ո՛չ ինչ, վասն զի նոյն բանն ըսել է եթէ քեզնէ բան  
մ'ուղելի :

Գործակալուհին Բորգուսին թևէն կախուեցաւ, և իր բաղմա-  
տապ տրամութեան մէջ դոչեց .

— Պարոն Բորգուս, իրաւ որ ես այս դործէն տեղեկութիւն  
ընտ շունիմ. ուր զիանամ ես թէ ի՞նչ է ձի մը, ի՞նչպէս զիտ-  
նամ թէ թամբ ի՞նչ բան է :

— Պէտք էիր ի՞նձ զիմնէլ, ես որ այսպիսի բաներ զիաեմ,  
տիկին. բայց միտքդ խնայել էր, և հետեւապէս՝ վաշխով ստակ  
փոխ տալ :

— Սխալմունք մ'եղած է, Պարոն Բորգուս, և սրատոյս վը-  
սոյ կ'ըսեմ՝ որ զայն պիտի ուղղեմ:

— Եւ ի՞նչպէս պիտի ուղղես — Հարցոց Հրացանակիրը :

— Մտիկ ըրէ : Այս իրկուն Պ. Գօքնար Շօլմ դքսին տունը  
պիտի երթայ՝ անոր հրաեւրին համեմատ : Խորհրդակցութեան  
մը համար է անշռուշո՞ որ առ նուազն երկու ժամ պիտի տեւէ,  
եկաւը, մինակ պիտի լինինք և մեր հաշիւները կարգի կ'դնենք :

— Հիմակ շխտակ խօսեցար, սիրելիս, և կարծեմ իրարու-  
խօսք պիտի հասկնանք :

— Միթէ կ'ներես ի՞նձ :

— Կայինք — ըստ վեհափառութէն Բորգուս :

Եւ երկուքնին իրարմէ բաժնուեցան ըսելով. այս իրկուն պի-  
տի տեմնուինք :

— Թշուառական — ըստ մատվին Բորգուս հեռանալով — կ'ե-  
րեի ի՞նձ որ վերջապէս վարպետ Գօքնարի սնառիկին մօտենալո-  
ժամը հասաւ :

# ՃԵ

ԳԻՇԵՐՆ ԱՄԷՆ ԿԵՏՈՒՆԵՐԸ ՄՈԽՄԱԳՈՅՆ ԵՆ

Այս իրկունք՝ որուն այնքան անհամբերութեամբ կ'սպասէ ին բորթոս և տ'Արդանեան՝ վերջապէս հասաւ :

Տ'Արդանեան՝ ըստ սովորականին՝ Միլէտիին սունը զնաց ժամն իննին մօտ : Խիստ սիրագեղ զուարթութեան մէջ դտաւ զանի . երեք այնպիսի աղուոր ընդունելութիւն մը չէր ըրած իրեն : Մեր կասքնն իսկոյն մտարերեց որ իր տունակը Միլէտիին յանձնուեր էր և անոր վրայ կ'ներդորձէր :

Քէդի օշարակ մեծարելու համար ներս մտաւ : Եր տիրուհին սիրալիր երես մը ցցոց անոր , և իր չնորհալի ժողոտվի անոր ժպտեցաւ . բայց , առաջ , չէք օրիսրդն այնքան տրտում՝ էր որ Միլէտիին բարեսիրութիւնն անդամ շղիտեց :

Տ'Արդանեան այս երկու կիները հետզէաւ կը նայէր և սահմալ էր խոստովանելու առանձինն՝ որ բնութիւնը զանտիք յօրիքինելով վրիսեր էր . մեծատուն կնկան շահամոլ և վատթար հողի մը տուեր էր , իսկ նամշաբին դքսուհւոյ մը սիրու շնորհէր էր :

Ժամը տասին Միլէտի փոքր ինչ մտայոյզ երեկիլ սկսաւ , տ'Արդանեան հասկցաւ որ նա ինչ ըսել կ'առզէր , ժամացոյցին կ'նաշէր , ոսք կ'ելնէր , նորեն կ'նստէր , տ'Արդանեանի կ'ճպտէր այնպիսի դէմքով մ'որ ըսել կ'ուզէր . Անտարակոյս շատ սիրուն ես , բայց եթէ մեկնիս՝ ոտելի չքնաղ սփոտի երեկիս աչքիս :

Տ'Արդանեան ոսք ելաւ , իր դլխարին առաւ . Միլէտի ձեռքը առաւ համբուրելու . երիտասարդը զգաց որ զայն կ'սեղմէր և հասկցաւ որ չէ թիւ պչըսսիրութեան այլ մեկնելուն համար երախտազիտութեան նշան մ'էր այն :

— Աարսափելի կերպով կ'սիրէ զանի — մըմնաց նա , և ապա դուրս ելաւ :

Այս անգամ Քէղի չէր սպասեր բնաւ տ'Արդանեանի ոչ նաև խասենեկին , ոչ նըրքագաւթին մէջ , և ոչ մեծ դրան ներքեւ : Հարկ եղաւ որ տ'Արդանեան մինակը դունէ սանդուղն ու փոքրիկ սինեակը :

Քէղի դլուխը ձեռներուն մէջ պահած նստէր կ'լար :

Լսեց տ'Արդանեանի ներս մանելը , բայց դլուխը չվերցուց . օրատանին անոր մօս գնաց և ձեռները բռնեց , այն ատեն սկսաւ սասաթիկ հեծկլտավ :

Ինչպէս որ տ'Արդանեան դուշովեր էր , Միլէտի՝ նամակն ընդ գունելուն՝ առ անշափ ուրախութեան՝ իր նաժշտին ամէն բան ըստ սեր էր . յետոյ իրեն տրուած յանձնարարութիւնն այս անգամ լու կատարելուն՝ իրրե վարձ՝ քսակ մը շնորհէր էր :

Քէղի իր խորցը մանելուն՝ քսակը մէկ անկիւն նետեր էր , ուր բերանը բաց կ'կենար և օթոցին վրայ մէջէն երեք չորս հատ ոսկի ընկեր էր :

Հեք օրիորդը՝ տ'Արդանեանի զգուանքն ընդունելուն՝ դլուխը միերց : Նոյն իսկ տ'Արդանեան աշարեկ դիտեց անոր գէմքին անհնարին յուզմոնքը . օրիորդն աղերսաղին ձեռներն իրարուկցեց , բայց խօսք մ'ըսելու չհամարձակեցաւ :

Որչափ որ տ'Արդանեանի սիրաը շատ զգայուն չէր , այս ըստն տրտմութիւնէ յուզուեցաւ . բայց որովհետեւ իր խորհուրդներն և մանաւանդ այս վերջինն 'ի գործ կնելու որոշեր էր անվրէպ՝ չուղեց իր առաջուց պատրաստած յատակագիծը փոխել : Աւատի յօյս մը չթողուց Քէղիին իր խորհրդէն կասելու մասին , միայն իրրե պարզ վրէժինդրութիւն ցոյց տուաւ իր զործը :

Սակայն այս վրէժինդրութիւնն այնքան դիւրին կ'զառնար՝ որ Միլէտի , անշուշտ իր կարմրութիւնը սիրահարէն պահելու համար , պատուիրեր էր Քէղիին որ տան բոլոր կանթեղները մարեւ , մինչեւ անգամ իր սինեկին լոյսերը : Պ . Վարդ արշալուսէն առ ռաջ՝ միշտ ընդ խոտար՝ դուրս պիտի ելներ :

Պահ մ'եւաքը Միլէտին իր սենետին անցաւ : Տ'Արդանեան իսու կոյն պահարան մը վաղեց մտաւ : Այն ինչ անոր մէջ պլեր էր որ հնչակին ձայնը լսուցցաւ :

Քէղի իր տիրուհւոյն քովը զնաց , և դուռը բաց շթողոց , բայց միշնորմն այնչափ բարակ էր , որ երկու կանանց ըսածները գրեթէ կ'լսուեն :

Միլէտի ուրախութենէն արրշիու կ'երեւէր , պատմել կ'տար Քէղին Վարդին հետ ունեցած կարծեցեալ տեսակցութեան բոլոր մանր պարագաները , ինչպէս իր զիրն ընդուներ , ինչպէս պատասխաներ էր , կերպարանին երևոյթն ինչ էր , արդեօք շատ սէր կ'յայտնէր , և բոլոր այս հարցումներուն խեղչ Քէղի՝ անվրդով խօսք հասկցնելու պարտաւոր՝ խեղդուկ ձայնով մը պատասխան կ'տար , թէ և իր տիրուհին չէր նկատեր իսկ իր վշտալի ձայնը , այնչափ ինքնասէր է երջանկութիւնը :

Աերջապէս կոմսին հետ ունենալիք տեսութեան ժամը մօտենալուն՝ Միլէտին իրօք ամէն լցոյ մարել տուաւ և Քէղին ապսպեց որ իր խօսցը մօնէ , և Վարդը ներս հրամցնէ երբ որ ներկայի :

Քէղի երկար չսպասեց : Այն ինչ տ'Արդանեան՝ իր պահարանին նիդին ծակէն դիմուց որ բոլոր տունը մոլթ ու խաւար է , իր թաղստեան տեղէն դուրս եւառ , Ճիշդ այն միջացին որ Քէղի հաղորդակցութեան դուռը կ'ոցնէր :

— Ի՞նչ կ'նշանակէ այս աղմուկը — հարցուց Միլէտի :

— Ես եմ — ըստ տ'Արդանեան կիսաձայն — ես Վարդ կոմսը :

— Ո՛չ , Աստուած իմ , Աստուած իմ — մըմռաց Քէղի — իր որոշած ժամուն սպասելու անզամ չկրցաւ :

— Լաւ ուրեմն — ըստ Միլէտի դողդոջուն ձայնով մը — ինչո՞ւ համար ներս չմտներ : Կոմս , կոմս — յարեց նա — քաջ զիսես որ քեզի կ'սպասեմ :

Այս կոչման վրայ՝ տ'Արդանեան մեղմիկ հեւացոց Քէղին և սենետի վաղեց :

Եթէ երբէք կատղութիւն ու վիշտ հողի մը կրնան տանջել, այն սիրահարին հողին պարափ լինիլ որ իրեն յասուկ սեպալ անտամրը սիրոյ քաղցր խօսքեր կ'լսէ որոնք իր երջանիլ ուսուիին կ'ուզդուին :

Տ'Արդանեան վշտալի կացութեան մը մէջ կ'գտնուէր, թէ և դայն չէր դուշակեր, նախանձը սիրար կ'կրծէր, և խեղճ Քէղիին շափ կ'տառապէր, որ նոյն պահուն մօտակայս սենեկին մէջ կ'լար:

— Այո, կոմս — կ'ըսէր Միլէտի իր անուշաղոյն ձայնով, և իր ձեռներուն մէջ անորը կ'սեղմէր — այո, երջանիկ եմ այն սիրոյն համար, զոր՝ ամէն անդամուն երբ իրարու հանդիպէինք նայուածքը ու խօսքերդ ինձ կ'յայտնէին : Ես ալ քեզ կ'սիրեմ: Ո՛հ, վաղը, վաղը քեզնէ զբանկան մը կ'ուզեմ որով համոզուիմ թէ ինձի կ'մտածես, և որովհետեւ կրնաս զիս մոռնալ, առ քեզի նշան մը :

Եւ իր մատէն մատնի մը հանելով՝ տ'Արդանեանի մատն անցուց:

Տ'Արդանեան յիշեց որ նոյն մատնին Միլէտին մատն արգէն տեսեր էր, փառաւոր շափիզայ մ'էր անդամանցներով պատաժ :

Տ'Արդանեանի առաջին շարժումն եղաւ զայն ետ դարձնել, բայց Միլէտին յարեց.

— Ո՛չ, ո՛չ, ի նշան սիրոյս այդ մատնին պահէ: Նա մահանդ՝ զայն ընդունելով — յարեց նա այլայլեալ ձայնով մը — մծաղոյն ծառայութիւն մ'որ մաքէդ շանցնիր:

— Եւս կինը դաղանի խորհուրդներով լի է — մրմրաց տ'Արդանեան ինքնուովին :

Նոյն պահուն ամէն բան երեան հանելու տրամադրութիւն կ'զգար: Էնքանը բայցաւ ըսմէլու Միլէտին թէ ինքն ովչ է և պրէժինողրութեան ի՞նչ նպատակաւ եկած էր. բայց Միլէտին շարայարեց:

— Ի՞նչ անուշ հըշշուակ ես զու, և այն հըշշ Կարօնը քիչ մնաց քեզ պիտի սպաննէր, այո, նոյն ինքն հըշշն էր: Ո՛հ, յարեց Միլէտի — արդեօք վէրքերէդ տակալին կ'տառապիս:

— Այո, շնոր — ըստ տ'Արդանեան, որ ի՞նչ պատասխան տալը չդիտէր:

— Անհող եղիր — մրմռաց Միլէտի — քու վրէժդ պիտի հանեմ ես, և անազորոյն կերպով :

— Շուտիկ — ըստ խրովի ա'Արդանեան — տակաւին մտերամական խօսակցութեան ժամը չհասաւ :

Քիչ մը ժամանակի կարօտ էր ա'Արդանեան որ այս կարձատն արամախօսութենէ և ապն ինքնինքը դմնէ . բայց իր երկնած բուլոր վրիժու խորհուրդները մարեր էին : Այս կիմն իր վրայ անհաւատալի իշխանութիւն մը կ'ներգործէր, թէ կ'առէր և թէ կը սրաշտէր զանի, երբէք չէր կարծած որ իրարու լիովին հակառակ երկու դղացումներ մի և նոյն սրտին մէջ դանուին, և միաւնալով տարօրինակ և կերպով մը զիսական սէր մը յառաջ ընթանալու :

Սակայն ժամը մէկ նոր զարկեր էր . սկէտք եղաւ զատուիլ : Տ'Արդանեան Միլէտիկ բաժնուելու միջոցին՝ հեռանալուն վրայ սաստիկ ցաւ զգաց, և փոխադարձ իրարու ջերմաղին հրաժարական բարեներ տալու ատեն՝ հետեւեալ շաբաթուան համար նորէն տեսակցութիւն ընելու խօսք տուին :

Թշուառ Քէղին կ'յուսար քանի մը խօսք ողղել ա'Արդանեանի իր խորցէն անցնելու ժամանակը, բայց Միլէտի անձամբ մինչ չեւ սանդուղը բերաւ մատթին ձգեց և ապա ետ դարձաւ :

Հետեւեալ առառո՞ւ ա'Արդանեան Աթոսին տունը վազեց : Այս սիսի այլանդակ արկածի մը մէջ ընկեր էր որ անոր խորհուրդ հարցնել կ'ուզէր : Ամէն բան անոր սպատմաց, Աթոս քանի քանի անդամ իր ունկերը պուստեց :

— Այդ քու Միլէտիդ՝ վատանուն կին մը կ'երեի ինձ — ըստ անոր — բայց զարձեալ յանցառոր ես զանի խաբելուդ . աշաւ որ և է կերպով նոր ահռելի թշնամի մ'ալ շահեցար :

Եւ Աթոս խօսելով հանդերձ ուշի ուշով կ'զիտէր ականազարդ շափիղան՝ որ ա'Արդանեանի մատթին վրայ թաղուհոյն մատանիին տեղը բռներ էր, զոր զղուշութեամբ տիփին մէջ պահեր էր :

— Միթէ այս մատնիս կ'նային — ըստ Կասքօնը պարծենալով իր բարեկամաց առջեւ այնպիսի ճոխ ընծայ մը պարզելուն վրայ :

— Այս — ըստ Աթոս — զերդաստանիս մէկ զոհարը կ'յիշէւ  
ցընէ ինձ այդ մատնին :

— Եւ միթէ աղոր չէ, ինչ կ'ըսես — հարցոց տ'Արդա-  
նեան :

— Փառաւարէ է — պատասխանեց Աթոս — երթէք չէի կարծեր  
որ այդ աղոր ջրով երկու իրարու յար և նման շափիղաներ  
դժոնուին : Միթէ քու անդամանդիդ հետ փոխեցիր :

— Ոչ — ըստ տ'Արդանեան — իմ զեղանի անկլիացի կամ  
չա և զեղանի գաղղիացի կնոջ մէկ պարզեն է այս . վամն զի  
թէ և ես իրմէ զայն շինդրեցի, համոզուած եմ որ Ֆրանսա ծնած  
է : Վասն զի որչափ որ իրեն չհարցոցի, սակայն համոզուած  
եմ որ Ֆրանսա ծնած է :

— Միթէ այդ մատնին քեզի Միլէտին տուառ — զուեց Աթոս  
ձայնով մ'որմէ դիւրին էր զուշակել որ սաստիկ յուզուած էր :

— Նոյն ինքը ձեռօքը տուառ ինձ այս զիշէր :

— Աւքեմ նայիմ անդամ մը սա մատնին — ըստ Աթոս :

— Ահաւասիկ — պատասխանեց տ'Արդանեան իր մատէն հա-  
նելով :

Աթոս մատնին քննեց և զոյնը սաստիկ նետեց . յետոյ փորձ  
փորձեց ձախ ձեռքի մատանոյ մատը դնել զայն, և այն մատին  
կ'յարմարէր իբր զի անոր համար յատկապէս շինուած էր :

Բարկութեան և վրէմինդրութեան ամպ մ'անցաւ այս աղատ  
որդոյն ճակտին վրայ, որ սովորաբար այնչափ հանդարտ է :

— Կարելի ըսն չէ որ այն կինը լինի — ըստ նա . — ինչ  
պէս այս մատնին Քլարիկ կնոջ ձեռքը պիտի դանուէր : Եւ սա-  
կայն գժուարին ըան է որ երկու զոհարներ այսչափ իրարու նմանին:

— Միթէ այս մատնին կ'ճանչե՞ն — հարցոց տ'Արդանեան :

— Կարծեցի ճանչել — ըստ Աթոս — բայց անտարակոյս կը  
սխալէի :

Եւ մատնին տ'Արդանեանի յանձնեց, թէ և անդադար անոր  
կ'նայէր :

— Իրաւի — ըստ պահ մը խորհելէն ետե — տ'Արդանեան,

մասէդ հանէ այդ մատնին կամ զոնէ քարը ներսի զին զարձոր, այնպիսի անաղորդյն յիշատակներ միտքս կ'քերեն որ քեզի հետ խօսակցելու համար զլուխս իմս չէ : Միթէ իղնէ խորհուրդ հարցընելու չեկեր էիր, միթէ չէիր ըսեր ինձ որ շփոթեր էիր և ընելիքդ չէիր զիտեր . . . : Բայց կեցիր, տուր ինձ այդ շափիդան, այն որու վրայ քեզի խօսիլ կ'ուզէի՝ երեսին մէկը վէտած (éraillé) ունի զիպուածէ մը :

Տ'Արդանեան նորէն մատէն հանեց մատնին և Աթոսին տուաւ :

Աթոս սարսուռ մ'զզաց . — Դիտէ անզամ մը — ըսաւ նա — միթէ տարօրինակ չէ : Եւ տ'Արդանեանի ցցց կ'տար այն վէտն որուն դոյութիւնը կ'յիշէր :

— Բայց այս շափիդան որմէ՞ ձեռքդ եկեր էր, Աթոս :

— Իմ մօրմէս, որ ինքն ալ իր մօրմէն ստացեր էր : Խնչպէս որ ըսի, գերգասանէն մնացած հին զահար մ'է . . . և զերդաստանէս բնաւ դուրս չոլիտի ելներ :

— Եւ միթէ ծախեցի՞ր զայն — հարցուց վարանմամբ տ'Արդանեան :

— Ոչ — վրայ բերաւ Աթոս զարմանալի ժպիտով մը — զայն սիրոց զիշեր մը տուի մէկուն, ինչպէս որ այժմ քեզի արտեր է :

Տ'Արդանեան ևս մկան խորհիլ, այնովէս իմն կ'երեւէր իրեն թէ Միլէտիին հոգւոյն մէջ անդունդներ կան որոց խորը մուլթ անծանօթ էին :

Տ'Արդանեան մատնին դրաւ չէ թէ մատը, այլ զրպանը :

— Հաւտան ինձ — ըսաւ Աթոս բարեկամին ձեռքը բռնելով — զիտես արդէն թէ ուրչափ կ'սիրեմ քեզ, տ'Արդանեան, եթէ որ դի մ'ունենայի՝ չպիտի սիրէի աւելի քան քեզ : Արի, խօսք մտիկ ըրէ, և այն կնկանդ հրամեշտ տուր : Ես չեմ ճանչեր այն կինը, բայց տեսակ մը ներքին գրդում մ'ինձ կ'ըսէ թէ անօրէն էակ մ'է այն, և անոր վրայ աղբտարեր բան մը պիտի լինի :

— Եւ իրաւունք ունիս — ըսաւ տ'Արդանեան : — Ուստի անօրմէ պիտի հեռանամ, կ'խոստովանիմ որ այն կինը զիս անդամ կ'ահարեկէ :

— Միթէ այդ արխութիւնը պիտի ունենամ — ըստ Աթոռք  
— պիտի ունենամ — պատասխանեց ա՛Արգանեան — և անփի  
ջապէս :

— Եաւ կ'ընես, սիրելիս . և իրաւոնք ունիս — ըստ Աթոռք  
զրեթէ հայրական սիրով ա՛Արգանեանի ձեռքը ուղմբլով — և եւ-  
րանի թէ այս կինը՝ որ հազիւ թէ մեր կինայ հետ յարաբերու-  
թիւն ունեցաւ, սոսկալի հետք մը չձգէ անոր վրայ :

Եւ Աթոռք զլսովը բարե տուաւ ա՛Արգանեանի, իրը մարդ  
մ'որ կ'ուղէ կերպով մը հասկցնել որ իր խորհուրդներուն հետ  
առանձին մնալ կ'ախորդի :

Երբ ա՛Արգանեան իր տունը զնայ, Քէղին դտաւ որ իրեն  
կ'օպասէր : Եթէ ամիս մը ջերմէն տառապէր՝ այնքան խեղճ օրի-  
որդը չպիտի այլայլեր՝ որչափ այլայլեր եր զիշեր մը քնչատու-  
թեամբ և վշտով անցընելուն :

Եւ հէք Քէղին, դռնաւու ու դողդոջուն, ա՛Արգանեանի պա-  
տասխանին կ'ապասէր :

Աթոռք պատանւոյն վրայ մեծ ազգեցութիւն ունէր . իր բա-  
րեկամին խորհուրդներն իր սրտին յատուի բաղոքներուն միանա-  
լով, յորդորեր էին զինքը՝ նոյն միջոցին որ հապատութիւնն ու  
վրէժինդութիւնը գոհ եղեր էին, այնուհետեւ Միլէտին չտես-  
նել : Աւստի յետին պատասխան մը տալու համար դրիչն տուաւ  
և հետեւալ դիրք դրեց .

« Տիկին, մի յուսար որ կարող պիտի լինիմ՝ յառաջիկայ ժա-  
ռ և մարդութեան գործուելու . այս տեսակ զբաղումներ այնքան շատ  
և ունիմ իմ նորաբուժութենէս վեր՝ որ հարկ եղաւ անոնց կարդ  
և մը դնել : Երբ քու կարդդ դայ, պատիւ պիտի ունենամ քեզ  
և իմայ տալու :

« Զեռներդ կ'համբուրեմ

« ԿՈՍՄ ՏՀ ՎԱՐԴ :

Կակամիկաղի վրայ բառ մը չկար . արդեօք Կառքօնը զէ՞նք մը  
ողահել կ'ուղէր Միլէտին դէմ, և կամ առելի անկեղծ խօսինք :

արդեօք այն զոհարը՝ իրեւ իր գլուն ու զարդը պատրաստելու<sup>2</sup>  
վերջին միջոց մը չէր պահեր :

Մարդ մեծապէս կ'սխալի եթէ ժամանակի մը դորձերն ուրիշ  
ժամանակի տեսութեամբ դատէ : Ի՞նչ որ այսօր պարկեցած մարտ  
դու մը համար ամօթ կ'համարուէր, նոյն ժամանակ խիստ պարզ  
ու բնական բան մը կ'երեւէր, և աղնուադոյն գերդաստանի նորաւ  
զիր զինորներ առ հասարակ իրենց տիրուհիներուն քսակէն  
կ'ասպրէին :

Տ'Արդանեան իր նամակը բաց տուաւ Քէղիին + որ զայն կարա  
գաց նախ առանց հասկնալու, և կրկին կարդալով քիչ մնաց  
ուրախութենէ խելքը պիտի թուէր :

Քէղի չէր կարող այս երջանկութեան հաւտալ. տ'Արդանեան  
ստիպուեցաւ բերանացի բացարել այն երաշխառորութիւնները  
զոր արդէն դրով յայտներ էր, և թէ և Քէղի Միլէտիին ցավոտ  
բնաւորութիւնը ճանչելով կ'զգար որ մեծ վտանդ կար այն նաս  
մակին իր տիրուհոյն յանձնել, սակայն զարձեալ շուտ ընդ փոյթ  
վազեց Բլաս-Բյալ որ իր պատղամաւորութիւնը կատարէ :

Լաւագոյն կնոջ սիրտն իսկ ոսոխ կնկան մը վշտաց համար  
անդութ է :

Միլէտի նամակը բացաւ շտապաւ մ'որ նոյնը բերելու համար  
Քէղիի ըրած շտապէն վտօր չէր մնար. բայց այն ինչ առաջին  
բառը կարդաց, Միլէտին կապոյտ դոյն մ'առաւ, յետոյ թու զմը  
ճմրդեց և գեւալ ի Քէղի դարձաւ կայծակնացայտ աչք :

— Ի՞նչ կ'նշանակէ այս զիրը, Քէղի — հարցոց նա:

— Միթէ ձեր նամակին պատասխանը չէ — պատասխանեց  
Քէղի բոլորովին գոլգոջաւն :

— Անկարելի բան — գոչեց Միլէտի — անկարելի բան է որ  
պատորդի մ'այսպիսի զիր մը զրէ կնկան մը :

Աերջո՛ յանկարծ սարսուելով

— Աստուած իմ — ըստ նա — արդեօք զիտէ . . . — և կանեց  
ուստաւ :

Իր ակրաները կ'կրծտէին, գոյն էր դարձեր մոխիր, քոյլ

Քը կ'ուզէր դէպ ՚ի պատուհանն առնուլ որպէս զիւ հով շնչէ՛՛ բայց թեերը միայն կրցաւ կարկառել, առները կասեցան և թիկ նախորի մը վրայ ընկաւ :

Քէղի կարծեց թէ տիրուհին մարեցաւ և վաղեց անոր չփակը բանալու : Բայց Միլէտի աշխուժիւ ոտք ելաւ և ըսաւ .

— Ի՞նչ կ'ուզես, և ինչո՞ւ համար ինձի կ'գպիս :

— Կարծեցի, ամիրուհիս, որ մարեցաք և օդնել ուզեցի — պատասխանեց նաժիշտը՝ իր տիրուհւոյն առած սոսկալի կերպարանէն լեղապատառ լինելով :

— Ե՛ս մարիմ, Ե՛ս, Ե՛ս, միթէ կարծես թէ կնամարդի մ'եմ : Նրը մէ կը զիս կ'նախատէ, չեմ մարիր, այլ վրէժ կ'հանեմ, կ'լսե՞ս :

Եւ ձեռքովը նշան ըրաւ Քէղիին դուրս ելնելու :

## ԺԶ

### ԱՐԵՖԻՆԴԻՌՈՒՅՆԵԼՆ ԵՐԱԶ

Միլէտին՝ հրաման տուաւ որ իրկոնը տ'Արդանեան դալոն ըստ սովորութեան, իսկոյն իրեն ներկայեն : Բայց տ'Արդանեան չէկաւ :

Հետեւեալ օրը Քէղի եկաւ պատանիին տունն ու առջի օրն առմէն անցած գարձածն անոր պատմեց . ա'Արդանեան ժպտեցաւ, Միլէտին այս նախանձայոյզ բարկութիւնն իր վրէժինդրութիւնն էր : Միլէտին աւելի անհամբեր երեցաւ իրկունը քան առջի օր, Կապօնին վերաբերող հրամանը վերստին տուաւ, բայց նախորդ օրուան պէս ընդունայն անոր սպասեց :

Միւս օրը՝ Քէղի տ'Արդանեանը զանելու զնաց, չէ թէ նառ խորդ երկու օրուան պէս թեթևաշարժ և զուարթ, այլ մեռնելու չափ արտում տխուր :

Տ'Արդանեան հարցոց հէք օրիորդին թէ բնչ տնի , բայց  
ուս՝ իրեւ պատախան՝ զրագանեն զիր մը հանեց և անոր յանձնեց :

Այս նամակին զիրը Միլէտինն էր , սա աարքերութեամբ որ  
այս անգամ՝ չէ թէ Վարդին՝ այլ իրօք ա՛Արդանեանի հասցէին  
ռւզղեալ էր :

Ուստի բացառ և սա տողերը կարդաց .

« Աիրելի Պարոն ա՛Արդանեան , այսպէս բարեկամներդ մոռնալ  
և չվայլեր , մանաւանդ այն միջոցին՝ որ երկար ժամանակի համար  
և անոնցմէ պիտի հեռանաս : Իմ աներձադս և ես երէկ և առջի  
և օր պարապ տեղը քեզի սպասեցինք . միթէ այս իրկուն ալ մեր  
և յոյսը գերեւ պիտի ելնէ :

« Քու երախտազէտ բարեկամուհիդ .

« ՄԻԼԵՏԻ ՔԷՐԹԻԿ :

— Ծատ պարզ բան է — ըստ ա՛Արդանեան — և այսպիսի  
նամակ մընդունել կ'յուսայի : Իմ վարկս Վարդ կոմսինն ընկ-  
նելովը կ'բարձրանայ :

— Միթէ պիտի երթան — հարցոց Քէղի :

— Մտիկ ըրէ , սիրելի աղջիկս — ըստ Կառքօնը՝ որ ինքն  
իր առջե ինքզինքն արդարելու կ'ջանար Աթոսին ըրած խոստման  
գէմ վարուելուն համար — քաջ կ'զգաս որ շատ անպատճէ բան  
է այսպիսի զրաւոր հրաւէրի մ'անձամբ չողատախանելը : Միւ-  
լէտին տեսնելով որ իրեն չեմ երթար , իմ այցելութիւններուս  
ընդհատումէն բան մը չողիափ հասկնայ , կարելի է կասկածի եր-  
թայ , և ով կընայ զուշակել թէ այն բնաւորութեան տէր կին  
մը մինչև ուր կընայ հասցնել իր վրէժինդրութիւնը :

— Ո՞չ , Աստուած իմ — ըստ Քէղի — այնպէս կ'բացատրես  
զու ամէն բան որ միշտ իրաւունք կ'ստանաս : Բայց կ'նայիմ որ  
նորէն անոր հետ սիրաբանելու միտք ունիս , և եթէ այս ան-  
դամ ելնես քու Ճշմարիտ անունով և յատուկ գէմքով անոր  
համելի գառնաս , աւելի վատ պիտի լինի քան զառաջինն :

Բնազրումով կ'զուշակեր խեղճ աղջիկը պատահելիք իրաց մէկ  
մասը :

Տ'Արդանեան՝ կարելի եղածին չափ ապահովուց քեզին և խօսք տուաւ Միլէտիին հրամուրանաց անդդայ մաւլու :

Ուստի քեզիին բերնով Միլէտիին պատասխանեց թէ չափազանց շնորհապարտ է անոր բարեսրտովեան համար և թէ հրամանին համեմատ պիտի երթայ անոր հետ տեսակցելու, սակայն սպասանին չհամարձակեցաւ զիր զրելու, վախնալով որ թերեւ Միլէտիին պէս փորձ աչերուն առջե անկարող դժոնուի իր զիրն ըստ բատականին այլակերպել :

Տ'Արդանեան՝ ժամը ինն զարնելուն՝ Բլաս-Բոյալ կ'զանուեր յայսնի էր որ նախասենեակը սպասով սպասաւորներն անոր զալոստեան կանխաւ տեղեւակ էին, վասն զի՞ այն ինչ ա'Արդանեան երեցաւ, սպասաւոր մը վաղեց տան տիրուհոյն ձայն տալու, զեռ որտանին չհարցուցած թէ արդեօք տան տիկինը մարդ կ'ընդդնի :

— ՆԵՐՍ ՀՐԱՄԳՈՒՐ — ըստ Միլէտի կարուկ այլ այնպիսի սուր ձայնով մ'որ ա'Արդանեան նախասենեկէն լսեց :

Տ'Արդանեանը ներս հրամցուցին :

— Ուրիշ մէկը տեմնել չեմ ուղեր — ըստ Միլէտի — կ'լսե՞ս, և ոչ մէկը :

Սպասաւորը գուրս ելաւ :

Տ'Արդանեան հետաղնին ակնարկ մը նետեց Միլէտիին վրայ զունաս էր և աշերը յոդնած էին, սեպէ արտառքէ, տքնութենէ սեպէ : Գիտմամբ լոյսերուն սովորական թիւը նուազեցուցեք էին, և սակայն նորասի կինն անկար էր սքողել երկու օրէ վեր դիմքը տանիջով տենորին նշանները :

Տ'Արդանեան Միլէտիին մօտեցաւ իր սովորական մարդական րութեամբ, այն ատեն յետին Ճիկ մ'ըրաւ տիկինն որպէս զի՞ շէնքով շնորհքով ընդունի սրասանին, բայց այնքան վրդավեալ էր իր կերպարանն որ իր սիրաբոյր ժայիսն անգամ զինքը մասնեց :

Երբ ա'Արդանեան քանի մը հարցումներ ուղղեց առողջութեան վրայ,

— Պատ է — սպասասխանեց Միլէտին — շատ վատ :

— Աւրեմն իմ այցս անխոհէմութիւն է — ըստ ա՞Արդանեան  
— անշուշտ հանգստանալու պէտք ունիս , և ես ալ պիտի մեկ-  
նիմ երթամբ :

— Զէ — ըստ Միլէտի — ընդ հակառակն , կեցիր , Պարսկ-  
ա՞Արդանեան , քու սիրուն ընկերութիւնդ զիս պիտի սիոփէ :

— Հօ , հօ — ըստ մտովին ա՞Արդանեան — երթէք այսչափ  
չքնաղ եղած չէ Միլէտին , պէտք է զգոյշ կենալ :

Միլէտի կրցածին չափ սիրաւէտ երես մ'առաւ և իր խօսակ-  
ցութեան ըստ կարի փայլ տուաւ : Կոյն միջոցին՝ տենդը՝ որ զինքը  
պահ մը մողեր էր՝ դատնալով անոր աշերուն փայլ , այտերուն  
զոյն , շրթերուն երանդ կ'ընծայէր : Տ'Արդանեան դտաւ վերս-  
տին այն Սիրաէն որ զինքն արդէն թուվիր էր լիովին : Եր մէրը՝  
զոր մարած կարծէր՝ մէկ մմրեր էր միայն , սրտին մէջ նորէն  
արթնցաւ : Միլէտի կ'ժառտէր , և ա՞Արդանեան զդաց որ այս ժը-  
պտին ինքինք զո՞չ ընելու պատրաստ էր :

Պահ մ'այնպէս մ'զդաց որ խղճի խայթի պէս բան մը սիրտը  
կ'տան ջէ :

Փոքր առ փաքր Միլէտի աւելի դիւրահաղողով դարձաւ : Հար-  
ցուց ա՞Արդանեանի թէ արդեօք սիրուհի մ'ունի՞ :

— Աւաղ — ըստ ա՞Արդանեան՝ կարելի եղածին չափ զգայուն  
երես մը դասելով — որչափ անդթութիւն է ինձ սցդպիսի հար-  
ցում մ'ուղղել , ինձ որ քեզ տեսնելէս վեր միայն քեզընվ և  
քեզի համար շունչ կ'առնում :

Միլէտի տարօրինակ կերպով ժպտեցաւ :

— Աւրեմն զիս կ'սիրե՞ս — հարցուց նա :

— Միթէ պէտք ունիմ ըսելու քեզի , և ցարդ չդիտեցի՞ր :

— Անշուշտ , բայց արդէն զիտես , որչափ սիրտերը հօրարտ  
նոյնչափ դժուարին է զանոնք որսալ :

— Ո՛չ , զժուարտթիւնները զիս չեն ահարեկեր — ըստ ա՞Ար-  
դանեան — անկարելի բաները միայն ինձ աչ ու զող կ'աղջեն :

— Ճշմարիտ սիրոյ առջեւ անկարելի բան մը չկաց — ըստ  
Միլէտի :

— Զիսի՝ ամելին :

— Ուշ, չկոյ — վրայ բերաւ Միլէտի :

— Ամսանաց — արտասանեց ա' Արդանեան մեկուսի — շատ տաք կ' խօսի, արդեօք դիպուածով ինձ սիրահարեցաւ այս կամ շատ կինը, և միթէ տրամադիքը է ինձի տալու տրիշ շափիղայ մը՝ նման այն շափիղային՝ զօր Աւարդ կոսմին համար ինձի տուաւ:

Տ' Արդանեան՝ իր ամուն աշխաւճիւ Միլէտին աթուին մօտեցոց :

— Կայինք — ըստ տիկինը — ի՞նչ պիտի ընէիր այդ ըստ սիրոց նշանն ինձ ցոյց տալու համար :

— Ի՞նչ որ պահանջես : Հրաման տուը և պատրաստ եմ :

— Ամէն բանի :

— Ամէն բանի — զուեց ա' Արդանեան՝ որ կանխաւ դիտէր թէ այս խօսքը տալով մեծ բան չէր կորուսեր :

— Լաւ ուրեմն, քիչ մը խօսինք — ըստ ըստ կարդի Միլէտի՝ իր թիկնաթուը ա' Արդանեանի ամուին մօտեցնելով :

— Քեզի մարկ կ' լընեմ, տիկին — ըստ նա :

Միլէտի պահ մը թախծաղին և անսառյգ մնաց, յետոյ իբր թէ որոշում մ' ըրաւ,

— Թշնամի մ' ունիմ — ըստ նա :

— Դո՛ւ, տիկին — զուեց ա' Արդանեան զարմանք կեղծելով՝ միթէ հնարին է, Աստուած իմ, զու որ այնչափ բարի և զեղանի ես :

— Անհաջո թշնամի մը :

— Իրան :

— Թշնամի մ' որ դիս այնչափ անդմաբար նախատեց որ մեր մարտը ցմահ պիտի անէ : Կարող եմ՝ արդեօք քու աջակցուաթեանդ լսաւհիլ :

Տ' Արդանեան իսկոյն հասկցաւ թէ այս քինախնդիր է ալլը խօսքն ուր պիտի տանիի :

— Կարող ես վստահիլ տիկին — ըստ նա մեծաբանութեամբ

— իմ բաղաւիս ու իեանքս քուիլդ են ինչպէս նաև սէրս :

— Աւրեմն — ըստու Միլէտի — քանի որ այնչափ վեհանձն ես ու միանգամցն սիրահար . . . :

Եւ այս տեղ կանգ առաւ նա :

— Ապա — հարցուց ա' Արդանեան :

— Ապա — վրայ բերաւ Միլէտի պահ մը լուս կենալէն եւ տեւ — այժմէն զաղրէ անկարելի բաներ կան ըսելէ :

— Զիս իմ երջանկութեան համար մի պատճեր — գոչց ա' Արդանեան ծանր զալով և համրայներով ծածկեց Միլէտիին ներկայացնցած ձեռքը :

— Այն վասազգի Ապրդէն վրեմս հանէ — կ'ըսէր Միլէտի իր ակուաներոն մէջէն, և ապա քեզնէ ալ պրծելու ձարը պիտի դժոնեմ, կրկնակի յիմար, կենդանի սուրի սայր :

— Կամովին թեներուս մէջ ընկիր այդշափ լրբութեամբ զիս ծաղրելէն ետեւ, կեղծաւոր և վտանգաւոր կին — կ'ըսէր ա' Արդանեան ևս մեկուսի — յետոյ ես քու վրադ պիտի խնդամ այն անձին հետ զոր իմ ձեռօքս սպաննել կ'ուզես :

Տ' Արդանեան դլուխը վերցուց :

— Պատրաստ եմ — ըստու նա :

— Ուրեմն միաքս իմացար, սիրելի ո՛ . ա' Արդանեան — ըստ Միլէտի :

— Ես կարող եմ մէկ ակնարկդ իսկ դուշակել :

— Այսպէս ուրեմն բազուկդ՝ որ այնչափ համբաւ ստացած է արդէն, ինձի համար պիտի գործածես :

— Անմիջապէս :

— Բայց ես — ըստու Միլէտի — ինչպէս պիտի հաստացնեմ այդպիսի ծառայութեան մը փոխարէնը . քաջ կ'ձանչեմ տարփաւորները, այնպիսի մարդիկ են որ առանց փոխարէնի ոչ ինչ չեն ըներ :

— Գու դիտես թէ ինչ պատասխան կ'փափաքիմ ստանալու — ըստու ա' Արդանեան — պատասխան մը միայն որ քեզի և ինձի արժանի լինի :

Եւ դանի մեղմիկ իր վրայ քաշեց :

- Միլէտի հաղիւ թէ ընդդիմութիւն մը ցցոց :
- Շահախնդի՞ր — ըստ նա ժպտելով :
- Ա՛հ — զոչեց ա՛նըանեան՝ իրապէս յուղուած այնպիսի տոփանքով՝ զոր այն կինը միայն սրտին մէջ վառելու ձիրքն ու նէր — ա՛հ, արդարե իմ երջանկութիւնս ինձ անհաւանական կ'երեի, և միշտ վահնալով որ երազի պէս չմարի այն, կ'փոթամ դայն իրացնել :
- Լաւ ուրեմն, այդ կարծեցեալ երջանկութեան արժանացիր :
- Քո հրամանիդ պատրաստ եմ — ըստ ա՛նըանեան :
- Ստոյդ է — ըստ Միլէտի վերջին կասկածով մը :
- Տուր ինձ այն վաստաղղիին անունն որ քո աղւոր աչերդ լացնել տուաւ :
- Ո՞վ ըստ քեզ որ լացի — պատասխանեց նա :
- Ինձ կ'երեէր . . . :
- Ինձի պէս կիներ չեն լար — ըստ Միլէտի :
- Աւելի աղէկ : « Նայինք, ըսէ ինձ, ի՞նչ է անունը :
- Մտածէ անգամ մ'որ այս անունն իմ զաղանիքս է :
- Սակայն պէտք է որ անունը դիտնամ :
- Այս, պէտք է . նայէ թէ ո՛րչափ մեծ է վստահութիւնութու վրայ :
- Զիս ուրախութեամբ կ'լնուս : Կ'հնչպէս կ'անուանի :
- Դու զանի կ'ձանչես :
- Իրա՞ւ :
- Այս :
- Անշուշտ բարեկամներէս մին չպիտի լինի — վրայ բերաւ ա՛նըանեան՝ վարանում կեղծելով՝ որպէս զի հաւտացնէ թէ անգէտ է այս մասին :
- Եթէ բարեկամի լինէր, ուրեմն պիտի վարանէիր — զուչեց Միլէտի, և սօգառնալիքի փայլակ մ'անցաւ աչերէն :
- Ո՞չ, չպիտի վարանիմ, եթէ եղբայրս անգամ լինի — զուչեց ա՛նըանեան իրը թէ խանդաղին յափշտակուած է :
- Մեր Կասքօնն անվտանգ կ'յաւաշանար, վասն զի դիտէր թէ նուր կ'երթար :

— Ա'սիրեմ՝ անձնուիրութիւնդ — ըստ Միլէտի :

— Աւաղ, միթէ միայն իմ անձնուիրութիւնս կ'սիրես — հարցուց ա'Արդանեան :

— Քեզ ևս կ'սիրեմ, քեզ — ըստ Միլէտի անոր ձեռքը բըռնելով :

Եւ այս հրատապ սեղմումը ա'Արդանեանի սարսուռ ազգեց, իրը թէ՝ ջշափմամբ ինքն ևս կ'ստանար այն տենդն որով Միլէտի կ'բորբոքէր :

— Դու, դու զիս սիրե՞ս — զոչեց նա : — Ո՛չ, եթէ այդ իւսու է, խելքս պիտի թուցնեմ :

Եւ զանի թեներուն մէջ սեղմեց . Միլէտի իր շրթերն անոր համրոյէն հեռացնելու չջանաց, միայն փոխարէն համրոյը չտուաւ :

Իր շրթերը պաղ էին . ա'Արդանեանի այնպէս երկցաւ թէ արձան մը կ'զրիէ :

Սակայն դարձեալ խնդութենէ արքշու, սիրով բորբոքուած էր . կ'հաւատար զրեթէ Միլէտիին զորովոյն, զրեթէ կ'հաւատար Վարդի յանցանքին : Եթէ Վարդ նոյն պահուն ձեռքին տակ եղած լինէր, անտարակոյս զանի պիտի սպաննէր :

Միլէտի այս առիթը պատեհ սեպեց :

— Անոնն է . . . — ըստ նա ըստ կարդի :

— Աւաղ, զիսեմ — զոչեց ա'Արդանեան :

— Եւ ինչպէս զիտես — հարցուց Միլէտի ու անոր երկու ձեռները բանելով և աչերուն մէջ զիտելով կ'ջանար սրտին խորը թափանցել :

Տ'Արդանեան զգաց որ սահմանէն անցեր և սխալմունք մ'ըրեր էր :

— Ըսէ, ըսէ, բայց ըսէ ուրեմն — կ'երեքնէր Միլէտի — ուստի՞ զիտես :

— Բասաի՞ զիտեմ — ըստ ա'Արդանեան :

— Այս :

— Գիտեմ, վասն զի երէկ Վարդ, զտնուած մէկ սրահիս մէջ մատնի մը ցոյց տուաւ ըսելով թէ քեզնէ առեր է :

— Ապիրատը — զուեց Միլէտի :

Այս մակղիրը, ինչպէս զիւրին է իմանալ, ա'Արդանեանի մինչև սրտին խորը հնչեց :

— Լաւ ուրեմն — յարեց նա :

— Լաւ ուրեմն, այն ապիրատէն վրէժդ պիտի լուծեմ — վը-բայ բերաւ ա'Արդանեան Հայաստանի տօն Յափէթի կերպեր զա-սելով :

— Ճնորհակալ եմ, իմ արի բարեկամն — զուեց Միլէտի — և երբ վրէժս պիտի հանես :

— Վաղը, հիմակ իսկ, երբ որ ուզես :

Միլէտի պիտի դոչէր : — Անմիջապէս : Բայց մտածեց որ այս պիսի շտապ մը ա'Արդանեանի համար շնորհալի չպիտի երեկը :

Ասկէ զատ՝ շատ զգուշութիւններ ընելու պէտք ունէր, հա-ղար տեսակ խորհուրդներ ունէր իր պաշտպանին տալու, որպէս զի կոմսին հետ և վկաներու առջև որ և է բացատրութեան տե-ղի շարուի : Այս ամէնը ա'Արդանեանի մէկ խօսքը նախատեսած եղաւ :

— Վաղը պիտի վրէժդ լուծուի կամ ես պիտի մեռնիմ :

— Ոչ — ըստ Միլէտի — դու վրէժս պիտի առնուս, բայց չպիտի մեռնիս : Հակառակորդ վատ մարդ մ'է :

— Թերեւս կանանց հետ, բայց մարդկան հետ : Ես արդէն փորձն առեր եմ :

— Բայց կ'երեկ ինձ թէ անոր հետ ունեցած կրուիդ մէջ, բաղդէն զանդատելու պատճառ մը չունեցար :

— Բաղդը խենէշ մ'է . երեկ նպաստաւոր, թերեւս վաղը կըու-նալին ինձ դարձնէ :

— Ասով ըսել կ'ուզես թէ այժմ կ'գեղեկիս :

— Ոչ, չեմ գեղեկիր, Աստուած չընէ : Բայց միթէ արդարա-ցի՞ է հաւանական մահու դիմել աներկլուդ՝ առանց քեզնէ յոյսէ փոքր ինչ առելի բան մը ստանալու :

Միլէտի դիմի նշմայրով մը պատասխանեց որով ըսել կ'ուզէր,

— Միթէ այդ է խնդիրդ, խօսէ նայսմ :

Յետոյ զլիի նշմայրը յայտաբար խօսքերու միացնելով,  
 — Ծան արդարացի է խնդիրդ — ըստ նա զորովազին :  
 — Ո՛չ, հրեշտակ մ'ես — ըստ պատանին :  
 — Այսպէս ամէն ինչ որոշուած է — ըստ Միլէտի :  
 — Բաց ՚ի խնդրածէս, սիրելի հողի :  
 — Բայց ինչո՞ւ չես հաւտար, քանի որ կ'ըսեմ քեզ թէ կըբ-  
 նաս սիրոյս վստահիլ :  
 — Ճեաեեալ օր մը չունիմ սպասելու համար :  
 — Լոռոթիւն, եղբօրս ձայնը կ'լսեմ. անօգուտ է քեզ այս  
 տեղ գանելու :  
 Ուսափ հնչակը զարկաւ, Քէղի երեցու :  
 — Աս դռնեն ելիր — ըստ նա զաղտնի փոքրիկ դուռ մը  
 հրելով — և ժամը տասն մէկին դարձիր, մեր խօսակցութիւնը  
 կ'աւարտենք . Քէղի քեզ իմ սենեակս պիտի քերէ :  
 Խեղջ աղջիկը քիչ մնաց զլիսիվայր գետին պիտի ընկնէր այս  
 խօսքերը լսելով :  
 — Լաւ ուրեմն, ինչ կ'ընես այդ տեղ, օրիորդ, ինչո՞ւ հա-  
 մար արձանի պէս անշարժ կեցեր ես : Օ՞ն, այս ասպետին ճամ-  
 բայ ցոյց տնւր, և այս իրկուն, ժամը տասն մէկին, ըսածս  
 լսեցիր :  
 — Կ'երեի թէ իր տեսութիւնները ժամը տասն մէկին կ'ընէ  
 — մտածեց տ'Արդանեան . — այս պիտի լինի իր սովորութիւնը :  
 Միլէտի անոր իր ձեռքն երկնցուց, զոր տ'Արդանեան գորո-  
 վազին համբուրեց :  
 — Նայինք — ըստ ա'Արդանեան գուրս ելնելով և հազիւ  
 ուրեմն Քէղիի յանդիմանութիւններու պատասխան տալով — նա-  
 յինք, յիմարութիւնը մէկ դի թողունք . իրաւի այս կինն երևելի  
 ապիրատ մ'է . զգուշանանք :

# ԺԷ

ՄԻԼԵՏԻՒՆ ԳԱՎԱՏՆԵՔԸ

Տ' Արդանեան ասկարանէն դուրս ելեք էր՝ փոխանակ քէղիին քովն երթալու, սյն նորասի օրիորդին թախանձանաց հակառակ, և այս վարմունքը բոներ էր երկու պատճառի համար. առաջիւնը, վասն զի այս կերպով անսր յանդիմանութիւններէն, մեղադրանքէն և աղաչանքէն կ'աղատէր. երկրորդը՝ վասն զի կ'ուղեր առանձին ամփոփուիլ և մտածել, և, եթէ հնարին է, այս կնկան միտքը թափանցել:

Այս իրաւ էր որ տ' Արդանեան խեի պէս կ'սիրէր Միլէտին, թէ և Միլէտին զանի բնաւ չէր սիրեր: Տ' Արդանեան պահ մը մտածեց թէ իրեն համար ամենէն լաւ բանն էր տան գառնալ և Միլէտիին երկար զիր մը զրել, խոսառվանելով որ ինք ու Վարդ մինչեւ այն կէտը բոլորովին մի և նոյն են, և թէ հետեապէս չէր կընար առանց ինքնասպանութեան, որ Վարդը սպաննել: Բայց ինքն ալ վրէժինդրութեան վայրադ տենչով մը զըրադուած էր, ինքն ևս ըստ կարդի՝ կ'ուղեր ստանալ իր անուանին այն կինը, և որովհետեւ կ'երեւակայէր թէ այս վրէժինդրութիւնն իրեն շատ անուշ պիտի դայ, բնաւ չուզեց անկէետ կինալ:

Հենդ վեց անդամ՝ Բլաս-Բօյալի շրջանն ըրաւ, և ամէն տասքայլ առնլուն կ'դառնար Միլէտիին սենեկին լոյսը դիտելու, որ վանդակներուն մէ ջէն կ'երեւէր: Յայտնի կ'թուէր որ այս անդամ առաջուան պէս չէր շտապեր նորասի կինն իր սենեակը քաշուելու: Ի վերջէ լոյսն աներեսյթ եղաւ:

Այս լուսով՝ տ' Արդանեանի սրտին մէջ մարեցան յետին վարանումը, առ ջի զիշերուան մանր պարագաները յիշեց, և սիրա

՚ի թունդ , զլուխը տաքցած , ապարանը մտաւ և Քէղիի սեն-  
եակը վազեց :

Նորատի օրիորդը՝ որ մեռելի պէս դունաւ էր և բոլոր մար-  
մանվ կ'գողար , ուղեց իր սիրահարը կեցնել , բայց Միլէտին՝ որ  
ականջը տնկեր մտիլ կ'ընէր , ա՛Արդանեանի հանած աղմուկը  
լսեր էր . ուստի դուռը բացաւ ու ըստաւ .

— Եկո՞ւր :

Այս ընթացքն այնպիսի անհաւատալի լկութիւն , այնպիսի  
հրէշային լպրշութիւն մ'ունէր , որ հաղիւ թէ ա՛Արդանեան կա-  
րող էր հաւատալու տեսած և լսած բաներուն : Կարծէր թէ տե-  
սակ մը ցնորական խարդաւաննքէ մը հուրապորուած է , ինչ-  
պէս որ կ'պատահին երազի մէջ :

Սակայն դարձեալ Միլէտին կողմը վազեց , անձնատուր լի-  
նելով այն ձգողական զօրութեան որով մաղնիսը կ'քաշէ երկաթը :

Դուռն իրենց վրայէն դոցուեցաւ :

Քէղի ալ իր կողմէն դրան կողմը վաղեց :

Նախանձ , կատղութիւն , նախատեալ հպարտութիւն , վերջա-  
պէս ամէն կիրք որ սիրահար կնկան մը սրտին մէջ կ'մբցին , իր  
յորդորէին զինքն ամէն բան վեր հանելու , բայց կորսուած էր  
նա եթէ խոստովանէր որ այս մեքենայութեան աջակից գտնուեր  
էր , և մանաւանդ՝ ա՛Արդանեան իրեն համար կորսուած պիտի  
լինէր : Սիրոյ այս վերջին մտածմոնքը զինքը յորդորէց նորէն  
այս վերջին զոհն ընելու :

Միւս կողմէ ա՛Արդանեան իր փափաքանաց լրումը կ'տեսնէր .  
զինքը սիրելով Միլէտին իր ոստիը չէր սիրեր , այլ կարծես թէ  
նոյն իսկ ինքը կ'սիրուէր : Արտին խորէն դաղտնի ձայն մը կ'ը-  
սէր իրեն արդարե որ վրէժինդրութեան զործի մ'էր զոր կ'զըդ-  
ուէր Միլէտին՝ մինչե որ ուրիշին մահ տալու ժամը դայ , բայց  
զուռզութիւնը , բայց ինքնասիրութիւնը , բայց յիմարութիւնն այս  
ձայնը կ'լուցնէին , այս մըմունջը կ'խեղդէին : Ասկէ զատ՝ մեր  
կասքօնը ինքն իր վրայ ունեցած վստահութեամբը , ինչպէս որ  
ընթերցողին արդէն յայսնի է , ինքոինք Աարդին հետ կ'բազ-

դատեր և կ'հարցնէր իւրավի, հուսկ ուրեմն, թէ ի՞նչ պատճառ՝  
ուա զինքն՝ իր անձին համար միայն չպիտի սիրէր Տիլէտին:

Հետեւապէս ինքզինքը բոլորավին նոյն ժամուան զգացումներուն  
տուաւ: Տիլէտին իրեն համար չէր այն աղէտալի խորհուրդներ-  
ուով լի կինն որ պահ մ'իրեն ահ աղջեր էր, այլ հրավառ և  
տոփալի տիրուհի մ'էր որ կարծես թէ իր զգացած սիրով լիու-  
վին համակուած կ'երեւէր: Այսպէս անցան զրեթէ երկու ժամ:

Սակայն երկու սիրահարներու եռանդազին յուզմունքը դադ-  
րեցան, Տիլէտին որ ա'Արդանեանի պէս մոռնալու պատճառներ  
չունէր, ամենէն առաջ սթափեցաւ և հարցուց պատանիին թէ  
արդեօք ու Աարդին և իր մէջ լինելիք մնամարտին պատրաս-  
տութիւններն արդէն ըրած է իր մտքին մէջ:

Բայց ա'Արդանեան՝ որուն միաքն ուրիշ ուղղութիւն մ'առեր  
էր, ինքզինք յիմարաբար մոռցաւ և մեծանձնութեամբ պատաս-  
խանեց թէ ատենը շատ ուշ է սրամարտութեան վրայ մտածելու:

Այս պազութիւնը տեսնելով այնպիսի հոգերու համար որով  
Տիլէտին պաշարուած էր, սա ահարեկ մնաց և սկսաւ աւելի սոխ-  
պողական կերպով հարցումներ ընել:

Այն ատեն՝ ա'Արդանեան՝ որ այս անկարելի մնամարտութեան  
իրաք շմտածեր էր ամենեին, ուղեց խօսակցութիւնն ուրիշ բանի  
վրայ դարձնել, բայց այդ կարողութիւնը չունէր:

Տիլէտին միշտ իր անդիմաղբելի մտքով և երկաթի կամքով  
ա'Արդանեանը կանխառ գծուած սահմանին մէջ կ'պահէր:

Տ'Արդանեան կարծեց թէ շատ խելք կ'բանեցնէ յորդորելով  
Տիլէտին որ երկնած կատաղի խորհուրդէն հրաժարի և Աարդ-  
իումսին ներողամիտ լինի:

Բայց հազիւ թէ այս խմաստով քանի մը խօսք արտասանեց՝  
որ նորատի կինը սարսուռ մ'զցաց և հեռացաւ:

— Արդեօք կ'վախնամ, սիրելի ա'Արդանեան — ըսաւ Տիլէ-  
տի սուր և հեղնալի ձայնով մ'որ մութին այլանդակ կերպով  
հնչեց:

— Այսպէս չես մտածեր, սիրելի հոգիս — պատասխանեց

տ' Արդանեան . — բայց վերջապէս՝ եթէ այն խեղճ Աւարդը կար-  
ծածիդ շափ յանցառը չէ , ի՞նչ ընելու է :

— Այս իրաւ է — ըստ ծանրաբար Միլէտի — որ զիս խա-  
բեց , և քանի որ զիս խարեց , մահու արժանի է :

— Աւրեմն պէտք է որ մեռնի , քանի որ կ'զատապարտես —  
ըստ տ' Արդանեան այնպիսի հաստատ ձայնով որ Միլէտին ան-  
նենգ անձնուիրութեան նշանակ մ'երևացաւ այն :

Կակոյն տ' Արդանեանի մօտեցաւ :

Չենք կարող ըսել թէ այն զիշեր որչափ տեսց Միլէտին  
համար . սակայն տ' Արդանեան կարծէր թէ հազիւ ուրեմն երկու  
ժամէ վեր անոր մօտ կ'զտնուէր՝ երբ լցուն երեցաւ վանդակինեւ-  
րուն ձեղքէն և քիչ ատենէն իր տժզոյն նշոյլը բոլոր սենեկին  
մէջ տարածուեցաւ :

Այն ատեն Միլէտի՝ տեսնելով որ տ' Արդանեան իր քովէն  
պիտի հեռանար , յիշեց անոր Աւարդ կոմսէն իր վրէժն առնլու  
խոստումը :

— Բոլորովին պատրաստ եմ — ըստ տ' Արդանեան — բայց առ-  
մենէն առաջ կ'փափաքիմ բանի մը վրայ ապահով լինիլ :

— Ի՞նչ բանի վրայ — հարցոց Միլէտին :

— Արդեօք զիս կ'սիրեն :

— Արդէն ապացոյցը տուի , կարծեմ :

— Այո , և այդ պատճառաւ հոգւով մարմնով քուկդ եմ :

— Ծնորհական եմ , արիդ իմ սիրահար , բայց ինչպէս որ  
իմ սիրոյն նշանը քեզի տուի , դու ալ քու կողմէ քուկդ պիտի  
տաս , այնպէս չէ :

— Անտարակիյս : Բայց թէ որ ըսածիդ պէս զիս կ'սիրես —  
վրայ բերաւ տ' Արդանեան — միթէ իմ մասիս քիչ մը հոգ չունիս :

— Ի՞նչ հոգ կընամ ունենալ :

— Բայց վերջապէս հոգ չես ըներ որ թերես կարեվէր վի-  
րառորիմ , և մինչեւ սպաննուիմ իսկ :

— Անկարելի բան — ըստ Միլէտի — քանի որ այնչափ քա-  
ջասիրատ մարդ և կտրուկ տուր մ'ես :

— Արդեօք նախադաս չէիր համարեր — վրայ բերաւ տ' Արագածոնեան — միջոց մ'որ՝ կորիւն անօղուտ զործելով, դարձեալ քու վրէժդ լուծելու օդնէ :

Միլէաի լուռ ու մտնջ դիտեց իր սիրահարը . արևուն առաջին շառաւիզներուն տմոյն նշոյյն իր վճիռ աչերուն տարօրէն և աղջալի երեսյթ մը կ'ընծայէր :

— Սառողիւ — ըստ նա — կարծեմ թէ այժմ նորէն կ'վարանիս :

— Ոչ, չեմ վարանիր, այլ սա իրաւ է որ այն խեղջ Վարդ կոմսը դութս կ'շարժէ քանի որ զինք սիրելէ զադրեցար, և կ'եւ ըսի ինձ թէ մարդ մ'այնչափ անդթօրէն սրատիժը դասած կ'լինի սէրդ կորուսելովը, որ ուրիշ սպատոհասի պէտք չկայ :

— Ով ըստ քեզի որ զանի սիրեր եմ — հարցուց Միլէաի :

— Գէթ հիմակ առանց մեծամտթեան կրնամ հաւտալ որ ուրիշ մը կ'սիրեն — ըստ սպատանին զգուելի ձայնով մը — և նորէն կ'ըսեմ, կոմսին համար համակրութիւն կ'զգամ :

— Դու — հարցուց Միլէաի :

— Այս, Ես :

— Եւ ինչո՞ւ համար դու :

— Պասն զի Ես միայն դիտեմ. . . :

— Ի՞նչ դիտես :

— Գիտեմ որ երեցածին չափ յանցաւոր չէ բնաւ կամ լաւ ըսեմ՝ եղած չէ քու առջեդ :

— Սառողիւ — ըստ Միլէաի անհանգիստ դէմքով — բացատրէ միտքդ, վասն զի չեմ կրնար ըմբռնել թէ ի՞նչ ըսել կ'ուզես :

Եւ տ' Արդանեան Միլէաին դրկած կէտին՝ սա անոր երեսը կը նայէր այնպիսի աչերով որ քիչ քիչ կ'վառէին :

— Այս, Ես վեհանձն եմ, Ես — ըստ տ' Արդանեան խօսքին վերջ տալ ուզելով — և սէրդ ինձ տալէդ վեր, ստոյգ եմ որ զայն սիրափ վայելեմ, վասն զի կ'վայելեմ, այնպէս չէ . . . :

— Բոլորովին . հիմակ շարունակէ :

— Լաւ, կարծես թէ ինքզինքս այլափոխեալ կ'զգամ, սրտիս վրայ ծանը բեռ մը կայ :

— Ե՞նչ բեռ :

— Եթէ սիրողդ վրայ կասկածէի , այս խոստովանութիւնը չէ իներ , բայց դու կ'սիրես զիս , իմ զեղանի տիրուհիս , այնպէս չէ , կ'սիրես :

— Անշուշտ :

— Ուրեմն եթէ սիրոյս սասակութենենք քու առջիդ մեղագարաց զանուխմ , ինձ պիտի ներես :

— Կարելի է :

Տ'Արդանեան փորձ փորձեց կարելի եղածին չափ անուշ ժպիտով մ'իր շրթունքը Միլէտիին շրթերուն մօտեցնել , բայց Միլէտին զանի հրեց :

— Խոստովանութիւնդ իմանալ կ'ուզեմ — ըստ նա դունասեւլով — ի՞նչ խոստովանութիւն է այդ :

— Հնցեալ հինդշաբթի , այս ոենեկին մէջ իսկ՝ Պ . Ա.արդին հետ ժամապիր եղել էիր , այնպէս չէ :

— Ե՞ս , ամենեին , այդ Տշմարիտ չէ — ըստ Միլէտի այնա պիսի հաստատ ձայնով և անդրդուելի դէմքով , որ եթէ տ'Արդանեան այս մասին կատարելապէս ստոյդ շլիներ , թերեւս կասկածէր :

— Սուս մի խօսիր , իմ զեղանի հրեշտակս — ըստ ա՛Արդանեան ժպտելով — անօպնւտ բան է :

— Ի՞նչպէս անօպտատ , խօսիր որեմն , հոգիս բերանա կ'ըերես :

— Ո՛չ , հանդարտէ , իմ առջևս անսղարա ես , և արդէն քեզի ներեցի :

— Աերջը , վերջը :

— Պ . Ա.արդ չէ կարող բանով մը պարծիլ :

— Ինչո՞ւ համար . զու ինքնին ըսիր ինձ որ այն մատանին . . . :

— Այն մատանին , ուրդ իմ , իմ քովս է : Հինդշաբթի օրուան Ա.արդ կոմնն և այսօրուան ա՛Արդանեանը մի և նոյն անձն են :

Անխոհեմ պատանին կ'յուսար որ Միլէտին զարմանալով պիտի ամօթահար մնայ , և փոքրիկ փոթորիկ մը հանելէն ետեւ իվերչէ պիտի լայ , սակայն մնծապէս կ'սիսալէր , և իր սիսալմունքներկայն չտեսց :

Դատինաստ և աշարիու՝ Միլէտի վեր ելտ. և բռուն հարուած մը կուրծքին տալով ա՛Արդանեանը հրելէն ետե՛ անկողնեն վար ցատկեց :

Նոյն պահուն դրեթէ բռլորովին լուսցած էր :

Տ'Արդանեան ներում հայցելու համար Միլէտին բեհեղէ վարա շամակէն բռնեց, բայց նա՛ ուժգին և անվեհեր շարժում մ'ընելով փորձ փորձեց խոյս տալու : Այն ատեն բեհեղը պատուցաւ ուսերը մերկ թողով, և այն կլոր ու սպիտակ ուսերէն մէկուն վրայ, ա՛Արդանեան անպատճում ապշտոթեամբ հանչեց խարանը, այն անջնջելի նշանը զոր դահճին անուանարկ ձեռքը կ'զրոշմէ :

— Աեծդդ Աստուած — զոչեց ա՛Արդանեան վարշամակը թող տալով, և անմուռնչ, անշարժ և տառած մնաց անկողնին մէջ :

Բայց Միլէտի նոյն խակ ա՛Արդանեանի տարսափէն կ'զդար որ մասնուած էր, անշուշտ պատանին ամէն բան տեսեր էր, այժմ դիտէր նա անոր դաղոնիքը, սոսկալի դաղանիք, որ ամենուն անյայտ, միայն իրեն ծանօթ էր :

Միլէտի դարձաւ չէ թէ իրր մոլեղին կին մը, այլ իրրե վիհրաւոր յովազ մ'եւ ըստ .

— Ա՛հ, ապիթրամ, վատօրէն մատնեցիր զիս, և ասկէ զատ զաղանիքս խմացար, զու պիտի մեռնիս :

Եւ Միլէտի վազեց երփնաղոյն արկղիկ մը բացաւ տենդային և երերուն ձեռքով մը, ոսկի բռնով ու սուր և նրբին սոյրով փոքրիկ դաշցն մ'առաւ և եկաւ սրացաւ կիսամերկ ա՛Արդանեանի վրայ :

Թէև պատանին քաջասիրտ էր, ինչպէս դիտենք, դարհու բեցաւ Միլէտիին վրտովեալ դէմքէն, սոսկալի կերպով բացուած տրտեանունքէն, զունատ այտերէն և արիւնալի շրմերէն, անկողնին և պատանին միջավայրին մէջ ետ ետ քաշուեցաւ, որպէս թէ դէպ իրեն մօտենար սուրալով օձ մը, և իր սուրը քըրտանաթոր ձեռքին տակ ընկնելով, զայն պատենէն հանեց :

Բայց սուրէն չընկրիելով Միլէտի փորձ փորձեց անկողնին վը բայց ելնել և ա՛Արդանեանը զարնել, և կանկ առաւ միայն երբ սուրին ծայրը կոկորդին կոթնիլը զզաց :

Այն ատեն փորձ փորձեց ձեռօքը բռնել այն սուրը . բայց տ' Արդանեան միշտ անոր ձեռքէն կ' չեռացնէր զայն , և մերթ աշշերոն մնրթ կուրծքին տանելով՝ անզգայօրէն վար սահեցաւ անկողնէն , և նահանջելու համար Քէդիին սենեակը տանող դուռը կ' փնտուէր :

Նոյն պահուն Միլէտի աշուելի եռանդով և ահեղադոչ մոքնչելով տ' Արդանեանի վրայ յարձակոմներ կ' ընէր :

Սակայն այս կոխոք մնամարտութեան կ' նմանէր , չետեսապէս տ' Արդանեան փոքր առ փոքր ինքզինքը կ' զանէր :

— Լաւ , զեղանի տիկին , լսա — կ' ըսէր նա . — բայց յանուն Աստուծոյ , հանդարտէ , թէ ոչ այդ աղւոր այտերուդ վրայ որիշ խարան մ' ալ կ' զծաղրեմ :

— Վաստանուն , վասանուն — կ' ոռնար Միլէտի :

Բայց տ' Արդանեան միշտ գուռը փնտուելով ինքզինք պաշտապանելու կ' նայէր :

Միլէտի՝ պատանոյն մօտենալու համար կահ կարասին տապալեր , և պատանին սնոնց ետեն ապաւէն մը վնառելուն հանած աղմուկը լսելով Քէդի դուռը բացաւ : Տ' Արդանեան՝ որ բոլոր հնարադիտութիւնը դորձածեր էր այն դրան մօտենալու , երեք քայլ անկից հեռու կ' զսնուէր : Յանկարծ ցատկելով Միլէտիին սենեկէն նամիշտին սենեակը զտաւ ինքզինք , և փայլակի արագութեամբ գուռը դոցեց և բոլոր ծանրութեամբ անոր կոթնեցաւ , մինչդեռ Քէդի պարզունակները կ' քաշէր :

Այն ատեն Միլէտի ջանացի կանացի կարողութենէ վեր ոյժ թափելով՝ կամարակալը քանդելու , յետոյ երբ զզաց որ մնկարելի բան է , գուռը զաշոյնի հարուածներով ծակծկեց՝ որոնց մէկ քանին դռնէն թափ անցան :

Ամէն մէկ հարուածին սոսկալի հայհոյանք կ' արձակէր :

— Ծուտ , շուտ , Քէդի — ըստ տ' Արդանեան կիսաձայն՝ երբ պարզունակները քաշուեցան — զիս սպարանէն դուրս հանէ , վաճազի եթէ վերադառնալու ժամանակ տանք անոր , սպասաւորներուն մեռօք զիս սպաննել պիտի տայ :

— Քայլ այդ վիճակիդ մէջ չես կարող դուրս ելնել — ըստ  
Քէղի — զբեթէ մ'րկ ես :

— Երաւ է — ըստ ա'Արդանեան , որ նոյն միջոցին միայն իր  
հաղած հաղուստը դիտեց — իրաւ է , կրցածիդ չափ զիս հաղ-  
ուեցնուր , քայլ շուտ ընենք , կիմանան , կենաց և մահու խնդիր  
մ'է այս :

Քէղի շատ քաջ կ'ըմբռնէր այս փափուկ վիճակը . խկոյն ծաղ-  
կանկար շրջազգեստ մը , լայն դտակ մը և վերարկու մ'անոր  
հաղցոց , հողաթափներ տուաւ , և ա'Արդանեան բոպիկ ոսներն  
անոնց մէջ աղոյց , յետոյ քաշելով սանդողներէն վար տարաւ :  
Ժամանակն էր , վասն զի Միլէտի արդէն հնչակը զարկեր և բո-  
լոր մարդիկն արթնցոցէր էր : Դունապանը լարը քաշեց Ճիշտ  
այն միջոցին որ Միլէտի ևս կիսամերկ պատուհանէն կ'զուէր .

— Մի բանար դուռը — :

## ԺԸ

ԱԹԱՍ ԻՆՉՊԻՍ ԳՏԵՒ ԻՐ ԶԵԿՆ ՈՒ ԶԵՐԴԻՆ ՍԹԱՆՑ  
ՏԵՂԵՆ ՇԱՐԺԵԼՈՒ

Պատանին խոյս տուաւ՝ մինչդեռ Միլէտին անոր կ'սպառնար  
անդօր շարժումով մը : Երբ աչքին առ չեւն անհետ եղաւ՝ Մի-  
լէտի իր սենեկին մէջ ընկառ մարեցաւ :

Տ'Արդանեան այնքան վրդոված էր՝ որ՝ առանց հող ընելու թէ  
ինչ պիտի լինի Քէղիի վիճակը , վազվզելով Բարիզի կէսը կըտ-  
րեց և Աթոսին դրան առ չեւ միայն կանկ առաւ : Եր մարդին մա-  
լորումը , զինք մարակող սարսափը , քանի մը զիշերապահ զին-  
ւորներու աղաղակները՝ որոնք իր ետեւն ընկան , և քանի մ'ան-  
ցորդներու շշիւնները , որոնք թէ ետակաւին կանուխ էր , իրենց  
զործին կ'երթային , առելի ևս ա'Արդանեանի ընթացքը փոթա-  
ցուցին :

Դաւթէն անցաւ, Աթոսին երկու գտաիկոններէն վեր ելու և տասափկ դուռը զարկաւ :

Կրիմօ եկաւ դուռը բանալու՝ կէս քոն կէս արթոն : Տ'Արդանեան այնչափ ուժգին սրացաւ սենելիին մէջ որ քիչ մնաց զանի զլխիվայր պիտի տապալէր ներս մտնելու ատեն :

Խեղճ տղան՝ իր սովորական համրութեան հակառակ՝ այս անդամ լիրուն բացուեցաւ :

— Հօ, ինձ նայէ — զոչեց նա — ինչ կ'ուզէս, լեզեշաի, ինչ կ'ինդրես, չարաձաի :

Տ'Արդանեան իր գտակը հանեց և ձեռները լոգիկին տակէն դուրս ձգեց . երբ խեղճ տղան անոր պեխերն ու մերկ սուրբ տետաւ, հասկցաւ որ դիմացինը մարդ մ'էր :

Այն ատեն կարծեց թէ մարդասպան մ'է :

— Օգնութեան, շուտ օգնութեան հասէք — զոչեց նա :

— Առէ, թշուառական — ըստ պատանին — ես տ'Արդանեանն եմ, միթէ զիս չե՞ս ճանչեր : Ուր է տէրդ :

— Դոււ, Պ. տ'Արդանեանն ես -- պոռաց Կրիմօ — անկարեւ լի բան :

— Կրիմօ — ըստա Աթոս՝ իր սենեկէն անային հագուստով դուրս ելնելով — կարծեմ թէ պիտի ներես ինձ խօսելու :

— Ա՛չ, պարոն, բայց . . . :

— Լուսթիւն :

Կրիմօ բառական համարեց իր մասովը տ'Արդանեանը ցոյց տալու իր տիրոջ :

Աթոս իր ընկերը ճանչեց, և որչափ որ մելամազձուտ էր, քահ քահ մ'էր ձգեց որուն շարժառիթն իր առ յե զանուող ծառեալ մարդն էր, ծուռ զրուած զլիսանոց, սոլերներու վրայ ընկած կոճկէններ, տթած թեզանիքներ և այլայլութենէ տնկուած պեխեր :

— Մի ծիծաղեր, բարեկամի իմ — զոչեց տ'Արդանեան — յանուն Աստուծոյ, մի ծիծաղեր, հոգւոյս վրայ կ'ըսեմ, խնդալու բան շկայ :

Եւ այս խօսքերն այնպէս հանգիստոր կերպով և իրական երա

կիւղավ արտաօանեց, որ Աթոս անոր ձեռքը բռնեց դոչելով՝

— Արդեօք վիրաւորուած ես, բարեկամի իմ, շատ զոհատ ես:

— Զէ, բայց սոսկալի գէպք մը հասաւ զլխիս: Միթէ մինամէ ես, Աթոս:

— Զարմանք, ով կ'ուղես որ լինի այս ժամուս տանս մէջ= Լաւ, լաւ:

Եւ տ'Արդանեան Աթոսին սենեակը վաղեց:

— Հէ, խօսէ նայիմ — ըստ Աթոս դուռը դոցելով և պարզունակները քաշելով որպէս զի մարդ ներս չմոնէ: Միթէ թառ դաւորը մեռաւ. միթէ կարտինալը սպաննեցիր, բոլորովին տակն ու վրայ կ'աեննեմ քեզ, օն, խօսէ նայիմ, վասն զի իրօք մտաւտանջութենէս կ'ատշէմ:

— Աթոս — ըստ տ'Արդանեան իր կանացի լամերը համելով և շապիկով երեւելով — անհաւտավի, անլուք պատմութիւնն մը լսելու պատրաստուէ:

— Կախ սա տնային պարեզօտը հաղիք — ըստ հրացանաւիրը բարեկամին:

Տ'Արդանեան պարեզօտը դրաւ, և այնչափ այլայլած էր որ այն թեղանիքը ձախին հետ շփոթեց:

— Լաւ որեմ — ըստ Աթոս:

— Լաւ — պատասխանեց տ'Արդանեան Աթոսին ականջին ծռեւլով և ձայնը մեղմելով — Միթէ տին իր ուսին վրայ խարան մշունի:

— Ա՛ զոչեց հրացանակիրն որպէս թէ զնտակ մը լնդուանեց սրտին մէջ:

— Խնդրեմ, խօսէ — ըստ տ'Արդանեան — միթէ ստոյդ ես որ հեռան իրօք մեռած է:

— Միտու — ըստ Աթոս այնպիսի խոր ձայնով մ'որ հաղիւթէ տ'Արդանեան ձայնը լսեց:

— Այս, այն կինը՝ որու վրայ Ամիկն քաղաքն ինձի օր մը խօսեցար:

Աթոս հեծեծեց և զլտիսը ձեռաց մէջ ծածկեց:

— Իմ ըստ կինս — շարունակեց տ'Արդանեան — քսան վեց քսան ութ սարեկան կին մ'է:

— Խարսնէլ — ըստ Աթոս — այնպէս չէ:

— Այս :

— Պայծառ կապրյատ աչեր, այլանդակ պայծառոթեամբ մը և արտեանունքով և յօնքով:

— Այս :

— Մեծահասակ, վայելչակաղմ: Կողմնակի ակռաներէն մին զակաս է:

— Այս :

— Խարանը փոքր է, կարմրագոյն և կարծես թէ աւրուած անոր վրայ զրուած խմորի խաւերէն:

— Այս :

— Սակայն կ'ըսես թէ անկլուցի է:

— Միլէտի կ'անուանեն զինք, բայց կարելի է ֆրանսուցի լինի: Սակայն գարձեալ՝ լորտ Ալինդր անոր աներձագն է:

— Կ'ուզեմ այս կինը տեսնել տ'Արդանեան:

— Զգոյշ եղիք, Աթոս, զդուշացիք, զու զանի սպաննել ուղեցիք, այնպիսի կին մ'է որ կրնայ անվրէպ փոխարէնը հաւ տուցանել քեզի:

— Կա չպիտի համարձակի բան մ'ըսելու, վասն զի ասով ինքզինք մատնած պիտի լինի:

— Սակայն ամէն բանի կարող է: Միթէ երբէք անոր կատաղ թիւնը տեսած ես:

— Ոչ — ըստ Աթոս:

— Վաղրուցի մը, յովազ մ'է: Աչ, սիրելիդ իմ Աթոս, կ'զարհուրիմ որ անոր սոսկալի վրէժինդրութիւնն իմ վրայ զըրշ դուեցի:

Այն ատեն տ'Արդանեան ամէն բան սպասուց, Միլէտիին խօս լական բարկութիւնն և մահու սպառնալիքը:

— Երաւոնք ունիս, և հոգոյս վրայ կ'երդնում — ըստ Աթոս — որ կեանքս մուզի մը պիտի զոհէի: Բարեբաղզօրէն բարելին միւս օր պիտի մեկնինք, հաւանական է Ուշէլ պիտի երաթանք, և անդամ մը մեկնելէն ետե, . . .:

— Աթոս, Միլէտին աշխարհիս ծայրն իսկ քեզ պիտի հետեւ տեի. եթէ քեզ ճանչէ, ուրեմն թող իր առելութիւնն իմ վրայ թափէ:

— Ահ, սիրելիդ իմ, ինչ փոյթս է եթէ զիս սպաննէ — ըստ Աթոս։ — Միթէ կարծես թէ կեանքս մեծ արժէք մ'ունի աչքիս։

— Այս ամէն բանին ներքե սոսկալի զաղտնիք մը կայ։ Աթոս, այս կինը, հաւասար եմ որ կարտինալին լրտեսուհին է։

— Ուրեմն աչքդ չո՞րս բաց ։ Եթէ կարտինալը Լոնտօնի զործին համար քու վրադ չպահնանար, անշուշտ քեզ կ'ատէ, բայց քանի որ՝ ի վերջէ քու վրադ յայտնի յանցանք մը չկրնար զտնել, և՝ ի հարկէ ատելութիւնը պիտի անցնի, նա մանաւանդ երբ կարտինալի ատելութիւն մ'է, զգոյշ եղիք։ Երբ դուքս ելնես, մինակդ մ'ելներ, երբ կերակուր տաես, զդուշութիւն ըրէ, վերջապէս բանի մը մի վստահիք, և նոյն իսկ շուքեզ վախցիք։

— Բարեբաղդորէն — ըստ ա՛Արդանեան — բանը մինչեւ վաղն իրկուն անփորձ ելնել է, վասն զի եթէ մի անդամ բանակ հասնիք, յուսամ որ մինակ մարդիկներէ վախնալու. հարկ պիտի լինի։

— Բայց առ այժմ — ըստ Աթոս — իմ առանձնական խորա հուրդներս մէկդի կ'թողում և ամէն ուրեք քեզի պիտի ընկերակցիմ. պէտք է որ Գօսուայէօր փողոցը դառնաս, ուստի հետդ պիտի դամ։

— Բայց որչափ որ մօտ լինի այն փողոցը մեզի — վրայ բերաւ ա՛Արդանեան — դարձեալ չեմ կրնար այս վիճակիս մէջ տուն դառնայլ։

— Իրաւունք ունիս — ըստ Աթոս — և հնչակը զարկաւ։ Կրիմօն ներս մնաւ։

Աթոս նշմայր ըրաւ անոր որ ա՛Արդանեանի տունն երթայ և անկից հաղուստ բերէ։

Կրիմօն իր կողմէ ևս նշան մ'ըրաւ թէ տիրոջ միտքը հասկցաւ և ճամրայ ելաւ։

— Բայց տես անդամ մը, սիրելի բարեկամ — ըստ Աթոս

— որ մեր դէնն ու զարդը պատրաստելու համար ասով քայլ մը  
շառինք . վասն զի , եթէ չեմ սխալիր , բու բոլոր զգեստի Մի-  
լէտին տունը ձղեցիր , և անարակցու զայն քեղի ետ դարձը-  
նելու միաք չունի : Բարեբազդօրէն շափիզան ունինք :

— Ծափիզան քուկդ է , սիրելի Աթոս , միթէ արդէն չըսիր  
ինձ որ ընտանիքդ եկած մատանի մ'է :

— Այո , հայրս զայն երկու հազար սկուդի գնեց , ինչպէս որ  
երբեմն ինձ ըստ : Մօրս տուած հարսանեաց ընծաներէն մէկն  
էր , և խիստ փառաւոր է : Մայրս ալ զայն ինձի տուաւ , և ես  
յիմարս , փոխանակ սուրբ մատոնքի պէս զայն պահելու , այն  
անզգամ կնկան տուի :

— Ուրեմն , սիրելիդ իմ , առ այս մատանին , զոր անշուշտ ,  
ինչպէս կ'զուշակեմ , աչքիդ լոյսին պէս կ'սիրես :

— Ես , առնո՞ւմ այդ մատանին , այն վատազզին ձեռքէն  
անցնելէն ետեւ . ոչ երբէք , այն մատանին պղծուած է , տ'Ար-  
դանեան :

— Ուրեմն զայն ծախէ :

— Ես ծախեմ մօրս կողմէն եկած մատանի մը : Իրաւի այդ  
ըանը սրբապղծութիւն պիտի համարեմ :

— Ուրեմն պատանդ գիր , անտարակոյս հազար սկուդի չափ  
փոխարէն կ'ստանաս : Այս դումարով բոլոր պիտոյքդ կ'հողաս ,  
յետոյ , ինչ դրամ՝ որ առաջին անդամ ձեռքդ անցնի կ'զործածես  
պատանդը հանելու դրած տեղէդ և ասով իր հին արատներէն սըր-  
բուած կ'ընդունիս , վասն զի վաշխառուներու ձեռքէն անցած պի-  
տի լինի :

Աթոս ժպտեցաւ :

— Զքնաղ ընկեր մ'ես , սիրելիդ իմ տ'Արդանեան — ըստ  
նաւ — բու մշտատե զուարթութեամբդ ինձի պէս վշտակիր սիր-  
տեր կ'սփոփիս : Լաւ ուրեմն , զբաւի զնենք այս մատանին , բայց  
պայմանաւ մը :

— Ի՞նչ պայմանաւ :

— Այսինքն , պէտք է որ դու հինդ հարիւր սկուդն առնուա-  
ես ալ հինդ հարիւր :

— Ի՞նչ պէտք կայ, Աթոս. Ես այն գումարին քառորդն անշամբ չեմ ուղեր, Ես որ պահած զնովին մէ ջն եմ, և իմ թամբը ծախելով այն գումարը կրնամ ձեռք ձեր: Ինձի պէտք եղածն ինչ է: Միայն ձի մը Բլանշէի համար: Ասկէ վաստ կ'մոռնաս որ Ես ալ մասանի մ'ունիմ:

— Որուն դու աւելի կապուած ես, քան թէ Ես իմլինիս, զէթ, այսպէս դիտեցի:

— Այս, վասն զի ծանրակշիռ պարադային մէջ ոչ միայն մատանիս կրնայ մնծ զժուարութենէ մը, այլ և մնծ վասնդէ մը աղատել զիս: Ոչ միայն թանկաղին անդամանդ մ'է, այլ և դիւթեալ հմայեկ մը:

— Ըսածդ չեմ հասկնար, բայց կ'հաւտամ խօսքիդ: Հիմակ իմ կամ լսու ևս ըսեմ, քու մասանիդիդ դառնանք. ինչ դումար որ տան անոր փոխարէն, կէսը դու պիտի առնուս, թէ ոչ Սէն զետը կ'նետեմ, և կ'տարակուսիմ որ ձուկ մը բառական բարեսէր լինի զայն մեղի բերելու, ինչպէս Պոլիկրատէսինը:

— Լա՛ ուրեմն, կ'ընդունիմ — ըստ տ'Արդանեան:

Կոյն պահուն Կրիմօ ներս մսաւ Բլանշէի հետ, այս վերջին նը՝ իր տիրոջ վրայ անհանդիստ և միանդամայն հետագրքիր լինելով իմանալու թէ ինչ պատահած է անոր, այս պարագան առիթ բռներ և անձամբ անոր զգեստները բերեր էր:

Տ'Արդանեան հագուեցաւ, նոյնն ըրաւ և Աթոս. յետոյ երբ երկոքնին ալ դուրս ենելու պատրաստ դանուեցան, այս վերջինը նշան ըրաւ Կրիմօի այնպէս ինչպէս որ մարդ հրացանով նշան կ'առնու. այն ատեն Կրիմօ իսկոյն իր հրազդնը վար առան իր տիրոջ հետ երթալու պատրաստուեցաւ:

Անվտանգ Թօսուայէօր փողոցը հասան: Պօնասիէօ դուռն էր, տ'Արդանեանի երեսը նայեցաւ ծաղրալի իերսպով:

— Է՛ս, իմ սիրելի վարձկալս — ըստ նա — շնուտ ըրէ, առոր աղջիկ մը սենեակդ կ'սպասէ քեզի, և զիտես որ կիները կը դմկամակին երբ մարդիկ զիրենք սպասել կ'տան:

— Քէղին է — դոչեց տ'Արդանեան և նրբուղին վաղեց:

Արդարեւ սենեակը տանող քառակուսի բակին մէջ և իր գրան  
տո ջն սբլած գտաւ խեղջ աղջիկը գողդոջուն : Այն ինչ զինքը  
տեսաւ , գոչեց :

— Պաշտպանութիւնդ խոստացար ինձ , խոստացար ինձ անոր  
բարկութենեն դիս աղատել . յիշ մի անդամ որ քու կրակիդ  
այրեցայ :

— Այս , քաջ դիտեմ — ըստ ա՛Արդանեան — անհոգ եղիք,  
քեդի : Բայց իմ մեկնելէս ետեւ ինչ պատահեցաւ :

— Ինչ զիմնամ — ըստ քեդի : — Այնպիսի աղաղակիներ  
արձակեց Միլէտի որ բոլոր սպասառորներն եկան հասան . բար-  
կութենեն խելացնորեր էր . բերնին եկած լուտանքը քեզի դէմ  
ժայթքեց : Այն ատեն մտածեցի որ Միլէտի պիտի յիշէ անշուշտ  
թէ իմ սենեկէս անցնելով իրը մտեր էիր և պիտի կարծէ թէ  
քու դաւակիցտ էի . ուստի ունեցած դոյզն ստակս , և ամենէն  
մեծին լաթերս տուի և փախուստ տուի :

— Խեղջ աղջիկ . բայց հիմակ ինչ ընեմ քեզ : Վաղը չէ  
միւս օր պիտի մեկնիմ :

— Ինչ որ կ'ուզես ըրէ , պարոն ասպետ . զիս Բարիզէն հե-  
ռացնուր , Գրանսայէն հեռացնուր :

— Սակայն չէմ կրնար քեզ իմ հետս Ռօշէլի պաշարման  
տանիլ — ըստ ա՛Արդանեան :

— Ոչ , բայց կրնաս գաւառի մը մէջ ինձ պաշտօն մը գտնել ,  
քեզի ծանօթ տիկնոջ մը քով , օրինակի համար քու բնիկ եր-  
կիրդ :

— Ա՛՛ , սիրելի բարեկամուչիս , իմ բնիկ երկրիս կիները սե-  
նեկապանուչի չունին : Բայց կեցիր , քեզի յարմար բան մ'ունիմ :  
Քլանչէ , դնա Արամիսն ինձի կանչէ , թող շուտով զայ : Խիստ  
կարեռ բան մ'ունինք անոր ըսելու :

— Կ'իմանամ միւտքդ — ըստ Աթոս . — բայց ինչո՞ւ համար  
Քորթոսը կանչել չես տար : Կարծեմ թէ իր մարքիզուչին . . . :

— Բորթոսի մարքիզուչին իր ամումնոյն զրադիբներուն ձեռօք  
կ'զարդարուի — ըստ ա՛Արդանեան իմսդալով : — Ասկէ զատ :

Քէղի չփափաքիր անշուշտ Ռւրս փողոցը բնակել, այնպէս չէ, Քէղի :

— Ուր որ ուղես բնակելու պատրաստ եմ — ըստ Քէղի — բաւական է որ լաւ թաղչիմ, և իմ ուր լինելու մարդ չղիսնայ :

— Հիմակ, Քէղի, իրարմէ պիտի բաժնուինք, և հետևապէս իմ վրաս այլ ևս չես նախանձիր . . . :

— Պարսն ասպետ — ըստ Քէղի — թէ մօտէն և թէ հեռ ոռուն քեզ միշտ պիտի սիրեմ :

— Տէս միանդամ հաստատամութիւնն ուր կ'երթայ բոյն դնելու — մրմռաց Աթոս :

— Ես ալ — ըստ տ'Արդանեան — Ես ալ քեզ միշտ պիտի սիրեմ, անհոգ եղիր : Բայց ինձ նայէ, ըստածիս պատասխան տուր նայիմ : Հիմակ մեծ կարեռութիւն կ'տամ քեզ ընելիք հարցիս, արդեօք երբէք լսեցիր զիշերով յափշտակուած նորատի կնոջ մ'անունը :

— Աեցիր նայիմ, . . . : Ո՛չ, Տէր Աստուած, պարսն ասպետ, արդեօք դեռ այն կինը կ'սիրե՞ս :

— Ո՛չ, իմ մէկ բարեկամն կ'սիրէ զանի : Ահա, այս տեղ ներկայ դանուող Աթոսն է :

— Ես — զոչեց Աթոս այնպիսի մարդու մը չեշտով որ իրր թէ իմի մը վրայ պիտի կոխէ :

— Անշուշտ դάւ — ըստ տ'Արդանեան Աթոսին ձեռքը մեղմ մելով : — Դու զիտես թէ սոյն հեք փոքրիկ տիկինն Պօնասիէօին վրայ որչափ կ'ցաւինք : Քէղի զաղսնապահ է, այնպէս չէ, Քէղի : Կ'հասկնաս, աղջիկս — շարունակեց տ'Արդանեան — այն կինը՝ ներս մոնելու ատենդ դրան վրայ տեսած ժանտերես մարդուն կինն է :

— Ո՛չ, Աստուած իմ — զոչեց Քէղի — իմ երկիւզս միտքս կ'ըերես . երանի թէ զիս ճանչցած չլինէր :

— Ի՞նչպէս ճանչցած, ուրեմն արդէն տեսած ես այս մարդը :

— Երկու անդամ Միլէտիին տունն եկած է :

— Ճիշտ է : Քանի՞օք որ առաջ :

- Կարծեմ տասն հինգ կամ տասն ութ օր պիտի լինի :
- Ճիշտ է :
- Եւ երեկ իրկուն նորէն եկաւ :
- Երեկ իրկուն :
- Քու զալէդ պահ մ'առաջ :
- Սիրելի Աթոս, լրտեմներու ցանցի մը մէջ ամփափուած ենք : Եւ կարծեն արդեօք որ քեզ ճանչցած լինի, քէդի :
- Զինքը տեսնելուս՝ դտակս վար առի, բայց կարելի է ուշ թնտացի :
- Վար իջիր, Աթոս, քանի որ քու վրայ այնքան չկասկած ծիր որչափ իմ, և նայէ անդամ մը թէ արդեօք միշտ գրան վրայ է :
- Աթոս վար իջաւ և խկոյն վեր ելաւ :
- Մեկներ է նա — ըստ — և առնը դոց է :
- Անշուշտ իր տեսածն իմաց տալու, և այս պահում ըոլոր աղանիներն աղանետառնն է ըսելու գացած է :
- Լաւ ուրեմն, արի թոփնք — ըստ Աթոս — և այս տեղ թողոնք Բլանշէն որ մեղի լուր բերել :
- Կեցիր նայինք . Հասկա Արամիսին իմաց տուինք որ դոյ :
- Իրան է — ըստ Աթոս — սպասենք Արամիսին :
- Նոյն պահուն Արամիս ներս մասւ :
- Գործն անոր յայտնեցին, և անոր ըսին թէ ստիպողական է քեղիին համար իրեն ծանօթ բարձրադիր կանանց մէկոն մօտ տեղ մը դտնէ :
- Արամիս վայրիեան մը մտածեց և կարմրելով ըստաւ . — Աիթէ խնդիրդ կատարելով քեզի ստողիւ ծառայութիւն մ'ըրած պիտի լինիմ, ա' Արդանեան :
- Բոլոր կենացս մէջ քեզ շնորհապարտ պիտի մնամ :
- Լաւ, տիկին տը Պուա-Դրասի խնդրեց իզնէ, կարծեմ թէ դտաւ բնակող մէկ բարեկամուհոյն համար, հոռատարիս սենեկապահուհի մը, և եթէ, սիրելի ա' Արդանեան, այս օրիսը դին համար երաշխաւոր մնաս . . . :

— ԱՇ, պարսն — զոչեց Քէղի — հաւաստի եղիքը որ բոլորովին անձնուեր պիտի լինիմ այն անձին որ Բարիդէն հեռանալու նար մը կ'զանէ ինձ :

— Ուրեմն — ըստ Արամիս — զործը կարդին է :

Եւ Արամիս սեղանի մ'առ չեւ նստեցաւ և քանի մը առղ զրեւով տոմսակը մաստանիով մը կնքեց և զայն Քէղին տուաւ :

— Հիմակ, աղջիկս — ըստ ա'Արդանեան — զիտես որ այս տեղս որչափ քեզ նոյնչափ մեզ վտանգառը է : Ուստի բաժնուինք և աւաղոյն օրերու սպասենք նորէն տեմնուելու :

— Եւ ինչ տեղ որ գտնուինք, և ինչ ատեն որ տեսնուինք — ըստ Քէղի — զիս պիտի զանես գու սիրող քեզ ինչպէս որ այժմ՝ կ'սիրեմ» :

— Խաղամոլիք երդում — ըստ Աթոս մինչդեռ ա'Արդանեան Քէղին կ'առաջնորդէր գէպ 'ի աանդուղը :

Պահ մ'ետքը՝ երեք պատանիներն իրարմէ՝ բաժնուեցան ժամը չորսին Աթոսին տունը զանուելու ժամաղիք լինելով, և Բլանշէն թողլով որ տունը պահէ :

Արամիս իր տունը դնաց, և Աթոս ու ա'Արդանեան շափիղան դրաւի դնելու հողը տարին :

Խաղամու որ մեր կապօնը զուշակեր էր՝ մատանիին համար զիւրաւ հարիւր յիսուն ոսկի զտան : Ասկէ զամ՝ հրէայն խմաց տուաւ որ եթէ ծախել կ'ուղեն, մինչև երկու հարիւր յիսուն ոսկի տալու սպատրաստ է, քանի որ անուի օղերու համար փառաւոր ամոլ մը կրնար լինիլ :

Աթոս և ա'Արդանեան՝ իրեւ երկու զործունեայ զինուորներ և բանիբուն զիտակներ՝ հաղիւ երեք ժամու մշջ իրենց հրայանակիք զէն ու զարդը զնեցին : Իրաւ է որ Աթոս մեծանձն էր և իշխան մինչև ըզունդներուն ծայրը : Ամէն անդամուն որ բան մը իրեն յարմարէր, զինը կ'վճարէր և փորձ չէր փորձեր զայն կըտրելու : Տ'Արդանեան այս մասին զիտողութիւններ ընել կ'ուղեր իրաւ, բայց Աթոս ժամակլով իր ձեռքն անոր ուսին վրայ կ'գնէր, և ա'Արդանեան քաջ կ'զար որ իրեն պէս փաքրիկ ազնուական

Կապօնի մը համար միշտ օգտակար էր սակարկել, և չէ թիւ ոյնու պիտի մարդու մը համար որ իշխանական ձեւեր ուներ :

Հրացյանակիբն անառալուսնան փառառոր երիժար մը զտաւ, որ սե սամի զոյն ուներ ունդոնդը հրացյայտ, սրունդը բարակ և վայելուչ, և վեց տարեկան։ Այսու զոյն քննեց և առանց թերութեան դտաւ։ Այս երիշարին համար հաղար փրանքը խնդրեց աէ ըլլ :

Թերեւս աւելի աժամն դնէր, բայց մինչդեռ ա՛Երդանեան ձիավաճառին հետ զնոյն վրայ կ'վիճէր, Այսու հաղար փրանքը սեղանին վրայ կ'համբէր :

Կրիմօ բիգարտեան՝ կարճ հոմմիու ձիւ մ'ունեցաւ որ երեք հարիւր փրանք աժեց :

Այս վերջին ձիուն թամբն և Կրիմօի զէնքը դնելէն ետեւ Աշխասին հաղար հինդ հարիւր փրանքէն փող մ'անդամ' չէր մնացելուր։ Տ'Երդանեան առաջարիեց իր բարեկամին իր բաժնէն կտոր մ'առնու, սա պայմանաւ որ եթէ կամի վերջէն փոխ առածն իրեն դարձնէ։

Բայց Այսու իբր սպատասխան, բառական սեպեց ուսերը վերցյանելու։

— Հրէ այն Բնէ զումար կ'տար շափիղային բոլորովին տէր լինելու համար — հարցուց Այսու։

— Հինդ հաղար փրանք։

— Այսինքն երկու հաղար փրանք առելի։ Հաղարը քեզի ու հաղարն ինձի համար։ Բայց այդ զումարը մնձ հարստոթիւն մէ՛, բարեկամ, դարձիր ուրեմն հրէին մօս։

— Խնչպէս, կ'ուզես որ . . . .

— Երաւի, այն մատանին տխուր յիշատակներ ուշա կ'ածէ, ասկէ զատ՝ երբէք երեք հաղար փրանք ձեռք չպիտի ձղենք զրաւըն ետ առնլու, հետեապէս երկու հաղար փրանք պիտի կտրուստ ընենք այս սակարկութեամբ։ Ուստի զնաւ ըսէ հրէին որ մատանին անոր կ'ծախենք, տ'Երդանեան, և երկու հաղար փրանքն առնլով դարձիր։

— Աաւ մոտածէ , Աթոս :

— Այսօրուան օրս պատրաստ դրամը տուղ է , և պէտք է զո՞հողութիւններու ենթարկիլ : Գնա՞ , ա՞Արդանեան , զնա՞ . Կրի՞մօն իր հրացանակին հետ քեզի պիտի ուղեկցի :

Կէս ժամ ետքը ա՞Արդանեան ետ դարձաւ երկու հազար ֆրանքով առանց որ և է վշտանգի հանդիպելու :

Ահա այսպէս Աթոս իր տան մէջ դտաւ չակնկալած հարստութիւնը :

## ԺԹ

### ՏԵՍԻՆ.

Հետեւապէս՝ ժամը չորսին չորս բարեկամներ գումարուեր էին Աթոսին տունը : Զէն ու զարդի հողը բուռովին իրենց մաքեն փարատեր էր , և ամէն մէկուն գէմքին վրայ իր յատուկ թագուն մտատան ջութեան նշանները կ'տեսնուէին , վասն զի ամէն ներս կայ երջանկութեան ետև պահուած է ապագայ երկիւղ մը :

Յանկարծ Բլանշէ ներս մտաւ ա՞Արդանեանի ուղեեալ երկու նամակ բերելով :

Մին փոքրիկ տունսակ մ'էր գողարիկ ծալլուած երկայնքին , կանաչ կնքամումէ զմուռով մը , որտես վրայ դաշարի ոստ մը տանող տատրակ մը զբոշմուեր էր :

Միուր մեծկակ քառակուսի նամակ մ'էր և բարձրապատիւ կարտինաւ դքսին ահարկու զինագրոշմով կ'շողողար :

Տ'Արդանեանի սիրտը՝ այն փոքրիկ նամակը տեսնելուն՝ տրուփեց , վասն զի անոր դիրը կարծեց ճանչել , և թէե նոյն դիրը միանդամ միայն տեսներ էր , անոր յիշատակը սրտին խորը միացեր էր :

Ուստի փոքրիկ նամակն առաւ և աշխուժիւ բացաւ :

« Պատոյտի ելլիք, զրուած էր նամակին մէջ, դալ չորեքշաբա  
և թի, երեկոյեան ժամը վեցէն մինչև եօթ, Շայօի փողոցը, և  
ուշադրութեամբ նայէ անցնող կառքերուն մէջ, սակայն եթէ  
քու և քեզ սիրող մարդիկներուդ կեանքն անվտանգ պահել  
և կ'ուզես, մէկու բան մի բար, շարժում մ'անդամ չընես որ  
ու պէս զի չկասկածին թէ ճանչցար այն կինն որ ինքզինք մեծ  
և վտանգի մէջ կ'դնէ վայրկեան մը քեզ տեսնելու համար » :

Նամակը ստորագրութիւն չունէր :

— Այդ ծուղակ մ'է — ըստ Աթոս — մ'երթար տ'Արդանեան :

— Սակայն — ըստ տ'Արդանեան — կ'երեւ ինձ որ դիրք կը  
ճանչեմ :

— Կարելի է շինծու է — վրայ բերաւ Աթոս : — Այսպէս  
ատեն՝ Շայօի ճամրան ժամը վեցէն ցեօթ բոլորովին ամայի է,  
Պօնտիի անտառը պտըտելու չափ վտանգաւոր է :

— Բայց եթէ ամենքնիս միասին երթանք — ըստ տ'Արդան-  
եան — միթէ կարծես թէ չորսերնիս ալ մէկէն կրնան կլլել,  
աւելցուր չորս սպասաւոր, ձիերն և զէնքերը :

— Ասկէ զատ՝ մեր հանդերձանքը ցոյց տալու առիթ մ'է —  
ըստ Բորթոս :

— Բայց եթէ զրողը կին է — ըստ Արամիս — և եթէ այս  
կինը տեսնուել չուզեր, մտածէ անդամ մ'որ անոր այն ատեն  
սպատոցն կրնաս արատ բերել, տ'Արդանեան, և այդ բանն ալ  
աղատորդիք մը չվայլեր :

— Մենք ետեւ կ'մնանք — ըստ Բորթոս — և թաղ ինքը մի-  
նակ առաջ անցնի :

— Այս, բայց արագընթաց կառքէ մը հրացանակ մը շուտով  
նետել շատ դիւրին է :

— Բա՛ — ըստ տ'Արդանեան — ինձ նշան չեն կրնար առնուլ  
Այն ատեն կառքին վրայ կ'յարձակինք և անոր մէջ զանտոռդները  
որէ կ'անցնենք : Ասով նոյնչափ թշնամիէ կ'աղատինք :

— Իրաւոնք ունի — ըստ Բորթոս . — Ճակատանըրտ, առիթ  
մ'է նաեւ մեր զէնքերը փորձել :

— Բա՛, արի՛ այդ զուարձութենէ չզբկոլինք — ըստ Արամին  
իր անուշ և անհոգ դէմքով :

— Ի՞նչպէս որ կ'հաճիս — ըստ Աթոս :

— Պարոններ — ըստ ա'Արդանեան — ժամը չորս ու կէս է:  
և հազիւ թէ ժամանակ ունինք Ծայօփ Տամբան ժամը վեցին զբա-  
նուելու :

— Ենք ըսեր որ եթէ շատ ուշ ելնենք — յարեց Տորթոս —  
մեզ չպիսի տեսնեն, և այս ալ մեղք պիսի լինի, Արեմի, պա-  
րոններ, երթանք պատրաստութիւն տեսնելու :

— Բայց այն միւս նամակը մռոցար — ըստ Աթոս. — Թէ եւ  
կարծեմ թէ՝ ինչպէս որ կոկեն կ'երսի, արժանի է բայց ուելու-  
խոկ ես ահա բայց՝ ՚ի բաց կ'յայտնեմ, սիրելիդ իսը ա'Արդանեան,  
որ առելի հոդ կ'ընեմ այն թղթիկին վրայ զոր կամացուկ մը  
ծոցդ դրիբ :

Տ'Արդանեան կարմրեցաւ :

— Կաւ ուրեմն — ըստ պատանին — նայինք, պարոններ :  
թէ ինչ կ'իմացնէ ինձ Կորին բարձրութիւնը :

Եւ ա'Արդանեան նամակին կնկքը քակեց և կարդաց :

« Գ. ա. ա'Արդանեան, թագաւորին պահակը, Տէգէտարի դնդէն,  
և կ'սպասուի Կարտինալի-Պալատն այս իրկուն ժամն ութիւն :

« Ե. Ա. ՀՈՒՏՎԱՆԻՔ

« Պահակաց հրամանագրը » :

— Սանտանայ — ըստ Աթոս — աշառասիկ ժամադրութիւն մ'որ  
միւսէն շատ առելի մասամանջութիւն կ'պատճառէ :

— Երկրորդ ժամադրութեան առեղը պիսի երթամ՝ առաջնունք  
ելնելով — ըստ ա'Արդանեան — մին ժամը եօթին, միուն ու-  
թիւն է. երկրորդին համար ալ առեն ունինք :

— Հըմ, ես չպիսի երթայի — ըստ Արամիս — պատուառ  
ասպետ մը կնկան մը առուած ժամադրութեան սպարտաւոր է զըս-  
նուելու, բայց Խոչեմ աղասարդի մը կրնայ արդարանալ Կորին  
քարձրութեան տունը չերթալով, մանաւանդ երբ պատճառ ունի  
հաւատալու որ անոր շնորհակալ լինելու. համար չէ :

— Ես Արամիովին համամիտ եմ — ըստ Բորթու :

— Պարոններ — պատասխանեց ա՛Արդանեան — արդէն զաքարութեամբ ձեռօք նոյնպիսի հրաւեր մը ստացայ նորին բարձրութեամբ, զանց ըրի և հետևեալ օրն ինձ մծ դժբաղդութիւն մը պատահչեցու : Գօնստանս աներեւ ոյթ եղաւ . ինչ որ կ'ողէ թող լինի, կարատինալին հրաւերը պիտի ընդունիմ :

— Եթէ արդէն որոշումի ըրեր ես — ըստ Ալու — զիտցածդ ըրեւ :

— Հասպա Պասդիլ — ըստ Արամիու :

— Բա՛, այն ատեն անկից զիս կ'ազատէք — վրայ բերաւ ա՛Արդանեան :

— Անտարակոյս — վրայ բերին Արամիս և Բորթու սքանչելի վստահութեամբ և որպէս թէ ամենապարզ բան մը կ'ըսեն — անտարակոյս քեզ անկից կ'համենք . բայց առ այժմ, որովհետեւ վաղը չէ միւս օր պիտի մեկնինք, առելի լաւ կ'ընես եթէ Պատգիլ չմտնես :

— Աւելի լաւ ընենք — ըստ Ալու — այս իրկուն ա՛Արդանեանէ չետուանանք, երեքական հրացանակրով մեզնէ ամէն մէկը պալատին դռւուք կ'պասենք . եթէ տեսնենք կառք մ'որուն դըրւնակը զոյ և կէս մը կասկածելի է, իսկայն անոր վրայ կ'իմանք . երկար ժամանակէ վեր մենամարտութիւն չըրինք, ու . կարտինալին պահակներուն հետ մեր ունեցած կուիւք հինցաւ և ու . ուրեմնիլ կ'կարծէ անշտաշ օր մեռած ենք :

— Կրափ կ'ըսեմ, Ալու — յարեց Արամիս — բանակի զօրաւ պետ լինելու համար ծնած ես . այս յատակաղիճն ի՞նչպէս կ'եւրեկ ձեզ, պարոններ :

— Սքանչելի՝ — կրկնեցին միաձայն միւս պատանիները :

— Լա՛ ուրեմն — ըստ Բորթու — ապարանը պիտի վաղեմ երթամ, ընկերներուս պիտի ազապրեմ որ ժամն ութիւն պատրաստ գտնուին . ժամանքը թեան տեղը պիտի լինի Բալէ-Կարտինալ . իսկ դոք նոյն պահուն ձեր ձիերուն թամբերը գնել ուռեք սպասաւորներու ձեռօք :

- Բայց ես երիվար չունիմ — ըստ տ'Արդանեան՝ — սակայն սիստի երթամ հաս մ'առնլու դ. առ Դրէվելի ապարանէն :
- Անօգուտ է — ըստ Արամիս — իմ երիվարներէս մին դ'առնուս :
- Ո՞րչափ ո՞նիս — հարցուց տ'Արդանեան :
- Երեք հաս — պատասխանեց Արամիս ժպտելով :
- Սիրելիդ իմ — ըստ Աթոս — ստուդիտ Գրանայի և Կառարայի բանահիւսներուն մէջ առննէն լաւ ձիերն ո՞նեցող ըստ Կառահիւսն ես :
- Մտիկ ըրէ, սիրելիդ իմ Արամիս, երեք երիվարն ի՞նչ սիստի ընես. չեմ կրնար հասկնալ նաև թէ երեք հաս ձի ի՞նչ չո՞ւ համար դներ ես :
- Ո՞չ, երրորդն այս առտու իսկ ընդունեցայ անպահազեստ սպասաւորի մը ձեռօք, որ չուզեց յայտնել ի՞նձ թէ որու է այն ձին, և մինակ հաստատեց թէ իր տիրոջմէն հրաման ունի . . . :
- Կամ իր տիրուհին — ընդմիշեց տ'Արդանեան :
- Աղիէ բան մը չէետեիր — ըստ Արամիս կարմրելով . . .
- և ծառան պնդեց ըստ թէ իր տիրուհին հրաման առեր է ձին ախոռս բերելու առանց յայտնելու թէ ո՞ր կողմէ կ'զայ այն :
- Բանահիւսներուն միայն այսպիսի բաներ կ'պատահին — վրայ բերաւ ծանրաբար Աթոս :
- Լաւ ուրեմն, եթէ այդպէս է, ուրիշ աւելի լաւ բան մը կայ ընելու — ըստ տ'Արդանեան, — այն երկու ձիերէն ո՞րը սիստի հեծնես, զնածդ թէ ոչ ընծայ եկածը :
- Անշուշտ ընծայ եկածը, քաջ կ'զդաս տ'Արդանեան որ չեմ կրնար անպատճելու . . . :
- Անծանօթ ընծայատուն — վրայ բերաւ տ'Արդանեան :
- Կամ խորհրդաւոր ընծայատուհին — ըստ Աթոս :
- Ուրեմն զնածդ քեզի աւելորդ սիստի զայ :
- Գրեթէ :
- Միթէ զու անձամբ ծախտ առիր :
- Եւ մանր քննութեամբ. ձիաւորին ապահովութիւնը, ի՞նչ պէս զիտես, զրեթէ միշտ իր երիվարէն կախում ունի :

- Եաւ ուրեմն, առած դնովդ ինձի ծախէ :
- Ես ալ քեղի պիտի տայի, սիրելի ա'Արդանեան, որպէշ զի պէտք եղածին չափ դայն զործածելէն ետև՝ նորէն ետ դարձնես այն չնշին բանը :
- Եւ քանիի՞ առիր :
- Ուժ հարիւր ֆրանկ :
- Ահաւասիկ քեղի քառաւն հաս ուկի, սիրելի բարեկամ
- ըստ ա'Արդանեան, սոյն զումարը զրագանէն հանելով — զիւմից որ այս դրամով կ'վճարեն քու քերթուածներդ :
- Ուրեմն քասկդ լեցուն է — ըստ Արամիս :
- Հարուսաս, ամնահարուս, սիրելիով իմ :
- Եւ ա'Արդանեան իր դրագանին մէջ հնչեցոց իր մնացած ուկիները :
- Հրացանակիրներու ազարանը դրկէ քու թամբո, և քու ձիու մերիններուն հետ այս տեղ պիտի բերեն :
- Շատ լաւ, բայց քիչ ատենէն ժամը հինգ պիտի լինի, փութանք :
- Քառորդ մ'ետքը՝ Բորթոս՝ Գէրու փողոցին մէկ ծայրն երեցաւ շատ աղւոր երիվարկի մը վրայ. Մուսքօն ետևէն կ'երթար Օվերնից ձիու մը վրայ, փորբիկ, բայց շատ զեղեցիկ : Բորթոսուրախութենէ և զուողութենէ կ'փալփլէր :
- Նոյն սլահուն Արամիս երեցաւ նոյն փողոցին միւս կողմը, անկլիական շքեղ նժոյզի մը վրայ հեծած . Պաղէն կ'հետեւ բնարառիկ ձիու մը վրայ, ետևէն քաշելով հուժկու երիվար մը այս էր ա'Արդանեանի հեծաննելին :
- Երկու հրացանակիրները դրան առջև իրարու հանդիպեցան : Աթոս և ա'Արդանեան պատուհանէն անոնց կ'նայէին :
- Կրո՞գ — ըստ Արամիս — փառաւոր ձի մ'է հեծածդ, սիրելի Բորթոս :
- Այս — պատասխանեց Բորթոս — տիրուհիս՝ի սկզբան այս ձին պիտի դրկէր ինձ . ամուսնոյն անշահ մէկ կատակին վրայ միւսն ասոր տեղ անցեր էր . բայց ասոր վրայ ամուսինն իր պատիժը կրեց, և կատարեալ հատուցում ստացայ :

Ըստ կարգի Բլանշէ և Կրիմօ երեցան, իրենց մեծերուն ձիերն ունեմէն բռնած . ա' Արդանեան և Աթոս վար իջան, իրենց ընկերներուն պէս աշտանակեցին և չորսերնին մէկաեղ ճամբայ ելան . Աթոս՝ իր կնոջը պարտաւորած ձիուն վրայ, Արամիս՝ իր ակրուհւոյն պարտաւորած ձիուն վրայ, Բորթոս՝ իր զործակալուհւոյն պարտաւորած ձիուն վրայ, և ա' Արդանեան իր յաջող բաղդին՝ Լաւագոյն տիրուհւոյն պարտաւոր եղած ձիուն վրայ :

Սպասաւորներն ետեւէն կ'երթային :

Ինչպէս որ Բորթոս խորհեր էր, այս այրուձին լաւ ներզործութիւն ոնեցաւ, և եթէ ամիկին Գոքնար Բորթոսի ճամբուն վըրայ զանուէր և աեմնէր թէ՛ բնչ փառաւոր կերպարան առեր էր իր սիրողը սպանիական երիվարկին վրայ, անշոշտ չպիտի ցաւէր իր ամուսնոյն արկղէն քիչ մը բան խորելուն :

Առվրի մօմ՝ չորս բարեկամները Պ. աը Դրէ վիլի հանդիպեցան որ Սէն-Ժէրմէնէն կ'զար . զանոնք կեցուց որպէս զի զովէ անոնց հանդերձանքը . և ասով քանի մը վայրկենի մէջ անոնց չորս զին առին հարիւրի չափ դատարկապարաններ :

Տ' Արդանեան այս պարապայէն օգուտ քաղելով կարմիր կնիք և դժուական զինադրուց կրող նամակին խօսքը բացաւ Պ. աը Դրէ վիլին . յայտնի է որ միւս նամակին վրայ բաւ մը շըստ :

Պ. աը Դրէ վիլ ա' Արդանեանի ըրած որոշումին հաւանութիւն ցցուց, և հաւասարեց որ եթէ հետեւեալ օրը չերել, զանի զըստ նելու ճարը պիտի փնտուէ ուր որ զանուի :

Նոյն սպահուն Ամանացիին մեծ ժամացոյցը ժամը վէց զարկաւ չորս բարեկամները Պ. աը Դրէ վիլէ ներում ինդրելով ըսին որ ժամադիր եղած են տեղ մը և անորմէ բաժնուեցան :

Վաղ Ընդ վաղ զնալով հասան Շայօի ճամբան . օրը տարաժամնելու վրայ էր . կառքերը կ'անցնէին կ'զառնային . ա' Արդանեան՝ որուն բարեկամները քանի մը քայլ հեռուէն զանի կ'սպահուանէին, կառքերուն խորը կ'թափանցէր իր աչերը, և իրեն ծանօթ գէմք մը չէր տեսներ :

Աշե ըջառէս՝ քառօրդ մը սպասելէն ետե՛ այն միջոցին որ վեր-

ջալոյնը կ'փարատէր, կառք մ'երեցաւ Աէվրի ճամբուն վրայ սրբնիթաց արշաւելով. Նախաղգացում մը ա'Արդանեանի կանխառ ըստ որ այն կառքն իրեն ժամադրութիւն տառող անձը կ'տաներ. պատանին անդամ զարմացաւ որ իր սիրան այնքան ուժգին կը բազիւր: Գրեթե նոյն պահուն կնկան մը դլուխը գոնակէն գուրս ելաւ, երկու մատերը բերնին վրայ՝ որսպէս թէ լոռթիւն պահել կ'պատուիրէր, կամ իրը թէ համբոյր մը կ'որկէր. ա'Արդանեան ուրախութեան թեթև ձիկ մ'արձակեց, այն կինը կամ լաւ ևս այս յայտնութիւնը, վասն զի կառքը տեսիլի մ'արագութեամբ անցեր էր, տիկին Պօնասիկէօն էր:

Ակամայ շարժումով մը, և եղած պատուէրին հակառակ, ա'Արդանեան ձիովը սրացաւ և քանի մ'սաւում ընելով կառքին միացաւ. բայց գոնակին ապակին ամբապէս զոցուած էր, տեսիլն անեցեսով եղեր էր:

Այն ատեն ա'Արդանեան սա պատուէրը յիշեց. «Եթէ քո և քեզ սիրող անձերու կեանքը կ'սիրես, անշարժ կեցիր և այն ողէս իրը թէ բան մը չտեսար»:

Աստի ա'Արդանեան կանկ առաւ, վախնալով չէ թէ իր անձին, այլ հեք կնկան համար որ անշուշտ մեծ վտանգ մ'աշքն առեր էր այս ժամագրութիւնը տալով:

Կառքն իր ընթացքը շարունակեց սրարշաւ և Բարիզի մէջ մանելով անհետ եղաւ:

Տ'Արդանեան նոյն աեղը կեցեր էր շուարած և չղիտէր թէ ինչ մոտածէ: Եթէ տիկին Պօնասիկէօն էր և Բարիզ կ'գառնար, ինչո՞ւ համար այս փախտական ժամագրութիւնը պիտի տար, ինչո՞ւ համար այն անօգուտ համբոյրը պիտի տար: Եթէ, միւս կողմէ, Պօնասիկօ չէր, և այս աւելի կարելի էր, վասն զի արեն արդէն մարը մտած լինելով աւելի գիւրին էր սխալիլ, և եթէ տիկին Պօնասիկօ չէր, միթէ իրեն զէմ լարուելիք գարանի մ'սկիզբը չէր կրնար լինիլ, ոսյն կինն իրրե խոյծ ցոյց տալով որոն համար սէր ունենալը պիտի ին:

Երեք ընկերակիցներն անոր մօտ եկան : Երեքնին ալ կատարելապէս տեսեր էին կնկան մը զլու խն որ դռնակէն երեցեր էր : բայց ոչ ոք , Աթոսէն զատ , տիկին Պօնասիէօն չէր ճանչեր : Սակայն Աթոս սա կարծիքն անէր մէ իրօք այն կինը Պօնասիէօն էր , բայց ա՛Արդանեանի շափ մտատանցութեան մէջ շլինելուն , կարծեր էր տեսնել երկրորդ զլուխ մը , մարդու զլուխ մը կառքին խորը :

— Եթէ այդպէս է — բառ ա՛Արդանեան — անտարակոյս մէկ բանտէ ուրիշ բանտ մը կ'փոխադրեն զանի : Բայց ինչ պիտի ըստնեն ուրեմն այն խեղջէ էակը , և ինչպէս պիտի կարենամ երբէք անոր միանալ :

— Բարեկամ — ըստ Աթոս ծանրօրէն — յիշէ միանգամ որ մարդ երկրիս վրայ մինակ մեռելներուն չհանդիպիր . դու ևս ինո ձի շափ այս մասին տեղեկութիւն ունիս , այնպէս չէ : Արդ՝ եթէ քու տիրուհիդ մեռած չէ , եթէ քիչ մ'առաջ մեր տեսած կինն է , անշուշտ օրին մէկը զանի պիտի զտնես : Եւ կարելի է , Աստուած իմ — յարեց նա իրեն յատուկ մարդատեցութեան շեշտով մը — կարելի է փափաքածէդ պաելի շուտով տեսնես զանի :

Ժամը եօթ ու կէս զարկաւ , կառքը քսան վայրիենի չափ ուշ շացեր էր որոշեալ ժամադրութեան ատենէն : Տ'Արդանեանի բարեկամները յիշեցուցին անոր որ ուրիշ այցելութիւն մ'ալ ունի ընելու , դիմել տալով միանդամացն որ անկից ետ կենալու տական ազատ է :

Բայց ա՛Արդանեան մէ կամակոր էր և թէ հետաքրքիր : Մըտաքին մէջ գրեր էր Բալէ - Կարախնալ երմալ և Կորին բարձրութեան ըսելիքն իմանալ : Բան մը կարող չեղաւ անոր որոշումը փոխելու :

Աւտոի Սէնդ - Օնօրէ փողոցը հասան , և Բալէ - Կարախնալի հրապարակը դամն արդէն տասն երկու հրատիրեալ հրացանաւ կիրները՝ որ մօն կ'զային իրենց ընկերներուն սպասելով : Այն աեղ միայն բացատրեցին անոնց թէ ինչ պատճառաւ կանչուած են : Տ'Արդանեան քաջածանօթ էր թաղաւորին հրացանակիրներուն

ոպատուարժան դնդին, որուն մէջ օրին մէկը՝ պաշտօն ստանաւ-  
լիքը դիմէին . ուստի կանխառ զինքն իբրև զինակից կ'նկատէին :  
Այս նախորդ պարագաներու պատճառառաւ իւրաքանչիւր ոք յօ-  
ժարակամ ընդունեց այն պաշտօնն որուն կոչուած էր . ասկէ  
զատ՝ շատ հաւանական էր որ խաղ մ'ունէին խաղալ ո՛ , կար-  
տինալին մարդոց, և այս արժանի զինուորականները միշտ պատ-  
րաստ էին սոյն տեսակ արշաւանաց համար :

Ամուս երեք վաշտակ բաժնեց զանոնիք, միցյն հրամանատարու-  
թիւնն ինքն տուաւ, երկրորդը տուաւ Արամիսին և երրորդը Բոր-  
թոսին, յետոյ մէն մի վաշտակ դրան մը զիմացը գնաց և գարա-  
նամուտ սպասեց :

**Տ'Արդանեան ալ զլիստոր դռնէն Կարտինալին ասպարանը  
մտաւ :**

Թէև քաջ դիմէր որ զօրեղ օչնականներ ունէր, պատանին  
լիովին մտատան ջութենէ ազատ չէր՝ երբ քայլ առ քայլ մեծ  
սանդղէն վեր կ'ելնէր : Եր ընթացքը Միլէտիին նկատմամբ փոքր  
՚ի շատէ մատութեան կ'նմանէր, և արդէն դիմէր թէ այս կըն-  
կան և կարտինալին մէջ քաղաքական յարաբերութիւններ կան .  
ասկէ զատ՝ Վարդ կոմոք, որու հետ այնչափ զէշ վարուեր էր,  
Նորին բարձրութեան մէկ հաւատարիմ պաշտօնեացն էր, և տ'Ար-  
դանեան դիմէր որ եթէ կարտինալն ահարկու էր իր թշնամինե-  
րուն, շատ կապուած էր իր բարեկամներուն հետ :

— Եթէ Վարդ կոմոք մեր կոխւը պատմեց կարտինալին, և  
այս ալ կասկածելի չէ, և եթէ զիս ձանչեց, և այս ալ հաւա-  
նական է, պէտք է ինքզինքս պատճապարտ մէկը նկատեմ —  
կ'ըսէր տ'Արդանեան դլուխն օրելով : — Բայց ինչո՞ւ համար մին-  
չեւ այս օրս սպասեց . խնդիրը շատ պարզ է . Միլէտին ինձի  
զէմ դանդատած պիտի լինի այն կեղծուպատիր վշտակրութեամբ  
որ զինքն այնքան սրտադրաւ կ'գարձնէ, և այս վերջին յան-  
ցանքս անշուշտ շափը լցուցած պիտի լինի :

— Բարեբաղդօրէն — կ'յարէր նա — իմ բարի բարեկամներս  
վարն են, և սուանց պաշտականելու չպիտի թողուն որ զիս տա-

Նին : Պակայն Պ. ար Դրէվելի հրացանակիրներու դունդը չէ կարող առանձինն մարտ մղել կարտինալին դէմ, որ բոլոր ֆրանսայի զօրութիւնն իր ձեռքին տակն ունի, և որու առջեւ թաղուածին անզօր է և թաղաւորն անկամ : Տ' Երդանեան, բարեկամիք իմ, դու քաջ ես, դու խոհեմ ես, դու աղոր յատկութիւններ ունիս, բայց կանոյք քեզ՝ ի կործւստ պիտի մատնեն :

Այս տիսուր եղբակացութեան հասեր է ը տ' Արդանեան երբ նախասենեակը մտաւ : Իր նամակը սպասարորդ բարապանին յանձնեց, որ զանի սուսառուն (salle d'attente) տարաւ և ինքը պալատին ներսերը մտաւ :

Այս սպասարանի մէջ Պ. կարտինալին հինգ վեց պահակները կ' դժոնուէին, որ տ' Արդանեանը ճանչելով և դիտնալով որ այն էր ժիւսազը վիրաւորողը, տարօրինակ ժայիտով մ' անոր երեսը նայեցան :

Այս ժայիտը տ' Արդանեանի չարագուշակ երեցաւ, մինակ, մեր Կապօնը շուտով երկիւղ չզդալուն, կամ լաւ և ըսեմ, իր երկրին մարդոց բնական զոտողութեան շնորհիւ, իր հոգւոյն մէջ անցած դարձածը դիւրաւ չքացնելուն, երբ զդացածն երկիւղի կը նմանէր, Պ. Պ. պահակներուն առջեւ զնաց կանզուն կեցաւ, և ձեռքն ազդրին վրայ դրած սպասեց այնպիսի դիլքով մ' որ զուրկ չէր վեհափառութենէ :

Բարապանը ներս մտաւ և տ' Արդանեանի նշան ըրսու որ ետեէն երթայ : Պատանիին այնպէս երեցաւ որ պահակները՝ իրեն հեռանալը զիտելով՝ իրարու հետ կ' փսփսային :

Նրբագաւթէ մը զարկաւ, մեծ սրահէ մ' անցաւ, դրբատոն մը մտաւ, և ինքզինքը զտաւ մարդու մը գէմ' որ դրասեղանի մ' առջեւ նստած զիր կ' դրէր :

Բարապանը ներս հրամցոց զանի և քաշուեցաւ առանց բառ մ' ըսելու : Իսկ տ' Արդանեան յուն կեցաւ և այն մարդը քննեց :

Տ' Երդանեան նախ կարծեց թէ՝ իր պրակը (dossier) քննող գատաւորի մը հետ է իր զործը, բայց զիտեց որ զիտանադպիրն անհաւասար երկայնութեամբ տողեր կ' դրէր կամ կ' սրբագրէր :

մասներուն վրայ բառեր չափելով, և դիմեց որ քերթողի մ'առ-  
ջեւ կ'զանուի : Պահ մ'ետքը քերթողն իր ձեռագիրը դոցեց, ո-  
րուն կողքին վրայ դրուած էր . ՄԻՒԾՄ, ՇՀԵԼԵՔ ՚է հինք ուսու-  
ե զլուխը վեցցոց :

Տ'Արդանեան կարտինալը շանչեց :

## Ի

### ԱՆՑԹԵԼԻ ՏԵՍԻԼ ՄԸ

Կարտինալն իր արմուկը ձեռագրին, սյուը ձեռքին վրայ կըռ-  
թնցոց, և պահ մը պատանին նկատեց : Զկար աչք մ'որ կար-  
տինալին աչքին չափ խորագնին լինէր, և տ'Արդանեան զգաց  
օր անոր ակնարկը տենդի պէտ երակներէն կ'վազէր :

Սակայն անվրտով երես մը ցցուց, դլսարկը ձեռքը բռնած,  
և նորին բարձրութեան հաճղից պատելով՝ առանց հպարտու-  
թեան, սակայն նաև առանց խոնարհութեան :

— Պահրն — ըստ անոր կարտինալը — միթէ դու ես ուսար-  
նեցի տ'Արդանեան անունով մէկը :

— Այո, տէր իմ — պատասխանեց պատանին :

— Տարպի և շրջակայից մէջ տ'Արդանեանի շատ Ճիւղեր կան,  
որու որ Ճիւղէն ես :

— Մեր վեհափառ թագուորին հօր՝ Մեծն Հանրիի հետ կրօնի  
կոիւներ ընող զօրապետին որդին եմ :

— Շատ Ճիշտ է : Միթէ դու որ զրեթէ եօթ ութ ամիս  
առաջ երկրէդ ելար մայրաքաղաքս բաղդ փնտոելու համար :

— Այո, տէր իմ :

— Մէօնի Ճամբով եկար, ուր քեղի բան մը պատահեցաւ,  
շղիսեմ իրօք թէ ինչ է, բայց վերջապէս բան մը :

— Տէր իմ — ըստ տ'Արդանեան — ահա ըսեմ պատահածը.

\*\*\*

— Անօդուտ է , անօդուտ — վրայ թերաւ կարտինալը ժպիտով ժորմէ կ'իմացուէր որ սպատմելու փափաքող սպատանիէն լու . ևս զիտէր այն սպատմութիւնը — Պ . աը Դրէվիլի ուղղեալ յանձնաւ բարական ունէիր , այնպէս չէ :

— Այո՞ , աէր իմ . բայց Ճիշտ Մէօնի այն ձախորդ դործին մէջ . . . :

— Յանձնարարական դիրդ կորսուէր էր — վրայ թերաւ կարտինալը . — այն , այդ զիտեմ . բայց Պ . աը Դրէվիլ ճարտար դիմադրէտ մ'է որ առաջին հայեցուածով մարդիկը կ'ձանչէ , և իր քեռայր Պ . Տէղէսարի զնդին մէջ դրաւ քեզ , յուսադրելով թէ օրին մէկը հրացանակիրներու վաշոր սփիտի մանես :

— Շատ քաջ տեղեկացեր էք , տէր իմ — ըստ ա'Արդանեան :

— Այն օրէն վեր գլխիդ շատ բաներ հասան . Շարդրէօի շըրջականները պարտելու դացեր էիր օր մը , թէե լաւադոյն կ'լինէր եթէ ուրիշ տեղ զտնուէիր . յետոյ՝ բարեկամներուդ հետ ֆօրմի ներմուկներն ուղեորդութիւն մ'ըրիր . անոնք ճամբան մնացին , բայց դու , դու քու ճամբադ շարունակեցիր : Բնական էր . ըստ օրում Անկլիա զործեր ունէիր :

— Տէր իմ — ըստ ա'Արդանեան բոլորովին շուարած — Անկլիա կ'երթայի . . . :

— Վիճակօր կամ այլուր որսորդութիւն ընելու . այդ զործն ուրիշին զիտնալիք բանը չէ : Ես , ես քաջ դիտեմ այդ բանը , վասն զի իմ արհեստս է ամէն բան զիտնալ : Ե դարձիդ օդուտափառ անձ մը քեզի ընդունեց , և խնդադին կ'զիտեմ որ անոր նորիրած յիշատակը տակաւին սպահեր ես :

Տ'Արդանեան թաղուհիէն ընդունած անդամանդին տարաւ ձեռքն և անոր քարն աշխուժիւ . դարձոց ներսի զին , բայց շատ ուշ թնդաց :

— Կոյն օրուան հետևեալ օրը Քավուան քեզի այցի եկաւ — յարեց կարտինալը — սփիտի աղաւէր քեզ որ Պալատը դաս . այս այցելութիւնն ընելու յանձն շառիր , և սխալեցար :

— Տէր իմ , կ'վախնայի որ Զեր բարձրութեան առջեւ մեղաւ սպարտ չլինիմ :

— Ե՛ս, և ինչ պատճառաւ, պարո՞ն, միթէ քու գլխառոքնեւրոդ հրամաները խելքով և արիտթեամբ կատարելո՞դ համար իմ առջեւ մեղապարտ պիտի զանու էիր, մինչդեռ դովեստից արժանի էիր: Ավատմեմ միայն այն անձերն որ չեն հնազանդիր, և չէ թէ անոնք՝ որ քեզի արև՝ կ'հնազանդին . . . և խիստ լաւ . . . : Եւ ասոր ապացոյցը կ'ուղես, յիշէ միանգամ այն օրուան թուականն երբ քեզի մարդ զրկեր էի որ զաս զիս տեսնես, և յիշողութեանդ մէջ փնտուէ թէ նոյն իրկունն իսկ ինչ պատահմանք եղաւ:

Ճիշտ այն իրկունն էր որ տիկին Պօնասիէօ յափշտակուեր էր: Տ'Արդանեան սարտեցաւ, և յիշեց որ կէս ժամը առաջ եղկելի կինն իր քովէն անցեր էր, անտարակոյս զանի անհետ ընող զօրութեանդ մէջ փնտուէ վերստին մղուելով:

— Վերջապէս — շարունակեց կարսինալը — ըստ ուրում բաւական ատենէ վեր խօսքդ չէի լսեր, ուզեցի իմանալ թէ ինչ կ'ընես: Ասկէ զատ՝ դոյլն շնորհակալութիւն մ'ինձի պարտաւոր ես. դու ինքնին զիտած ես թէ ամէն պարագայից մէջ ո՛քչափ ինայեր եմ՝ քեզ:

Տ'Արդանեան ակնածութեամբ գլուխ ծռեց:

— Այդ բանը — շարունակեց կարսինալը — ոչ միայն բնական արդարասիրութեան զզացումէ՝ կ'ծաղէր, այլ և քու մասիդ գծած մէկ յատակադէս:

Տ'Արդանեան ևս քան զես կ'զարմանար:

— Կ'փափաքէի պյս խորհուրդս քեզի հաղորդել իմ առաջին հրաւէրս ընդունած օրէ, բայց դու չկար: Երջանկարար՝ այս յապարտումէն վիաս մը չծաղիր, և ահա այսօր պիտի իմանաս միտքս: Իմ դիմացս նատիր, Պարո՞ն տ'Արդանեան, դու բարի առզատորդի մ'ես և ինձի միտ դնելու համար հարկ չկայ որ սոքի վրայ կենաս:

Եւ կարտինալն իր մասով պատանիին աթու մը ցոյց տուաւ, օրատանին այնքան կ'զարմանար անցած գարձածին վրայ որ՝ հնազանդելու համար՝ իր խօսակցին մէկ նոր նշանին սպասեց որ նատի:

— Դուք քաջասիրտ ես, Պարոն տ' Արդանեան — շարունակեց Կորին բարձրութիւնը — դու խոչեմ ես, և այս լաւ ես է : Ես սրտի և զլիսի տէր մարդիկը կ'սիրեմ, մի զարհուրիր — յարեց նա ժպտէլով — սրտի տէր մարդ ըսելով՝ արիասիրտ մարդիկը կ'իմանամ, բայց որչափ որ գեռ շատ նորահաս ես և հաղիւ աշխարհ կ'մտնես, դարձեալ հզօր թշնամիներ ունիս . եթէ զգոյշ չլինիս, քեզ ՚ի կորուստ պիտի մատնեն :

— Աւազ, տէր իմ — պատասխանեց պատանին — շատ դիւրաւ անշուշտ . վասն զի ուժեղ են և պաշտպաններ ունին, մինչդեռ ես միայնակ եմ :

— Այս, Ճշմարիտ է . բայց որչափ որ մինակ ես, արդէն շատ բաներ ըրիր, և դեռ ես պիտի ընես, տարակոյս չունիմ այս մասին : Սակայն կարծեմ թէ այդ ընտրած բազմարկած ասպարիզեդ մէջ առաջնորդի մը կարօտ ես, վասն զի, եթէ չեմ վրիպիր, Բարիզ եկար բազդ դտնելու փառամէր զիասաւորութեամբ :

— Մոլար յոյսերու հասակին մէջն եմ, տէր իմ — ըստ տ' Արդանեան :

— Մինակ յիմարներու համար մոլար յոյսեր կան, պարոն, և դու մտացի մարդ ես : Նայինք ինչ կ'ըսես եթէ քեզի դրոշակրի պաշտօն տրուի իմ պահակներուս մէջ, և պատերազմէն ետքն ալ զնդի մը հրամանատարութիւնը :

— Ա՛հ, տէր իմ :

— Կ'ընդունիս, այնպէս չէ :

—Տէր իմ — վրայ բերաւ տ' Արդանեան շփոթած դէմքով մը :

— Ինչպէս, միթէ կ'մերժե՞ս — դոչեց կարտինալը զարմանօք :

— Ես արքային պահապան զօրաց մէջն եմ, տէր իմ, և պատճառ մը չունիմ դժողոհ լինելու :

— Բայց կ'երեի ինձ — ըստ կարտինալը — որ իմ պահականերս՝ արքային ալ պահակներն են, և եթէ զինոր մը՝ որ և է քորազնդի մը մէջ ծառայէ, թագաւորին ծառայած կ'լինի :

— Տէր իմ, դուք լսու չհասկցաք իմ խօսքս :

— Բարոյր մը կ'ուզես, այնպէս չէ, կ'իմանամ միտքդ : Է՛հ,

շատ լաւ, այդ բարոյրն ունիս : Նոր աժտիճան, նոր բացուելիք պատերազմը, քեզի տուած առիթս, ահա ասոնք մարդոց աչքին համար բաւ են . իսկ քեզի համար պէտք եղածն ապահով պաշտպանութեան պիտոյքն է . վասն զի լաւ է զիանալդ, ո՛ւ . ո՛ւր զանեան, որ ծանր ծանր զանդատներ լսեցի քեզի դէմ, քո օրերդ ու դիշերներդ լիովին չես նուիրեր թագաւորին ծառայութեան :

### Տ'Արդանեան կարմիեցաւ :

— Սակայն — շարունակեց կարտինալը ձեռքը թողթի պուրակի մը վրայ դնելով — ահա այս տեղ ամբողջ պրակ մ'ունիմ որ քեզի կ'վերաբերի . բայց զայն կարդալէն առաջ, քեզի հետ խօսիլ ուղեցի : Կիտեմ որ անվեհեր մարդ ես, և եթէ ծառայութիւններդ լաւ նպատակի դործածուին, փոխանակ ծուռ քայլեր առնելու, կրնաս մնձ օգուտ քաղել : Օ՞ն, մտածէ, և որոշումէ ըսէ :

— Զեր բարեսրատութիւնը զիս կ'շփոթէ, տէր իմ — պատասխանեց ա'ւրդանեան — և Զեր բարձրութեան հողւոյն մէջ այնքան վեհանձնութիւն կ'տեսնեմ՝ որ ես ձեր առջև միջատ մը կը դառնամ, բայց վերջապէս, քանի որ կ'ներէք որ համարձակ խօսիմ . . . ,

### Տ'Արդանեան կանկ առաւ :

— Այո, խօսէ :

— Լաւ ուրեմն, պիտի ըսեմ Զեր բարձրութեան որ իմ բռնոր բարեկամներս հրացանակիրներուն և թշուամիներս, անմեկնելի ձակատաղ բային վճռով ձեր քովն են . ուստի այս տեղիններուն աչքին փուշ պիտի երեիմ և միւսներուն ատելի եթէ ձեր առաջարկութիւնն ընդունիմ :

— Միթէ հսկաբութեամբ կ'մտածես արդեօք որ քու արժեքիդ համաձայն չէ իմ առաջարկութիւնս, պարոն — ըսաւ կարտինալն արհամարհոտ ժպիտով մը :

— Տէր իմ, իմ մասիս չափազանց բարեսիրտ էք, և ընդ հա-

կառակին ես կ'մտածեմ՝ որ այդշափ բարութեանց արժանի լինելու համար դեռ բան մը չորի։ Որոշէլի պաշարումը մօտ օրերս պիտի սկսի, աէր իմ։ Չեր բարձրութեան աշաց առջև պիտի պատերազմիմ, և եթէ այս պաշարման ժամանակ ձեր ակնարկը դրաւելու կերպով վարուիմ, լաւ, այն ատեն արիութեան գործ մ'ըրած պիտի լինիմ՝ արժանի գտնուելու համար այն պաշտպանութեան որով զիս պատուել կ'ուզէք։ Ամէն բան իր ժամանակին ընել պէտք է, աէր իմ, թերևս քիչ մ'ուշ ինքընկըս ձեզի նորիրելու իրաւոնք պիտի ունենամ, սակայն այս ժամուս ձեզի ինքընկըս ծախելու երես պիտի առնում։

— Այսինքն ինձի ծառայելու կ'մերժես, պարոն — ըստ կարտինալը սրտումութեան ձայնով մ'որուն մէջ սակայն տեսակ մը համարում կ'երեւէր — ուրեմն ազատ կեցիր և քու ատելութիւններդ ու համակրութիւններդ պահէ։

— Տէր իմ. . . :

— Լաւ, լաւ — ըստ կարտինալը — քեզ չեմ մեղադիեր, բայց քաջ կ'իմանաս որ արդէն շատ է բարեկամներ պաշտպանել և վարձատրել, մարդ իր թշնամիներու բան մը պարտաւոր չէ, և սակայն քեզի խորհուրդ մը պիտի տամ։ լու վարուէ, Պարոն տ'Արդանեան, վասն զի եթէ միանդամ՝ ձեռքս քու վրայէդ քառշեմ, կեանքդ մանկի մ'անդամ՝ չպիտի զնեմ։

— Պիտի ջանամ, աէր իմ — պատասխանեց Կասքօնն ազնիւ վստահութեամբ։

— Այսուհետեւ մտածէ որ, եթէ օրին մէկը քեզի դժբաղդութիւն մը պատահէի — ըստ գիտմամբ Ռիշլիէօ — ես ինքս քեզ օդնութեան հասայ, և ձեռքէս եկածն ըրի որ այն դժբաղդութիւնը քեզի չպատահէի։

— Կ'ոչ որ պատահէի — ըստ տ'Արդանեան իր ձեռքը կուրծքին վրայ դնելով և խոնարհելով — յաւիտեան երախտազիտութիւն պիտի ունենամ ձեզի այս պահուստ ինձ ըրած բարեացդ համար։

— Լաւ, որեմն, ինչպէս որ ըսիր, ոկ, տ'Արդանեան, պահ-

տերապմին ետքը պիտի տեմուինք . աչօքս քեզի պիտի հետեւիմ ; վամ զի ես ալ անդ պիտի դանուիմ — վրայ թերաւ . կարտինալը մատովը տ'Արդանեանի ցոյց տալով փառաւոր զէն ու զարդ մը զոր պիտի հաղներ — և 'ի դարձին անշոշտ պիտի հաշիւ տեսնենք :

— Ա՛հ , տէ՛ր իմ — զուեց տ'Արդանեան — խայեցէք զիս և ձեր տհաճութեան ներքե զիս մի հարուածէք . չէզոք մնայէք ; տէ՛ր իմ , եթէ կ'ուզէք որ վեհաճնօրէն վարուիմ :

— Պատահնի — ըսաւ Ավշլիէօ — եթէ միանդամ ևս այսօրուան ըսածս քեզի ըսելու կարողանամ , կ'խոստանամ քեզի ըսելու :

Ոիշլիէօի այս վերջին խօսքն ահուելի կասկած մը կ'բացատրէք , որով տ'Արդանեան տելի ահ ու դող զգաց քան թէ կարտինալը սպառնալիք մ'ըսեր , վասն զի աղդարարութիւն մ'էր այն : Արդեմ կարտինալը կ'աշխատէր զանի սպառնացող վտանգէ մը պահպանել : Եթերանը բացաւ որ պատասխան տայ , բայց վէսական շարժումով մը կարտինալն անոր ձամբայ տուաւ :

Տ'Արդանեան զուրս ելաւ , բայց դրան վրայ փոքր մի ես արիութիւնը պիտի կորուսնէր և քիչ մնաց նորէն ներս պիտի մըտնէր : Սակայն Աթոսին ծանր ու խիստ դէմքն անոր երեցաւ . եթէ տ'Արդանեան կարտինալին առաջարկած դաշն ընդունէր , Աթոսիր բարեկամութիւնն անոր պիտի զանար : Աթոս զանի պիտի ուռանար :

Այս երկիրը զինքը բռնեց , այնքան զօրաւոր է ձշմարտաւ պէս մնծ բնաւորութեան մ'աղղեցութիւնն իր շուրջ պատող անձերու վրայ :

Տ'Արդանեան վեր ելած սանդղէն վար իջաւ : և զրան առջել զտաւ . Աթոսն և իր վերադարձին սպասող չորս հրացանակիրաներն որ սկսեր էին անոր ու շամալուն վրայ տաղնապիլ : Տ'Արդանեան բառ մ'ըսելով անոնց մտատանջութիւնը փարատեց , և Բլանշէ զնաց միւս պահնորդներուն իմաց տալ որ աւելորդ է աւելի ևս պահպանութիւն ընել , քանի որ իր զլիսաւորն ողջ առաջի ելեր էր Բալէ - կարտինալէն :

Երբ Ալթուին տունը դարձան՝ Արամիս և Բորթոս այս տարօն քինակ ժամադրութեան պատճառը հարցոցին, բայց ա՛Արդանեան բաւական համարեց անոնց ըսելու թէ ո՛, ՈՒիշլիէօ զինքը կանչեր էր դրօշակրի աստիճանով իր պահակներուն մէջ պաշտօն մը տալու, և թէ ինքը մերծեր էր :

— Եւ շատ աղէկ ըրեր ես — գոչեցին միաձայն Բորթոս և Արամիս :

Ալթոս խորին մասածութեան մէջ ընկաւ և ոչ ինչ չպատասխանեց : Բայց երբ մինակ մնացին,

— Ի՞նչ որ պէտք էր ընել ըրեր ես, ա՛Արդանեան — ըստ Ալթոս — բայց կարելի է որ զէշ ըրիր :

Տ'Արդանեան հառաւանք մը հանեց, վասն զի այն ձայնն իր հոգւոյն դաշտնի մէկ ձայնին կ'պատասխանէր, որ իրեն կ'ըսէր թէ մծ աղէտներ իրեն կ'սպասէին :

Հետեւեալ օրը մեկնելու համար պատրաստութիւններ ընելով անցուցին . ա՛Արդանեան ո՛, աը Դրէվիլի զնաց իր հրաժարական բարեր տալու : Կոյն պահուն ամէն մարդ տակաւին կարծէր թէ պահակներու և հրացանակիրներու բաժանումը վայրկենական սփոտի լինի, քանի որ թագաւորը նոյն օրը ժողով դումարելով միւս օրը պիտի մեկնէր : Բւստի ո՛, աը Դրէվիլ բաւական սեպեց հարցնելու ա՛Արդանեանի թէ իրմէ պէտք ունի՞, բայց ա՛Արդանեան պատասխանեց դուռդարար թէ իրեն պէտք եղած բաներն ունի :

Գիշերը՝ ո՛, Տէղէսարի պահակներու և ո՛, աը Դրէվիլի հրաշցանակիրներու զունդերը միացան որ իրարու հետ բարեկամութիւն ըրեր էին : Իրարմէ պիտի հեռանային վերսոտին տեսնուելու յուսով երբ Աստուած կամէր և եթէ Աստուած հաճէր : Հետեւապէս նոյն զիշերը շատ աղմկալի զիշեր մ'եղաւ, ինչպէս օր զիւրին է երեակայել . վասն զի՞ այսովիսի պարադայի մէջ ձայրայեղ մտատանջութիւն մը կարելի է միայն փարատել ծայրաշեղ անհողութեամբ մը :

Հետեւեալ օրը՝ երբ առաջին անգամ փողերը հնչեցին, բաւ-

րեկամներն իրարմէ բաժնուեցան . Հրացանակիրները Պ . տը Գրէւ վիլի ապարանը վազեցին զայշին , և պահակները Պ . Տէ զէ սառ թին : Իւրաքանչիւր հրամանատար՝ խիզոյն իր խոմբը Լուկը առաջնորդեց՝ ուր թաղաւորը զօրահանդէս պիտի ընէր :

Թաղաւորը տրտում էր և հիւանդ կ'երևէր , որով իր խրոխատ կերպարանը կ'մնդմէր : Եւ արդարեւ առ ջի օր ժողովին մէջ տենդը բռներ էր՝ մինչդեռ գատաւորական ասենին կ'նախազահէր : Բայց գարձեալ նոյն իրկունն իսկ ճամբայ ելնելու որոշումն ըբեր էր , և թէ և այս մասին իրեն եղած գիտովութիւններու հակառակ էր , յոսալով որ այս առաջին քաջութեան զործն ընելով պիտի կարենայ յաղթել զինքը ճարակելու սկսող հիւանդութեան :

Զօրահանդէսն աւարտելէն ետեւ՝ պահակները ճամբայ ելան , հրացանակիրները թաղաւորին հետ պիտի մնկնէին , և այս առաջիւ բորթոս ժամանակ ունեցաւ՝ իր փառաւոր կաղմածով Արս փողոցը շրջան մ'ընելու :

Գործակալուհին տեսաւ անոր անցնիլը նոր համազդեստով և զեղեցիկ ձիով : Այնքան շատ կ'սիրէր Բորթոսն որ այնպէս մեկնելուն չպիտի հանդուրժէր , ուստի նշանյը ըրաւ անոր որ ձիէն վար իջնէ և իր մօտ երթայ : Բորթոս շքեղ էր . իր մարակները կ'հնչէին , իր զրահը կ'փայլէր , իր թուրը խրոխարար սրունդներուն կ'զարնէր : Այս անդամը դպիրները ծիծաղելու փափաք չունեցան , այնքան Բորթոսի կերպարանն աչարիու էր և պատերազմական :

Հրացանակիրը Պ . Գօքնարի մօտ հրամցոցին՝ որուն մոխրագոյն փոքրիկ աչքը զայրոյթէն շողաց իր ազգակիցն այնպէս նուրոդ հաղուած շքուած տեսնելով : Սակայն ՚ի ներքուատ բանով մը միտիթարուեցաւ , այս էր թէ ամէն ուրեք կ'ըսէին թէ պատերազմն արիւնահեղ պիտի լինի . սրաբին խորէն զաղանի կ'յուսար որ Բորթոս մարտին մէջ պիտի սպաննուի :

Բորթոս իր շնորհակալեքը յայանեց վարպետ Գօքնարի և հրամարական բարեները տուաւ . վարպետ Գօքնար ամէն յաջողըւ-

թիւն և բարօրութիւն մաղթեց անոր : Իսկ տիկին Գօքնար չէր կարող իր արտատքը զսպել, սակայն իր վշտէն դէշ հետեւթիւն մը չհանեցին, դիտէին որ շատ յարած էր իր ազգականներուն, որոց համար իր ամուսնոյն հետ ծանր կուրուեր ունեցած էր :

Բայց ձշմարփու հրամարական բարեները տիկին Գօքնարի սեւնեկին մէջ եղան, սրտահմլիկ եղան :

Գործակալուհին՝ որչափ ատեն որ կարող եղաւ իր սիրահարին հետեւիլ աշքով պատուհանէն դուրս ծռելով թաշկինակ մը տատանեց, այնաքս որ կարծես թէ անկից վար նետուիլ կ'ուղէր : Բորթոս բոլոր այս սիրոյ նշաններն ընդունեց այնպիսի մարդու մը ոլէս որ այս տեսակ ցոյցերու վարժ է : Մինակ փողոցին անկիւնը դաւնալուն՝ իր դլաարփը վերտոց և բարեի ձեռվ զայն շարժեց :

Իսկ միւս կողմէն Արամիս երկար զիր մը կ'զրէր : Որո՞ւ, ոչ ոք զիտէր : Մօտակայ սենեկին մէջ՝ Քէզի՝ որ նոյն իրկունն իսկ Դրոր զնալու համար ճամբայ պիտի ելնէր, կ'սպասէր :

Աթոս ումզ ումզ կ'ըմարէր իր Սպանիոյ զինին յետին շիշը : Նոյն պահուն ա՛Արգանեան իր զնդին հետ յառաջ կ'քալէր : Աէնդ-Անդուան արտարձանը հասնելուն՝ գարձառ ինդազին ուսուզիլու նայեցաւ . բայց սրովհետեւ նայածը միայն Պասպէյլն էր : Միլէտին չտեսաւ, որ, իլաստէլեան երիվարի մը վրայ հեծած՝ զսնի կ'ցուցնէր մատովը երկու շարաշոք մարդերու որ իսկոյն զօրաց կարգերուն մօտեցան զանի ճանչելու համար : Երբ ակնարկով մը հարցում ըրին՝ Միլէտի նշանացի պատասխանեց որ իրօք նա է : Յետոյ սայդ լինելով որ իր հրամաններն անմերի պիտի կատարուին, իր ձին մարակեց և անկրեսյթ եղաւ :

Այն ատեն երկու մարդիկ զնդին ետեէն զացին, և երբ Սէնդ-Անդուան արտարձանէն դուրս ելան՝ երկու պատրաստ ձիերու վրայ հեծան, զորս սրարդ հաղուած սպասաւոր մը ձեռքը բըռած անոնց կ'սպասէր :

## ԻԱ.

ԹՈՉԵԼԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ

Լուի ԺԴ. ի օրով՝ ԹԻՕՉԷԼԻ պաշարումը քաղաքական մած դէպ  
մը, և կարտինալին մէկ մած զինուորական ձեռնարկութիւնն եղաւ։  
Աւստին հետաքրքրական, և կարեոր ևս է, որ քանի մը խօսք  
ըսնելք այս մասին։ ատէլէ զատ՝ այս պաշարման շատ մը պարա-  
գաներ մեր նկարադրելու ձեռնարկած պատմութեան հետ խիստ  
կարեոր կերպով կապուած լինելով, հարկ է որ լուսութեամբ  
չանցնինք։

Կարտինալին քաղաքական խորհուրդներն երբ այս պաշարման  
ձեռնարկեց, անրաւ էին։ Նախ ասոնք մէջ բերենք, յետոյ մաս-  
նաւոր նկատումներուն կ'անցնինք, որոնք թերևս առաջիններէն  
ընդհատ ազդեցութիւն չունեցան կարտինալին վրայ։

Հանրի Դ. ին կողմէ իրբև պատսպարան հիւկնօններու արտած  
կարեոր քաղաքներէն՝ մնացեր էր միայն ԹԻՕՉԷԼ։ Հետեւագէս հարկ  
էր կալվինականութեան այս յետին պատուարն ալ քանդել, վրա-  
տանգաւոր խմոր մ'որուն անդադար կ'զային խառնուիլ քաղա-  
քային ապաստամբութեան կամ օտար պատերազմներու որոմներ։

Սպանիացի, անկլիացի, իտալացի դժոհներ, ամէն ազգերու  
բազմաթիվներ, ամէն ազգանդի թափառիկ զինուորներ առաջին  
կոչումին բողոքականաց դրօշակին ներքեւ կ'վազէին կ'մունէին և  
իրբև ընդարձակ ընկերակցութիւն մը կ'կազմուէին՝ որոց Տիւղերն  
անարդել կ'աւարածուէին եւրոպայի ամէն կողմնը։

Հետեւագէս լա ԹԻՕՉԷԼ՝ որ նոր կարեորութիւն մ'առեր էր միու  
կալվիննեան քաղաքներու առերմամբ՝ երկաստակութիւններու և փա-  
ռասիրութիւններու վառ կայան մ'էր։ Ասէլ զատ՝ իր նաւահան-  
գիսան Անկլիացւոց յետին բաց դուռ մ'էր Գրանսա մանելու, և

զայն Անկլիոյ՝ մեր մշտատե թշնամին առջև՝ զոցելով կարտինալը ժան տ' Արքի և Կիզ դքսին գործը կ'աւարտէր :

Եւ այս պատճառաւ Պասօնրիէր՝ որ բողոքական և կաթոլիկէ էր միանգամայն, համողմամբ բողոքական՝ և իրրե հրամանատար Ա. Հոգւոյ՝ կաթոլիկ, Պասօնրիէր՝ որ ՚ի ծնէ Գերման և սրտովին Գաղղացի էր, Պասօնրիէր վերջապէս՝ որ մասնաւոր հրամանատարութիւն մ'ունէր լա Ռոչէլի պաշարման մէջ, կ'ըսէր՝ իրեն պէս շատ մը բողոքականներու զլուխն անցած՝ սրտաւերազմելով :

— Պիտի տեսնէք, պարոններ, որ բաւական ապուշ պիտի լինիք լա Ռոչէլ առնելու :

Եւ Պասօնրիէր իրաւունք ունէր, Ռէ կղզւոյն ոմբակոծութիւնը զուշակել կ'ատար իրեն Սէվէննի կոտորածները, լա Ռոչէլի առումը Կանդի հրովարտակին յառաջարանն էր :

Քայլ՝ արդէն ըսինք, հարթիչ և պարզիչ պաշտօնէի մ'այս խորհրդոց մօտ՝ որ պատմութեան կ'պատկանին, տարեղիրը ստիպուած է սիրահար մարդուն և նախանձու ոսոխին փոքրիկ նախատինելոն ալ անտես չառնել :

Ռիշլիէօ, ինչպէս ամէն մարդ դիտէ, թագուհւոյն սիրահարած էր. միթէ այս սէրը քաղաքական պարզ նախատակ մ'ունէր, թէ ոչ այն խորին առփանաց մէկ տեսակին էր բնապէս, ինչպէս որ իր քովիններուն ներշնչեց Աւստրիոյ տան Անսան, չենք կարող մնկնել, սակայն դարձեալ՝ մեր պատմութեան նախորդ նկարագրութիւններէն տեսաւ ընթերցողն որ Պլքինիհէմ Ռիշլիէօի վրայ յաղթանակիր տարեք էր, և, երկու կամ երեք պարագաներու, և մասնաւորապէս ասլիկներու զործին մէջ, անգթօրէն ծաղու նշաւակ ըրեր էր, չնորհիւ երեք հրացանակիրներու անձնուիրութեան և ա՛Վրդաննեանի արիտութեան :

Հետեապէս Ռիշլիէօ՝ ոչ միայն Թրանսան թշնամիէ մ'աղատել ունէր, այլ և ոսոխիւնը վրէժ հանել, և արդարե վրէժը՝ մնձեւ պանծալիք պիտի լինէր և հիմովին արժանի՝ այնպիսի մարդու մ'որ ՚ի բոխն ունէր՝ իրրե պատերազմի սուր՝ համակ տէրութեան մը զօրութիւնները :

Նիշլիե զիտէր որ Անկլիոյ գէմ մաքառելով՝ Պըքինկչէմի դէմ կ'մաքառէր, Անկլիակն յաղթանակելով՝ Պըքինկչէմէն կ'յաղթանակէր, և 'ի վերջէ Եւրոպայի առջե՝ Անկլիան խոնարհեցընլով՝ թագուհւոյն առջե՝ Պըքինկչէմը կ'խոնարհեցնէր:

Իր կողմէ՝ Պըքինկչէմ՝ Անկլիոյ պատիւն առաջ քցելու առտեն՝ կարոյինալին շահուց լիովին յար և նման շահերով վառուած էր. Պըքինկչէմ նաև մասնաւոր վրէժինդրութեան մը հետամուտ էր. որ և է բարոյրով՝ Պըքինկչէմ իբրև դեսպան Գրանսա մտնել չէր կրցած, ուստի իբրև աջիարհակալ մտնել կ'ուղէր:

Ուստի կ'հետեւ որ՝ երկու տարիաւորներու հաճոյից համար՝ երկու զօրաւորածոյն տէրութիւններու խաղած խաղին Տշմարիտ մրցանակն էր պարզապէս Վւատրիոյ տան Աննայի մէկ ակնարկը:

Պըքինկչէմի դոքսն առաջին առաւելութիւնն ունեցաւ, վասն դի անակնկալ՝ իննուուն նաւով և զրեթէ քսան հազար զօրքով Ռէ կղզւոյն առջե՝ զալով՝ Դուարակ կոմսը յեղակարծուստ բըռաներ էր, մինչդեռ նա Ռէ կղզւոյն մէջ թաղաւորին համար կ'հրամայէր. ուստի արիւնահեղ պատերազմէ մ'ետքը՝ դոքսը յաջողեր էր ցամաք ելնելու:

Անցնելով պատմնք որ այս կուուին մէջ Շանդալ պարոնը մեռներ էր. Շանդալ պարոնն որը կ'թողուր տասն ութ ամիսուան փոքրիկ աղջիկ մը:

Այս փոքրիկ աղջիկն այնուհետեւ եղաւ տը Աէրվինյէ տիկինը:

Դուարակ կոմսը՝ իր պահապան զօրքով Սէն-Մարդէնի միջնաբերդը քաշուեցաւ, և հարիւրի չափ մարդիկ փոքրիկ ամբոց մը զրկեց որ Քրէի ամրոցը կ'անուանէր:

Այս գէպքը կարտինալին խորհուրդները փութացուցեր էին, և մինչև որ կարող լինի թագաւորին հետ երթալ լա Ռօչէլի պաշարման հրամանատարութիւնն առնուլ, որ արդէն որոշուեր էր, արբային եղայրը ճամբայ հանել էր որպէս զի առաջին դործողութիւններն ուղղէ, և պատերազմի թաարը զըկել էր որչափ զօրք որ կարող եղեր էր զործածել:

Ահա իբրև յաւաջապահ զօրք զըկուած՝ այս վաշտին մէջ կը զանուէր մէր ա՛նըանեան բարեկամը:

Ինչպէս ար ըստնք, թաղաւորը՝ իր արքայական ժողովին աւարտումն անոփիջապէս ետքը՝ համբայ պիտի ելնէր, երբ ասեանէն ելնելով յունիս 23ին, աենդէ բռնուեցաւ, դարձեալ մեկնելու միտեր էր, բայց իր հիւանդութիւնը ծանրանալով ստիպուեր էր Արլուա օթեանելու :

Արդ՝ որ որ թագաւորը կենար, նոյն վայրը կ'մնային նաև հրացանակիրները . հետեապէս ո՞Արդանեան որ պարզապէս պահակաց մէջ էր, գէթ առ ժամանակ մ'ինքզինքը բաժնուած կը դանէր իր Աթու, Բորթու և Արամիս բարեկամներէն . այս բաժանումն որ իրեն համար լոկ դժգասեհութիւն մ'էր՝ անտարակոյս ծանր մտաստանջութիւն մը պիտի գտանար եթէ կարող լինէր դոշակելու թէ ինչ անյայտ վտանգներով շրջապատած է :

Սակայն դարձեալ անվտանգ հասաւ Ռոշէլի առջե հասատուած բանակատեղին, 1627 սաբուան սեպտեմբեր ամսեան 10ին :

Ամէն ինչ նոյն վիճակին մէջ էր . ոլքինկէմի դուքսն ու իր անկլիացիները՝ Աէ կղղոյն տիրած՝ կ'շարունակէին Սէն-Մարզէնի Միջնարերդն և լա Բրէ ամրոցը պաշարելու առանց արդիինքին և լա Ռոշէլի մարտն սկսեր էր երկու կամ երեք օրէ վեր՝ քաղքին մօա Անկուլէմ դժբին շինել տուած մէկ ամրոցի մ'առթիւ :

Տէղէսարի հրամանասարութեան ներքեւ գտնուող պահակիներն իրենց բնակութիւնը ընարեր էին 'ի Մինիմ:

Բայց՝ արդէն դիմենք, ո՞Արդանեան հրացանակիրներու զունդն անցնելու փառափրութեամբ, հազիր ութեմն իր զինակիցներու հետ բարեկամութիւն ըրեր էր, և հետեապէս առանձին և իր յատուկ մտածութեանց տուեր էր ինքզինքը :

Իր խորհրդածութիւնները գեղածիծաղ չէին, երկու տարիէ վեր որ Բարիզ եկեր էր, հասարակաց զործերու միջամտեր էր, իր անձնական զործերը մեծ քայլ մը չէին առեր թէ սիրոյ և թէ բաղդի մասին :

Սիրոյ մասին՝ եթէ սիրելու կին մը կար իրեն համար, այն էր լոկ տիկին Պօնասիէօ, և տիկին Պօնասիէօ աներեւոյթ եղեր էր առանց անոր ինչ լինելն հասկնալ կարենալու :

Բաղդի մասին՝ ինքը թէե տկար՝ կարտինալն իրեն թշնամի ը-  
քեր էր, այսինքն այնպիսի մարդ մ'որուն առ չե թաղաւորէն ըս-  
կսելով՝ տէրու թեան մեծամեծները կ'գողացին :

Այս մարդը կրնար զինք խորատիել, և սակայն չէր խորտա-  
կած, ա՛Յըդանեանի պէտ խորագէտ մաքի մը համար այս ներո-  
ղամատ թիւնը լոյս մ'էր որովլ լուագոյն ապազայի մը կ'յուսար :

Ասկէ զատ՝ ուրիշ թշնամի մ'ալ շահէր էր, որ թէե նուազ  
երինչելի, կ'մտածէր նա, և ասկայն բնաղղումով կ'զգար որ ան-  
դոսնելի չէր այն, այս թշնամին Միլէտին էր :

Այս ամէն բաներուն փոխարէն թաղուհւոյն պաշտպանութիւնն  
ու բարեսիրութիւնը շահէր էր, բայց այն ժամանակի համար  
թաղուհւոյն բարեսիրութիւնը հալածանաց նոր պատճառ մ'էր,  
և իր պաշտպանութիւնը, ինչպէս յայսնի է, շատ գէշ կ'պաշտ-  
պանէր, վկայ Շալէ և տիկին Պօնասիէօ :

Ուրեմն բոլոր այս բաներէն զուտ շահն իր մատը գրած հինգ  
վեց հաղար ֆրանքնոց մատանին էր, և գարձեալ այս մատա-  
նին ենթաղթելով որ ա՛Յըդանեան իր փառասիրութեան խոր-  
հրդոց մէջ պահէլ կամենար զայն թաղուհւոյն իբրև երախտա-  
ղիտութեան նշան մը ցոյց առլու համար, նոյն պահուն, քանի  
որ չէր կարող ծախել, իր ոտից ներքե կոխած կայծքարներուն  
չափ արժէք չունէր :

Իր կոխած կայծքարներուն չափ ըսինք, վասն զի ա՛Յըդանեան  
այս խորհրդածութիւնները կ'ընէր առանձնակի պտըսելով սիրուն  
փոքրիկ ձամբու մը վրայ որ բանակատեղիէն Նոնկուտէն զիւղը  
կ'տանէր. արդ՝ այս խորհրդածութիւններն իր կարծածէն աւելի  
չեռու տարեր էին, և օրն սկսեր էր տարածամել՝ երբ մարը  
մտնող արևուն յետին շառուիզէն կարծեց թէ հրացանի մը փո-  
ղին փայլիլը կ'տեսնէ ցանկապատի մ'ետեր :

Տ'Արդանեանի աչքը սուր և միապն արագ էր, հասկցաւ որ  
հրացանն ինքնիրեն անդ եկած չէր կրնար լինիլ, և զայն կրողը  
ցանկապատին ետելը բարեկամական մտքով պահուած չէր կրնար  
լինիլ։ Ուստի այն կողմէն հեռանալու մտաղրեց, երբ ձամբուն

միւս կողմը՝ ժայռի մ'ետև երկրորդ հրացանի մը ծայրը նշմարեց, Անտարակոյս դարան մը լարուած էր :

Երիտասարդն առաջին հրացանին վրայ ակնարկ մը նետեց և մտատան ջութեամբ մը դիտեց որ իր ողղութեամբը վար կիջնէր, բայց այն ինչ նշմարեց հրացանին քերանն անշարժ որ փուրի վրայ դետին ընկաւ : Նոյն պահուն հրացանը պարսպեցաւ, իր գլխին վրային անցնող զնդակին սուլելը լսեց :

Կորումնելու ժամանեակ չկար, ա'Արդանեան ոստում մ'ընելով կանդ առաւ, և նոյն պահուն միոս հրացանին զնդակին եկաւ ցիրու ցան ըրաւ. Ճամբուն այն տեղոյն կայծքարներն ուր երեսն 'ի վար զետին ընկեր էր :

Տ'Արդանեան այն մարդերէն չէր որ ընդ վայր արի են և ծիծաղլելի մահ մը կ'փնտռեն որպէս դի իրենց համար ըսեն թէքայլ մ'անդամ չկասեցան. ասկէ զատ՝ խնդիրը քաջութեան վըրայ չէր այս պարագայիս մէջ, ըստ որում ա'Արդանեան որոգայլ թի մը մէջ ընկեր էր :

— Եթէ հրացանի երրորդ հարուած մ'ալ դայ — ըստ ինքն նովին — կորսուած մարդ մ'եմ :

Խսկոյն՝ ոտքը վերցնելով բանակի կողմը խոյս տալու սկսաւ, իր երկրին արագաշարժ մարդոց պէս որ այնքան անուանի են իրենց սրբնթացութեան կողմէ. բայց որչափ որ շուտ ընդ փոյթ կ'վաղէր, առաջին հրացանը քաշողը՝ իր զէնկը նորէն լնլու ատեն զանելով՝ երկրորդ անդամ պարագեց իր հրացանն այնպէս Ճիշտ նշան առնլով այս անդամ, որ զնդակը ա'Արդանեանին զլխարկէն թափ անցաւ և իրմէ տաս քայլ անդին նետեց :

Սակայն՝ ըստ որում ա'Արդանեան ուրիշ զլխարկ չունէր, իրը վաղելով զետնէն վերուց, իր բնակարանը հասաւ հեալով և սաստիկ գտնասաւ, առանց մէկու մը բան մ'ըսելու նստաւ և ըստ կասածել :

Այս գէալքը կընար երեք պատճառ ունենալ :

Առաջինն ու ամենէն բնականը, Առօչէլցիներուն մէկ զարանը կընար լինիլ, որ 'ի հարկէ խնդագին պիտի սպաննէին թաղա-

ւորին մէկ պահակը , նախ անոր համար որ թշնամի մը պակսած կլինէր , և այս թշնամին թերևս իր զրագանը լեցուն քսակ մը տնենար :

Տ'Արդանեան իր ղլխարին առաւ , զնդակին ծակը քննեց և ղլուխն օրեց : Գնտակը հրացանի զնտակ չէր , այլ ատրձանակի . հարուածին ճշդոթենէն դուշակեր էր որ յատուկ հրագէնով մը քաշուած էր , հետեապէս զինորական դարան մը չէր այն , քանի որ մեծաբանակ չէր զնդակը :

Կրնար նաև կարտինալին աղւոր մէկ յիշտատակը լինիլ : Ընթերցողը կ'յիշէ որ՝ չնորհիւ այն արևուն ճառազայթին՝ այն պահուն որ տ'Արդանեան հրացանին փողը դիտեց , նորին բարձրութեան իր մասին ունեցած երկայնմտութեան վրայ կ'զարմանար :

Բայց տ'Արդանեան ղլուխն օրեց : Կորին բարձրութիւնն հաղիւ . ուրեմն այս տեսակ միջոցներ կ'ործածէր այն մարդոց դէմ որոց բաւ էր իր ձեռքն երկարել բանելու համար :

Կարելի է Միլէտիին մէկ վրէժինուդիւնն էր :

Այս բանս աւելի հաւանական էր :

Ընդունայն ջանաց մարդասպաններուն կամ կերպարանը կամ հազուստը յիշել . անոնցմէ այնքան արագ հեռացեր էր որ բան մը դիտելու ատեն չէր տնեցած :

— Ա՛հ , իմ խեղջ բարեկամներս — մրմրաց տ'Արդանեան — ուր էք , և որչափ կարօտ եմ ձեզի :

Տ'Արդանեան շատ զէշ դիշեր մ'անցոց : Երեք չորս անդամ ընդուստ արթնցաւ , երևակայելով որ մարդ մ'իր անկողնին կը մօսէր զինքը սպաննելու համար : Սակայն արեն ելաւ և զիշերն իրեն նոր պատահար մը չըերաւ :

Բայց տ'Արդանեան քաջ կ'զդար որ վրիպող զնդակը կրնար նորէն վերադառնալ :

Տ'Արդանեան բոլոր օրն իր սենեկին մէջ մնաց . ինքնիրեն սա պատճառը կ'տար արդարանալու համար թէ օդը զէշ էր :

Երբորդ օրը՝ ժամն իննին՝ թմբուկներն հնչեցին դուրսը : Օրէանի դուքսը զօրանոցներն այցի ելեր էր : Պահակներն 'ի զէն

վազեցին, տ'Արդանեան իր կարդը բռնեց զինակիցներուն մէջ :

Օրէանի գուքսը Տակասամարախն միջավայրէն անցաւ . յետոյ բոլոր բարձրաստիճան սպանելոն անոր մօտ զացին իրենց յարագանքը նուիրելու, ինչպէս նաև Տէղէսար՝ պահակներուն հրամանատարը :

Պահ մ'ետքը՝ տ'Արդանեանի այնպէս երեցաւ որ Տէղէսար իրեն նշանայր կ'ընէր մօտենալու . իր զլիսառըին նոր մէկ շարժումին սպասեց վախճալով որ կ'սխալի . բայց այս շարժումը կըրկնուելուն իր կարդէն ելաւ տ'Արդանեան և յառաջ անցաւ հրամանն ընդունելու :

— Պարոնը (թագաւորին եղբայրը) վտանգալի զործի մը համար քանի մ'անվեհէր մարդեր պիտի ուղել, բայց այս վտանգաւոր զործը կատարողները մեծ սպատիւ պիտի ստանան, և քեղի նշան ըրի որպէս զի ժամանակին պատրաստ զտնուիս :

— Ծնորհակալ եմ, հրամանատարդ իմ — պատասխանեց տ'Արդանեան, որուն ուղածն ալ աեղակալ-սպարապեախն աչաց առջեւ երևելի համուիսանալ էր :

Արդարև Ռոշէլցիկ զիշերայն պարխապէն զուրա ելեր և երկու օր առաջ արքայական բանակին առած մարտկոցը զբաւեր էին նորէն . հարկ էր յանդուդն ծանօթովթեան մը ձեռնարկել տեսնելու համար թէ բանակն ինչպէս կ'պաշտպանէ այս մարտկոցը :

Իրօք քանի մը վայրիեան ետքը՝ աբբային եղբայրը ձայնը բարձրացոց և ըստա .

— Այս պաշտօնին համար աչտք է ինձ երեք չորս կամաւոր զինոր ապահով մարդու մ'առաջնորդովթեամը :

— Տէր իմ, ապահով մարդն ունիմ ձեռքիս ներքեւ — ըստ ու. Տէղէսար տ'Արդանեանը ցոյց տալով — իսկ երեք չորս կամաւորներուն դալով, բաւական է որ ձեր կամքը յայտնէք, և մարդիկ պակաս չեն :

— Չորս մարդ, սրասոտ մարդիկ կ'ուղեմ, որ դան ինձի հետ սպաննուին — ըստ տ'Արդանեան իր սուրը վերցնելով :

Իր պահակ զինակիցներէն խորոյն երկու հողի առաջ սրացան,

և որիշ երկու զինուոր անոնց միանալով անսան որ խնդրուած թիւը բաւական է, ուստի ա'Արդանեան միւսները մերժեց, չուզելով նախապատռութիւնն ունեցողներուն իրաւունքը զւանալ:

Անգետ էին թէ արդեօք մոօշէլցիք մարտկոցն առնելէն ետեւ պարպե՞ր էին թէ ոչ բերդապահչներ թողէր էին. հետևապէս հարկ էր ՚ի մօտուստ քննել որոշեալ տեղը զործն ստուգելու համար:

Տ'Արդանեան իր չորս ընկերներուն հետ ճամբայ ելաւ և խրամը քերեց, երկու պահակներն իրեն պէս նոյն կարգին մէջ կ'քաւլէին, և զինուորներն ետևէն կ'զային:

Այսպէս պատուարներու ներքեւ պահպանուելով հասան մարտակոցէն հարիւր քայլի չափ հետո վայր մը: Այն տեղ ա'Արդադանեան զլուխը դարձնելով զիտեց որ երկու զինուորներն աներեցի եղեր էին:

Կարծեց թէ առ աշխ ետեւ մնացած են, և ինքն իր ճամբան շարունակեց:

Ծեղորմին շրջանն ընելէն ետեւ մարտկոցէն զրեթէ վաթսուն քայլ հեռու դանուեցան:

Մարդ մը չէր երեւեր և կարծես թէ մարտկոցն ամայի թողեր էին:

Այս երեք մոլորեալ զօրականները կ'մտածէին թէ արդեօք աւելի առաջ քալե՞ն երբ յանկարծ քարե հակայն միսէ զօտիով մը պատեցաւ և տասներկու հատ զնդակներ եկան սուլելու ա'Արդանեանի և իր ընկերներուն բոլորախը:

Ենոնք իրենց ուզածն իմացան, մարտկոցը պաշտպանուած էր Հետևապէս աւելի ևս այն վտանգաւոր տեղը գեղերին անօդուտ անխոհեմութիւն մը պիտի լինէր. ա'Արդանեան և երկու պահակներն ընդ կրուին դարձան և նահանջ մ'սկսան որ փախուստի կը նմանէր:

Երբ խրամին անկիւնը հասան որ իրենց պատնէշի տեղ պիստ ծառայէր, պահակներէն մին ընկատ, զնդակ մը կուրծքէն թափ անցեր էր: Սիւմն որ ողջ առողջ էր, իր ընթացքը զէպէ բանակատեղին շարունակեց:

Տ' Արդանեան չողեց այն վիճակին մէջ թողուլ իր ընկերը , և չէալ անոր ծռեցաւ որ վերցնէ և բանակն երթալու անոր օգնէ . քայց այն պահուն երկու հրացանի հարուածներ լսելի եղան , գնդակ մ'արդէն վիրաւոր պահակին զլուխը խորտակեց , և միւսն նկատ ժայռին վրայ տափակցաւ ա՛Վրդանեանէն քանի մը բթաւ մատ հեռու անցնելէն ետե :

Երիտասարդն աշխուժիւ դարձաւ . վասն զի այս յարձակումը չէր կրնար մարտկոցէն զալ , որ իրամին անկիւնով ծածկուած էր . զինքը ձգող երկու զինորները միտքն ընկան և առջի իրիկուան մարդասպաններն ուշը բերին . ուստի այս անդամ որոշեց զաղտնիքն երևան հանել և իր ընկերին մարմնոյն վրայ ընկաւ որպէս թէ մեռած էր :

Կակոյն երկու զլուխներ տեսաւ անկից քառսուն քայլ հեռու՝ երեսի վրայ ձգուած հողաբլուրէ մ'որ վեր կ'ելնէին . այն մեր զիտցած երկու զինորներու զլուխներն էին : Տ' Արդանեան չէր սխալած . այս երկու մարդիկն անոր միացեր էին միայն զանի սպաննելու համար , յուսալով որ երիտասարդին մահը թշնամոյն պիտի վերապրեն :

Սակայն կասկածելով որ թերևս վիրաւորուած էր միայն և կըրնար զիբենք բերան տալ , անոր մօտեցան որ սպաննեն . բարերազդորէն ա՛Վրդանեանի հնարքէն խարուելով իրենց հրացանները լեցնելու զանց ըրբին :

Երբոր անոր տաս քայլի շափ մօտեցան , ա՛Վրդանեան որ ընկանելու ատեն իր սուրը ձեռքէն չէր թողեր , յանկարծ ուգելու և ոստում մ'ընելով անոնց մօտ դնաց :

Մարդասպանները տեսան որ եթէ բանակատեղւոյն կողմը փախուստ տան երիտասարդը չսպաննած՝ անորմէ պիտի ամբաստանուին , ուստի նախ մտածեցին թշնամոյն կողմն անցնիլ : Ասոնցմէ մին իր հրացանը փողին կողմէն բռնեց և իրը լախտ դրժածեց . ա՛Վրդանեանի սոսկալի հարուած մ'իջեցուց , որմէ խոյս տուամէկ դի քաշուելով , բայց այս շարժմամբ առազակին ճամբայ բացաւ , որ իսկոյն գէալ ՚ի մարտկոցը վաղեց :

մարտկոցը պահպանող Թօշէլցիք չղիտէին թէ ինչ նպատակաւ այն մարդն իրենց կողմը կ'զայ, անոր վրայ հրացան պարպեցին և գնդակ մ'ուսին զալով զետին տապալեցաւ :

Նոյն միջոցին՝ տ'Արդանեան երկրորդ զինուորին վրայ յարձակելով սրովը կ'մաքառէր. կոփին երկար չտեսեց. այն թշուառականն ինքզինք պաշտպանելու համար միայն իր պարապ հրացանն ունէր. պահակին սուրը սահեցաւ անօդուտ գարձած հրաղէնին փողին վրայէն, մարդասպանին աղդրէն անցաւ, ու զետինը փըռեց : Տ'Արդանեան խոկոյն անոր կոկորդին վրայ դրաւ սրին ծայրը :

— Ո՛չ, մի սպաններ զիս — դոչեց աւազակը — շնորհ, շնորհ, իմ պաշտօնատարս, և քեզի ամէն բան պիտի խոստովանիմ :

— Արդեօք կեանքդ քեզի բաշխելու շափ կ'ամէ՞ դաղոնիքդ — հարցուց երիտասարդը թէր կեցնելով :

— Այո, եթէ կ'հաւտաս որ կեանքը բան մ'է երբ ես ալ քեզի պէս քսան երկու տարեկան եմ և թէ կընամ մեծ բաներու համնիլ, քեզի պէս զեղեցիկ և քաջ լինելովս :

— Թշուառական — ըստ տ'Արդանեան — նայինք, խօսէ շուտով, ովկ քեզ ապսպեց զիս սպաննելու :

— Կին մը զոր չեմ ճանչեր, և որուն անունն էր Միլէտի :

— Բայց եթէ այն կինը չես ճանչեր, անունն ուստի զիտես :

— Իմ ընկերս զանի կ'ճանչէր և այսպէս կ'կոչէր. անոր հետ գործը կարգի դրաւ և չէ թէ ինձի հետ. իր զրագանին մէջ անգամ նոյն անձէն նամակ մ'ունի որ քեզի համար հարկաւ խիստ մեծ կարևորութիւն պիտի ունենայ, ինչպէս որ իրմէ իմացայ :

— Բայց դու ինչ կերպով այս որոզպէթին մասնակից եղար :

— Նա առաջարկեց ինձ այս գործը միասին կատարել. և ես ալ ընդունեցայ :

— Եւ այն կինն ինչ տուաւ այս աղւոր արշաւանքին համար :

— Հարիւր ոսկի :

— Լաւ ուրեմն, զէշ չէ — ըստ երիտասարդը ծիծաղելով նա կարծէ թէ մի բան կ'ամեմ: Հարիւր ոսկի. բաւական մեծ-կակ դումար մ'է ձեզի պէս երկու ապիրատներու համար, ուստի

Հիմակ կ'իմանամ թէ ինչ պատճառաւ ընդունեցար, և քեզի կը ներեմ, բայց պայմանաւ մը :

— Ի՞նչ պայմանաւ — հարցուց զի՞նւորը դիտելով որ դեռ յուսալու տեղի ունի :

— Սա պայմանաւ որ երթաս ընկերիդ դրսանին մէջ դտնուած նամակն ինձի բերես :

— Բայց — զոչեց աւագակը — այդ ալ զիս սպաննելու աւրիշ միջոց մ'է, ի՞նչպէս կ'ուզես որ երթամ մարտկոցին կրակին տակ այն նամակն առնում:

— Սակայն պէտք է որ զայն առնլու որոշես, թէ ոչ կ'երդնում որ ձեռօքս պիտի մնոնիս :

— Ծնա՛րհ, պարօն, զթութի՛ւն, յանուն սիրած նորատի կնոջդ, զոր մեռած կարծես թերես, և սակայն մեռած չէ — զոչեց աւագակը ծնկի դալով և ձեռքին վրայ կոթմնելով, վասն զի իր արեան հետ ոյժն ալ կորուսել սկսեր էք :

— Եւ ուստի՝ զիսես որ սիրած կին մ'ունիմ, և թէ կարծեմ նոյն կինը մեռած է — հարցուց ա՛ւրդանեան :

— Ընկերիս դրսանին մէջ դտնուած նամակէն :

— Աւրեմն դու ալ կ'նայիս հիմակ որ այն զիրը պէտք է ձեռք ձգեմ — ըստ ա՛ւրդանեան — ուստի յարադում, վարսնում չեմ ուզեր, թէ ոչ, որչափ որ առաս քեզի սկիւս ապիրատի մ'արեան մէջ կրկնի թաթաւելու կ'դժկամակիմ, սակայն իմ պարկեշտ մարդու անկեղծութեամբ կ'երգնում որ . . . :

Եւ այս ըսելով ա՛ւրդանեան այնպէս սպառնալի չարժում մը ըրաւ որ վիրատոն ուաք ելաւ :

— Աեցիր, կեցիր — զոչեց նա սաստիկ սարսափէն քաջութիւն առնլով — պիտի երթամ . . . պիտի երթամ . . . :

Տ'արդանեան զի՞նւորին հրազդ նն առաւ, իր առջեւը ձգեց զանի և ընկերին կողմը վամեց անոր երիկամունքը սրին ծայրովը կծելով :

Առսկալի բան մ'էր տեսնել այն ողօրմնլին, որ քալած ձամբ ըստն վրայ արեան հետք մը կ'թողուր, մօտալուտ մահէն զու

համեր էր և քսան քայլ հեռի փոռած դառակցին մօտենալու  
համար զետնաքարշ կ'սահմէր առանց տեսնուելու :

Պաղ քրտինկով ծածկուած դէմքին վրայ այնպէս տեսանելի  
էր սարսափն որ ա'Արդանեան անոր վրայ դժայ , և արհամար-  
համօք անոր նայելով :

— Լաւ ուրեմն — ըստ անոր — հիմակ պիտի ցոյց տամ քեզ  
թէ ի՞նչ տարբերութիւն կայ արիստիրտ և քեզի պէս վաստ մար-  
դու մը մէջ . դու կեցիր , ես պիտի երթամ :

Եւ արագընթաց քայլով ակնասլիշ թշնամիին շարժումնելը դիս-  
տելով հոգին խորա ու բորս տեղերէն օգուտ քաղելով ա'Ար-  
դանեան հասաւ մինչև երկրորդ զինուորին վայրը :

Երկու միջոց կար իր նպատակին համելու . նոյն տեղն անոր  
վրան դլուխը պրագտել , կամ զայն առնուլ տանիլ անոր մար-  
մին իբրև վահան դորձածելով և ապա խրամին մէջ պրագտել :

Տ'Արդանեան երկրորդ միջոցը լաւագոյն համարեց և մարդաս-  
պանը շալկեց այն միջոցին որ թշնամին կրակ կ'ընէր :

Թիթէ ցնցում մը , միսերը ծակող երեք դնդակներու խուլ  
աղմուկը , յետին ձիկ մը , ձկնածամի սարսուռ մը ա'Արդանեանի  
ազգ առին որ զինքը սպաննել ուզող զինուարն այն ինչ իր կեանս-  
քը կ'աղաստէր :

Տ'Արդանեան խրամը հասաւ և դիակը վիրաւորին մօտ նետեց  
որ մնուելի պէս գունատ էր :

Խակցին խոզարկութիւնը սկսաւ . կաշիէ թղթակալ մը , քսակէ  
մ'որուն մէջ հաւանօրէն աւազակին ընդունած դումարին մէկէ  
մասը կ'գտնուէր , շեփորիկ մ'ու տապեղուլունք մեռնողին ժա-  
ռանգութիւնը կ'կազմէր :

Թողուց շեփորիկն ու տապեղուլունքն ուր որ ընկեր էին , քսա-  
կը վիրաւորին նետեց և թղթակալը բացաւ տենչանօք :

Քանի մ'անկարնոր թղթերու մէջ հետեւեալ նամակը դտաւ .  
այն զիրն էր որուն համար մաշն աչքն առնելով փնտուելու դա-  
ցեր էր :

Յ Որովհեան այն կնկան հետքը կորուսիր և հիմակ այն վա-

նուց մէջ կ'զանուի ուր պարտ էիր չթօղուլ բնաւ որ մանէ : զո՞նէ ջանադիր եղիր մարդը ձեռքէ չփախցնելու, ասպա թէ ոչ, զի՞տես որ ձեռքս երկայն է և քեզի սուղի պիտի նստի առնելիք հարիւր ռակիդ :

**Ստորագրութիւն չկար :** Աակայն յայտնի էր որ նամակը Միւլէտիին կողմէն դրուած էր : Զայն պահեց տ'Արդանեան իբրև վկայութեան դիր, և ինք խրամին անկեան ետեն ազահով լինելով, սկսաւ վիրաւորին հարցումներ ուղղել : Աիրաւորը խոստովան եղաւ որ իր ընկերին հետ պաշտօն առեր էին կին մ'առևանցելու որ Աիլլէդի քաղաքադռնէն պիտի հեռանար Բարին զէն, բայց սակայն դինետան մը մէջ զինի խմելու համար կենալով, ասս վայրկենով կառքը վրիսեր էին :

— Բայց ի՞նչ պիտի ընէիք այն կինը — հարցոց տ'Արդանա եան անձկութեամբ :

— Պարտաւոր էինք Բլաս-Բօյալի մէկ օթեանը բերել ձղել ըստ վիրաւորը :

— Այո՞ — մրմուաց տ'Արդանեան — Ճիշտ է, նոյն իսէ Միլէտիի տան մէջ :

Այն ատեն պատանին քաջ իմացաւ սարաւելով թէ զինքն ու իբրեններն 'ի կորուստ մատնելու համար ի՞նչ սոսկալի վրէմիշընդ դրութեան ոգւով վառուած է այն կինն և թէ որշափ հմուտ էր արքունեաց զործերուն, քանի որ ամէն բան իմացեր էր : Անտարակոյս կարտինալէն առած պիտի լինէր այս տեղեկութիւնները :

Բայց՝ այս ամէն անցած ու դարձած բաներու մէջ, հատկան նաև Ճշմարիտ խնդութեամբ որ 'ի վերջէ թագուհին յաջողեր էր գտնելու այն բանոր՝ ուր հէք տիկին Պանասիէօ իր անձնուիրութիւնը կ'քաւէր, և զանի նոյն բանտէն հաներ էր : Այն ատեն նորատի կինէն ընդունած նամակն և Շայօփ Ճամբէն անցքը, տեսլի նման անցք մը, կարող եղաւ մեկնելու :

Հետեւապէս, ինչպէս որ Ամոս գուշակեր էր, տիկին Պօնասիէօն զտնել կարելի էր, և վանք մ'անառիկ չէր կրնար լինիլ :

Այս խորհուրդը սրտին մէջ ներողութեան զգացում ծնցոց :

Ալիրաւորին դարձաւ, որ իրեն դէմքին այլ և այլ շարժումներն անձկութեամբ կ'դիտէր, և թեն անոր կարկառելով,

— Արի — ըստ անոր — չեմ ուղեր քեզ այս տեղ թողուլ ։  
Արաս կոթնէ և բանակատեղին գառնանք :

— Այս — ըստ վիրաւորը՝ որ հազիւ կ'հաւտար այսքան վեհ-  
անձնութեան — բայց միթէ զիւ կախել տալու համար չէ:

— Խօսքս տուի քեզի — ըստ նա — և աչա երկրորդ անդամ  
կեանքդ կ'բաշխեմ :

Վիրաւորը ծռնկի վրայ սահեցաւ և վերստին պաղաւ իր աղա-  
տարարին ուտքը . բայց տ'Արդանեան, որ այլ ևս պատճառ մը  
չոնէր այնչափ թշնամիին մօտ մնալ, անոր երախսազիտութեան  
ցոյցերուն վերջ տուաւ :

Այն պահակն որ ետ դարձեր էր առաջին անդամ հրացաններն  
արձակուելուն, իր չորս ընկերներուն մահն իմայց տուեր էր : Հե-  
տեսապէս շատ զարմացան ու մրանգամայն ուրախ եղան երբ տե-  
սան որ տ'Արդանեան ողջ առողջ դարձաւ :

Տ'Արդանեան իր ընկերին ընդունած սրի հարուածը թշնամոյն  
մէկ կարծենցեալ արձակումին արդինքն է ըստու : Միւս զինորին  
մահը պատմեց, նոյնպէս իրենց կրած մնձ վտանգները : Այս  
պատմութիւնն իրեն համար ճշմարիտ յաղթանակի մ'առիթ եղաւ:  
Քոլոր բանակին մէջ օր մ'այս արշաւանքին վրայ խօսեցան, և  
թագաւորին կողմէն շնորհաւորութիւններ ընդունեց :

Խսկէ զատ՝ որովհետեւ ամեն աղորդ իր հետը կ'բերէ իր  
վարձքը, տ'Արդանեանի աղորդ դործին արդինքն եղաւ կորուսած  
սրաի հանդարտութիւնը դտնելը : Եւ արդարե՛ տ'Արդանեան կար-  
ծէր թէ կրնար հանդիսաւ լինիլ, քանի որ իր երկու թշնամինե-  
րէն մին սպաննուեր և միւսն իրեն սերողիւ կապոեր էր :

Այս հանգարտութիւնը բան մը կ'հաստատէր, այսինքն թէ  
տ'Արդանեան տակաւին Միլէտին չէր ճանչեր :

## ՅԱՆԿ ՆԻՒԹՈՒՑ

	Երես
Ա. Վլինդը կումսուհին . . . . .	3
Բ. Մէրլէզօնի պարը . . . . .	45
Գ. Ժամադրութիւն . . . . .	23
Դ. Տաղաւար . . . . .	37
Ե. Բորթոս . . . . .	49
Զ. Արամիսի բնաբանը . . . . .	72
Է. Աժոսին կինը . . . . .	92
Ը. Աերադարձ . . . . .	145
Թ. Զէն ու դարդի որսորդութիւնը . . . . .	133
Ժ. Միլէտի . . . . .	144
ԺԱ. Անկլիացիներ և գաղղիացիներ . . . . .	153
ԺԲ. Գործակալի մը ճաշը . . . . .	163
ԺԳ. Կաժիշտ և տիրուհի . . . . .	174
ԺԴ. Արամիս ու Բորթոս ինչպէս կ'պատրաստեն իրենց զէնն ու դարդը . . . . .	186
ԺԵ. Գիշերն ամեն կատաները մնխրագոյն են . . . . .	197
ԺԶ. Վլրէժինդրութեան երազ . . . . .	206
ԺԷ. Միլէտին գաղտնիքը . . . . .	246
ԺԸ. Աթոս ինչպէս դտառ իր զէնն ու դարդն առանց տեղէն շարժելու . . . . .	224
ԺԹ. Տեսիլ . . . . .	236
Ի. Ահռելի տեսիլ մը . . . . .	247
ԽԱ. Ռօշէլի պաշարումը . . . . .	257



